Քեներթ Է. Հեգին

Սեր

Ճանապարհի դեպի հաղթանակ

Սեր

ճանապարհի դեպի հաղթանակ

Քենեթ Է. Հեգին

Love the Way to Victory, Armenian, Kenneth E. Hagin

Copyright Kenneth Hagin Ministries, Inc.,
Post Office Box 50126,
Tulsa, Oklahoma, 74150-0126
www.rhema.org
www.rhema.eu

«Սեր. ճանապարհ դեպի հաղթանակ», հայերեն, Քեներթ Է. Հեգին
Թարգմանված է անգլերենից, 2021 թ.

Հեղինակային իրավունքները պատկանում են «1994 Rhema Bible Church»-ին, նաև հայտնի որպես «Kenneth Hagin Ministries, Inc»

ԱՄՆ-ում՝

«Kenneth Hagin Ministries»
Փ/Ա 50126,
Թալսա, Օկլահոմա, 74150-0126
1-888-28-FAITH
www.rhema.org
www.rhema.eu

Կանադայում՝

«Kenneth Hagin Ministries of Canada»
Փ/Ա 335, բաժանմունք D
Էթոբիկո (Տորոնտո), Օնտարիո,
Կանադա M9A 4X3
1-866-70-RHEMA
www.rhemacanada.org
www.rhema.eu

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի հատված չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել որևէ կերպ՝ առանց գրավոր թույլտվության:

Աստվածաշնչյան մեջբերումները «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածային սիրո բնութագիրը 7
2. Աստվածային սեր. վերստին ծննդի ապացույցը. 39
3. Սեր. Նոր Ուխտի օրենքը 57
4. Աստվածային սերը ներում է 85
5. Սիրով վարվելու օգուտները 119
6. Սիրով վարվելու մեջ ձախողելը կարող է ազդել ձեր առողջության վրա 143
7. Ինքներդ ձեզ դատե՛ք, և չեք դատվի 175
8. Սիրե՛ք ձեր թշնամիներին 199

Գլուխ 1

Աստվածային սիրո բնութագիրը

Ապա ուրեմն մնում է հավատք, հույս, ողորմածություն. այս երեքը, և ՍՐԱՆՑԻՑ ՄԵԾԸ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆՆ [սերն] *է:*

— Ա Կորնթացիների 13.13 (NKJ)

Նա, որ չի սիրում, Աստծուն չի ճանաչել, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է:

— Ա Հովհաննես 4.8

Աստվածաշնչում գրված է, որ Աստված սեր է: Գրված է նաև, որ սերն ավելի մեծ է, քան հավատքը կամ հույսը: Ուստի եթե Աստված սեր է, ապա մենք պետք է իմանանք, թե ինչ է սերը՝ աստվածային սերը:

Աստվածաշնչի *«Քինջ Ջեյմս» թարգմանությունում* Ա Կորնթացիների 13.13-րդ խոսքում «սեր» բառը թարգմանված է *ողորմածություն*: Իրականում, ափսոսանքի տեղ է տալիս այն, որ «ագապե» բառը թարգմանվել է *ողորմածություն*, քանի որ այն չի արտահայտում տվյալ խոսքում օգտագործված հունարեն բառի ամբողջական իմաստը:

Բառարանում «ողորմածություն» բառը սահմանված է որպես *բարյացակամություն կամ սեր մարդկության նկատմամբ*: Մինչդեռ տվյալ խոսքում օգտագործված է հունարեն «ագապե» բառը, ինչը նշանակում է *Աստծո սեր*: Նոր Կտակարանի մյուս բոլոր հատվածներում «ագապե» բառը թարգմանված է *սեր* և ոչ թե *ողորմածություն*:

Օրինակ՝ Ա Հովհաննես 4.8-րդ խոսքում Աստվածաշունչը բառացիորեն ասում է՝ «Աստված ագապե է», այլ կերպ ասած՝ «Աստված *սեր* է»: Ուստի «ագապե» նշանակում է *աստվածային սեր*:

Իսկ ի՞նչ է ագապեն կամ Աստծո սերը: Մինչ կպատասխանեմ այդ

հարցին, թույլ տվեք Աստծո սիրո վերաբերյալ հետաքրքիր մի բան ցույց տալ ձեզ: Աստվածաշնչում գրված է, որ սերն ավելի մեծ է, քան հույսը կամ հավատքը (Ա Կորնթ. 13.13): Ինչո՞ւ է Աստծո սերն ավելի մեծ, քան հույսը կամ հավատքը:

Առաջին՝ հավատքն առանց սիրո չի գործում: Այլ կերպ ասած՝ սիրուց է կախված՝ հավատքը կգործի, թե ոչ: Գաղատացիների 5.6-ում գրված է. *«Որովհետև Քրիստոս Հիսուսում ո՛չ թլփատությունն է մի բան կարող և ո՛չ անթլփատությունը, այլ հավատքը, որ սիրով գործում է»:*

Ուրեմն եթե հավատքն առանց սիրո չի գործում, սերն ավելի մեծ է, քան հավատքը: Հավատքը գործի դնելու համար *սեր* է անհրաժեշտ:

Երկրորդ՝ հավատքը չի գործում առանց *հույսի*: Եբրայեցիների 11.1-ի *«Նոր անգլերեն»* թարգմանությունում գրված է. «Հավատքը առարկայացնում է մեր հույսը»: Ուստի որպեսզի ձեր հավատքը առարկայացնի ձեր հույսը, նախ ինչ-որ բանի հույս պետք է ունենաք: Հետևաբար հավատքը կախված է նաև հույսից:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11.1
1 ՀԱՎԱՏՔՆ էլ ՀՈՒՍԱՑԱԾ բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է:

Ինչպես տեսնում եք, եթե որևէ բանի հույս չունենաք, հավատքը չի գործի, քանի որ այն չունի Աստծուն հավատալու նպատակ: Հետևաբար հավատքն առանց հույսի չի գործում: Բացի այդ՝ հավատքի արդյունավետությունը կախված է նաև սիրուց: Ահա թե ինչու է Աստվածաշնչում ասվում, որ սերն ավելի մեծ է, քան հույսը կամ հավատքը (Ա Կորնթ. 13.13):

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 13.1-3

1 Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ, բայց սեր [աստվածային սեր] **չունեմ, ես եղա ձայն հանող պղինձ կամ հնչեցող ծնծղա:**

2 Եվ եթե մարգարեություն ունենամ և գիտենամ ամեն խորհուրդները և ամեն գիտությունը և եթե ամեն հավատքն ունենամ, մինչև սարերն էլ տեղափոխելու, բայց սեր [աստվածային սեր] չունեմ, ոչինչ եմ:

3 Եվ եթե իմ ամեն ապրանքներն *աղքատներին* ուտեց-

նեմ և իմ մարմինը մատնեմ, որ այրվի, բայց սեր [աստվածային սեր] **չունեմ, ես ոչինչ օգուտ չեմ չունենա:**

Աստվածաշնչում գրված է, որ նույնիսկ եթե մեր միջոցով դրսևորվեն Հոգու բոլոր պարգևները, առանց Աստծո սիրո դրանից ոչ մի օգուտ չենք ունենա. այդ ամենը ոչինչ կհամարվի: Խորհե՛ք սրա շուրջ:

Եթե հասկանանք բոլոր խորհուրդները, ունենանք ամբողջ գիտելիքն ու հավատքը, սակայն մեր մեջ չգործի և մեզնից չհոսի Աստծո սերը, մենք դրանից ոչ մի օգուտ չենք ունենա: Նույնիսկ աղքատներին օգնելը և ինքնազոհողության գնալը ոչինչ են, եթե մեր դրդապատճառը սերը չէ:

Ձեր ոչ մի արարքը ձեզ օգուտ չի բերի, եթե դրա դրդապատճառը Աստծո սերը չէ: Ահա թե ինչու է այդքան կարևոր աստվածային սերը, և թե ինչու է Աստվածաշունչն ասում, որ այն ավելի մեծ է, քան հավատքը կամ հույսը:

Բացի այդ՝ Աստվածաշունչն ասում է, որ սիրո՝ մեր մեջ բնակվող Աստծո սիրո շնորհի՛վ մարդիկ կիմանան, որ մենք Նրա աշակերտներն ենք: Աստվածաշնչում չի ասվում, որ մեր հավատքից կամ հույսից մարդիկ կհասկանան, որ մենք Նրա աշակերտներն ենք: Ո՛չ, մեր մեջ և մեր միջոցով գործող Աստծո սիրո շնորհիվ մարդիկ կիմանան, որ մենք քրիստոնյա ենք:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 13.35
35 Սրանով կգիտենան ամենքը, թե Իմ աշակերտներն եք, ԵԹԵ ԻՐԱՐ ՎՐԱ ՍԵՐ ՈՒՆԵՆԱՔ:

Ինչի՞ց է աշխարհն իմանալու, թե մենք քրիստոնյա ենք: Նրանից, որ սիրում ենք իրար:

Սիրո սահմանումը

Եթե աստվածային սերն այդքան կարևոր է, ապա մենք պետք է իմանանք, թե որն է այդ սերը: Իհարկե, հասկանում եք, որ աստվածային սերը նույնը չէ, ինչ բնական մարդկային սերը: Բնական մարդկային սերը հանկարծակի կարող է վերածվել ատելության, իսկ Աստծո սերը երբեք չի ձախողվում:

Աստծո սիրո սահմանմանը կարող ենք ծանոթանալ Ա Կորնթացիների 13-րդ գլխում:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 13.4-8

4 Սերը [Աստծո սերը] **ԵՐԿԱՅՆԱՄԻՏ է, ՔԱՂՑՐ է. սերը ՉԻ ՆԱԽԱՆՁՈՒՄ, ՉԻ ԳՈՌՈՉԱՆՈՒՄ, ՉԻ ՀՊԱՐՏԱՆՈՒՄ:**

5 ՉԻ ԼՐԲԱՆՈՒՄ, ԻՐԵՆԸ ՉԻ ՈՐՈՆՈՒՄ, ՉԻ ԳՐԳՌՎՈՒՄ, ՉԱՐԸ ՉԻ ՄՏԱԾՈՒՄ,

6 ԱՆԻՐԱՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՉԻ ՈՒՐԱԽԱՆՈՒՄ, բայց ՈՒՐԱԽԱՆՈՒՄ է ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

7 ԱՄԵՆ ԲԱՆԻ ԴԻՄԱՆՈՒՄ է. ԱՄԵՆ ԲԱՆ ՀԱՎԱՏՈՒՄ է, ԱՄԵՆ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ, ԱՄԵՆ ԲԱՆԻ ՀԱՄԲԵՐՈՒՄ է:

8 ՍԵՐԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՎԵՐՋԱՆԱ. եթե մարգարեություններ կան, կխափանվեն, եթե լեզուներ, կլռեն, եթե գիտություն, կխափանվի:

Ինչպես տեսնում եք, Աստծո սերն ավելի մեծ է, քան Պողոսի այս բոլոր թվարկածները: Այն ավելի մեծ է, քան մարգարեությունները, լեզուները, ավելի մեծ է, քան գիտելիքը: Ինչո՞ւ է այն ավելի մեծ: Քանի որ մի օր բոլոր այդ բաներն անհետանալու և անցնելու են, մենք դրանց կարիքն այլևս չենք ունենալու: Սակայն Աստծո սերը երբեք չի անցնի:

Երկնքում չեն լինի լեզուներով խոսել, մարգարեություն, գիտության խոսք, Հոգու պարգևները ևս չեն գործի Երկնքում. դրանք անցած կլինեն: Սակայն սերը՝ աստվածային սերը, կմնա հավիտյան. այն չի անցնի, քանի որ Աստված սեր *է*, ու Նա հավիտյան է:

Աստծո սերը ոչ միայն հավիտյան է, այլև, ինչպես Աստվածաշունչն է ասում, համբերում է *ամեն բանի, որ կարող է պատահել*: Ի՞նչ է նշանակում ամեն բանի համբերել: Աստվածաշնչի «*Ընդլայնված*» թարգմանությունում գրված է. «Սերը դիմանում է ցանկացած բանի և ամեն բանի, որ կարող է պատահել…» (խոսք 7): Աստվածային սիրո մեջ հույսը չի մարում, և Աստծո սերը երբեք չի ձախողվում:

Հիմա եկե՛ք ընթերցենք նույն հատվածը Աստվածաշնչի *«Ընդլայնված»* թարգմանությունից, քանի որ այն ավելի պարզ է սահմանում աստվածային սերը:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 13.4-8 (AMP)

4 Սերը երկար է համբերում. այն համբերատար է և բարի: Սերը երբեք չի նախանձում կամ խանդով չի վառվում, պարծենկոտ կամ սնափառ չէ, այն մեծամտաբար չի վարվում:

5 Այն ինքնահավան չէ և ոչ էլ ամբարտավան, փքված չէ հպարտությունից. այն կոպիտ (անքաղաքավարի) չէ, անվայելուչ չի վարվում: Սերը [Աստծո սերը մեզանում] **չի պնդում իր իրավունքներն ու իր ճանապարհը, այն իրենը չի որոնում: Դյուրագրգիռ չէ, ոչ էլ նեղացկոտ կամ հիշաչար: Սերը հաշվի չի առնում իր դեմ գործված չարիքը, ուշադրություն չի դարձնում իր հանդեպ թույլ տրված սխալին:**

6 Սերը չի ուրախանում գործված անարդարությունից և անիրավությունից, այլ ուրախանում է, երբ արդարությունն ու ճշմարտությունը հաղթում են:

7 Սերը դիմանում է ամեն բանի, որ կարող է պատահել, միշտ պատրաստ է հավատալու լավագույնին յուրաքանչյուրի մեջ, նրա հույսը չի մարում ոչ մի իրավիճակում, այն համբերում է ամեն բանի [առանց թուլանալու]:

8 Սերը երբեք *չի ձախողվում,* երբեք չի մարում կամ չի մաշվում ու չի սպառվում: Ինչ վերաբերում է մարգարեությանը [Աստծո կամքը և նպատակը մեկնելու պարգև], դա կիրականանա և կանցնի, լեզուները կլռեն, դրանք կդադարեն, գիտելիքը ևս կանցնի [կկորցնի իր արժեքն ու կփոխարինվի ճշմարտությամբ]:

Երանի՜ հավատացյալները ժամանակ հատկացնեին այս խոսքերի ուսումնասիրությանը և թույլ տային, որ սուրբգրային այս հատվածը ներծծվեր իրենց մտքի ու սրտի մեջ: Միայն այս խոսքերի լույսի մեջ քայլելը կլուծեր նրանց շատ խնդիրներ:

Օրինակ՝ ուշադրությո՛ւն դարձրեք Ա Կորնթացիների 13.4-ին *«Ընդլայնված»* թարգմանությունում՝ «Սերը երկար է համբերում. այն համբերատար է և բարի»: Ոմանք երկար են համբերում, սակայն այդ ընթացքում համբերատար և բարի չեն: Նրանք երկար համբերում են, պարզապես որովհետև ստիպված են, բայց դա այնպես են անում, որ բոլորն *իմանան*, որ իրենք երկար համբերում են:

Օրինակ՝ երբեմն ամուսինը տառապում է և համակերպվում որոշ բաների հետ իր կնոջ պատճառով, սակայն այդ ընթացքում բարություն չի ցուցաբերում կնոջ նկատմամբ: Երբեմն կինն է ստիպված տառապել և համակերպվել ամուսնու հետ որոշ հարցերում, բայց դա այնպես է անում, որ ամուսինն իմանա, որ ինքը տառապում է:

Մինչդեռ աստվածային սերը երկար է համբերում և այդ ընթացքում համբերատար ու բարի է. այն չի թուլանում, չի մարում ու չի սպառվում: Այն երբեք չի վերջանում:

Այս խոսքին սերտորեն կապված է 7-րդ խոսքը. «Սերը դիմանում է ամեն բանի, որ կարող է պատահել»: Լսել եք, երբ մարդիկ ասում են. «Բավական է, ես այլևս չեմ կարող նրան սիրել»: Սերը կարող է. Աստծո սերը կարող է դիմանալ ամեն բանի՝ առանց թուլանալու կամ սպառվելու:

Եվ քանի որ Աստծո սերը ձեր մեջ է, *դուք* կարող եք դիմանալ ամեն բանի, որ կարող է պատահել: Գուցե ասել եք. «Ես այլևս չեմ կարող տանել սա» կամ «Այլևս չեմ կարող այսինչ մարդուն հանդուրժել», սակայն ձեր մեջ և ձեր միջոցով գործող Աստծո սերը կարող է:

Խորհեք սրա շուրջ, թե ինչպես է Աստված հանդուրժում մեզ բոլորիս: Ես գրեթե տասներկու տարի հովիվ եմ եղել և գիտեմ, որ երբեմն որոշ մարդկանց դժվար է հանդուրժել: Օրինակ՝ հիշում եմ, երբ հովիվ էի, երբեմն գիշերը սկսում էի մտածել, թե ինչպես է Աստված մեզ բոլորիս հանդուրժում, ու այդ մտքից ծիծաղում էի:

Ասում էի Տիրոջը. «Տեր, իմ համբերությունը գրեթե հատնում է ոմանց հետ, իսկ Դու համբերատար ես բոլորիս հանդեպ»:

Աստված չէր խնդրի մեզ անել մի բան, որը մեր ուժերից վեր է: Եթե նա ասել է, որ սիրենք իրար, ուրեմն մենք կարող ենք դա անել: Ինչո՞ւ. որովհետև Աստված սեր է, իսկ մենք հաղորդակից ենք Նրա սիրուն, որը սփռված է մեր սրտերում:

Իրականում, Աստծո ամենահզոր հատկանիշն այն է, որ Նա սեր է: Սերն Աստծո բնույթն է: Եվ երբ մենք վերստին ծնվեցինք, Սուրբ Հոգով նրա սերը սփռվեց մեր սրտերում:

Աստծո սերը ամեն բանի դիմանում է: Ինձ սխալ մի՛ հասկացեք: Ես ևս երբեմն ցանկացել եմ հանձնվել, բայց իմ ներսում Աստծո սերը թույլ չի տվել դա, քանի որ այն ամեն բանի դիմանում է, չի թուլանում, չի մարում ու չի սպառվում:

Ուստի եթե մենք քայլենք Աստծո սիրո լույսի մեջ, մենք ևս չենք թուլանա. կկարողանանք սիրել մարդկանց՝ անկախ այն բանից՝ մեր մարդկային բնությանը դա դուր է գալիս, թե ոչ: Մենք մարդկանց

պետք է սիրենք այն սիրով, որն Աստված է:

Այժմ եկեք դիտարկենք աստվածային սիրո մեկ այլ հատկանիշ: Ա Կորնթացիների 13.5-ում գրված է, որ Աստծո սերը «*չի լրբանում, իրենը չի որոնում*»: Ուստի մեր մեջ և մեր միջոցով գործող Աստծո սերը «իրենը չի որոնում»:

«Ընդլայնված» թարգմանությունում ասվում է «Սերը [Աստծո սերը մեզանում] չի պնդում իր իրավունքներն ու իր ճանապարհը, այն իրենը չի որոնում»: Սա նշանակում է, որ աստվածային սերը եսակենտրոն չէ. այն իրեն ու իր շահն առաջնահերթ չի համարում:

Արդյոք դուք նախ ձեր շահն եք կարևորում, թե՞ այլոց բարօրությունը: Ուրիշների շահը ձեր շահից վեր դասելը լավ կանոն է, որին հետևելով՝ կարող եք տեսնել, թե արդյոք քայլում եք աստվածային սիրո մեջ:

Շատ հաճախ հավատացյալները գնում են բնական հունով և ոչ թե Հոգով: Երբևէ խորհե՞լ եք սրա շուրջ: Հոգով գնալը աստվածային սիրով վարվելն է:

Սակայն շատ հաճախ մարդիկ գնում են բնական հունով և եսասիրաբար են վարվում: Որքան էլ դա ցավեցնի ուրիշին, նրանք, օրինակ, կարող են ասել՝ «Ես իրավունքներ ունեմ և ամեն գնով կպաշտպանեմ դրանք»:

Իսկ աստվածային սերը չի պնդում իր իրավունքները: Քանի դեռ դուք պատրաստվում եք պայքարելու ձեր իրավունքների համար, դուք չեք քայլում աստվածային սիրո մեջ:

Երբեք չեք կարողանա Աստծուն լիովին հավատալ, քանի դեռ չեք սկսել քայլել աստվածային սիրո մեջ: Ինչո՞ւ. որովհետև Աստված սեր է, իսկ աստվածային հավատքը գործում է սիրով:

Ուստի Աստծուն լիովին հավատալու և Աստծո հավատքով գործելու համար դուք պետք է քայլեք Աստծո սիրո մեջ:

Սերը հաշվի չի առնում իր հանդեպ թույլ տրված սխալը

Աստվածային սիրո հատկանիշներից մեկն այն է, որ այն երբեք հաշվի չի առնում իր հանդեպ թույլ տրված սխալը: Ա Կորնթացիների 13.5-ի *«Ընդլայնված»* թարգմանությունում գրված է, որ «Սերը [Աստծո սերը մեզանում] հաշվի չի առնում իր դեմ գործված չարիքը և ուշադրություն չի դարձնում իր հանդեպ թույլ տրված սխալին»:

Ձեր մարդկային բնությունը այլ բան կցանկանար լսել, ճի՞շտ է: Սա-

կայն այս խոսքն ասես սիրո ջերմաչափ լինի: Արդյոք դյուրագրգիռ եք, նեղացկոտ կամ հիշաչար, միշտ մտապահո՞ւմ եք ձեր դեմ գործված չարիքը:

Սա աստվածային սիրո չափիչն է: Այս խոսքի լույսի ներքո նայելով սիրո մեջ ձեր ընթացքին՝ հեշտ կլինի հասկանալ, թե արդյոք քայլում եք սիրո մեջ:

Քանի դեռ հաշվի եք առնում ձեր դեմ գործված չարիքը, սիրո մեջ չեք քայլում: Իսկ եթե քայլում եք Աստծո, աստվածային սիրո և Սուրբ Հոգու լիության մեջ, ապա հաշվի չեք առնի, թե ինչ չարիք են ձեր դեմ գործել:

Քանի դեռ հաշվի եք առնում ձեր դեմ գործված չարիքը, չեք կարողանա բոլորի մեջ լավագույնին հավատալ: Նկատե՞լ եք, որ բնական մարդկային սերը բոլորի մեջ *լավագույնին* հավատալու հակառակն է:

Այն միշտ պատրաստ է յուրաքանչյուրի մեջ *ամենավատին* հավատալու: Իրականում ոմանք այլոց մեջ միշտ ինչ-որ բան են փնտրում, որ կարողանան մեղադրել նրանց ու խոսել նրանցից:

Ծառայության բերումով տարիներ շարունակ ճանապարհորդել եմ, և հաճախ է պատահել, երբ քարոզիչներն ասել են. «Լսե՞լ ես այսինչ մարդու մասին», և սկսել են վատ բաներ պատմել տվյալ մարդու մասին:

Ես միշտ պատասխանել եմ. «Ես հրաժարվում եմ որևէ մեկի մասին վատ բանի հավատալուց և բոլորի մեջ հավատում եմ լավագույնին: Եվ ավելի հաճախ նրանց հաղորդած լուրը ընդամենը ասեկոսե է եղել:

Աստծո սերը միշտ պատրաստ է յուրաքանչյուրի մեջ հավատալու լավագույնին: Եվ քանի որ Աստված սեր է, դա նշանակում է, որ Նա միշտ պատրաստ է մեզնից յուրաքանչյուրի մեջ հավատալու լավագույնին:

Վերստին ծնվելուց հետո ինչ-որ բան ներսումս՝ *հոգուս մեջ*, կարծես ստիպում էր ինձ լավագույնին հավատալ բոլորի մեջ: Մարդկային բնությունս միշտ չէ, որ ուզում էր դա, սակայն Աստվածաշունչն ասում է, որ Քրիստոսի սերը ստիպում է մեզ անել այն, ինչը ճիշտ է (Բ Կորնթ. 5.14):

Այդ իսկ պատճառով պետք է թույլ տանք, որ Աստծո սերը դրդի մեզ բոլորի մասին լավը մտածելու, որպեսզի չլինենք դյուրագրգիռ, նեղացկոտ կամ հիշաչար: Այդպես ավելի հեշտ կլինի հաշվի չառնել մեր դեմ գործված չար բաները:

Ա Կորնթացիների 13.8-րդ խոսքում գրված է, որ Աստծո սերը երբեք չի ձախողվում, չի մարում, չի մաշվում և չի սպառվում: Աստված սեր է. եթե *սերը* վերջ ունենար, նշանակում է՝ *Աստված* նույնպես կարող էր վերջ ունենալ: Սակայն Աստված վերջ չունի. վերջ չունի նաև Նրա սերը:

Ոմանք մտածում են, որ քո դեմ գործված չարիքը հաշվի չառնելը և դրան ուշադրություն չդարձնելը թուլության նշաններ են, սակայն դա այդպես չէ: Նման կերպ վարվելը աստվածային սիրո դրսևորում է: Եվ որքան ավելի մոտ ես Աստծուն, այնքան ավելի է Նրա սերը քեզ ղեկավարում, այնքան ավելի ներողամիտ ես լինում և ուշադրություն չես դարձնում քո հանդեպ թույլ տրված սխալին:

Տարիներ շարունակ, երբ որևէ մեկը որևէ սխալ բան էր անում իմ նկատմամբ, ոմանք ասում էին. «Եթե քո տեղում լինեի, չէի հանդուրժի դա»:

Ոմանք նույնիսկ ասում էին, որ դա իմ բնավորության թուլությունն է, որ չեմ վիճում ինձ հետ վիճողների հետ: Ասում էին, որ իմ հանդեպ թույլ տրված սխալին ուշադրություն չդարձնելը բնավորությանս թերությունն է: Օրինակ՝ կարող էին հարցնել. «Նա քեզ կոպտեց, չէ՞»:

Իսկ ես պատասխանում էի. «Ո՛չ, ո՛չ: Նա նման բան չի ասել: Ես անգամ ուշադրություն չդարձրի, թե նա ինչ ասաց»: Այսքան տարիների ընթացքում ուշադրություն չեմ դարձրել իմ հանդեպ թույլ տրված սխալին: Փոխարենը շարունակում եմ քարոզել, սիրել և առողջ մնալ:

Նույնիսկ երբեմն ծառայակից ընկերներս ինձ ասել են. «Քո փոխարեն հաստատ չէի հանդուրժի դա, չէի համակերպվի դրա հետ. ինչ-որ բան կանեի»: Իսկ ես ոչինչ էլ չէի անում. պարզապես *քայլում էի սիրո մեջ և* առողջ մնում: Նկատել եմ, որ ինձ նման բան ասողները տարաժամ են մահացել:

Ես պարզապես հասկացել եմ, որ եթե քննադատեմ կամ վրեժ լուծեմ իմ հանդեպ վատ վարված կամ իմ մասին վատ արտահայտված մարդկանցից՝ ինքս *նրանց քննադատելով կամ* նրանց մասին վատ բաներ ասելով, դա խոչընդոտելու է իմ ընթացքն Աստծո հետ:

Բացի այդ՝ *ես գիտեմ, որ* Աստվածաշունչն ասում է՝ սերը երբեք չի *ձախողվում,* այնպես որ ավելի լավ է իմ դեմ սխալ գործած մարդկանց համար ինչ-որ բարի բան անեմ, որպեսզի այդ իրավիճակում գործի դնեմ Աստծո սերը:

Շատերն են ձախողվել ու նույնիսկ տարաժամ մահացել, քանի որ, շարժվելով բնական հունով, անընդհատ նյարդայնացել և վեճի

են բռնվել: Իսկ դա ազդում է մարդկանց վրա ոչ միայն հոգևորապես, այլև ֆիզիկապես:

Հիշում եմ, գնացել էի հովվություն անելու մի եկեղեցում, որի նախկին հովիվը բավականին դժվարությունների էր բախվել այդ եկեղեցին հովվելիս: Այն բանից հետո, երբ նա ի վերջո թողել էր եկեղեցին, մարդկանց կեսը նրա կողմն էր անցել, իսկ մյուս կեսը դեմ էր նրան:

Նա շարունակում էր ապրել այդ քաղաքում և այցելում էր իր նախկին եկեղեցու անդամներին ու նրանցից տասանորդ ու նվիրաբերություններ հավաքում, թեև արդեն այդ եկեղեցու հովիվը չէր: Իսկ իմ եկեղեցու անդամներին ասում էր, որ նրանք Աստծո կամքից դուրս են եկել, քանի որ *ինքը* պետք է լիներ այդ եկեղեցու հովիվը:

Ի վերջո հարանվանության ծառայողներն իմացան դրա մասին և եկան ինձ մոտ, քանի որ ես էի նոր հովիվը: Նրանք ասացին. «Եղբա՛յր Հեգին, միայն մեկ խո՛սք ասա, և մենք նրան կհեռացնենք անդամությունից և կվերցնենք նրա ծառայողական փաստաթղթերը»:

Ես պատասխանեցի. «Ո՛չ, ես նման բան չեմ անի: Եթե նա շարունակի վարվել այնպես, ինչպես վարվում է, հոգևորապես երկար չի դիմանա, սակայն ես չեմ նպաստի նրա անկմանը»:

Գիտե՞ք, սերը հաշվի չի առնում իր հանդեպ սխալը: Սակայն բավական է՝ ես նպաստեմ ինչ-որ մեկի անկմանը, դա կանդրադառնա ինձ վրա հոգևորապես և ֆիզիկապես, իսկ ես չեմ ցանկանում, որ ինչ-որ բան խոչընդոտի իմ հոգևոր աճը:

Ես չեմ ցանկանում սատանայի համար դուռ բացել, որպեսզի նա ինչ-որ հիվանդություն կամ ախտ բերի ինձ վրա: Ես չեմ սիրում հիվանդությունը: Հիվանդ եմ եղել կյանքիս առաջին տասնյոթ տարիներին ու հիմա հիվանդության նշույլ անգամ չեմ ուզում: Իսկ ես գիտեմ, որ առողջ լինելու և հոգևորապես աճելու համար անհրաժեշտ է քայլել ուրիշների հանդեպ սիրո մեջ:

Ավելի լավ է թույլ տամ, որ Տերը հոգա իմ հանդեպ թույլ տրված սխալների հարցերը, քան ինքս միջամտեմ: Քանի որ եթե ինքս միջամտեմ, ամենայն հավանականությամբ, հոգևոր ոլորտում անախորժության մեջ կհայտնվեմ: Սխալը սխալով չես շտկի:

Ուստի ծառայողներին ասացի. «Ո՛չ, ես նրա դեմ ոչինչ չեմ ասի: Նրա անկմանը նպաստելու փոխարեն կօգնեմ նրան: Կնպաստեմ նրա հաջողությանը՝ նրա համար աղոթելով»:

Այնուհետև՝ որոշ ժամանակ անց, ինձ հնարավորություն ընձեռվեց այդ մարդու համար օրհնություն լինելու: Նա ատաղձագործ էր և իր ընտանիքի համար տուն էր կառուցել: Գնացի նրա

մոտ ու ասացի, որ կպաստառապատեմ նրա տունը:

Երբ վերջացրի պաստառապատումը, նա հարցրեց ինձ. «Որքա՞ն պետք է վճարեմ քեզ»:

Ես պատասխանեցի. «Ոչինչ վճարել պետք չէ. Տերն է ասել, որ սա անեմ քեզ համար՝ որպես սիրո նվիրաբերություն»:

Իմ այդ խոսքերից հետո նա և կինը լաց եղան: Նրանք խոստովանեցին, որ այցելել էին իմ եկեղեցու անդամներին, և ապաշխարեցին: Ասացին. «Եղբա՛յր Հեգին, բայց մենք քո դեմ ոչինչ չենք խոսել քո եկեղեցու անդամների կամ մեկ ուրիշի մոտ»:

Ես պատասխանեցի. «Նախ և առաջ որևէ բան չկար, որ դուք կարող էիք իմ դեմ ասել: Մյուս կողմից, սիրելի՛ քույր և եղբայր, երբևիցե կանգ առել և խորհե՞լ եք սրա շուրջ:

Երբ դուք այցելում էիք իմ եկեղեցու անդամներին և ասում, որ նրանք դուրս են եկել Աստծո կամքից, քանի որ դուք պետք է լինեիք նրանց հովիվը, դուք բաժանում և վիճաբանություններ էիք առաջացնում: Իրականում դուք խոսում էիք իմ դեմ, որովհետև հիմա ես եմ այդ եկեղեցու հովիվը: Աստված է ինձ դրել այստեղ. այնպես որ, դա նույնն է, որ դուք իմ դեմ էիք խոսում»:

Երկուսն էլ ասացին. «Մենք սխալ էինք. կներե՞ս մեզ»:

Ասացի՝ իհարկե, ներում եմ և հրավիրեցի նրանց վերադառնալու և քարոզելու եկեղեցում: Կարևոր էր, որ նախկին հովիվը վերականգնվեր մարդկանց աչքերում և շտկեր հարաբերությունները հարանվանության հետ, որպեսզի կարողանար շարունակել ծառայել:

Սակայն նրանք չցանկացան վերադառնալ եկեղեցի՝ քարոզելու: Ասացին. «Ո՛չ, չենք կարող վերադառնալ և քարոզել: Մարդիկ մեզ չեն սիրում»:

Ես երբևիցե թույլ չտվեցի, որ իմ հարանվանության մարդիկ այդ զույգի դեմ որևէ բան խոսեն: Դա ոչ միայն կխախտեր սիրո օրենքը, այլև վտանգավոր էր: Ես չեմ ուզում խոսել Աստծո ծառաներից որևէ մեկի դեմ:

Աստվածային սերը խաղաղարար է

Հիշո՞ւմ եք, Հին Կտակարանում, երբ Սավուղը ընկած վիճակում էր և փորձում էր սպանել Դավթին, Դավիթը չվնասեց Սավուղին, թեև դա անելու բազում հնարավորություններ ունեցավ: Դավիթն ասաց. «*Մի՛ դիպեք իմ օծյալներին և իմ մարգարեներին չար բան մի՛ արեք*» (Ա Մնաց. 16.22, Սաղմ. 105.15):

Ես չեմ ուզում ինձ վրա Աստծո օծյալներին որևէ կերպ դիպչելու մեղք վերցնել: Այնպես որ, իմ հնարավորությունների սահմաններում առավելագույնն արեցի՝ մարդկանց մեջ նախկին հովվի հանդեպ բարյացակամություն առաջացնելու, քանի որ Աստծո սերը մեր մեջ խաղաղարար է:

Աստվածային սերը խաղաղարար է: Եվ այն միշտ ի վերջո հաղթում է: Ուստի ես խնդրում էի այդ զույգին, որ գան և քարոզեն իմ եկեղեցում. նրանք վերջապես համաձայնեցին:

Երբ այդ նախկին հովիվը բարձրացավ քարոզելու, ահա թե ինչ ասաց. «Սիրելինե՛ր, խնդրում եմ, որ ներեք ինձ: Ես սխալ էի. ասում էի, որ Աստված չի կարող օրհնել այս եկեղեցին, քանի որ կարծում էի, թե ես պիտի շարունակեի հովվություն անել այստեղ, սակայն տեսնում եմ, որ Աստված օրհնում է այն: Ուզում եմ՝ բոլորդ իմանաք, թե որքան խանդավառված եմ այն ամենով, ինչ Աստված այստեղ անում է»:

Երբ նա ապաշխարեց իր սխալ վարմունքի համար, մարդիկ ներեցին նրան:

Սերը երբեք չի ձախողվում. այն միշտ հաղթում է: Աստվածային սերը խաղաղարար է: Աստվածաշունչն ասում է. *«Բայց ամենից առաջ սերը սերտ ունեցեք իրար հետ, որ սերը ծածկում է մեղքերի շատությունը»* (Ա Պետր. 4.8): Որքան ավելի լավ էր վերամիավորել նախկին հովվին և նրա կնոջը այդ հարանվանության հետ, քան թույլ տալ, որ վիճաբանությունները և տարաձայնությունները շարունակվեին:

Այդ եկեղեցին կորցնելուց հետո նրանք սկսել էին մտածել ընդհանրապես ծառայությունը թողնելու մասին: Սակայն քանի որ ապաշխարեցին և հաշտվեցին հարանվանության հետ, ծառայությունը թողնելու փոխարեն գնացին մեկ այլ վայրում եկեղեցի հիմնելու, և Աստված օրհնեց նրանց:

Դա շատ ավելի լավ էր, քան թույլ տալ, որ վեճերը քանդեին այդ զույգի ծառայությունը: Հենց այդ պատճառով է, որ ես չեմ նպաստի որևէ մեկի անկմանը: Սերը հաշվի չի առնում իր հանդեպ թույլ տրված սխալը:

Ես շարունակելու եմ փառաբանել և երկրպագել Տիրոջը՝ անկախ այն բանից, թե մարդիկ ինչ կանեն իմ հանդեպ կամ ինչ կխոսեն իմ մասին: Եվ քանի որ ջանում եմ քայլել աստվածային սիրո օրենքի մեջ, շարունակելու եմ վայելել ամուր առողջությունս և Աստծո օրհնությունները:

Թո՛ղ մարդիկ ասեն և անեն, ինչ կամենում են, ես ջանալու եմ քայլել աստվածային սիրո մեջ: Սերը լավագույն ճանապարհն է, և այն *մեր* ճանապարհն է, քանի որ աստվածային սերը սփռված է մեր սրտերում:

Սովորե՛ք թույլ տալ, որ Աստծո սերը ղեկավարի ձեզ

Պարզապես Աստծո սիրո մեջ քայլելը կլուծի մեր բոլոր խնդիրները տանը: Այն կլուծի մեր բոլոր խնդիրները նաև եկեղեցում: Իրականում այն կլուծի նաև մեր բոլոր խնդիրներն ամուսնության մեջ:

Ահա թե ինչու է Աստվածաշունչն ասում, որ մենք Աստծո սերը պետք է դարձնենք մեր կյանքի գերնպատակը: Աստվածաշնչի *«Ընդլայնված»* թարգմանությունում գրված է. «Ջերմեռանդությամբ հետամո՛ւտ եղեք և ձգտե՛ք [այս] սիրուն. դարձրե՛ք այն ձեր նպատակը, ձեր ամենամեծ ձգտումը…» (Ա Կորնթ. 14.1):

Եթե Աստծո սերն այնքան հզոր է և տոկուն, որ երբեք չի ձախողվում, ապա ինչո՞ւ ավելի շատ հավատացյալներ չեն հետևում նրան, ինչ Աստվածաշունչն է ասում, և Աստծո սերը չեն դարձնում իրենց նպատակը և ամենամեծ ձգտումը իրենց կյանքում: Քանի՞սը մեզնից կարող են ազնվորեն ասել, որ իրենց կյանքում ամենամեծ ձգտումը Աստծո սերն է:

Մինչդեռ մեր միջոցով գործող և ուրիշներին հասնող Աստծո սերը կարող է փոխել ցանկացած մարդու, նույնիսկ ամենադաժան հանցագործին. այն կարող է փափկեցնել ամենակոշտ սրտերը: Աստծո սերը կարող է վերափոխել յուրաքանչյուրին:

Աստվածային սերը կարող է վերափոխել նույնիսկ ամուսնությունը: Ես երբեմն մեջբերում եմ մի ծառայողի կնոջ պատմություն, որ զանգահարել էր կնոջս՝ օգնության խնդրանքով. նա պատրաստվում էր լքելու իր ամուսնուն, քանի որ վերջինս նրան ենթարկում էր թե՛ հոգեբանական և թե՛ ֆիզիկական բռնության:

Ես ասացի կնոջս. «Եթե կարող ես, այնպե՛ս արա, որ նրանք միասին մեզ հյուր գան, որ կարողանանք խոսել նրանց հետ»:

Երբ եկան, նրան հարցրի նաև, թե արդյոք ունեն Աստվածաշնչի «*Ընդլայնված*» թարգմանությունը: Ունեին, ուստի ասացի, որ 3x5 չափսի թղթի վրա դուրս գրեն Ա Կորնթացիների 13.4-8-րդ խոսքերը և ամեն գիշեր՝ քնելուց առաջ, բարձրաձայն կարդան դրանք, նույնը անեն նաև, երբ առավոտյան արթնանան:

Մի քանի շաբաթ անց այդ կինը զանգահարեց կնոջս և ասաց. «Գիտե՞ք, ամեն առավոտ և ամեն երեկո մենք արել ենք, ինչպես եղբայր Հեգինն էր ասել. բարձրաձայն ընթերցել ենք Աստծո սիրո մասին խոսքերը,- ապա ավելացրեց,- այն օրից, ինչ սկսել ենք կարդալ այդ խոսքերը, ամուսինս ամեն օր ներողություն է խնդրում ինձնից՝ ասելով, թե չի կարողանում հավատալ, որ նախկինում ինձ վատ է վերաբերվել ու նման բաներ է ասել»:

Այդ մարդը թույլ չէր տվել, որ մարդկային բնությունը ղեկավարեր իրեն, փոխարենը նա թույլ էր տվել, որ հոգին ղեկավարեր իրեն: Աստծո սերն արդեն սփռված էր նրա սրտում կամ նրա ներսում. նա պարզապես պետք է սովորեր ինչպես օգտվել այդ սիրուց:

Ահա թե ինչպես էր կինը բնութագրում նրան այն բանից հետո, երբ նա սկսել էր թույլ տալ, որ աստվածային սերը ղեկավարեր իր կյանքը. «Նա ուրիշ մարդ է դարձել, և ոչ միայն *նա*, ես նույնպես փոխվել եմ:

Ես հասկացել եմ, որ մեծ մասամբ ես եմ մեղավոր եղել նրա պոռթկումների համար, քանի որ շարունակ փնթփնթացել եմ: Բերանս փակ պետք է պահեի: Բայց մենք երկուսս էլ հիմա ուրիշ մարդիկ ենք, քանի որ Աստծո սերը փոխել է մեզ»: Աստծո սերը երբեք չի ձախողվում:

Սա տեղի է ունեցել մի քանի տարի առաջ: Վերջերս ես ու կինս նորից հանդիպեցինք այդ զույգի հետ. նրանք շատ երջանիկ են միասին:

Նրանք ասացին մեզ, որ իրենց ծառայությունը ծաղկում է, իրենց կյանքն է նաև բարելավվել, պարզապես որովհետև հասկացել էին ինչպես թույլ տալ, որ Աստծո սերը ղեկավարի իրենց. աստվածային սերը փոխել էր նրանց:

Փառք Աստծուն՝ նրանք հասկացել էին, թե որտեղ է պատասխանը: Կյանքում բազում խնդիրների պատասխաններ ամփոփված են հետևյալ պնդման մեջ՝ *Աստծո սերը երբեք չի ձախողվում*:

Հետևաբար, եթե *դուք* սովորեք վարվել Աստծո սիրով, դուք ևս երբեք չեք ձախողվի. խոսքս վերաբերում է աստվածային սիրուն՝ Աստծո սիրուն, որը մեր մեջ է, և ոչ թե մարդկային սիրուն:

Եթե կինը և ամուսինը վարվեն Աստծո սիրով, նրանց ամուսնությունը ևս չի ձախողվի. դա պարզապես անհնար կլինի: Ինչպես տեսնում եք, Աստծո սերը մեր մեջ է, սակայն մենք ենք որոշում՝ գործի դնենք, կիրառենք այն, որ աճի և զարգանա, թե ոչ:

Քանի որ Աստծո սերը չի ձախողվում, հարկավոր է ավելի շատ

բան իմանալ այդ տեսակի սիրո մասին: Պետք է պարզենք ինչպես զարգացնել այն և ինչպես օգնել, որ աճի ու հասունանա:

Սերը հոգու պտուղ է

Պետք է հասկանանք, որ սերը կարող է աճել և զարգանալ, քանի որ այն հոգու պտուղ է, իսկ պտուղն աճելու հատկություն ունի: Երբ Աստվածաշունչը խոսում է հոգու պտղի մասին, նկատի չունի Սուրբ Հոգու մկրտության պտուղը:

Սերը վերստեղծված մարդկային հոգու պտուղն է: Հոգու պտուղը ստանում եք, երբ վերստին ծնվում եք: Իրականում հոգու առաջին պտուղը, որ նշված է Աստվածաշնչում, սերն է:

> **ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.22,23**
>
> **22 Բայց Հոգու պտուղն է սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն,**
>
> **23 քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն. ԱՅՆՊԻՍԻՆՆԵՐԻ ԴԵՄ ՕՐԵՆՔ ՉԿԱ:**

«Մոֆֆաթի» թարգմանությունում գրված է. «Հոգու բերքն է սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, բարություն, առատաձեռնություն, հավատարմություն, հեզություն, ինքնատիրապետում, և օրենք չկա նրանց դեմ, ովքեր գործի են դնում այս ամենը»:

«Ընդլայնված» թարգմանությունում գրված է. «…Այս բաների դեմ օրենք չկա [որ կարող է մեղադրանք բերել]» (խոսք 23): Եթե դուք սիրով եք վարվում, ձեր դեմ ոչ մի մեղադրանք չի կարող բերվել:

«Քինգ Ջեյմս» թարգմանության մեջ Գաղատացիների 5.22-րդ խոսքում «հոգի» բառը գրված է մեծատառով, ինչի պատճառով էլ մենք կարծում ենք, որ խոսքը Սուրբ Հոգու մասին է:

Սակայն *«Նոր Կտակարանի բառերի Վ. Է. Վայնի բացատրական բառարանում»* նշված է, որ հունարենում միայն մեկ բառ է օգտագործվում «հոգի» բառի համար՝ «պնևմա»-ն, որը նշանակում է *շունչ* կամ *հոգի*:

Ուստի երբեմն դժվար է հասկանալ՝ Աստվածաշունչը խոսում է Սուրբ Հոգու, թե մարդկային հոգու մասին (եթե իհարկե մասնավորապես նշված չէ «Սուրբ Հոգի» բառը), քանի որ երկու դեպքում էլ հունարենում միայն մեկ բառ է գործածվում՝ «պնևմա»:

Ակնհայտ է, որ Գաղատացիների 5.22-ում Աստվածաշունչը խոսում է մարդկային հոգու և ոչ թե Սուրբ Հոգու մասին: Ինչպե՞ս ես դա հասկացա:

Ինքներդ ձեզ հա՛րց տվեք՝ *որտե՞ղ է աճում պտուղը*: Պտուղն աճում է ճյուղերին այն կյանքի շնորհիվ, որը գալիս է ծառի բնից կամ որթից: Հիսուսն ասաց. *«Ես ՈՐԹՆ [բունն] եմ, դուք՝ ՃՅՈՒՂԵՐԸ. նա, որ ԻՆՁԱՆՈՒՄ մնում է, և Ես՝ նրանում, նա շատ պտուղ է բերում, որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել»* (Հովհ. 15.5):

Ովքե՞ր են ճյուղերը: Սուրբ Հոգի՞ն: Ո՛չ, *մենք* ենք ճյուղերը: Պտուղն աճում է ճյուղերի վրա, ոչ թե ծառի բնի: Հետևաբար, քանի որ մենք ենք ճյուղերը, հասկանում ենք, որ հոգու պտուղը վերաբերում է մեր՝ վերստեղծված մարդկային հոգուն:

Սիրո պտուղը ձևավորվում է մեր վերստին ծնված մարդկային հոգում այն կյանքի շնորհիվ, որը հոսում է որթից՝ Տեր Հիսուս Քրիստոսից, երբ մնում ենք Նրա մեջ:

Հիսուսն օգտագործեց ծառի պատկերը՝ սովորեցնելու մեզ վերստեղծված մարդկային հոգու պտղի մասին:

Հովհաննես 15.4-ում Հիսուսը հրաշալի մի պնդում է անում. Նա ասում է. *«Ճյուղն իր անձից չի կարող պտուղ բերել, եթե որթում չմնա»*: Սերը վերստին ծնված մարդկային հոգու առաջին պտուղն է այն կյանքի շնորհիվ, որը գալիս է Քրիստոսում մնալուց:

Տեխաս նահանգի Գառլենդ քաղաքում գտնվող մեր փոքրիկ տան ետնաբակում մի տանձենի ունեինք: Պտուղը քաղցր էր, լավ պահածո էր ստացվում: Ծառից տանձը ես էի քաղում, որ կինս պահածոյացներ, և երբեք չեմ տեսել, որ տանձը ճյուղերից բացի որևէ այլ տեղում աճեր:

Իսկ ինչպե՞ս է, որ պտուղն աճում է ճյուղին: Պատճառն այն է, որ ճյուղն ինչ-որ բան է ստանում ծառի բնից կամ *որթից*: Կյանքը որթից հոսում է դեպի ճյուղերը:

Հետևաբար հասկանում ենք, որ հոգու պտուղը վերստեղծված մարդկային հոգու պտուղն է, որը կյանք է ստանում Քրիստոսից, Ով բնակվում է մեր հոգիներում:

Այդ կյանքը Սուրբ Հոգին փոխանցում է մեր հոգիներին Աստծո Խոսքի միջոցով: Այդպես աստվածային սերը գրվում է մեր սրտերում կամ հոգիներում:

Եթե միայն թույլ տայինք, որ այդ սերը ղեկավարեր մեզ, մեր կյանքն այնպե՞ս կփոխվեր: Քանի որ սերը մեր վերստեղծված մարդ-

կային հոգիների պտուղն է, այն կարող է աճել և զարգանալ: Աստծո սերը սփռված է մեր սրտերում, ու մենք ենք որոշում ինչպես վարվել սիրո այդ բնության հետ:

Իրականում, թեև Աստծո սերը մեր մեջ է, սփռված է մեր սրտերում, այն չի գործի ու չի զարգանա, քանի դեռ մենք այն գործի չենք դրել: Աստվածային սերը գործի դնելը և զարգացնելը *մեր* անելիքն է:

Մենք կարող ենք սնել մեր սրտերում ապրող Աստծո սերը Աստծո Խոսքով, վարժվել դրանում, և այն կաճի, քանի որ սերը պտուղ է: Մենք կարող ենք զարգանալ սիրո մեջ, քանի որ պտղին հատկանշական են աճելը և զարգանալը:

Խորհե՛ք սրա շուրջ: Պտուղը երբեք հասած չի առաջանում. այն հանկարծակի չի հայտնվում ճյուղերին արդեն հասած: Այն սկսվում է բողբոջից և հասնում է՝ կյանք առնելով որթից՝ ծառի բնից:

Թույլ տվեք պատկերավոր ներկայացնել ձեզ՝ ինչպես է պտուղն աճում, զարգանում և մեծանում: Ես ավելի քան հիսուն տարի է, ինչ ամուսնացած եմ: Եվ ավելի քան հիսուն տարի առաջ, երբ ես ու կինս ամուսնացանք, կարծում էի, թե այնքա՛ն շատ եմ նրան սիրում, որ երբևէ չեմ կարող սիրել նրան ավելի, քան այդ պահին: Սակայն հիմա՝ հիսուն և ավելի տարիներ անց, այնպիսի տպավորություն է, որ այն ժամանակ գրեթե չեմ սիրել նրան, քանի որ հիմա նրան շա՛տ ավելի եմ սիրում:

Երբ նոր էինք ամուսնացել, խոստացանք միմյանց, որ միշտ կսիրենք իրար: Պատկերացրե՛ք, որ մինչ օրս այդպես է: Օրինակ՝ այս տարիներին մենք սովորություն ենք դարձրել ամեն անգամ սեղան նստելիս աղոթելուց հետո իրար համբուրելը: Մենք վարժեցնում ենք մեր անձը սիրով վարվելու մեջ:

Գործի դրված սերը մեծ վարձք է բերում: Սերը միշտ առաջնահերթությունը տալիս է դիմացինին: Ես կատարյալ մարդ չեմ, բայց միշտ ջանացել եմ կնոջս տալ առաջնահերթությունը: Բոլոր այս տարիների ընթացքում փորձել եմ անել այն, ինչը նրան է դուր գալիս:

Օրինակ՝ երբ տանն եմ, նախաճաշը միշտ ես եմ պատրաստում: Դա արել եմ մեր հիսուն և ավելի համատեղ տարիների ընթացքում: Եվ երբ նախաճաշ եմ պատրաստում, միշտ կնոջս եմ տալիս ամենալավ ձուն և բեկոնի ամենալավ կտորը, քանի որ սերը հենց այդպես է վարվում:

Բնական սե՞ր: Ո՛չ: Մարդկային բնությունը կասեր. «Ես եմ ուզում բեկոնի ամենալավ կտորը: Ես ամեն ինչի ամենալավն եմ ուզում: Ինձ համար առաջնային են իմ իրավունքներն ու իմ ճանապարհը»:

Սակայն ես հրաժարվում եմ թույլ տալուց, որ իմ մարդկային բնությունը ղեկավարի ինձ: Դա սխալ մտածելակերպ է, իսկ ես թույլ չեմ տա, որ սխալ մտածելակերպը ղեկավարի ինձ: Փոխարենը թույլ եմ տալիս, որ իմ ներսում եղող Աստծո սերը ղեկավարի ինձ:

Քանի որ Աստծո սերը սփռված է մեր սրտերում, մենք պետք է թույլ տանք, որ մեզ ղեկավարի մեր սի՛րտը և ոչ թե մեր գլուխը՝ մարդկային մտածելակերպը:

Որքան ավելի քիչ եք խոսում մեկդ մյուսի հանդեպ ունեցած սիրո մասին, որքան ավելի քիչ եք փոխանցում դա միմյանց, այնքան ավելի հեռանում եք իրարից: Ի վերջո կարող եք այնքան հեռանալ, որ նույնիսկ զարմանաք, թե ինչու եք ամուսնացել:

Սա բացարձակ ճշմարտություն է և վերաբերում է նաև հոգևոր կյանքին: Որքան քիչ եք խոսում Աստծո հետ, որքան քիչ եք կարդում Աստվածաշունչ կամ խոստովանում, որ սիրում եք Աստծուն, այնքան Ձեր հարաբերություններն Աստծո հետ թուլանում են և կորցնում քաղցրությունը: Իսկ որոշ ժամանակ անց անգամ կասկածում եք՝ փրկված եք, թե ոչ:

Սակայն որքան ավելի եք խոստովանում, որ սիրում եք Աստծուն ու Նրա խոսքը, այնքան ավելի է աճում ու զարգանում ձեր սերը Նրա հանդեպ: Այդպես Հիսուսը ձեզ համար առավել իրական է դառնում:

Այնպես որ շարունակաբար սնե՛ք սիրո բնությունը, որը ձեր հոգում է՝ գործի դնելով աստվածային սերը և վարժվելով դրանում: Եթե շարունակաբար վարժվեք դրանում, այն կաճի ու կզարգանա:

Սիրո պտղին հատկանշական են աճելը, զարգանալը և մեծանալը: Աստծո սերը մեզանում ավելանում է, երբ դրա մասին խոսում ենք և դրան համաձայն գործում: Սերն արտահայտվում է խոսքի և գործի միջոցով: Գործե՛ք աստվածային սիրով և տեսե՛ք, թե ինչպես այն կաճի ու կավելանա:

Փառք Աստծուն՝ մենք կարող ենք աճել սիրո մեջ, քանի որ պտուղն ունի աճելու հատկություն: Բայց խորհե՛ք սրա շուրջ. Աստծո սերը չի գործի մեզ համար, քանի դեռ մենք այն գործի չենք դրել: Սերը չի աճի ու չի զարգանա, եթե մենք մեր անձը դրանում չվարժեցնենք: Այնպես որ յուրաքանչյուրիս պատասխանատվությունն է զարգացնել մեր սերը՝ դրանում վարժվելով:

Աստվածաշունչն ասում է. «Կատարյալ սերը հեռացնում է վախը» (Ա Հովհ. 4.18): Չգիտեմ՝ արդյոք մեզնից որևէ մեկը երբևէ հասնե՞լ է սիրո մեջ այդպիսի կատարելության, բայց փառք Աստծուն՝ մենք *կարող ենք* աճել ու զարգանալ սիրո մեջ: Փառք Աստծուն, որ մենք

կարող ենք կատարելագործվել ու հասունանալ սիրո մեջ:

Դա չի նշանակում, որ այստեղ՝ այս կյանքում, հասնելու ենք կատարելության: Եվ չի նշանակում, որ լինելու ենք Աստծո նման կատարյալ: Սակայն նշանակում է, որ մենք կարող ենք հասունանալ աստվածային սիրո մեջ: Ու սիրո պտուղը նվազագույնը պետք է սկսի բողբոջել մեր կյանքերում:

Որպեսզի սիրո պտուղը հասունանա, ժամանակ կպահանջվի: Գուցե դեռևս չենք տեսնում հասած պտուղը, սակայն գոնե կարող ենք տեսնել, որ սկսում են հայտնվել ծիլեր, ինչից էլ հասկանում ենք, որ մեր սերն աճում ու զարգանում է:

Մի հավաքույթ էի անցկացնում, երեք հովիվ էին եկել իմ ծառայություններին ներկա լինելու: Հավաքույթից հետո միասին գնացինք ընթրելու և շփվելու: Հովիվները սկսեցին խոսել Աստծո սիրո թեմայից:

Ես պարզապես հետևում էի նրանց խոսակցությանը. շատ չէի խոսում: Երբեմն ավելի շատ բան կարող ես սովորել լսելով, քան խոսելով, քանի որ արդեն գիտես ամենը, ինչ *ինքդ* պետք է ասես:

Ինչևիցե, այդ հովիվները խոսում էին այն մասին, թե որքան են հավատացյալները թերանում սիրով վարվելու մեջ: Հովիվներից մեկն ասաց. «Լսե՛ք, թե ինչ կասեմ ձեզ. մենք պետք է աղոթենք: Պետք է աղոթենք, որ Աստված մեզ սեր տա: Մենք պարզապես չունենք Աստծո սերը բավարար չափով»:

Ես ոչինչ չասացի, սակայն մտածեցի. «Եթե Աստծո սերը սփռված է մեր սրտերում, ապա այն անձնավորությունը, որը կարծում է, թե սեր չունի, պարզապես պետք է սովորի քայլել այն բանի լույսի ներքո, ինչն ինքն արդեն ունի: Ահա որտեղ է խնդիրը»:

Ի վերջո հովիվներից մեկը հարցրեց ինձ.

«Եղբա՛յր Հեգին, իսկ դու ի՞նչ ես կարծում»:

Ես պատասխանեցի. «Իսկապե՞ս ցանկանում ես իմանալ»:

«Այո՛»,- պատասխանեց նա:

«Դե, եթե դուք, տղանե՛ր, չունեք սեր, ինչպես հենց նոր ասում էիք, ապա փրկվելու կարիք ունեք»: Նրանք ապշահար նայեցին ինձ, կարծես հենց նոր թաց սրբիչով նրանց դեմքին էի խփել:

Ես շարունակեցի. «Ձեր խոսքերի համաձայն՝ մենք չունենք Աստծո սերը, սակայն Աստվածաշունչն ասում է. «Գիտենք, որ մահից ի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք»: Եվ եթե մենք փրկված ենք, ապա Աստծո սերն ապրում է մեր սրտերում, քա-

նի որ, ըստ Աստվածաշնչի, «Աստծո սերը փռված է մեր սրտերում Սուրբ Հոգու ձեռով»» (Ա Հովհ. 3.14, Հռոմ. 5.5):

Հովիվը, որ տվել էր ինձ այդ հարցը, զարմացավ, իսկ հետո ասաց. «Գիտեմ, դու ճիշտ ես»:

Հետո ավելացրեց. «Ես հետևյալը կասեմ. ուրեմն մենք պետք է աղոթենք, որ Աստված մեզ սիրո մկրտություն տա: Եկեք պարզապես աղոթենք, որ Նա մկրտի մեզ Իր սիրով»:

Ես ասացի. «Սիրո մկրտություն գոյություն չունի: Սերը մկրտություն չէ. այն վերստեղծված մարդկային հոգու պտուղ է, որը հասունանում է Սուրբ Հոգու օգնությամբ, երբ վերստին ծնվում ենք:

Կարիք չկա աղոթելու, որ Աստված մեզ սեր ուղարկի, քանի որ Նա արդեն ամեն հավատացյալի տվել է աստվածային *սիրո* չափ, ճիշտ այնպես, ինչպես տվել է աստվածային *հավատքի* չափ: Մեր գործն այն ակտիվացնելը և մեր ներսում արդեն իսկ եղածն օգտագործելն է:

Եթե դուք փրկված եք, ապա արդեն ունեք աստվածային սիրո որոշակի չափ: Ու կարող եք քամվելու աստիճան աղոթել ու խնդրել, որ Աստված ձեզ ավելի շատ սեր տա, սակայն այն սերը, որ դուք ունեք, երբեք չի աճի, եթե չկերակրեք Աստծո Խոսքով և գործի չդնեք, որ զարգանա:

Եթե զարգացնեք, ապա այն կավելանա: Աստվածային սերը մեր մեջ ավելացնել կարելի է այն Աստծո Խոսքով կերակրելով և դրանում վարժվելով: Սիրո մեջ պետք է վարժվել, որպեսզի այն արդյունք տա, քանի որ սերը հոգու պտուղ է: Եվ եթե դուք հավատարմորեն վարժեցնեք ձեր անձը սիրո մեջ, այն մեծ պտուղ կտա»:

Աստվածային սերը պտուղ է: Խոսքն ասում է, որ եթե մենք մնանք Որթի մեջ, շատ պտուղ կբերենք (Հովհ. 15.1-8): Ուստի եթե հավատացյալը սեր չունի, ակնհայտ է, որ նա չի մնում Որթի մեջ և չի սնվում Որթից ինչպես հարկն է:

Շատ հաճախ հավատացյալները տարվում են բնական բաներով և դրանցով ապրում: Հետևաբար նրանք չեն օգտվում նրանից, ինչն արդեն իսկ իրենց է պատկանում: Նրանք ժամանակ չեն հատկացնում Որթից սնվելուն՝ հաղորդակցվելով Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա խոսքի հետ: Սակայն մենք պետք է հոգևոր բաներին առաջնահերթություն տանք:

Սիրո մեջ աճելու համար դուք ընդամենը պետք է մնաք Նրանում և թույլ տաք, որ Նա մնա ձեր մեջ աղոթքով, Խոսքով և Իր հետ հա-

ղորդակցվելով: Այնուհետև պետք է վարժվեք այն սիրո մեջ, որը ձեր ներսում է:

Մի՛ վիատվեք, եթե այս պահին սիրո պտղի միայն մի քանի ծիլ է երևում ճյուղին. պարզապես մնացեք Նրանում:

Ժամանակ անցկացրեք՝ Նրան սպասելով, Նրա Խոսքով սնվելով, և այն սերը, որը ծիլ է տվել, կծաղկի ու ի վերջո առատ պտուղ կտա Աստծո փառքի համար:

Հոգով գնալ նշանակում է սիրով վարվել

Ուզում եմ Աստծո սիրով վարվելու մեկ այլ կողմ մատնանշել: Գաղատացիների գրքում Պողոսը խոսում է Հոգով գնալու մասին: Ուշադրությունն դարձրեք, որ այս նամակն ուղղված չէ միայն մեկ եկեղեցու: Այն գրվել էր, որպեսզի ընթերցվեր Գաղատիայի բոլոր եկեղեցիներում:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.16

16 Բայց ասում եմ՝ ՀՈԳՈՎ ԳՆԱՑԵՔ և մարմնի ցանկությունը չեք կատարի:

Հաճախ, երբ հավատացյալները խոսում են Հոգով գնալու մասին, նրանց աչքերը և մտքերը կարծես մթագնում են: Տպավորություն է, որ նրանք կարծում են, թե Հոգով գնալը ինչ-որ առեղծվածային վերապրում է, Հոգուց բռնված՝ այս ու այն կողմ են շարժվելու:

Սակայն իրականում Հոգով գնալը շատ հեշտ է: Հոգով գնալը *հոգու պտղի* մեջ քայլելն է: Հոգով գնալը *սիրով* վարվելն է:

Ուշադրությունն դարձրեք, թե ինչ է ասում Պողոսը Հոգով գնալու մասին: Սկզբում նա թվարկում է մարմնի գործերը, իսկ հետո՝ հոգու գործերը:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.16, 18-25

16 Բայց ասում եմ՝ ՀՈԳՈ՛Վ ԳՆԱՑԵՔ և մարմնի ցանկությունը չեք կատարի...

18 Բայց ԵԹԵ ՀՈԳՈՒՑ ԵՔ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ, ՕՐԵՆՔԻ ՏԱԿ ՉԵՔ:

19 Եվ ՀԱՅՏՆԻ ԵՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԵՐԸ, որ են՝ շնություն, պոռնկություն, պղծություն, գիճություն,

20 կռապաշտություն, կախարդություն, թշնամություն-

ներ, կռիվներ, նախանձներ, բարկություններ, հակառակություններ, երկպառակություններ, բաժանմունքներ,

21 չար նայվածքներ, սպանություններ, արբեցություններ, անառակություններ և ինչ որ սրանց նման են, որ առաջուց ասում եմ ձեզ, ինչպես էլ առաջուց ասում էի, թե այնպիսի բաներ գործողներն Աստծո արքայությունը չեն ժառանգի:

22 Բայց ՀՈԳՈՒ ՊՏՈՒՂՆ է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն,

23 քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն. ԱՅՆՊԻՍԻՆՆԵՐԻ ԴԵՄ ՕՐԵՆՔ ՉԿԱ:

24 Բայց նրանք, որ Քրիստոսինն են, իրենց մարմինը խաչը հանեցին կրքերով և ցանկություններով միասին:

25 Եթե Հոգով ենք ապրում, ՀՈԳՈՎ ՎԱՐՎԵՆՔ:

Պողոսն ասում է. «Հայտնի են մարմնի գործերը...» (խոսք 19): Կամ կարող ենք այսպես ձևակերպել. «Եթե վարվում եք մարմնի թելադրանքով, ապա կդրսևորվեն մարմնի գործերը և կղեկավարեն ձեզ»:

Այնուհետև Պողոսը թվարկում է մարմնի գործերը՝ շնություն, պոռնկություն, պղծություն, գիճություն, կռապաշտություն, կախարդություն, թշնամություններ, կռիվներ, նախանձներ, բարկություններ, հակառակություններ, երկպառակություններ, բաժանմունքներ, չար նայվածքներ, սպանություններ, արբեցություններ, անառակություններ:

Սակայն 22-րդ խոսքում Պողոսը թվարկում է նաև հոգու պտուղը՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն և ժուժկալություն:

Տեսեք, թե ինչ է ասում Պողոսը Հոգով գնալու մասին.

«Հոգո՛վ գնացեք, և մարմնի ցանկությունը չեք կատարի» (Գաղ. 5.16):

Իսկ ինչպե՞ս գնալ Հոգով: Հոգով գնալ նշանակում է քայլել հոգու պտղի մեջ: Հոգով գնալ նշանակում է սիրով վարվել: Այլ կերպ ասած՝ Հոգով գնալ նշանակում է վարվել սիրով, ուրախությամբ, խաղաղությամբ, երկայնամտությամբ, քաղցրությամբ, բարությամբ, հավատքով, հեզությամբ և ժուժկալությամբ:

Այնուհետև Պողոսն ասում է. *«...այդպիսիների դեմ օրենք չկա»*: Այլ կերպ ասած, երբ վարվում եք ըստ հոգու պտղի, չկա այնպիսի մի օրենք, որով հնարավոր կլինի ձեր դեմ մեղադրանք ներկայացնել, քանի որ այդպես դուք կատարում եք օրենքի բոլոր պահանջները:

Եթե փորձենք պարզ ձևակերպել, ստացվում է, որ Հոգով գնալ նշանակում է վարվել ըստ վերստեղծված մարդկային հոգու ինը պտուղների: Ահա սա է Հոգով գնալը:

Սերն ընկերոջը չար չի անում

Հիմա եկե՛ք կարդանք Հռոմեացիների 13.10-ը, քանի որ այս խոսքում կա ճշմարտություն աստվածային սիրո մասին, որ մենք պետք է իմանանք:

> **ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 13.10**
> **10 ՍԵՐՆ ԻՐ ԸՆԿԵՐՈՋԸ ՉԱՐ ՉԻ ԱՆԻ. ուրեմն օրենքի լրումը սերն է:**

Աստվածային սիրո մեկ այլ հատկանիշ է այն, որ *«Սերն իր ընկերոջը չար չի անի»* (Հռոմ. 13.10): Առանց վախենալու, որ իմաստը կխաթարվի՝ այս խոսքը կարելի է նաև այսպես կարդալ. «Սերը ոչ մեկին չար չի անի»:

Տարիների ընթացքում ծառայության մեջ ես ու կինս շատ հնարավորություններ ենք ունեցել աստվածային սիրո մեջ վարժվելու, որպեսզի մեր սերն աճի ու զարգանա:

Մի անգամ գնացել էինք մի տեղ քարոզելու. այդ ժամանակ մեր ունեցած գումարը բավարար էր միայն այդ եկեղեցի հասնելու համար վառելիք գնելուն: Հասանք եկեղեցի ժամանակին, երեկոյան պետք է քարոզեինք: Քարոզից հետո քաղցած էինք, քանի որ ամբողջ օրն անցկացրել էինք ճանապարհին և շատ քիչ էինք սնվել:

Գիշերելու էինք հովվական կացարանում հովվի և նրա կնոջ հետ: Այնպես որ ծառայությունից հետո, երբ գնացինք տուն, կարծում էինք, թե նրանք մեզ ուտելու ինչ-որ բան կհյուրասիրեն:

Սակայն մեզ ընթրելու չհրավիրեցին, ոչ էլ տանը ինչ-որ բան հյուրասիրեցին, պարզապես գնացին քնելու, իսկ մենք անկողին մտանք քաղցած: Հաջորդ առավոտյան քաղցած արթնացանք, իսկ նրանք արդեն գնացել էին:

Կինս ասաց. «Գուցե գնացել են նախաճաշ պատրաստելու»: Բայց

նրանք չվերադարձան: Ավելի ուշ կինս ասաց. «Երևի ճաշի ժամին կգան ու մեզ ճաշելու կտանեն»:

Ճաշից հետո էլ չվերադարձան: Մենք մեկ լումա անգամ չունեինք գրպաններումս, քանի որ մեր ամբողջ գումարը ծախսել էինք՝ հասնելու այդ քաղաք՝ քարոզելու նպատակով:

Ի վերջո նրանք վերադարձան եկեղեցական հավաքույթից առաջ և պատրաստվեցին եկեղեցի գնալու, սակայն ոչինչ չասացին ընթրիքի կամ մեզ որևէ բանով կերակրելու մասին: Նրանք նույնիսկ չհարցրին, թե արդյոք ինչ-որ բան կերել էինք, քաղցած էինք, թե ոչ:

Արդեն մեկ ու կես օր էր, ինչ ոչինչ չէինք կերել և քաղցած էինք: Այլ բան է, երբ ծոմապահության մեջ ես ու փնտրում ես Աստծուն. նման պարագայում գիտես, որ պետք է մերժես մարմինդ: Սակայն մենք ծոմապահության մեջ չէինք: Պարզապես քաղցած էինք մնացել, որովհետև ուտելու ոչինչ չկար:

Երկրորդ երեկոյան, երբ ծառայությունն ավարտեցինք, մտածում էինք, որ գուցե հիմա ուտելու ինչ-որ բան կառաջարկեին, սակայն կրկին՝ ոչ մի բառ դրա մասին: Նրանք գնացին, և մենք պառկեցինք քնելու:

Հաջորդ առավոտյան արթնացանք, նրանք արդեն գնացել էին: Կարծում էինք, թե գոնե մինչև կեսօր կվերադառնային ու մեզ ինչ-որ տեղ կտանեին նախաճաշելու կամ գոնե ինչ-որ բան կհյուրասիրեին, բայց նրանք տուն չեկան:

Ի վերջո գնացինք խոհանոց՝ տեսնելու, թե արդյոք մի բան կգտնեինք ուտելու, քանի որ իսկապես շատ քաղցած էինք: Գտանք մի ծռմռված նրբերշիկ, մի ձու և մի կտոր չոր հաց: Հացը տաքացրինք, նրբերշիկն ու ձուն եփեցինք և կիսեցինք, կերանք ու մի բաժակ ջուր խմեցինք:

Կնոջս ասացի. «Գիտեմ, թե ինչ կանեմ»: Մարդկային բնությունդ և միտքդ կարող են բորբոքվել, երբ մարդիկ քեզ հետ վատ են վարվում: Հենց այդ պատճառով է Աստվածաշունչն ասում, որ դրանք պետք է հոգուն հնազանդեցնել:

Ասացի, որ զանգահարելու եմ այդ շրջանի վերակացուին ու հարցնեմ, թե այդ ինչ տեսակի ծառայողներ ունեն իրենց շրջանում, որ երկու օր է՝ մեզ ուտելու ոչինչ չեն տալիս: Երբ զգույշ չես լինում նման իրավիճակերում, մարդկային բնույթդ կարող է գլուխ բարձրացնել:

Մոտեցա հեռախոսին և հավաքեցի այդ տարածքի վերակացուի համարը, բայց ինչ-որ բան ներսումս ինձ հետ պահեց զանգը կատարելուց. դա Քրիստոսի սերն էր:

Վերադարձա ու ասացի կնոջս. «Չեմ կարող անել դա. չզանգահարեցի: Աստված թող օրինի իրենց: Համենայն դեպս նման կերպ վարվող հովիվները հոգևորապես երկար չեն դիմանա, բայց ես չեմ ցանկանում նպաստել նրանց անկմանը: Չեմ ուզում լինել մեկը, ով կգցի նրանց:

Ինձ համար միևնույնն է, որ նրանք սխալ են վարվում: Ես պետք է սիրով վարվեմ՝ անկախ այն բանից՝ իրենք նույնը կանեն, թե ոչ, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ սերն ընկերոջը չար չի անի»:

Երրորդ օրը՝ եկեղեցական ծառայությունից առաջ, այդ զույգը եկավ, ու նորից ոչինչ չասացին ընթրիքի մասին և ոչ էլ հարցրին, թե արդյոք քաղցած չէինք: Գնացինք եկեղեցի, հետո նրանք բերեցին մեզ տուն և նորից ուտելու ոչինչ չառաջարկեցին: Նվիրաբերությունից էլ ոչինչ չէին հատկացրել, որ գոնե մենք կարողանայինք ուտելու բան գնել:

Ստամոքսս արդեն ողնաշարիս էր կպել: Երբ մի քանի օր հաց չես ուտում, մարմինդ սկսում է աղաղակել: Ու ես նորից ասացի կնոջս. «Զանգահարելու եմ վերակացուին և հարցնեմ, թե այս ինչ տեսակի հովիվներ ունեն այս տարածքում»: Եթե ականջ դնես գլխիդ ու մարմնիդ, անախորժության մեջ կհայտնվես:

Մոտեցա հեռախոսին, բայց նորից ինչ-որ բան ներսումս թույլ չտվեց, որ անեմ դա: Քրիստոսի սերը զսպում էր ինձ:

Ասացի կնոջս. «Չեմ կարողանում դա անել: Այսօր՝ ծառայությունից հետո, կուզեի նստել մեքենան ու պարզապես հեռանալ այստեղից, բայց դա էլ անել չեմ կարող: Նախ՝ եկեղեցու անդամները կհարցնեն, թե որտեղ է եղբայր Հեգինը, ապա կփորձեն պարզել, թե ինչու եմ գնացել, և հովիվն անհարմար վիճակում կհայտնվի»:

Հաջորդ օրը ևս քաղցած մնացինք, և ես նորից հավաքեցի վերակացուի հեռախոսահամարը ու նորից չկարողացա զանգահարել:

Փոխարենը ասացի կնոջս. «Չեմ կարողանում անել դա, բայց մեր այս սիրելիները (Աստված օրինի իրենց) երկար չեն մնա ծառայության մեջ՝ այս կերպ վարվելով: Այդուհանդերձ, ես չեմ ուզում նպաստել նրանց անկմանը: Կմնամ մինչև կիրակի: Ես ճիշտ կվարվեմ՝ անկախ այն բանից՝ այս հովիվները ճիշտ են վարվում, թե ոչ»:

Նման բնավորություն կամ այլոց նկատմամբ նման վերաբերմունք ունեցող մարդիկ որևէ բանում հաջողության չեն հասնի, առավել ևս ծառայության մեջ:

Իրականում այդ զույգն ի սկզբանե չպետք է լիներ ծառայության մեջ: Սակայն դրանով հանդերձ ես չէի պատրաստվում նպաստելու

նրանց անկմանը, քանի որ դա ինձ հոգևորապես կվնասեր: Վաղ թե ուշ այդ հովիվը հնձելու էր այն, ինչ ցանել էր, բայց ես չէի պատրաստվում օգնելու, որ նա հնձի դա:

Բացի այդ՝ սերն ընկերոջը չար չի անի: Սերը հաշվի չի առնում իր հանդեպ թույլ տրված սխալը: Սերը՝ Աստծո սերը, երկայնամիտ է, համբերատար ու բարի:

Ի վերջո եկեղեցու սարկավագներից մեկը մեզ այցելեց և սկսեց հարցեր տալ: Ես հասկացա, որ նա գիտի, որ ինչ-որ բան այն չէ: Բայց չէի ցանկանում վնասել այդ հովվին՝ պատահածի մասին իր սարկավագներից մեկին պատմելով: Սերն ընկերոջը չար չի անի, ուստի ամեն բան արեցի, որ չասեմ որևէ բան, որը կվնասեր հովվին:

Վերջում սարկավագն ասաց ինձ ու կնոջս. «Եկե՛ք գնանք մեր տուն»: Նա տարավ մեզ իր տան ետնաբակ, որտեղ սառցարան կար՝ լի մսամթերքով ու թարմ բանջարեղենով, և ասաց. «Վերցրե՛ք, ինչ ցանկանում եք»: Մենք սնունդը տարանք տուն և ինքներս պատրաստեցինք: Այնտեղ գտնվելու ողջ ընթացքում այդ հովիվն ու նրա կինը մեզ ընդհանրապես չկերակրեցին և ուտելու ոչինչ չառաջարկեցին:

Նրանք ամեն երեկո նվիրաբերություն էին հավաքում, բայց դրանից ինչ-որ մաս մեզ չէին տրամադրում, որ կարողանայինք ուտելու բան գնել: Ի վերջո՝ վերջին հավաքույթին, մի փոքր նվիրաբերություն տվեցին՝ ամբողջ շաբաթվա համար մոտ 43 դոլար:

Մենք դաժանաբար փորձվեցինք՝ դուրս գալու սիրո ընթացքից, բայց ես չէի կարող տրտնջալ ու բողոքել: Եթե ցանկանում եմ պահպանել առողջությունս, ապա պետք է սիրով վարվեմ, իսկ ես գերադասում եմ առողջ լինել: Այդ իսկ պատճառով ես ու կինս պարզապես հավատացինք Աստծուն: Մենք գիտեինք, որ այդ ճանապարհին Աստված հոգալու էր մեր կարիքը, ուստի շարունակեցինք մեր ընթացքը:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ այդ հովիվների հետ: Որոշ ժամանակ անց այդ շրջանի վերակացուն զանգահարեց ինձ ու հարցրեց. «Դու քարոզե՞լ ես նրանց եկեղեցում»: Ես պատասխանեցի, որ նրանց եկեղեցում հավաքույթներ եմ անցկացրել:

Այնուհետև նա հարցրեց. «Հոգումդ ինչ-որ բան զգացե՞լ ես, երբ այնտեղ էիր»: Ես հոգումս ինչ-որ բան զգալու կարիք չունեի. միայն այն, որ այդ բոլոր օրերի ընթացքում նրանք մեզ առանց սննդի էին թողել, բավական էր, որ ստամոքսս ինձ հուշեր, որ մի բան այն չէ:

Նա ասաց. «Մենք ստիպված էինք զբաղվել նրանց գործով և եկեղեցին վերցնել նրանցից»:

Հետագայում իմացա, որ դա վերջին եկեղեցին էր, որն այդ զույգը հովվել էր: Այդ շրջանի վերակացուն ստիպված եղավ հեռացնել նրանց եղբայրությունից: Ոչ ոք նրանց մասին այլևս ոչինչ չլսեց. նրանք պարզապես անհետացան տեսադաշտից:

Մենք, լինելով Քրիստոսի Մարմնում, միմյանց հետ պետք է սիրով վարվենք: Սերը ընկերոջը չար չի անի: Մենք չենք կարող մարդկանց հետ վատ վարվել և ակնկալել, որ Աստծո գործերում կհաջողենք:

Գնացել էի հավաքույթ անցկացնելու մեկ այլ եղբոր համար հենց մեր նահանգում՝ Օկլահոմայում, և ուրախ եմ, որ մենակ էի գնացել: Այդ ժամանակ երեխաներս փոքր էին, և կինս միշտ չէ, որ կարող էր ճանապարհորդել ինձ հետ:

Այդ հովիվն ապրում էր գեղեցիկ հովվական կացարանում, իսկ նրա եկեղեցու շենքը այդ տարածքում ամենալավ, աղյուսաշեն կառույցներից էր:

Այն ժամանակ Ամբողջական Ավետարանի եկեղեցու ոչ բոլոր շենքերն էին աղյուսաշեն: Կային մի քանի փայտաշեն և շատ քիչ աղյուսաշեն եկեղեցիներ: Այս հովվի եկեղեցու շենքը քաղաքում ամենագեղեցիկներից էր. գեղեցիկ էր նաև նրա հովվական կացարանը:

Այնտեղ հավաքույթ անցկացնելը ընկերոջը չար բան չանելու ևս մեկ առիթ էր. նա ինձ տեղ էր հատկացրել իր կացարանի ետնամասում՝ հավաբնում:

Նույնիսկ ամբողջությամբ չէր հասցրել մաքրել այն. այսուայնտեղ կարելի էր տեսնել թռչունների կղկղանքներ: Պարզապես մահճակալ էր դրել այդ տարածքում և այն հատկացրել էր ինձ:

Կարող եք պատկերացնել, թե ինչ կարելի էր զգալ այդ ամենից հետո: Եվ, իհարկե, ես նույնպես, ինչպես դուք, ունեմ մարդկային բնություն, որի հարցերը պետք է լուծել: Մարդկային բնույթս գլուխ բարձրացրեց, և ես մտածեցի. *«Պարտավոր չեմ հանդուրժել սա. պարզապես կհեռանամ»:*

Հետո հասկացա, որ չեմ կարող հեռանալ, որովհետև դա կարող է վնասել Աստծո հոտին: Նրանք կփորձեին պարզել, թե ինչու եմ հեռացել, և կասկածանքով կվերաբերվեին հովվին:

Գիտենք, որ սերն ընկերոջը չար չի անի, իսկ Աստծո սերը մեր մեջ հաշվի չի առնում իր հանդեպ թույլ տրված սխալը, այնպես որ նման կերպ վարվել չէի կարող: Որոշեցի մեկ շաբաթ դիմանալ, որպեսզի հովիվը վատ դրության մեջ չհայտնվեր:

Ասացի Տիրոջը. «Տե՛ր, ես կանեմ հետևյալը. գիտեմ, որ հավա-

քույթները նախատեսված են ավելի երկար ժամանակահատվածի համար, բայց կմնամ մեկ շաբաթ»: Առաջին հավաքույթին հայտարարեցի, որ քարոզելու եմ մինչև կիրակի երեկո, և փորձեցի դա անել այնպես, որ հովվի հեղինակությունը չտուժի, իսկ կիրակի երեկոյան հեռացա:

Դուք կհարցնեք, թե ինչ պատահեց նրա հետ: Նա մահացավ երեսունինը տարեկանում կոկորդի քաղցկեղից. դա վերջին եկեղեցին էր, որը նա հովվեց: Իրականում, մահանալուց առաջ նա արդեն հովվություն չէր անում, աշխատում էր մթերային խանութում:

Տեսեք, ընկերներ. եթե դուք սիրով չեք վարվում, լայն դուռ եք բացում սատանայի հարձակումների համար:

Ինքներդ կհամոզվեք, որ պատճառներից մեկը, թե ինչու այդքան շատ հիվանդություններ կան Քրիստոսի Մարմնում և անգամ քարոզիչների շրջանում, այն է, որ հավատացյալները միմյանց հետ սիրով չեն վարվում: Իսկ հետո չեն կարողանում բժշկություն ստանալ, քանի դեռ իրենց սրտերում շտկումներ չեն արել և չեն սկսել միմյանց հետ սիրով վարվել:

Աստծո սիրո մեջ քայլելն է կյանքում հաջողելու ճանապարհը: Աստվածային սերը հաղթանակ կբերի ձեր կյանքի բոլոր բնագավառներում: Պարզապես ջանացեք անել այն, ինչ Աստվածաշունչն է ասում, և վարժվեք աստվածային սիրո մեջ: Չեք կարող Աստծո մեջ հաջողել, եթե ուրիշների հետ ճիշտ չեք վարվում կամ եթե ձեր սրտում ոխ եք պահում:

Ես տարիներ շարունակ վարժեցրել եմ իմ անձը հետևյալ կերպ մտածելու. «Ինչպե՞ս կանդրադառնա մյուս եղբոր/քրոջ վրա այն, ինչը ես պատրաստվում եմ ասելու կամ անելու: Սերը ոչ մեկին չար բան չի անում: Արդյոք այն, ինչ ես ասելու կամ անելու եմ, կվնասի՞ այդ մարդուն: Եթե այո, ապա չեմ կարող ասել կամ անել դա»:

Սխալ մի՛ հասկացեք ինձ: Ես հեռու եմ կատարելությունից: Ես նույնպես երբեմն թերացել եմ: Բայց երբ նկատել եմ իմ թերացումը սիրո ընթացքիս մեջ, որքան հնարավոր է արագ ապաշխարել եմ և անմիջապես վերադարձել Աստծո սիրով վարվելուն:

Սերը չի վնասի ամուսնությանը

Աստվածային սերն ընկերոջը չար չի անի: Նույնը վերաբերում է նաև ամուսիններին: Այնպես որ, եթե ամուսնացած եք, սա վերաբերում է նաև ձեր ամուսնու կամ կնոջ նկատմամբ չար բան անելուն:

Եթե պատրաստվում եք քայլելու աստվածային սիրո մեջ, ապա չեք կարող չար բան անել ձեր ամուսնու կամ կնոջ հանդեպ:

Երբ զույգը ամուսնական կյանքում խնդիրներ է ունենում, ապա ամուսիններից յուրաքանչյուրն ինքն իրեն պետք է հարցնի. «Ինչ կաներ սերը»:

Ես խոսում եմ աստվածային և ոչ թե մարդկային սիրո մասին: Մարդկային սերն անհաստատ է. չես կարող վարվել մարդկային սիրով և լինել հաջողակ քրիստոնյա: Մարդկային սերը քիչ է տարբերվում ֆիզիկական հրապուրանքից:

Մի օր մի կին մոտեցավ, որ խոսի ինձ հետ: Նա ասաց. «Ինձ թվում է՝ ես այլևս չեմ սիրում ամուսնուս»:

«Ինչ նկատի ունեք՝ ասելով, թե այլևս չեք սիրում Ձեր ամուսնուն»,- հարցրի ես:

«Օ՜, նա լավ մարդ է և ինձ էլ լավ է վերաբերվում: Իրականում նա հրաշալի անձնավորություն է: Այդուհանդերձ, ինձ թվում է՝ ես դադարել եմ նրան սիրելուց»:

Ինչպես տեսնում եք, նա պետք է նորոգեր իր միտքն Աստծո Խոսքով: Ես խոսեցի նրա հետ Աստծո սիրո մասին և սովորեցրի ինչպես զարգացնել Աստծո սերը, որպեսզի այն աճի ու ավելանա:

Վերջում ասացի նրան. «Ինչո՞ւ թույլ չեք տալիս, որ Աստծո սերը ղեկավարի Ձեզ: Աստծո սերը կլուծի առաջացող ամեն խնդիր»:

Աստծո սիրով վարվելով՝ դուք միշտ կհաջողեք, քանի որ Աստծո սերը դիմանում է ամեն բանի, որ կարող է պատահել: Մենք մեր ներսում ունենք Աստծո սերը: Մենք կարող ենք սիրել այնպես, ինչպես Աստված է սիրում:

Եթե միայն հնազանդվենք Աստվածաշնչին և ամենից ավելի Աստծո սերը փնտրենք ու զարգացնենք այն մեր ներսում, կհաջողենք մեր կյանքի բոլոր բնագավառներում:

Ամուսինները պետք է թույլ տան, որ իրենց ղեկավարի Աստծո սերը, ոչ թե միայն բնական, մարդկային սերը: Բնական է, որ ամուսինները որոշակի ֆիզիկական սեր ու հրապուրանք ունենան միմյանց նկատմամբ, բայց բնական սերը խոր չէ, հանկարծակի կարող է ատելության փոխվել:

Իսկ Աստծո սիրո հետ նման բան չի պատահի: Սրանում քրիստոնյաներն այլոց նկատմամբ առավելություն ունեն:

Քրիստոնյաներն իրենց կնոջը կամ ամուսնուն կարող են սիրել ոչ միայն բնական սիրով, այլև դրան ավելացնել աստվածային սերը:

Նրանք կարող են սիրել միմյանց աստվածային սիրով, որը երբեք իրենը չի փնտրում, այլ միշտ դիմացինի բարօրության մասին է մտածում:

Ամուսինները պետք է սովորեն առաջին հերթին իրենց կողակցի բարօրության մասին մտածել, հետո միայն՝ իրենց: Այն զույգերը, որոնք այսպես են վարվում, իրենց ամուսնության մեջ վերապրում են Երկինքը երկրի վրա:

Ամուսնության մեջ ևս առաջնահերթությունը պետք է դիմացինին տալ: Ինքներդ ձեզ հարց ուղղեք՝ *ինչպե՞ս կարող եմ կողակցիս համար օրինություն լինել:* Առաջինը մտածե՛ք դիմացինի բարօրության մասին, հետո միայն՝ ձեր:

Ոմանք նման կերպ չեն վարվում, ու դա նրանց ամուսնության մեջ անախորժություններ է առաջացնում: Օրինակ՝ որոշ հրաշալի քույրեր (թող Աստված օրհնի նրանց) այնքան «հոգևոր» են դառնում, որ կարծում են, թե չափազանց սուրբ են իրենց ամուսու հետ սեռական հարաբերություն ունենալու համար: «Սերը ոչ մեկին չար չի անի» խոսքը վերաբերում է նաև նրանց:

Եթե նրանք այդպես են վարվում, ապա պարզապես չեն կատարում այս խոսքն իրենց ամուսինների նկատմամբ: Արդյո՞ք նրանք չար բան են անում իրենց ամուսիններին՝ նրանց համար կին չլինելով: Միանշանակ: Նրանք դրդում են ամուսնուն սայթաքելու և մեղքի մեջ ընկնելու և ստիպված կլինեն այդ մեղքի պատասխանատվությունը նաև իրենց վրա վերցնել:

Նրանցից ոմանք ասում են. «Այո՛, բայց Աստված ինձ ասել է, որ ես ֆիզիկական մտերմություն չունենամ իմ ամուսնու հետ»:

Եթե Աստված նման բան է ասել, նշանակում է՝ Իր Խոսքում Նա սուտ է խոսել՝ ասելով, որ ամուսնացած զույգերը չպետք է զրկեն միմյանց:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 7.5

5 Իրար մի՛ զրկեք, բայց միայն իրար հետ միաբանվելով մի քիչ ժամանակի համար, որ ծոմապահության և աղոթքի պարապվեք, և դարձյալ մեկտե՛ղ դարձեք, որ սատանան չփորձի ձեզ ձեր անժուժկալության պատճառով:

Աստվածաշունչն ասում է, որ ամուսինն ու կինը չպետք է զրկեն իրար: Ի՞նչ է սա նշանակում: «*Մոֆֆաթի*» թարգմանությունում

գրված է այսպես. «Իրար մի՛ զրկեք սեռական հարաբերությունից, եթե միայն նման համաձայնության չեք եկել որոշակի ժամանակահատվածի համար...»:

Այլ կերպ ասած, եթե և՛ ամուսինը, և՛ կինը համաձայնության են եկել, կարող են որոշ ժամանակով հետ քաշվել սեռական կյանքից, որպեսզի «ծոմապահության և աղոթքի պարապվեն»:

«Մոֆֆաթի» թարգմանությունը շարունակում է. «Այնուհետև նորից միացեք»: Սա նշանակում է միանալ և վերսկսել ամուսնական մտերմությունը: Սիրով վարվելը վերաբերում է մեր կյանքի բոլոր բնագավառներին, նույնիսկ ամուսնական կյանքում:

Աստվածաշունչը հստակ ցուցումներ է տալիս այն մասին, թե ինչպես պետք է ամուսինները վերաբերվեն իրար: Նկատի ունեմ՝ Աստվածաշունչը անդրադառնում է մեր կյանքի բոլոր բնագավառներին:

Տարիներ առաջ ես և կինս մի հովվի համար հավաքույթներ էինք անցկացնում և ամեն անգամ, երբ նրան ինչ-որ հարց էինք ուղղում, նա ասում էր. «Պիտի կնոջս հարցնեմ»: Տպավորություն էր, որ կինը բոլոր բնագավառներում ամբողջովին վերահսկում էր նրան:

Երեք շաբաթ հանդիպումներ անցկացրինք այդ հովվի եկեղեցում, այնուհետև մեկ շաբաթ հանգիստ վերցրինք:

Այդ հովիվն ասաց. «Եղբա՛յր Հեգին, ես ու կինս բարձրանում ենք սարեր: Չե՞ք ցանկանա Ձեր կնոջ հետ միանալ մեզ»: Մենք ազատ ժամանակ ունեինք, ուստի միացանք նրանց:

Այդ ընթացքում նա պատմեց ինձ. «Եղբա՛յր Հեգին, երբեմն պատահում է, որ չորս ամիս շարունակ կինս թույլ չի տալիս, որ քնեմ իր հետ: Նա սիրում է սարերում լինել, և միակ միջոցը, որ ես կարող եմ նրա հետ ֆիզիկական մտերմություն ունենալ, նրան սարեր տանելն է»:

Այդ եղբայրն ինձնից տարիքով շատ մեծ չէր, իսկ ես այդ ժամանակ ընդամենը մոտ երեսուն տարեկան էի:

Ամուսնական պարտականությունը չկատարելով՝ այդ հովվի կինը կարող էր ամուսնու սայթաքելու պատճառը դառնալ: Իսկ հետո մարդիկ կասեին. «Տեսե՛ք, թե ինչ արեց այդ անպարկեշտ հոգեգալստական առաջնորդը»:

Սակայն եթե նա հանկարծ սայթաքեր, դրանում մեղքի մեծ բաժինը նրա կնոջն էր լինելու: Սերը ոչ մեկին չար չի անի: Իսկ այդ կինը չար բան էր անում իր ամուսնու նկատմամբ:

Իրականում այդ կինը խախտում էր Աստծո Խոսքը: Աստված չէր

կարող նրան ասել, որ ֆիզիկական մտերմություն չունենա իր ամուսնու հետ, քանի որ Խոսքն ասում է. *«Իրար մի՛ զրկեք»* (Ա Կորնթ. 7.5):

Աստծո սերը գործում է կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև ամուսնական հարաբերություններում: Ամուսիններն իրենք իրենց պետք է հարց տան՝ *Իսկ ինչ կաներ սերը:*

Եվ եթե ցանկանում ենք աճել ու զարգանալ աստվածային սիրո մեջ, ապա մինչ մարդկանց վարմունքին արձագանքելը յուրաքանչյուրս ինքներս մեզ հարց պիտի ուղղենք՝ *Ինչպե՞ս կվարվեր աստվածային սերը. ինչ կաներ այն:*

Ահա այսպես կարող ենք հասնել նրան, որ աստվածային սերը առատ լինի մեր կյանքերում: Աստծո սերը երբեք չի ձախողվում, այնպես որ, երբ դուք ձեր կյանքում գործի եք դնում այն, դուք չեք ձախողվի:

Սրտանց արե՛ք այս դավանությունները.

Աստծո սերը Սուրբ Հոգով սփռված է իմ սրտում, և ես պետք է ջանամ թույլ տալ, որ սիրո բնությունը ղեկավարի ինձ: Ես ունեմ Աստծո սիրո բնությունը իմ սրտում՝ իմ հոգում:

Հետևաբար թույլ չեմ տա, որ իմ բնական մարդկային տրամաբանությունը ղեկավարի ինձ: Ես հրաժարվում եմ թույլ տալուց, որ իմ մարդկային բնությունը կառավարի ինձ:

Ես վարվելու եմ Հոգով՝ քայլելով սիրո մեջ: Ես սիրող եմ և ոչ թե ատող:

Ես գործի եմ դնելու սիրո պտուղը և վարժվելու եմ դրանում, որպեսզի այն աճի ու ավելանա:

Աստծո սերը գործի դնելու միջոցներից մեկը իմ հանդեպ արված սխալը հաշվի չառնելն է:

Բացի այդ՝ ես վարժեցնելու եմ իմ անձը բոլորի մասին լավագույնը մտածելու, որպեսզի սերն աճի ու զարգանա իմ մեջ, և ես շատերի համար օրինություն լինեմ:

Իմ կյանքի ամենամեծ ձգտումը լինելու է Աստծո սերը, քանի որ այդպիսով իմ սերը կշատանա, և Աստված կփառավորվի:

Գլուխ 2

Աստվածային սեր. վերստին ծննդի ապացույցը

Շատերը կարծում են, թե իրենց փրկության ապացույցն այն է, որ իրենք միացել են այս կամ այն եկեղեցուն: Կամ էլ կարծում են, թե այս կամ այն կերպ, այս կամ այն կարգով ջրով մկրտվելը ապահովել է իրենց ճանապարհը դեպի Երկինք:

Օրինակ՝ երբեմն կարելի է լսել, թե ինչպես են մարդիկ ասում. «Պետք է *իմ* եկեղեցի հաճախես, հակառակ դեպքում փրկված չես» կամ «Պետք է մկրտվես *մեր* կարգով, այլապես փրկված չես ու չես գնա Երկինք»:

Իսկ Աստվածաշունչն ի՞նչ է ասում, ո՞րն է վերստին ծննդի ապացույցը: Ըստ Աստվածաշնչի՝ գիտենք, որ փրկված ենք, քանի որ Հիսուս Քրիստոսին մեզ Տեր ենք դավանում (Հռոմ. 10.9,10): Աստվածաշնչում գրված է նաև՝ գիտենք, որ փրկված ենք, քանի որ *սիրում ենք* եղբայրներին:

> **Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.14**
> **14 ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ, որ մահից ի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք...**

Ինձ դուր է գալիս այս խոսքը՝ «**ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ, որ մահից ի կյանք փոխվեցինք...**»: Լավատեսական է, ճի՞շտ է: Գրված չէ՝ «Մենք *կարծում ենք*, որ մահից ի կյանք փոխվեցինք...», կամ գրված չէ՝ «*Ըստ իս, տեսականորեն*» կամ «Ես *եկել եմ այս եզրահանգմանը, որ*...»:

Փոխարենը առաքյալն ասում է. «Մենք *գիտենք*, որ հոգևոր մահից փոխադրվել ենք դեպի հավիտենական կյանք, որովհետև *սիրում ենք* եղբայրներին»:

Այստեղ, երբ Հովհաննեսն ասում է՝ «*...մահից ի կյանք փոխվեցինք...*», նա չի խոսում ֆիզիկական մահվան մասին: Մենք դեռևս

չենք փոխվել ֆիզիկական մահից: Կգա այն օրը, երբ ֆիզիկական մահն էլ մեր ոտքերի տակ կհայտնվի: Դա վերջին թշնամին է, որի հարցերը պետք է լուծվեն, սակայն այն դեռևս մեր ոտքերի տակ չէ:

«Մահ» բառն օգտագործելով՝ Հովհաննեսը խոսում է հոգևոր մահվան մասին, որը մարդկային հոգու բաժանումն է Աստծուց: Ուստի նշված խոսքը կարող ենք հետևյալ կերպ ընթերցել. մենք *գիտենք*, որ հոգևոր մահից ու դրա հետևանքներից, այն է՝ Աստծուց հավիտենական բաժանումից, փոխադրվել ենք դեպի *հավիտենական* կյանք, քանի որ ունենք սեր կոչվող այս պտուղը»:

Մենք վերստին ծնվում ենք Աստծո Հոգուց, ու այդ ժամանակ է, որ Աստծո սերը լցվում է մեր սրտերի մեջ: Երբ հոգևորապես վերստին ծնվում ենք, մասնակից ենք դառնում Աստծո կյանքին ու Աստծո սիրո բնույթն ենք ձեռք բերում: Հավիտենական կյանքը Աստծո կյանքն է, որը փոխանցվում է մեր հոգիներին:

Մեր բնական ծնունդով մենք մասնակից ենք դառնում մեր ծնողների կյանքին ու ձեռք բերում նրանց բնությունը: Իսկ երբ ծնվում ենք Աստծուց, ձեռք ենք բերում Աստծո բնությունը: Աստծո բնությունը *կյանքն է* ու *սերը*: Աստծո սերը սփռվում է մեր սրտերում, և մենք ստանում ենք հավիտենական կյանք:

Աստվածաշնչում գրված է, որ եթե եղբայրներին չենք սիրում, ապա հոգևոր մահվան մեջ ենք: Հոգևոր մահն այն կարգավիճակն է, որում գտնվում էինք մինչ վերստին ծնունդը, երբ սատանան էր մեր հոգևոր հայրը (Հռոմ. 5.17-21):

Մեր սրտերում Աստծո սերն է ապացույցն այն բանի, որ սատանայի խավարի արքայությունից փոխադրվել ենք Աստծո՝ Լույսի Արքայության մեջ (Կող. 1.13):

Երբ վերստին ծնվել ենք, հոգևոր մահից փոխադրվել ենք հոգևոր կյանքի մեջ: Հետևաբար աստվածային սեր ստանալու և մեր եղբայրներին սիրելու համար աղոթելու և ծոմ պահելու կարիք չկա: Եթե փրկված եք, ապա ունեք Աստծո սերը, քանի որ այն սփռված է ձեր սրտերում Սուրբ Հոգով:

Եթե ձեր սրտերում չունեք Աստծո սերը, ապա փրկված չեք: Ահա այդքան պարզ է ամեն ինչ, քանի որ Ա Հովհաննես 3.14-ում գրված է. *«...բայց ով որ չի սիրում եղբորը, մնում է մահի մեջ»*:

Սա նշանակում է, որ եթե դուք չեք սիրում Քրիստոսում ձեր եղբորը, ապա դեռևս հոգևոր մահի մեջ եք կամ բաժանված եք Աստծուց:

Իհարկե, պատճառը, թե ինչու են հավատացյալներն ասում, որ չեն սիրում իրենց եղբայրներին, սովորաբար այն է, որ իրենց մարդ-

կային բնության մեջ են փնտրում Աստծո սերը, իսկ Աստծո սերը մարդկային բնության մեջ չէ: Փոխարենը Աստծո սերը հարկավոր է փնտրել սրտի կամ հոգու մեջ և հետո այն գործի դնել:

Աստվածաշունչն ասում է՝ գիտեք, որ մահից դեպի կյանք եք փոխադրվել, քանի որ սիրում եք եղբայրներին: Եթե դուք ձեր սրտում չունեք Աստծո սերը, ապա չունեք փրկության ապացույց, այսինքն՝ չունեք ապացույցն այն բանի, որ մահից փոխադրվել եք կյանքի մեջ: Հիշե՛ք, որ սերն առաջին պտուղն է, որը դրսևորվում է վերստին ծննդի մեջ:

Ինչպե՞ս գիտենք, որ փրկված ենք

Հովհաննեսն օգտագործում է մահից դեպի կյանք փոխադրվելու պատկերը՝ որպես վերստին ծննդի ապացույց: Օրինակ՝ պատկերացրե՛ք, որ ներկա եք թաղման արարողության, և արարողության կեսից մահացածը վեր է թռչում՝ կենդանի ու լիովին բուժված. ստացվում է՝ նա ֆիզիկական մահից փոխադրվեց դեպի կյանք:

Եթե դուք վազեիք այդ մարդու մոտ ու փորձեիք վիճել նրա հետ ու համոզել, որ մահացած է, նա պարզապես կծիծաղեր ձեզ վրա: Դուք կարող էիք ասել. «Մեկ րոպե. դու մահացած ես: Դու չես կարող կենդանի լինել, քանի որ մեր եկեղեցու անդամ չես: Դու ջրով ճիշտ կարգով չես մկրտվել, այնպես որ դու պիտի որ մահացած լինես: Դու մեզնից մեկը չես, ուստի մահացած ես»:

Եթե նման բան ասեիք մեկին, ով մահից փոխադրվել է դեպի կյանք, դա նրան չէր անհանգստացնի, քանի որ նա գիտի, որ ինքը մահից փոխադրվել է դեպի կյանք, ու ոչ ոք չէր կարողանա նրան հակառակը համոզել:

Նույնը վերաբերում է վերստին ծննդին: Մենք *գիտենք,* որ հոգևոր մահից փոխադրվել ենք դեպի հավիտենական կյանք: Մենք մեռած էինք մեր անօրինությունների ու մեղքերի մեջ, սակայն Աստված հոգևորապես կենդանացրեց մեզ Իր համար: Մենք հոգևոր մահից փոխադրվեցինք դեպի հոգևոր կյանք:

Օրինակ՝ ես հստակ գիտեմ, թե երբ եմ մահից փոխադրվել դեպի կյանք: Ես պարզ վերապրել եմ դա: Երբ վերստին ծնվեցի և մահից փոխադրվեցի դեպի կյանք, ասես կրծքիցս երկու տոննա ծանրություն ընկավ:

Վերստին ծնվել եմ հիվանդության մահճի մեջ, իսկ երբ բժշկվեցի, վազեցի նրանց մոտ, որ ասում էին, թե փրկված չեմ, քանի որ

իրենց եկեղեցու անդամ չեմ: Ես պարզապես ծիծաղեցի նրանց վրա ու ասացի. «Ես գիտեմ, որ վերստին ծնված եմ, գիտեմ, որ մահից փոխադրվել եմ դեպի կյանք: Եվ ես ունեմ դրա ապացույցը՝ ես սիրում եմ եղբայրներին»:

Հիշում եմ՝ իմ ծննդավայրից մի գործարար կաթված էր ստացել ու չէր կարողանում քայլել: Եվ նրա կինն էր վարում ընտանեկան ընկերությունը: Այդ գործարարն ու նրա կինը եկեղեցի չէին հաճախում, սակայն այն շրջանում, երբ նա կաթված էր ստացել, նրանց իննամյա դուստրը փրկվել էր, լցվել Սուրբ Հոգով ու սկսել հաճախել կիրակնօրյա դպրոց և եկեղեցի:

Ամեն օր դասերից հետո բակում խաղալիս աղջնակը պարբերաբար վազում էր տուն՝ տեսնելու, թե ինչպես է հայրիկը, և անելու ամեն բան, որ նա իրեն լավ զգա: Կաթված ստանալուց հետո այդ մարդը գամված էր անվասայլակին: Աղջնակը գնում էր նրա մոտ ու հարցնում. «Հայրիկ, լա՞վ ես»:

Նա պատասխանում էր. «Լավ եմ, քաղցրիկս»: Ու աղջնակը հետ էր վազում բակ՝ խաղալու:

Մի անգամ աղջնակը վազեց տուն ու հարցրեց հորը. «Հայրիկ, դու փրկվա՞ծ ես, վերստին ծնվե՞լ ես»:

Հայրը առանց մտածելու պատասխանեց. «Այո՛, քաղցրիկս»: Աղջնակը հետ վազեց բակ՝ խաղալու, իսկ հայրը սկսեց մտածել նրա հարցի շուրջ ու գիտակցեց, որ թեև քառասունինը տարի առաջ միացել էր եկեղեցուն, բայց վերստին չէր ծնվել:

Նա հետ կանչեց դստերն ու ասաց. «Անուշիկս, ես քեզ երբեք որևէ հարցում չեմ խաբել: Քիչ առաջ դու հարցրիր, թե արդյոք ես փրկված եմ: Իսկ ես առանց մտածելու պատասխանեցի «այո», քանի որ եկեղեցու անդամ եմ: Բայց չգիտեմ՝ իրականում վերստին ծնվել եմ, թե ոչ»:

Աղջնակն ասաց. «Դե՛, հայրիկ, դու պետք է փրկվես, քանի որ մեծ ես, ու եթե չփրկվես, կգնաս դժոխք»: Եվ նա ճիշտ էր: Այդ մարդը կարող էր նորից կաթված ստանալ ու ցանկացած պահի մահանալ:

Դրանից հետո գործարարն ու կինը որոշեցին աղջնակի հետ միասին հաճախել եկեղեցի: Կինը Տիրոջը վերընծայեց իր կյանքը, ինքը ևս փրկվեց: Հետո՝ ժամանակի ընթացքում, նա ու կինը լցվեցին Սուրբ Հոգով:

Այն բանից հետո, երբ այս մարդը մկրտվեց Սուրբ Հոգով, հրաշքով բժշկվեց, նա ոտքի կանգնեց և սկսեց քայլել:

Մի անգամ, երբ նրան այցելության էի գնացել, պատմեց, որ այնքան շատ զանգեր ու նամակներ էր ստանում իր բժշկության հետ կապված, որ թերթում կես էջ սյունակ էր վերցրել և այդպես բոլորին պատմել այն մասին, որ Հիսուսն է իրեն բժշկել:

Մի օր էլ, երբ այցելել էի այդ եկեղեցի, մոտեցա, որ տեսնեմ նրան, նա պատմեց ինձ իր փրկության պատմությունը: Մի երեկո՝ արթնության հավաքույթի ժամանակ, մի ավետարանիչ հարցրել է նրան, թե արդյոք փրկված է:

Նա պատասխանել է. «Այո՛, պարո՛ն, փրկված եմ»:

Ավետարանիչը հարցրել է. «Իսկ ինչպե՞ս գիտես, թե փրկված ես»:

«Լավ,- պատասխանել է գործարարը,- կպատմեմ, թե ինչպես գիտեմ, որ փրկված եմ: Արդեն երեք տարի է, ինչ այս եկեղեցի եմ հաճախում, և ամեն չորեքշաբթի երեկոյան մենք ունենում ենք վկայությունների հավաքույթներ:

Վկայություն տալու համար միշտ առաջինը ոտքի էր կանգնում Սմիթ անունով մի ծերուկ: Տարօրինակ ծերուկ էր, նա վկայության խոսքից հետո բռունցքը թափ էր տալիս ու ավելացնում՝ «Ես փրկված ու սրբված եմ», կարծես դրանով մարտահրավեր էր նետում մարդկանց: Դա ինձ այնքան էր բարկացնում, որ քթիս տակ կռիվ էի տալիս նրա հետ:

Ինքս ինձ ասում էի. *«Ա՛յ ծերուկ, անդամալույծ չլինեի, կտեսնեի՝ որքանով ես սրբված»*:

Միանշանակ կարող էիք վստահ լինել, որ հաջորդը վկայություն էր տալու Բեյլի անունով մի տարեց կին: Նրան նույնպես տեղումս նստած քննադատում էի:

Ինքս ինձ ասում էի. «Այդ պառավը միշտ փորձում է բոլորին փրկել, բայց երբ ամուսինը տուն է վերադառնում, անկողինը հավաքած չէ, տունը թափթփված է, երեխաները ետնաբակի ծառուղիներով վեր ու վար են վազվզում, իսկ ինքը նույնիսկ ընթրիք չի պատրաստել ընտանիքի համար»:

Ես պարզապես գիտեի, որ այդ կինը ոչինչ չուներ ասելու: Եթե ունենար, նրա ընտանիքը նման խառնաշփոթի մեջ չէր լինի: Ու ամեն անգամ, երբ նա վկայության խոսք էր ասում, ես մտածում էի այդ ամենի մասին ու ավելի զայրանում, այնքան, որ նստած հայհոյում էի քթիս տակ»:

Հետո այդ գործարարը շատ հետաքրքիր մի բան ասաց. «Իսկ հետո Տերը փրկեց ինձ, և իմ սիրտը փոխվեց: Այդ պահից ի վեր ես

շատ եմ սիրում լսել եղբայր Սմիթի վկայությունները (նախկինում նա այդ մարդուն «ծերուկ Սմիթ» էր անվանում):

Օ՜, գիտեմ, որ նա փոքր-ինչ տարօրինակ է, բայց նա սիրում է Տիրոջը: Ու հիմա, երբ արդեն փրկված եմ, սիրում են նաև լսել թանկագին քույր Բեյլիի վկայությունները (նախկինում նրան «պառավ Բեյլի» էր կոչում):

Իհարկե, հասկանում եմ, որ նա կատարյալ չէ, սակայն մեզնից ոչ ոք կատարյալ չէ: Մյուս կողմից՝ ես ճանաչում եմ նրա ամուսնուն, քանի որ նա աշխատել է ինձ մոտ: Նա այն տեսակի մարդկանցից էր, որոնց դժվար էր գոհացնելը, որոնց հետ ապրելն առհասարակ անհնար էր:

Ահա թե ինչ էր նա ինձ ասում. «Եթե գնամ տուն, և կինս ընթրիքի սեղան գցած չլինի, բարկանալու եմ ու վիրավորեմ նրան, իսկ եթե ընթրիքը սեղանին լինի, դատարկելու եմ այն գետնին»:

Պարզ է, որ այդ կինն ամեն բան անում էր, որ տանը չլիներ, երբ ամուսինը տուն էր վերադառնում: Բայց փրկվելուցս հետո սիրով եմ լսում քույր Բեյլիի վկայությունները»:

Տեսնո՞ւմ եք. այդ մարդը գիտեր, որ ինքը մահից փոխադրվել է դեպի կյանք, քանի որ սիրում էր եղբայրներին: Երբ Աստծո սերը սփռվել էր նրա սրտի մեջ, այն փոփոխություն էր բերել, քանի որ նա այժմ սիրում էր եղբայրներին:

Սակայն կա մի բան, որ մենք պետք է գիտակցենք. Սուրբ Հոգին կարող է լինել մեր սրտերի մեջ վերստին ծննդից հետո, բայց եթե մենք թույլ չտանք, որ Աստծո սերը ղեկավարի մեզ, կքայլենք մեր մարմնավոր բնության թելադրանքով ու կպարտվենք:

Ուզում եմ նաև ավելացնել, որ ժամանակի ընթացքում քույր Բեյլին հասավ նրան, որ նրա բոլոր երեխաներն ու ամուսինը փրկվեցին: Երբ այցելության էի գնացել այդ եկեղեցի, տեսա, որ նրա ամբողջ ընտանիքն այնտեղ էր, նրանք միասին փառաբանում էին Աստծուն:

Սակայն ինչպե՞ս այդ գործարարն իմացավ, որ փրկված է: Նա գիտեր, որ հոգևոր մահից ու դրա հետևանքից, որն է Աստծուց բաժանումը, փոխադրվել էր դեպի կյանք, քանի որ այժմ սիրում էր եղբայրներին:

Աստծո սերը մեզ զսպում է

Երբ վերստին ծնվում ու մահից փոխադրվում եք դեպի հավիտենական կյանք, ձեր սրտերում սփռված Աստծո սերը ստիպում է ձեզ անել այն, ինչ ճիշտ է Աստծո աչքերում:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.14

14 Քանի որ Քրիստոսի սերը ստիպում է մեզ...

Աստծո սերը կարող է վերափոխել ամենակոշտ սրտերը: Եթե թույլ տաք, որ Աստծո սերը զսպի ձեզ, չեք վարվի այնպես, ինչպես կվարվեիք մինչև ձեր փրկվելը:

Հիշում եմ, երբ 1933 թվականին վերստին ծնվեցի, ներաշխարհս փոխվեց. ես նոր արարած դարձա: Հոգումս ներն անցան. ես ուրիշ մարդ էի: Երբ վերստին ծնվում եք, ձեր հոգևոր բնությունը կատարելապես փոխվում է:

Մինչև իմ փրկվելը սրտումս սփռված չէր Աստծո սերը: Հայրիկս լքել էր մեզ, երբ ես վեց տարեկան էի. նրա հետ կապված շատ բան չեմ հիշում:

Իրականում պետք է լարեմ հիշողությունս, որ նրա հետ կապված երեք թե չորս դրվագ հիշեմ, քանի որ նա երբեք մեզ հետ չէր:

Նա գնում էր և երկար ժամանակ բացակայում էր: Մի օր էլ վերջնականապես հեռացավ ու այլևս չվերադարձավ:

Այնպես որ, մեծանալով քանդված ընտանիքում, ես չարացած էի ամբողջ աշխարհի վրա: Երբ ինը տարեկան էի, տեղափոխվեցի տատիկիս ու պապիկիս մոտ: Ամենամեծ եղբայրս գնաց մյուս տատիկիս և պապիկիս մոտ: Մենք՝ երեխաներս, ցրվեցինք այս ու այնտեղ, և ես մեծացա որբի նման՝ այստեղից այնտեղ տեղափոխվելով:

Բացի այն, որ ընտանիքս էր քանդված, ես հիվանդ երեխա էի, չէի կարողանում մյուս երեխաների նման վազել ու խաղալ: Չէի կարողանում ինքս ինձ պաշտպանել. նույնիսկ աղջիկները կարող էին ծեծել ինձ: Ներսումս քեն կար, քանի որ կարծում էի՝ կյանքն ինձ հետ անարդար էր վարվել:

Ամենամեծ եղբորս՝ Դաբի հետ որոշել էինք, որ երբ մեծանանք, սպանելու ենք մեր հայրիկին: Թույլ տվեք ասել, որ միակ բանը, որը հետ պահեց մեզ այդ քայլից, փրկությունն էր: Մենք լրջորեն մտադրվել էինք անել դա:

Երկրորդ դասարանում պարզեցի, որ գոյատևելու համար պետք է էքվալայզեր (կարգավորիչ) գտնել. մի բան, որը կկռվեր իմ փոխարեն, քանի որ ես փոքրամարմին էի ու հիվանդ: Ես չէի կարողանում պաշտպանել ինքս ինձ կամ կռիվ անել, քանի որ սիրտս թույլ էր: Երբ փորձում էի լարվել ու ուժ գործադրել, գիտակցությունս կորցնում էի:

Օրինակ՝ երկրորդ դասարանում մի կռվարար տղա, որ ինձնից երեք տարի մեծ էր, հարվածեց դեմքիս ու ինձ գետնին գցեց: Պետք

է բավականաչափ խելացի լինեի, որ պարզապես պառկած մնայի, բայց վեր կացա և փորձեցի կռվել նրա հետ, ու նա նորից ինձ գետնին գցեց:

Նորից վեր կացա, նա նորից հարվածեց, գետնին գցեց, և ես կորցրի գիտակցությունս: Մոտ մեկուկես ժամ անգիտակից վիճակում էի: Ավելի ուշ դպրոցի բուժքույրն ասաց, որ ամբողջությամբ սևացել-կապտել էի, և հույս չունեին, թե ուշքի կգամ:

Բավական չէր, որ փոքրամարմին էի ու հիվանդ, դեռ դպրոցի երեխաներն էլ ծաղրում էին ինձ ու փորձում տանջել: Այն պահից ի վեր, ինչ հայրս լքել էր մեզ, դպրոցի երեխաները սկսել էին չարախոսել, թե ես ապօրինի երեխա եմ:

Նրանք պատմում էին իրենց հայրիկներից, իսկ ես իմ հայրիկից պատմել չէի կարող, որովհետև ոչինչ չգիտեի նրա մասին:

Իսկ եթե ինձ անուններ չէին տալիս, տանջում էին՝ ասելով, թե հայրս հեռացել է, քանի որ բանտ է ընկել: Դա ինձ բարկացնում էր, և ես ուզում էի կռիվ անել, բայց երբ լարվում էի, ուշաթափվում էի: Ես պետք է ապացուցեի նրանց, որ կարող եմ ինքս իմ մասին հոգ տանել, որ դադարեին ինձ անհանգստացնելուց:

Դե, հասկանում եք, որ ես դեռ քրիստոնյա չէի, ու մարդկային բնությունս էր ինձ ղեկավարում: Քանի որ չէի կարողանում ինքս ինձ պաշտպանել, որոշել էի օգտագործել կարճ՝ երկու ոտնաչափը չորսի վրա փայտե ձող՝ որպես էքվալայզեր, որն իմ փոխարեն կկռվեր: Դրանով ես հետևից հարվածում էի բոլոր նրանց գլուխներին, որոնք ինձ հետ վատ էին վարվում:

Մի քանի անգամ այդպես արեցի, ու երեխաները սկսեցին ինձ հանգիստ թողնել: Արարքիս մասին խոսակցությունները տարածվեցին: Սակայն երբ որբ ես, հայր չունես, հիվանդ ես, տկար ու չես կարողանում կռվել, մյուս երեխաներն ամեն կերպ փորձում են նեղացնել քեզ՝ գուցե ցույց տալու, որ իրենք մեծ են:

Ավագ եղբայրս՝ Դաբը, ծաղրում էր ինձ, որովհետև փոքրամարմին էի ու հիվանդ: «Երբ տասներկու տարեկանդ լրանա, աղջիկ ես դառնալու»,- ասում էր ու վազում, փախչում, որովհետև գիտեր՝ եթե բռնեի, հարվածելու էի ինչով պատահեր:

Մինչև վերստին ծնվելս, երբ ինչ-որ մեկն ինձ նեղացնում էր, մտքումս պահում էի դա: Այդ պահին ոչինչ չէի անում, սպասում էի այնքան, մինչև տվյալ անձնավորությունը կորցներ զգոնությունը, այնուհետև հետևից մոտենում ու աղյուսով կամ երկուսը չորսի վրա փայտով հարվածում էի գլխին:

Ինչպես տեսնում եք, մանկությունս խեղաթյուրված է եղել, քանի որ հայրիկս թողել էր մեզ՝ գոյատևելու, ինչպես կարող էինք: Ուստի հասկանում եմ, թե ինչու է այսօր ոմանց պահվածքը խեղաթյուրված, գուցե որովհետև նրանք էլ նման պայմաններում են մեծացել. գիտեմ՝ դա ինչ զգացողություն է, երբ քեզ հրմշտում են, հարվածում ու վիրավորում:

Երբ բնական հունով եք գնում, ուզում եք վրեժ լուծել: Միակ լուծումն այստեղ վերստին ծնունդն է, որպեսզի Աստծո սերը սփռվի ձեր սրտերում: Երբ Աստծո սերը բնակվում է ձեր ներսում, այն փոխում է ձեզ: Իսկ եթե արդեն վերստին ծնված եք, ապա պետք է թույլ տաք, որ Աստծո սերը ղեկավարի ձեզ:

Մինչ վերստին ծնվելս, երբ ազգականներիցս որևէ մեկը սխալ էր վարվում իմ նկատմամբ, մտապահում էի դա, ջնջում նրան իմ ցուցակից ու այլևս երբեք նրա հետ չէի շփվում: Եթե նույնիսկ նա ինձ հետ նույն սենյակում էր գտնվում, արհամարհում էի նրան, ասես գոյություն չուներ:

Կամ եթե փողոցում քայլելիս տեսնեի մեկին, որն ինձ հետ վատ էր վարվել, ճանապարհս կշեղեի, որ խուսափեի նրա հետ խոսելուց:

Բայց հետո ես վերստին ծնվեցի, ներսումս անմիջապես փոփոխություն տեղի ունեցավ. բնույթս փոխվեց: Աստծո սերը սփռվեց սրտումս: Իրականում լիարժեք չէի հասկանում, թե ինձ հետ ինչ էր կատարվել, պարզապես գիտեի, որ վերստին ծնվել եմ, նոր արարած եմ, գիտեի, որ ներսիս մարդը փոխվել է, և ես հոգևոր մահից փոխադրվել եմ դեպի կյանք:

Այդ ժամանակ ես գամված էի անկողնուն, բայց մեկ տարի անց բժշկվեցի և վեր կացա մահվան մահճից:

Բժշկությունիցս կարճ ժամանակ անց ազգականներիցս մեկն իմ մասին մի սուտ էր ասել, և ես, առանց մտածելու, ինքս ինձ ասացի, որ *նրա հետ կվարվեմ այնպես, ինչպես նախկինում անում էի, կջնջեմ նրան ցուցակիցս ու այլևս երբեք՝ մինչև կյանքիս վերջին օրը, չեմ խոսի նրա հետ*:

Ինչպես տեսնում եք, թեև վերստին ծնված էի, միտքս դեռևս լիովին նորոգված չէր Աստծո Խոսքով, այդ պատճառով դեռևս առաջնորդվում էի իմ հին մարմնական մտածելակերպով: Դեռ չէի կարդացել Եփեսացիների 4.23-ը, չգիտեի, որ Աստծո սերը սփռված է իմ սրտում. պարզապես գիտեի, որ վերստին ծնված եմ և ներքուստ փոխված:

Բայց միայն այն, որ մեր հոգին վերստեղծվում է, չի նշանակում,

որ մարմինն ու միտքը ևս փոխվում են: Ո՛չ, մեր մարմիններն ու մտքերը վերստին ծնված չեն: Մենք ունենք նույն հողեղեն մարմինն ու մարդկային միտքը, ինչ մինչև վերստին ծնվելը:

Բուժվելուց և ոտքի կանգնելուց կարճ ժամանակ անց փողոցում ինձ ընդառաջ քայլելիս տեսա այն ազգականիս, որն իմ մասին սուտ էր ասել: Մտքովս անցավ նախկինի պես վրեժ լուծել նրանից, ուստի պատրաստվում էի փողոցն անցնելու, որ չհանդիպեմ նրան, բայց ինչ-որ բան բարձրացավ սրտումս և թույլ չտվեց, որ այդպես վարվեմ:

Աստվածաշունչն ասում է, որ մենք *գիտենք*, որ մահից դեպի կյանք ենք փոխադրվել, քանի որ Աստծո սերը Սուրբ Հոգով սփռվել է մեր սրտերում: Ինչպե՞ս *գիտենք* մենք: Գիտենք, որ հոգևոր մահից փոխադրվել ենք դեպի կյանք, քանի որ սիրում ենք եղբայրներին:

Այնպես որ ներսումս Աստծո սերը զսպեց ինձ: Իմ մեջ բարձրացավ Աստծո սերը, և մեջքով դեպի ազգականս շրջվելու փոխարեն սկսեցի լաց լինել, քանի որ սիրտս ցավեց նրա համար:

Ինքս ինձ ասացի. «Այդ թանկագին անձնավորությունը (Աստված օրհնի նրան) այլ կերպ վարվել չի կարողանում, քանի որ փրկված չէ ու սատանայի զավակ է: Սատանայի զավակները սատանայի նման են վարվում: Աստծո երեխաները Աստծո նման են վարվում: Ես մահից փոխադրվել եմ դեպի կյանք, իսկ նա դեռևս հոգևորապես մեռած է, և հոգևոր մահն է նրան ղեկավարում»:

Ուստի նրան մեջքով շրջվելու փոխարեն ընդառաջ գնացի, ձեռքս մեկնեցի ու սեղմեցի նրա ձեռքը, այնուհետև ասացի. «Պարզապես ուզում եմ իմանաս, որ ես քեզ սիրում եմ: Իմացի՛ր նաև, որ եթե դա որևէ կերպ կօգնի քեզ, կարող եմ հենց այստեղ՝ այս մայթեզրին, ծնկի իջնել և ոտքերդ համբուրել»:

Երբ այդպես ասացի, ազգականուհիս սկսեց լաց լինել: Նա ձեռքս դրեց իր գլխին ու ասաց. «Աստվա՛ծ իմ, Քե՛ն, աղոթի՛ր ինձ համար. ես դրա կարիքն ունեմ»:

Սերը երբեք չի ձախողվում: Քրիստոնեական ընթացքիս մեջ վաղ հայտնաբերեցի, որ չեմ կարող թույլ տալ՝ մարդկային բնությունս իր հին, չնորոգված մտածելակերպով ղեկավարի ինձ. պետք է գործի դնեմ Աստծո սերը:

Աստվածաշունչն ասում է. *«...Քրիստոսի սերը սփիպում է մեզ...»* (Բ Կորնթ. 5.14): Ի՞նչ է մեր սրտերում ապրող Աստծո սերը ստիպում, որ անենք: Այն ստիպում է, որ անենք այն, ինչը ճիշտ է՝ հնազանդվենք սիրո օրենքին: Ինչ-որ բան հոգումս ստիպեց, որ վարվեմ սիրով, և ես հնազանդվեցի:

Սուրբ Հոգին ստիպեց խուսափելու փոխարեն մոտենալ ազգականուհուս, սեղմել նրա ձեռքն ու ասել. «Ես ուզում եմ՝ իմանաս, որ սիրում եմ քեզ»:

Այդ խոսքերն իմ վերստեղծված սրտից էին, ոչ թե հին, մարմնական մտածելակերպից: Իմ հին, չնորոգված մտածելակերպն ու մարդկային բնությունը դեռևս ցանկանում էին վրեժ լուծել ու այլևս երբեք չխոսել նրա հետ: Մարդկային բնությունը միշտ էլ ցանկանալու է անել այն, ինչ սխալ է:

Այդ իսկ պատճառով մենք պետք է թույլ տանք, որ Աստծո սերը զսպի մեզ: Եթե ձեր լեզուն անընդհատ շատախոսում է՝ մեկ մղոն/րոպե արագությամբ, իսկ ձեր մարդկային բնությունը պոռթկում է, ապա բնական մարդկայինը հեշտությամբ կարող է ղեկավարել քեզ: Բայց եթե ժամանակ հատկացնեք և նայեք ձեր ներսը, կտեսնեք, որ ինչ-որ բան ներսում փորձում է ստիպել ձեզ վարվել սիրով:

Նայե՛ք Պողոսին: Նա ևս պայքարում էր իր մարդկային բնության դեմ, բայց Պողոսը Աստծո մեծ մարդ էր, քանի որ թույլ էր տալիս, որ Աստծո սերը զսպի իրեն: Նա ասում է. «Իմ մարմինը ճնշում եմ» (Ա Կորնթ. 9.27): Նույնիսկ Պողոսն էր ստիպված իր չնորոգված մարդկային բնությունն ու միտքը հնազանդեցնել վերստին ծնված, վերստեղծված հոգուն:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.17

17 Ուրեմն եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հները անցան, ահա ամեն բան նոր եղավ:

Հարկավոր է ճնշել մարդկային բնությունը, քանի որ ամեն բան *չէ*, որ նոր դարձավ ձեր մտքում և մարմնում: Ամեն բան *նոր* դարձավ ձեր *հոգում*: Այս խոսքում ասվում է, որ ամեն բան նոր է դառնում մեր ներսի մարդու մեջ:

Իրականում դուք ձեր մարմինը չեք: Մարմինը չի կարող լինել ձեր իրական անձը, քանի որ Պողոսն ասում է՝ «նա»՝ ներսի մարդը, ինչ-որ բան արեց իր մարմնի հետ: Դե, ի՞նչ կարելի է անել մարմնի հետ, ներկայացնել Աստծուն որպես կենդանի պատարագ և հնազանդեցնել ձեր հոգուն՝ ներսի մարդուն:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 4.16

16 Նրա համար չենք թուլանում, այլ թեև մեր դրսի մարդը փչանում է, բայց մեր ներսի մարդն օրեցօր նորոգվում է:

Պողոսը խոսում է նոր արարածի մասին, նա խոսում է ներսի մարդու՝ մարդու հոգու մասին: Իսկ ներսի մարդու մեջ հներն անցել են, ամեն բան նոր է դարձել:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.6

6 Նրա համար ամեն ժամանակ համարձակություն ունենք և գիտենք, թե ԱՅՍ ՄԱՐՄՆՈՒՄ ԿԵՆԱԼՈՎ՝ Տիրոջից օտարանում ենք:

Ուստի մարմինը ձեր իրական անձի՝ ձեր ներսի մարդու, հոգու տունը կամ կացարանն է, որում այն ապրում է: Սակայն հները չեն անցել դրսի մարդու մեջ:

Դուք դեռևս ունեք նույն մարմինն ու միտքը, ինչ միշտ ունեցել եք: Եվ ձեր մարմինը ցանկանալու է անել նույն բաները, ինչ անում էր մինչև ձեր վերստին ծնվելը: Ձեր միտքը ցանկանալու է մտածել նույն բաները, ինչ մինչև ձեր փրկվելը:

Օրինակ՝ երբ ինչ-որ մեկը ձեր հանդեպ վատ է վարվում, ձեր չփրկագնված բնությունը ցանկանում է վրեժ լուծել: Ձեր մարդկային բնությունը դեռևս հաշիվներ մաքրելու հակում ունի. «Դու ինձ ես հարվածում, ես էլ քեզ կհարվածեմ: Դու ինձ վատ ես վերաբերվում, ես նույնը քեզ կհատուցեմ»: Այդ պատճառով Աստվածաշունչն ասում է, որ մենք մեր մարմինները պետք է ենթարկենք ներսի մարդու վերահսկողությանը: Մեր ներսի մարդը պետք է ղեկավարի մեր մարդկային բնությունը:

Ներսի մարդը պետք է իշխի ու ղեկավարի դրսի մարդուն: Ահա թե ինչու մենք պետք է ճնշենք և ղեկավարենք մեր մարմինները. չպետք է թույլ տանք, որ մեր մարմինը ղեկավարի մեզ: Նույնիսկ Պողոսի մարմինն էր ցանկանում սխալ բաներ անել. եթե դա այդպես չլիներ, նա ստիպված չէր լինի հնազանդեցնել այն իր հոգուն:

Եթե չիմանաք, թե ինչ է գրված Աստվածաշնչում, սատանան կասի ձեզ. «Դու ասում ես, թե քրիստոնյա ես, բայց ուզում ես սխալ բաներ անել. դու փրկված չես»:

Ո՛չ, դուք կարող եք լինել լիովին փրկված և, սակայն, ցանկանաք անել բաներ, որոնք սխալ են: Այդ պատճառով էլ Աստվածաշունչն ասում է, որ մեր մարմինները հնազանդեցնենք ներսի մարդուն:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.1

1 Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ՁԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՔ

ԿԵՆԴԱՆԻ, ՍՈՒՐԲ և Աստծո ընդունելի ՊԱՏԱՐԱԳ, որ է ձեր բանավոր պաշտոնը:

Ոմանք մտածում են, թե մարդկային բնությունը ճնշելը վերաբերում է միայն սեռական մեղքերին: Դա, իհարկե, մարդկային բնությունը ճնշելու մաս է կազմում, բայց միայն փոքր մաս: Դա նաև նշանակում է, որ լեզուն է պետք պահել ներսի՝ վերստին ծնված, Աստծո պատկերով և նմանությամբ վերստեղծված մարդու վերահսկողության տակ:

Օրինակ՝ ոմանք ուրիշների մասին խոսելու, բամբասելու հակում ունեն: Նրանք չեն գիտակցում, որ այդպես վարվելով՝ թույլ են տալիս՝ մարդկային բնությունն իշխի իրենց:

Օրինակ՝ քույր Շատախոսը միշտ ասում է. «Լսե՞լ եք վերջին նորությունները. լսե՞լ եք՝ ինչ է անում այսինչը»: Եվ որպեսզի չմտածեք, թե ես միայն կանանց մեջ եմ փորձում մեղք գտնել, ասեմ, որ եղբայր Շատախոսը կարող է նույնքան բամբասկոտ լինել, եթե ոչ ավելի:

Դուք պետք է ձեր *ամբողջ* մարմինը հնազանդեցնեք ձեր վերստեղծված հոգուն: Աստվածաշունչն ասում է՝ ձեր ամբողջ մարմինը կենդանի պատարա́գ ներկայացրեք Աստծուն:

Բոլոր հավատացյալները պետք է իրենց մարդկային բնությունը պահեն իրենց վերստեղծված հոգու վերահսկողության տակ, քանի որ մեր մարմիններում մենք դեռ ունենք հին ադամական բնությունը, թեև մեր հոգիները վերստեղծված են:

Մարդկային բնության մասին ասեմ, որ մեզնից յուրաքանչյուրի մեջ գազան է ապրում: Եվ չպետք է թույլ տալ, որ այդ գազանը ցույց տա իրեն. այն պետք է պահել հոգու վերահսկողության տակ:

Այն հավատացյալները, որոնք թույլ են տալիս, որ իրենց մարդկային բնությունը ղեկավարի իրենց, մարմնավոր քրիստոնյաներ են: Մենք պետք է թույլ տանք, որ Աստծո սերը զսպի մեզ, որ կարողանանք աճել և դուրս գալ մանկության՝ մարմնավոր փուլից ու դառնալ հասուն հավատացյալներ, որոնք քայլում են Խոսքի լույսի մեջ:

Հասուն հավատացյալները քայլում են սիրո օրենքի լույսի մեջ: Մեր սրտերում սփռված Աստծո սերը ի վերջո կառաջնորդի մեզ դեպի հաղթանակ, քանի որ Աստծո սերը երբեք չի ձախողվում: Աստվածային սերը միշտ հաղթական է:

Սովորենք գործի դնել Աստծո սերը

Այն հավատացյալները, որոնք հասուն են Աստծո սիրո մեջ, գիտեն ինչպես թույլ տալ, որ Աստծո սերը ղեկավարի իրենց: Նրանք գիտեն ինչպես գործի դնել Աստծո սերը:

Հիշում եմ, երբ Դաբը դեռ մանուկ քրիստոնյա էր, գնացել էր քաղաք՝ մայրիկի համար ինչ-որ գործով: Քաղաքում ազգականներից մի քանիսի հետ խնդիրներ էին առաջացել, ու նա գրեթե կռվի էր բռնվել նրանց հետ, և ես ստիպված էի ինքս զբաղվել այդ գործով:

Դաբն ասաց. «Ավելի լավ է չգնաս այնտեղ: Նրանք կկռվեն քեզ հետ»:

Ես ասացի. «Ո՛չ, չեն կռվի: Դու պարզապես չգիտես ինչպես կիրառել Աստծո սերը և գործի դնել այն քեզ համար»:

Խորհե՛ք սրա շուրջ: Ինչպե՞ս կարելի է գործի դնել Աստծուն: Աստվածաշունչն ասում է. «Աստված սեր է»: Ուստի եթե գործի ես դնում Աստծո սերը, տվյալ իրավիճակում գործի ես դնում Աստծուն:

Աստվածաշնչում ասվում է՝ *«ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհքիս մեջ է»* (Ա Հովհ. 4.4): Իսկ ո՞վ է ձեր մեջ: Եթե դուք վերստին ծնված եք, ապա Սուրբ Հոգի Աստված ձեր մեջ է: Սուրբ Հոգին Աստծո սերը սփռել է ձեր սրտում: Այն սերը, որ ձեր մեջ է, ավելի մեծ է, քան սատանան, որը խավարի մեջ քայլող չփրկված մարդու մեջ է:

Այսպիսով՝ ես գնացի տեսնելու մեր ազգականին, որը խնդիր էր առաջացրել Դաբի համար, և նա սկսեց կատաղած խոսել ու գոռալ: Ես ոչ մի խոսք չէի ասում, պարզապես նայում էի նրան, ու սիրտս ցավում էր նրա համար: Մտածում էի, որ *նա չի կարողանում իրեն այդպես չպահել, քանի որ նրանում սատանայի բնությունն է. նա չի կարողանում եսասեր չլինել:*

Ներսումս շարունակ կրկնում էի. «Փառք Աստծո, Աստծո սերն Իմ մեջ է: Աստծո սերը, որ իմ մեջ է, ավելի մեծ է, քան ատելությունը, որ նրա մեջ է: Նա, որ իմ մեջ է, ավելի մեծ է, քան նա, որ նրա մեջ է»: Պարզապես այնտեղ կանգնել ու սիրով լի հայացքով նայում էի նրան:

Հանկարծ նա նայեց ինձ. շուրթերը բարկությունից շարժվում էին, բայց ոչ մի բառ դուրս չէր գալիս: Նա չէր կարողանում ոչ մի խոսք ասել ինձ:

Պետք է որ տեսած լիներ սիրո արտահայտումն իմ դեմքին, քանի որ հանկարծ ծնկի իջավ, բռնեց ձեռքս, համբուրեց այն, դրեց գլխին ու

ասաց. «Քե՛ն, աղոթի՛ր ինձ համար: Դու գիտես, որ բոլորս աղոթքի կարիք ունենք»: Ուստի ես սկսեցի աղոթել նրա համար:

Հետո նա կանչեց իր ամուսնուն: Ամուսինն ասաց ինձ. «Ազգականներից մի քանիսը փորձելու են ամեն բան խլել քո խեղճ մորից: Ի՞նչ ես անելու»: Ես գիտեի, որ նա նրանցից մեկն էր, որ փորձում էր անել դա:

Ես մոտ գնացի ու ասացի նրան. «Ես ուզում եմ՝ դու մի բան իմանաս. ես պատրաստ եմ ցանկացած իրավիճակի»: Ավելի մոտ գնացի ու ցածրաձայն շարունակեցի. «Իրականում ես ունեմ *ներքին* տեղեկություն և ուզում եմ՝ իմանաս, որ ես պատրաստ եմ դրան»:

Նրա դեմքի արտահայտությունը լիովին փոխվեց: Նա ասաց. «Մի բան կասեմ քեզ. ես ամեն ինչ կանեմ, որ մայրիկդ ստանա իր բաժինը»: Ասաց և արեց:

Ներքին տեղեկությունը, որ ունեի, Աստվածաշնչում գրվածն էր: Ներքին տեղեկությունն այն էր, որ «Նա, ով իմ ներսում է, ավելի մեծ է նրանից, որ նրանց մեջ է: Աստծո սերը, որ իմ մեջ է, ավելի մեծ է, քան ատելությունը, որ աշխարհում է»: Սերը միշտ հաղթում է, քանի որ աստվածային սերն է Նոր Ուխտի ուղին, ու այն երբեք չի ձախողվում:

Խորասուզվե՛ք Գրքի՝ Աստվածաշնչի մեջ և թույլ տվեք, որ Աստվածաշունչը խորասուզվի ձեր մեջ. այդպես դուք պատրաստ կլինեք ցանկացած բանի: Կարիք չկա *պատրաստվելու*, դուք *արդեն պատրաստ եք*: Աստծո սերը երբեք չի ձախողվում:

Դուք կարող եք հասունանալ սիրո մեջ

Երբեմն ժամանակ և հոգևոր աճ է պահանջվում՝ սովորելու, թե ինչպես է պետք գործի դնել Աստծո սերը: Հնարավոր չէ հանկարծակի հոգևորապես աճել: Չեք կարող երեխայի մարմնի վրա մեծահասակի գլուխ դնել. երբեմն ժամանակ է հարկավոր՝ սիրո մեջ հասունանալու համար:

Եղբայրս՝ Դաբը, դրա վառ օրինակն է: Երկար ժամանակ պահանջվեց, որ նա հասունանա սիրո մեջ. պատճառը նրա դաստիարակությունն էր: Դաբը միշտ իր տարիքի համեմատ բարձրահասակ է եղել: Տասնվեց տարեկանում նրա հասակն արդեն մեկ մետր իննսուներեք սանտիմետր էր:

Նա մեծացել էր՝ դառնությունը սրտում, քանի որ որբ էր մնացել ու անընդհատ դժվարություններ էր հաղթահարել: Ոչ մեկից ոչինչ չէր

վերցնում: Տեսել եմ, թե ինչպես էր նա տասնյոթ տարեկանում չորս հասուն տղամարդու ծեծում:

Սակայն հետո Դաբը փրկվեց: Եթե իրականում իմանայիք, թե ինչերի միջով էինք մենք անցել, կհասկանայիք, որ նրա բնույթի փոփոխությունը հրաշք էր: Ու թեև նրա ներսում կտրուկ փոփոխություն էր տեղի ունեցել, երբեմն նա դեռևս դժվարանում էր վերահսկել իր մարդկային բնությունը: Դաբը պետք է սովորեր ինչպես հասունանալ սիրո մեջ, իսկ դրա համար երկար ժամանակ պահանջվեց՝ երիտասարդ տարիներից սկսած:

Մի անգամ, օրինակ, Կալիֆոռնիայում գնացել էր մի փոքրիկ սրճարան, նստել վաճառասեղանի մոտ և ուտեստ պատվիրել:

Երբ մատուցողուհին մոտեցրել է կերակուրը, նա խոնարհել է գլուխը, որ աղոթի նախքան ուտելը: Աղոթքից հետո նրա կողքին նստած մարդը հարցրել է, թե որտեղից է նա: Դաբը պատասխանել է, որ Օկլահոմայից է:

Հետո այդ մարդը հարցրել է. «Օրալ Ռոբերթսին ճանաչո՞ւմ ես»:

Դաբը պատասխանել է. «Անձամբ չեմ ճանաչում, բայց ձեռքը սեղմելու հնարավորություն ունեցել եմ»:

«Նա «այսպիսի» մեկն է»,- ասել է այդ մարդը՝ նրա անունը տալով:

Հետո նորից հարցրել է. «Քենեթ Քոփլանդին գիտե՞ս»:

«Այո՛,- պատասխանել է Դաբը,- նրան անձամբ եմ ճանաչում»:

«Նա էլ «այսպիսի» մեկն է»,- ասել է նա:

Ապա տվել է հաջորդ հարցը. «Քենեթ Հեգինին ճանաչո՞ւմ ես»:

Դաբը պատասխանել է. «Ճանաչում եմ»:

«Նա էլ մի «այդպիսինն» է»,- ասել է այդ մարդը:

Այդ խոսքերից հետո Դաբը նրան հարվածել է ու գցել աթոռից, հետո բռնել ու տարել է դուրս:

Ռեստորանի տերը ոստիկանություն է կանչել: Երբ ոստիկանությունը հասել է, Դաբն այդ մարդուն պատին սեղմած նրա համար աղոթելիս է եղել:

Ոստիկանության տեսուչը հարցրել է, թե ինչ է պատահել, և Դաբը պատասխանել է. «Այս մարդն իմ եղբոր հասցեին վիրավորական է արտահայտվել, այդ արտահայտությամբ նաև մորս է վիրավորել: Ոչ ոք չի համարձակվի նման կերպ խոսել ընտանիքիս մասին»:

Տեսուչն այդ մարդուն հարցրել է. «Արե՞լ ես նման բան»:

Մարդը պատասխանել է. «Այո՛»:

Տեսուչն ասել է, որ հարկավոր է լավ մտածել նման բաներ ասելուց առաջ, հետո Դաբին հարցրել, թե ով է նրա եղբայրը:

Դաբն ասել է. «Քենեթ Հեգինը»:

«Օ՜, ես կարդացել եմ նրա գրքերը, լսել եմ նրա ձայնասկավառակները»,- ասել է տեսուչը, իսկ հետո շրջվել է դեպի այդ մարդն ու ասել. «Ո՞րն է ձեր խնդիրը»:

Մարդը պատասխանել է. «Գուցե իսկապես սխալվել եմ»:

Վերջում եղբայրս այդ մարդուն ասել է. «Եթե օգնության կարիք ունենաս, ահա՛ այցեքարտս. կարող ես գալ ինձ մոտ»:

Հաջորդ օրն այդ մարդը գնացել է Դաբի մոտ ու փրկվել:

Ես չեմ քաջալերում նման եղանակով մարդկանց փրկության բերելը. պատմությունս այն բանի օրինակն էր, որ երբեմն մարդկային բնությունը ճնշելու և սիրո մեջ հասունանալու համար ժամանակ է պետք:

Դաբը երկար ճանապարհ անցավ՝ երիտասարդ տարիներից սկսած. նրանից ժամանակ պահանջվեց, սակայն նա աճեց սիրո մեջ:

Տերը գործել էր Դաբի ներսում և նրան նոր արարած էր դարձրել, սակայն Դաբը դեռ պետք է սովորեր ինչպես վարվել դրսի՝ բնական մարդու հետ: Ժամանակ պահանջվեց, մինչ նա կսովորեր դրսի մարդու վրա հագնել Քրիստոսին (Հռոմ. 13.14) և հասունանալ աստվածային սիրո մեջ:

Սակայն Դաբին քննադատելու կամ նրա վրա ծիծաղելու կարիք չկա, քանի որ Տերը մինչ օրս *մեզնից* ոմանց սովորեցնում է ինչպես մեր դրսի մարդու վրա հագնել Քրիստոսին և ճնշել մեր մարդկային բնությունը:

Մի անգամ քարոզում էի Տեխասում՝ իմ հովված եկեղեցիներից մեկում, և հարց տվեցի. «Որտե՞ղ կփնտրեիք հոգևոր մարդու:

Ո՞ւր կգնայիք՝ իմանալու՝ նա իսկապե՞ս հոգևոր է»:

Մարդը հոգևոր է միայն այն դեպքում, երբ վարժեցնում է իր անձը Աստծո սիրո մեջ քայլելու:

Ոմանք ասացին. «Իսկական հոգևոր մարդ գտնելու համար կգնայի եկեղեցի»: Ուրիշներն ասացին, որ իրականում հոգևոր է նա, ով թռչկոտում է, աղաղակում ու լեզուներով աղոթում:

Իսկ ես ասացի. «Հոգևոր մարդ գտնելու համար ես չէի գնա եկեղեցի, թեև հոգևոր մարդիկ գնում են եկեղեցի:

Եթե հոգևոր մեկին փնտրեի, նախ կգնայի նրա տուն՝ տեսնելու, թե ինչպես է նա ապրում ու վարվում տանը»:

Մի կին (Աստված օրհնի նրան), որ նստած էր առաջին շարքում՝ ամբիոնի դիմաց, իմ այդ խոսքերից հետո բացականչեց. «Տե՛ր Աստված. այդպես ես դուրս կմնամ հոգևոր մարդկանց շարքից»:

Երբ նա դա ասաց, քիչ էր մնում ծիծաղից ընկնեի ամբիոնից: Բոլորը սկսեցին բարձրաձայն ծիծաղել, այնպես որ քարոզն ընդմիջվեց:

Երբ բոլորս լրջացանք, դիմեցի եկեղեցուն. «Համենայն դեպս այս կինը ոմանցից փոքր-ինչ ավելի ազնիվ եղավ»:

Թող Աստված օրհնի նրան. այդ ժամանակ այդ կինը դեռ մանուկ քրիստոնյա էր, հետո նա ուղղվեց ու դարձավ հասուն քրիստոնյա՝ աճեց, զարգացավ, հասունացավ սիրո ընթացքի մեջ ու դարձավ կայուն քրիստոնյա:

Եթե մտածում եք, թե դեռ չեք հասունացել սիրո մեջ, մի՛ հուսահատվեք, պարզապես շարունակե՛ք աճեցնել սիրո պտուղը: Աստծո սերը գործի դնելով, դրանում վարժվելով և Աստծո հետ հաղորդակցվելով՝ երկար ժամանակ չի պահանջվի, և դուք կաճեք աստվածային սիրո մեջ:

Գլուխ 3

Սեր. Նոր Ուխտի օրենքը

Եթե ծանոթ եք Հին Կտակարանին, ապա գիտեք, որ Հին Ուխտում Օրենքը վերաբերում է Աստվածաշնչի առաջին հինգ գրքերին, որոնք միասին կոչվում են Հնգամատյան: Այն կարող է վերաբերել նաև Տասը պատվիրաններին: Հին Կտակարանի օրենքը հիմնված էր կանոնների ու պատվերների վրա:

Հին Ուխտի մարդիկ բնական մարդիկ էին: Նրանք վերստին ծնված չէին, քանի որ Հիսուսն այն ժամանակ դեռ չէր եկել ու չէր փրկագնել մեզ՝ Իր կյանքը տալով որպես փրկանք մեր մեղքերի համար: Նա դեռևս Իր արյամբ չէր նախանշել Նոր Ուխտի սկիզբը:

Ուստի Հին Ուխտի մարդկանց հետ վարվում էին բնական կերպով՝ կանոններով ու պատվերներով: Նրանք չէին կարող առաջնորդվել իրենց սրտով կամ հոգով, քանի որ նրանց հոգիները վերստին ծնված չէին: Ըստ Հին Ուխտի՝ եթե մարդը խախտեր Օրենքի մեկ կետ, ապա մեղավոր էր համարվում ամբողջ Օրենքը խախտելու մեջ:

Նոր Ուխտում մենք վերստին ծնված նոր արարածներ ենք (Բ Կորնթ. 5.17): Աստված Իր օրենքը գրել է մեր սրտերի մեջ, քանի որ մեր հոգիները վերստեղծվել են: Ուստի մենք ենթակա չենք Հին Կտակարանի Օրենքին՝ դրա կանոններին ու պատվերներին, որոնք միտված էին վերահսկելու բնական մարդու մղումները:

Նոր Ուխտում Հիսուսը մեզ նոր պատվիրան տվեց, քանի որ մենք նոր արարածներ ենք և պետք է առաջնորդվենք մեր վերստեղծված հոգով կամ սրտով: Վերստին ծննդի միջոցով Աստված վերստեղծել է մեր հոգիները (Բ Կորնթ. 5.17, Եփես. 4.24): Հետևաբար մենք կարող ենք Աստծո կողմից առաջնորդվել մեր հոգիների միջոցով, քանի որ այնտեղ բնակվում է Աստծո սերը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 13.34,35
34 ՆՈՐ ՊԱՏՎԻՐԱՆ եմ տալիս ձեզ, ՈՐ ԻՐԱՐ ՍԻՐԵՔ, ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք:
35 Սրանով կգիտենան ամենքը, թե Իմ աշակերտներն եք, ԵԹԵ ԻՐԱՐ ՎՐԱ ՍԵՐ ՈՒՆԵՆԱՔ:

Նոր Ուխտում սիրո օրենքը պատվիրան է: Աստված այն չտվեց մեզ որպես առաջարկ: Հիսուսն ասաց. *«Նոր ՊԱՏՎԻՐԱՆ եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք...»* (Հովհ. 13.34): Հիսուսը մեզ չտվեց նոր առաջարկ կամ նոր գաղափար: Նա մեզ նոր պատվիրան տվեց:

Գիտենք, որ Հին Ուխտում կար կանոնադրություն, կային պատվիրաններ և պատվերներ, որոնց մարդիկ պիտի հետևեին, որպեսզի կատարեին ուխտի իրենց մասը, ինչպես, օրինակ՝ Հին Կտակարանի Օրենքում ներառված Տասը պատվիրանները (Ելից 20.1-7):

Սակայն Նոր Ուխտում Հիսուսը մեզ միայն մեկ նոր օրենք կամ պատվիրան տվեց: Նոր օրենքը եկավ փոխարինելու հին Օրենքին: Եվ այդ նոր օրենքը սիրո օրենքն է: Նոր Կտակարանի սիրո օրենքը փոխարինում է հին Օրենքին՝ իր պատվերներով, պատվիրաններով և կանոնադրությամբ:

Նոր Ուխտի սիրո օրենքում կա ևս մի բան, որին հարկավոր է ուշադրություն դարձնել. Նոր Կտակարանի սիրո պատվիրանը Տասը պատվիրանների լրումն է: Սիրո օրենքը կատարում կամ լրացնում է Հին Կտակարանի պատվիրանները:

Սիրո օրենքը փոխարինում է Տասը պատվիրաններին

Սիրո նոր պատվիրանը փոխարինում է Տասը պատվիրաններին, քանի որ Նոր Ուխտը փոխարինում է Հին Ուխտին և կատարում է այն:

Երբ Հիսուսը կատարեց Հին Ուխտը, Նա Իր արյամբ Նոր Ուխտ սահմանեց (Եբր. 12.24): Եբրայեցիների գիրքը պատմում է մեզ, որ Նոր Ուխտը ավելի լավ ուխտ է, և այն հիմնված է ավելի լավ խոստումների վրա (Եբր. 8.6):

Չեք կարող ապրել Հին Կտակարանում՝ հին ուխտի մեջ, և լինել հաջողակ քրիստոնյա, քանի որ այդ ուխտը հոգևորապես մեռած մարդկանց համար էր, որոնք վերստին ծնված չէին: Բացի այդ՝ Հին Ուխտը փոխարինվել է նոր ու ավելի լավ ուխտով: Հարկավոր է մտնել

Նոր Ուխտի մեջ և բացահայտել, թե ինչ է Աստված ասում ձեզ՝ որպես վերստին ծնված հավատացյալների, որպես մարդկանց, որոնց հոգիները վերստեղծվել են Աստծո կողմից (Բ Կորնթ. 5.17):

Թղթերը նամակներ են՝ ուղղված եկեղեցուն՝ ինձ և ձեզ: Ուստի եթե ցանկանում եք իմանալ, թե ինչ է Աստված ասում ձեզ, կարդացեք Աստվածաշնչի այդ գրքերը, որոնք անմիջականորեն ձեզ են ուղղված:

Ո՞րն է այն նոր օրենքը, որ Հիսուսը տվեց մեզ Նոր Ուխտով: Այդ օրենքն ամփոփված է մեկ պատվիրանում՝ «*ՆՈՐ ՊԱՏՎԻՐԱՆ եմ տալիս ձեզ, ՈՐ ԻՐԱՐ ՍԻՐԵՔ, ինչպես Ես ձեզ սիրեցի, որ ԴՈՒՔ ԷԼ ԻՐԱՐ ՍԻՐԵՔ*» (Հովհ. 13.34):

Երբ սա ասում ես, մարդիկ միանգամից հարցնում են. «Նկատի ունեք՝ կարող ենք չպահե՞լ Տասը պատվիրանները»: Հասկանո՞ւմ եք, շատ հավատացյալների ուղեղները կրոնական առումով այնպես են լվացել, որ նրանք բաց են թողնում այն, ինչ Աստվածաշունչն ասում է սիրո նոր պատվիրանի մասին:

Մենք՝ Քրիստոսում լինողներս, կարիք չունենք փորձելու կատարել Տասը պատվիրանները կետ առ կետ: Ինչո՞ւ: Քանի որ եթե կատարենք սիրո նոր պատվիրանը, այդպիսով կկատարենք Հին Կտակարանի *բոլոր* պատվիրանները:

Այս փաստը պարզ է դառնում Հռոմեացիների գրքում: Պողոսն այն հետևյալ կերպ է ձևակերպում. «Նա, որ սիրում է իր ընկերոջը, կատարել է Օրենքը»:

> **ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 13.8-10**
>
> **8 Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց. որովհետև ԸՆԿԵՐՈՋԸ ՍԻՐՈՂԸ ՕՐԵՆՔԸ ԿԱՏԱՐԵԼ Է:**
>
> **9 Քանի որ այն մի՛ շնացիրը, մի՛ սպանիրը, մի՛ գողացիրը, սուտ մի՛ վկայիրը և մի՛ ցանկացիրը և ՈՒՐԻՇ ԻՆՉ ՊԱՏՎԻՐԱՆ ԷԼ ՈՐ ԿԱ, ԱՅՍ ԽՈՍՔՈՒՄ Է ԲՈՎԱՆԴԱԿՎՈՒՄ՝ ՔՈ ԸՆԿԵՐՈՋԸ ՍԻՐԻՐ ՔՈ ԱՆՁԻ ՊԵՍ:**
>
> **10 Սերն իր ընկերոջը չար չի անի. ՈՒՐԵՄՆ ՕՐԵՆՔԻ ԼՐՈՒՄԸ ՍԵՐՆ Է:**

Այստեղ Աստվածաշունչն ասում է, որ եթե մենք մեկս մյուսին սիրենք, կատարած կլինենք Հին Կտակարանի Օրենքը՝ իր բոլոր կետերով, կանոնադրությամբ ու պատվիրաններով: Եթե վարվենք սի-

րով, այլ պատվիրանների կարիք չենք ունենա:

Աստվածաշունչն ասում է. «*...երկու կամ երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի*» (Բ Կորնթ. 13.1): Թույլ տվեք մեջբերել երեք վկայություն Նոր Կտակարանից, որոնք կապացուցեն, որ Նոր Կտակարանի սիրո օրենքը փոխարինում է Հին Ուխտի Տասը պատվիրաններին կամ կատարում է դրանք:

Եբրայեցիների գրքում կարդում ենք, որ սիրո Նոր Ուխտը պետք է գրված լինի մեր սրտերում:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 8.7-13

7 Որովհետև եթե այն ԱՌԱՋԻՆՆ [ՈՒԽՏԸ] **առանց պակասության լիներ, էլ ԵՐԿՐՈՐԴԻ [ուխտի] համար տեղ չէր որոնվի:**

8 Քանի որ նրանց հանդիմանելով ասում է՝ ահա օրեր կգան, ասում է Տերը, որ Ես ՆՈՐ ՈՒԽՏ կկատարեմ Իսրայելի տան և Հուդայի տան հետ,

9 ոչ թե այն ուխտի պես, որ նրանց հայրերի հետ արեցի այն օրը, որ նրանց ձեռքը բռնեցի եգիպտացիների երկրից հանելու համար, որովհետև նրանք չմնացին Իմ ուխտի մեջ, և Ես էլ անփույթ եղա նրանց համար, ասում է Տերը:

10 Որովհետև ՍԱ Է ԱՅՆ ՈՒԽՏԸ, որ կդնեմ Իսրայելի տան հետ այս օրերից հետո, ասում է Տերը: Ես կտամ Իմ օրենքները նրանց մտքի մեջ և ՆՐԱՆՑ ՍՐՏԵՐԻ ՎՐԱ ԿԳՐԵՄ ՆՐԱՆՔ և նրանց կլինեմ Աստված, և նրանք կլինեն Ինձ ժողովուրդ:

11 Եվ նրանց ամեն մեկը չի սովորեցնի իր ընկերոջը, և ոչ էլ ամեն մեկն՝ իր եղբորը և ասի՝ ճանաչի՛ր Տիրոջը, որովհետև բոլորն էլ կճանաչեն Ինձ՝ նրանց փոքրերից մինչև մեծը:

12 Որովհետև նրանց անօրինությունները ներող կլինեմ և նրանց մեղքերը և նրանց անօրինություններն այլևս չեմ հիշի:

13 ՆՈՐ ասելով՝ ԱՅՆ ԱՌԱՋԻՆԸ ՀՆԱՑՐԵՑ, և այն, որ հնանում է և ծերանում, ՄՈՏ Է ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ:

Խոսքը հավաստում է, որ Աստված մեզ տալու էր նոր պատվիրան, որը գրելու էր մեր սրտերի մեջ: Այն ասում է, որ սիրո այս նոր

պատվիրանը կատարելու կամ հնացնելու էր առաջին ուխտը՝ Հին Կտակարանի պատվիրաններով հանդերձ: Այլ կերպ ասած՝ Հին Ուխտը փոխարինվելու էր Նոր Ուխտով:

Հիմա եկե՛ք տեսնենք, թե ինչ է Հիսուսն ասել սիրո նոր պատվիրանի մասին: Ահա՛ սուրբգրային մեկ այլ վկայություն այն մասին, որ Նոր Ուխտի մեջ սիրո նոր պատվիրանը գրվում է մեր սրտերում ու մտքերում, և այն փոխարինում է Հին Ուխտի Տասը պատվիրաններին:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.7-10, 14-17

7 Այն ժամանակ ասացի [Հիսուսը], թե՝ ահա գալիս եմ, գրքի տոմսում գրված է Ինձ համար Քո կամքն անելու, ո՛վ Աստված:

8 Վերևում ասելով, թե՝ զոհի և պատարագի և ողջակեզների և մեղքի համար *պատարագների* չկամեցար և չհաճեցիր *նրանց*, որոնք ՕՐԵՆՔԻ ՀԱՄԵՄԱՏ մատուցվում են:

9 Այն ժամանակ ասում է՝ ահա գալիս եմ Քո կամքն անելու, ո՛վ Աստված, ԱՌԱՋԻՆԸ [ուխտը] ԴԵՆ Է ԳՑՈՒՄ, որ ԵՐԿՐՈՐԴԸ [ուխտը] ՀԱՍՏԱՏԻ:

10 Որ այն կամքով մենք սրբվեցինք մեկ անգամ Հիսուս Քրիստոսի մարմնի պատարագով:

14 Որովհետև մեկ պատարագով հավիտյան կատարեց սրբվողներին:

15 Բայց Սուրբ Հոգին էլ վկայում է մեզ՝ այն առաջվանից ասելով,

16 թե՝ ՍԱ Է ԱՅՆ ՈՒԽՏԸ, որ կդնեմ նրանց հետ այն օրերից հետո, ասում է Տերը, ԿՏԱՄ ԻՄ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՆՐԱՆՑ ՍՐՏԵՐԻ ՄԵՋ և ՆՐԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎՐԱ ԿԳՐԵՄ ՆՐԱՆՑ:

17 Եվ ապա *ասում է՝* ՆՐԱՆՑ ՄԵՂՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷԼ ՉԵՄ ՀԻՇԻ:

Հին Ուխտում «պատվիրան» բառը հոգնակի թվով է գործածվում՝ «պատվիրաններ», սակայն Նոր Ուխտում այն եզակի թվով է օգտագործված, քանի որ միայն մեկ պատվիրան կա, և դա սիրո օրենքն է: Այդ պատվիրանը գրված է մեր վերստեղծված հոգու կամ սրտի մեջ:

Հիշո՞ւմ եք, Եբրայեցիների 8.10-ում գրված է. *«Սա է այն ուխտը,*

որ կդնեմ Իսրայելի տան հետ այս օրերից հետո, ասում է Տերը. Ես կտամ իմ օրենքները նրանց մտքի մեջ և նրանց սրտերի վրա կգրեմ նրանք»:

Եթե սիրո օրենքը գրված է ձեր սրտերում, և դուք քայլում եք Աստծո սիրո լույսի մեջ, ապա չեք խախտի Տասը պատվիրաններից և ոչ մեկը: Հին Կտակարանի պատվիրանները տրվել են մեղքը սանձելու համար: Սակայն եթե դուք սիրով եք վարվում, ապա չեք խախտի Աստծո ոչ մի պատվիրան: Եթե սիրով եք վարվում, ոչ մեկի մասին սուտ չեք խոսի, ոչ մեկից ոչինչ չեք գողանա, այնպես չէ՞: Եթե սիրով եք վարվում, չեք սպանի: Սիրով վարվողն իր ընկերոջը չար բան չի անի:

Հետևաբար սիրով վարվելու դեպքում կարիք չկա փորձելու հնազանդվել Հին Կտակարանի բոլոր օրենքներին և պատվիրաններին: Միակ բանը, որ պետք է անեք, Հիսուսի տված մեկ նոր պատվիրանի՝ սիրո օրենքի մեջ մնալն ու դրա մեջ քայլելն է:

Նոր Կտակարանում սիրո օրենքը կոչվում է նաև «թագավորական օրենք», քանի որ այն հիմնված է աստվածային սիրո վրա:

ՀԱԿՈԲՈՍ 2. 8,9

8 Արդ եթե ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ կատարեք գրվածի համեմատ, *թե*՝ ՍԻՐԻՐ ՔՈ ԸՆԿԵՐՈՋԸ ՔՈ ԱՆՁԻ ՊԵՍ, լավ եք անում:

9 Բայց եթե աչառություն եք անում, մեղք եք անում՝ հանդիմանված օրենքից, ինչպես օրինազանցներ:

Ըստ Աստվածաշնչի՝ ո՞րն է թագավորական օրենքը: Այն գրված է հենց այստեղ՝ «Սիրի՛ր ընկերոջդ քո անձի պես»: Սիրո օրենքը թագավորական օրենք է, քանի որ այն հիմնված է աստվածային սիրո վրա:

Եթե սիրով եք վարվում, կարիք չկա, որ որևէ մեկը պատվիրի ձեզ չստել կամ չգողանալ: Եթե Նոր Ուխտի սիրո օրենքը պահում եք, չեք ցանկանա որևէ մեկից գողանալ կամ որևէ մեկի մասին սուտ խոսել, քանի որ ձեր վերստեղծված սրտի և հոգու մեջ բնակվում է Աստծո սերը:

Երբեմն ես դա այսպես եմ ձևակերպում. քանի որ Աստված բնակվում է իմ սրտի մեջ, կարիք չկա, որ ես մտահոգվեմ, թե կցանկանամ ստել կամ գողանալ: Իրականում կարող եմ գողանալ ամենը, ինչ ցանկանում եմ, և ստել այնքան, որքան ցանկանում եմ. հարցն այն է, որ այդ ցանկությունն է բացակայում:

Սա հիշեցնում է ինձ մի պատմություն, որ Դ. Լ. Մուդին պատմել է այս տողերի վերաբերյալ: Մի երիտասարդ կին գնացել էր նրա մոտ ու ասել. «Ես ուզում եմ քրիստոնյա դառնալ, բայց սիրում եմ պարել: Փորձել եմ թողնել պարելը, բայց չեմ կարողանում»: Իհարկե, նա խոսում էր աշխարհիկ պարերի մասին:

Պարոն Մուդին պատասխանել է. «Ինչո՞ւ ես տանջվում, փոքրի՛կ օրիորդ, պարզապես տո՛ւր սիրտդ Հիսուսին, և դու կարող ես պարել, որքան կուզես»: Այդպիսով աղջիկը համոզվել էր, տվել սիրտը Տիրոջն ու վերստին ծնվել:

Որոշ ժամանակ անց պարոն Մուդին փողոցում հանդիպել է այդ աղջկան. վերջինս ժպտացել է ու ասել. «Պարո՞ն Մուդի, հիմա հասկանում եմ՝ ինչ նկատի ունեիք. ցանկությունն այլևս չկա»:

Մենք, իհարկե, ժամանակ առ ժամանակ սայթաքում ենք մեր մարդկային բնության պատճառով, քանի որ այն դեռ փրկագնված չէ, կամ էլ մտքի պատճառով, եթե ժամանակ չենք հատկացրել այն նորոգելուն:

Սակայն եթե իսկապես վերստին ծնված ենք, մեղքի հանդեպ ցանկությունը հեռացել է: Մարդկային բնությամբ հնարավոր է՝ երբեմն սայթաքենք, բայց մեղսալից ցանկությունը գնացել է մեր հոգուց:

Հետաքրքիր է նաև այն, որ Աստծո սերն ապրում է մարդու սրտի և ոչ թե մտքի կամ մարմնի մեջ:

Ինչո՞ւ է Աստծո սերն ապրում մարդու սրտի մեջ. քանի որ սիրտը մարդու այն միակ մասն է, որը վերստեղծվել է:

Գնանք Հին Կտակարան և տեսնենք, թե ինչ է մարգարեացել Եզեկիելը Նոր Ուխտի մարդու սրտի մասին:

ԵԶԵԿԻԵԼ 11.19

19 Եվ նրանց պիտի մեկ սիրտ տամ և ՆՈՐ ՀՈԳԻ [սիրտ] ՊԻՏԻ ԴՆԵՄ ՁԵՐ ՆԵՐՍՈՒՄ և ՊԻՏԻ ՀԵՌԱՑՆԵՄ ՔԱՐԻ ՍԻՐՏԸ նրանց մարմնից և նրանց ՄԻ ՄՍԻ ՍԻՐՏ տամ:

Ինչպես տեսնում եք, Հին Ուխտում մարգարեություն է եղել այն մասին, որ մի օր Աստված պիտի վերցներ մեր հին քարեղեն սրտերը և նոր, սիրով լի, փափուկ սիրտ պիտի տար մեզ:

ԵԶԵԿԻԵԼ 36.25-28

25 Եվ ձեզ վրա մաքուր ջուր պիտի սրսկեմ, և մաքուր պիտի լինեք, ձեր բոլոր պղծություններից և ձեր բոլոր կուռքերից պիտի մաքրեմ ձեզ:

26 Եվ ես ձեզ ՆՈՐ ՍԻՐՏ պիտի տամ և ՆՈՐ ՀՈԳԻ պիտի դնեմ ձեր մեջ և վեր պիտի առնեմ ձեր մարմնից ՔԱՐԵՂԵՆ ՍԻՐՏԸ և ձեզ ՄԱՐՄՆԵՂԵՆ ՍԻՐՏ պիտի տամ:

27 Եվ ԻՄ ՀՈԳԻՆ պիտի դնեմ ձեր մեջ և պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք և Իմ դատաստանները պահեք և նրանց կատարեք:

28 Եվ բնակվեք այն երկրում, որ տվել եմ ձեր հայրերին, և Իմ ժողովուրդը լինեք, և ես ձեր Աստվածը լինեմ:

Այս խոսքերը հստակ մատնանշում են մի օրհնություն, որը պահված է հրեաների համար (խոսք 28): Աստված խոստացավ, որ նրանք կբնակվեն այն երկրում, որն Ինքը խոստացել էր նրանց հայրերին: Նա խոստացավ, որ հրեաները կլինեն Իր ժողովուրդը, և Ինքը կլինի նրանց Աստվածը:

Այնուամենայնիվ, այս խոսքերը կիրառելի են նաև Տեր Հիսուս Քրիստոսի եկեղեցու համար: Սուրբգրային այս հատվածը խոսում է Նոր Ուխտի մասին, որում մարդու սիրտը կփոխվի ու վերստին ծննդով կվերստեղծվի:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.17

17 Ուրեմն եթե մեկը Քրիստոսում է, ՆՈՐ ՍՏԵՂԾՎԱԾ է. հները անցան, ահա ամեն բան նոր եղավ [հոգում]:

Երեմիան նույնպես մարգարեացել է Նոր Ուխտի և այն փոփոխության մասին, որը պետք է գար մարդու սրտի մեջ վերստին ծնունդով:

ԵՐԵՄԻԱ 31.33,34

33 Այլ այս է այն ուխտը, որ պիտի կապեմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո, ասում է Տերը. ԻՄ ՕՐԵՆՔԸ ՊԻՏԻ ԴՆԵՄ ՆՐԱՆՑ ՆԵՐՍՈՒՄ և ՆՐԱՆՑ ՍՐՏԻ ՎՐԱ պիտի գրեմ այն, և ես պիտի լինեմ նրանց Աստված, և նրանք պիտի Ինձ համար ժողովուրդ լինեն:

34 Եվ այլևս մեկ մարդ իր ընկերոջը և մեկ մարդ իր եղբորը չպիտի սովորեցնի՝ ասելով, թե՝ ճանաչեք Տիրոջը, որովհետև նրանք ամենքը պիտի ճանաչեն Ինձ՝ նրանց փոքրերից մինչև նրանց մեծերը, ասում է Տերը, որովհետև Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը, և նրանց մեղքերը այլևս չպիտի հիշեմ:

Սուրբգրային այս խոսքերը վերաբերում են Եկեղեցուն՝ Քրիստոսի Մարմնին: Ինչպե՞ս գիտենք, որ դրանք վերաբերում են Եկեղեցուն, քանի որ Եբրայեցիների գրքի հեղինակը մեջբերում է այս խոսքերը՝ հղելով դրանք եկեղեցուն:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 8.10

10 Որովհետև ՍԱ Է ԱՅՆ ՈՒԽՏԸ, որ կդնեմ Իսրայելի տան հետ այս օրերից հետո, ասում է Տերը. ԵՍ ԿՏԱՄ ԻՄ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՆՐԱՆՑ ՄՏՔԻ ՄԵՋ և ՆՐԱՆՑ ՍՐՏԵՐԻ ՎՐԱ ԿԳՐԵՄ ՆՐԱՆՔ, և նրանց կլինեմ Աստված, և նրանք կլինեն Ինձ ժողովուրդ:

Այս խոսքում Եբրայեցիների գրքի հեղինակը մեջբերում է հատված Հին Կտակարանից՝ գրված Երեմիայի 31.33,34-ում: Նա խոսում է մի ժամանակի մասին, երբ Աստված Նոր Ուխտ պիտի կնքեր, որով մարդկանց սրտերը կփոխվեին: Նոր Ուխտի մեջ փոխվում է մարդու սիրտը կամ հոգին:

Սակայն ուզում եմ նկատի առնել, որ Աստված նաև ասել է. «Իմ օրենքները կտամ նրանց մտքի մեջ»: Աստծո օրենքն է մեր մտքի մեջ, որ նորոգում ու վերափոխում է մեր մտածելակերպը:

«Ուորելի» Նոր Կտակարանում գրված է. «...Իմ օրենքները նրանց մտքի մեջ դնելով՝ այն կգրեմ նաև նրանց սրտերի մեջ...»: Աստված ակնկալում է, որ մենք պետք է ինչ-որ բան անենք մեր մտքի հետ: Մենք պետք է նորոգենք մեր միտքը Նրա խոսքով, որպեսզի մեր միտքը մեր սրտում բնակվող Սուրբ Հոգու հետ համաձայնության մեջ լինի: Երբ մեր միտքը նորոգվում է, մեր միտքն ու սիրտը Աստծո Խոսքի հետ համաձայնության մեջ են լինում:

Քանի որ Նոր Ուխտի մեջ փոխվում է մարդու սիրտը, մարդուն նոր սիրտ է տրվում, ուստի տրվում է նաև նոր պատվիրան: Նոր Ուխտի մեջ Աստված Ինքն է սիրո այդ նոր պատվիրանը կամ աստվածային սիրո նոր օրենքը գրում մեր սրտերի կամ հոգիների մեջ:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.5
5 ...ԱՍՏԾՈ ՍԵՐԸ փռված է ՄԵՐ ՍՐՏԵՐԻ ՄԵՋ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՁԵՌՈՎ, որ տրվեց մեզ:

Որտեղ է սփռվել Աստծո սերը: Մեր սրտերում: Հին Ուխտում Աստված Տասը պատվիրանները գրել էր քարե տախտակների վրա Իր մատով՝ Աստծո մատով (Ելից 24.12, 31.18): Հասկանում ենք, որ երբ Աստվածաշունչը խոսում է «Աստծո մատի» մասին, նկատի ունի Սուրբ Հոգուն:

Հին Ուխտում մարդկանց սրտերը վերստին ծնված չէին: Նրանց սրտերը քարացած էին կամ վերածնված չէին: Հետևաբար Աստծո սերը չէր կարող սփռվել նրանց սրտերի մեջ Սուրբ Հոգով: Սակայն Նոր Ուխտի մեջ մեր սրտերը վերստեղծվել են վերստին ծննդով և քարացած սրտերից վերածվել են մարմնեղեն սրտերի:

Նոր Ուխտում Աստված Իր նոր, սիրո պատվիրանը չգրեց քարե տախտակների վրա: Նա Իր մատով՝ Սուրբ Հոգով, մեկ պատվիրան գրեց մեր վերստին ծնված սրտերի կամ հոգիների մեջ: Այդ պատվիրանը, որ Նա գրեց մեր սրտերի մեջ, միմյանց սիրելու պատվիրանն է, քանի որ այդ մեկ պատվիրանով կատարվում են Հին Կտակարանի մյուս բոլոր պատվիրանները:

Հին Ուխտում Օրենքը չէր կարող որևէ մեկին կատարյալ դարձնել: Իսկ եզների և այծերի արյունը կարող էր միայն *քավել* կամ *ծածկել* իսրայելացիների մեղքերը, որոնք վերստին ծնված չէին:

Սակայն Հիսուսի ծառայությունն ավելի գերազանց էր, քան Մովսեսինը: Աստված Մովսեսին տվեց Օրենքը, իսկ Հիսուսն Իր արյամբ սկիզբ դրեց Նոր Ուխտին: Հիսուսը նախանշեց սկիզբը մի ուխտի, որն ավելի լավն էր, քան Մովսեսինը, քանի որ այդ նոր ուխտը հիմնված էր ավելի լավ խոստումների վրա և հաստատված էր անձամբ Հիսուսի արյամբ:

Երբ մենք վերստին ծնվում ենք, մեր սրտերը վերստեղծվում են Տեր Հիսուս Քրիստոսի արյամբ, իսկ մեր մեղքերը ոչ միայն քավվում, այլև վերացվում, մաքրվում կամ ջնջվում են: Ահա թե ինչու է Աստված կարողանում սիրո օրենքը գրել մեր սրտերի մեջ, քանի որ դրանք մաքրվել և վերստեղծվել են:

Ի՞նչ տեսակի սեր է սփռվել մեր սրտերում: Արդյոք դա բնական, մարդկայի՞ն սեր է: Ո՛չ, դա այն սերն է, որն Աստծո էությունն է, քանի որ Աստված սեր է:

Ինչո՞ւ հավատացյալները կարող են առաջնորդվել իրենց սրտով

Հավատացյալները կարող են առաջնորդվել իրենց սրտով կամ հոգով, և դրա համար կա պատճառ: Երբ մենք վերստին ծնվում ենք, Սուրբ Հոգին վերստեղծում է մեր հոգին:

Նոր Ուխտում ասվում է. *«Նույն Ինքը Հոգին վկայություն է տալիս մեր ՀՈԳՈՒ [սրտի] հետ, որ մենք Աստծո որդիներ ենք»* (Հռոմ. 8.16): Աստվածաշունչն ասում է, որ մենք պետք է առաջնորդվենք մեր սրտով կամ հոգով մեր մեջ ապրող Սուրբ Հոգու օգնությամբ (Հռոմ. 8.14, Հովհ. 14.16, 23):

Ամեն հավատացյալ պետք է սովորի լսել իր վերստեղծված սրտին կամ հոգուն, քանի որ այդտեղ է գրված սիրո օրենքը: Աստված ասել է. «Ես Իմ օրենքը կգրեմ նրանց սրտերի մեջ»:

Աստծո սերը սփռված է մեր սրտերում՝ մեր ներսի մարդու մեջ: Ահա թե ինչու մենք կարող ենք առաջնորդվել մեր սրտերում ապրող Սուրբ Հոգով, քանի որ այդտեղ մենք նոր արարած ենք:

Աստված չի ասել, որ Իր սերը կսփռի մեր գլուխներում: Ահա այստեղ է, որ մարդիկ անախորժությունների մեջ են ընկնում: Նրանք փորձում են առաջնորդվել իրենց գլխով՝ չնորոգված մարմնական մտածելակերպով, և նրանց գլուխն է նրանց գցում անախորժությունների մեջ:

Շատ հաճախ հավատացյալների տրամաբանությունը լցված է կրոնավոր, մարմնավոր մտքերով, քանի որ նրանք ժամանակ չեն հատկացրել իրենց միտքը նորոգելուն: Իրականում շատ անգամներ մեր հոգին կամ սիրտը տուժում է մեր գլխի՝ մարմնական մտածելակերպի պատճառով: Ահա թե ինչու մենք պետք է խորասուզվենք Խոսքի մեջ և նորոգենք մեր միտքը Խոսքով:

Նույնը վերաբերում է նաև մարդկային բնությանը: Մենք չենք կարող առաջնորդվել մեր մարդկային բնությամբ, քանի որ այն փրկագնված չէ: Ո՛չ. մեր մարդկային բնությունը սրբված և փրկված չէ: Եվ մեր չփրկագնված մարդկային բնությունը մեզ կարող է անախորժությունների մեջ գցել:

Մարդկային բնությունը լավ առաջնորդ չէ, քանի որ Աստծո սերը սփռված չէ նրանում: Այդ պատճառով էլ Աստվածաշունչն ասում է, որ մենք մեր մարդկային բնությունը պետք է հնազանդեցնենք վերստին ծնված, վերստեղծված հոգուն, քանի որ այն փրկագնված է:

Իրականում, եթե լսենք մեր սրտին, ներքուստ կիմանանք ինչպես

վարվել ցանկացած իրավիճակում: Սակայն շատ անգամներ մեր գլուխն ամբողջությամբ լցված է կրոնական ուսմունքներով՝ Աստծո Խոսքով նորոգված լինելու փոխարեն: Իսկ դա խանգարում է մեր հավատքին:

Ինչո՞ւ. որովհետև հավատքը գլխից չէ. աստվածային հավատքը մարդու սրտից կամ հոգուց է, որտեղ բնակվում է Աստծո սերը:

Այդ դեպքում ինչպե՞ս կարող ենք լիարժեքորեն ակտիվացնել Աստծո սերը՝ թույլ տալով, որ այն ղեկավարի մեզ, որպեսզի մեր հավատքն աճի ու գործի իր ամբողջ ներուժով: Թույլ տվեք ասել ձեզ մի կարևոր ճշմարտություն. եթե ցանկանում եք սովորել, թե ինչպես է պետք գործի դնել հավատքը, ապա ամենակարևոր բաներից մեկը, որ պետք է սովորեք, աստվածային սիրով վարվելն է:

Հաճախ մարդիկ իրենց բոլոր մտքերը կենտրոնացնում են հավատքի վրա, և ինչ-որ առումով դա լավ է: Սակայն խնդիրը կարող է բոլորովին հավատքը չլինել. այն կարող է լինել զարգացած, սակայն ոչ ակտիվ կամ գործող: Հավատքը չի գործի, եթե ձեր սիրո ընթացքի մեջ ինչ-որ բան սխալ լինի:

Շատ մարդկանց խնդիրն այն է, որ նրանք փորձում են աստվածային սերը փոխարինել բնական մարդկային սիրով, սակայն դա նույնը չէ: Արդյունքում նրանց հավատքը չի գործում, իսկ նրանք չեն հասկանում, թե ինչու:

Իրականում հնարավոր չէ սովորեցել Աստծո հավատքի մասին՝ առանց Աստծո սիրո մասին սովորեցնելու, քանի որ հավատքը գործում է միայն սիրով:

Շատերը սիրում են լսել հավատքի մասին, սակայն նրանք հոգ չեն տանում լսելու Աստծո սիրով վարվելու մասին: Իսկ հաճախ հենց սիրով վարվելու պակասն է խոչընդոտում, որ հավատքը գործի:

Սեր. հավատքի զորությունը

Թույլ տվեք օրինակով բացատրել, թե ինչ նկատի ունեմ: Կարող եք ունենալ երաժշտական գործիքների նվագախումբ, ինչպես նաև ձայնային համակարգ, սակայն եթե էլեկտրականություն չլինի, ձայնը չի տարածվի. այն չի ունենա ակնկալվող ազդեցությունը:

Նույնը վերաբերում է հավատքին և դավանանքին: Դուք կարող եք ունենալ հավատք և անել բոլոր ճիշտ դավանությունները, սակայն հավատքը չի գործի, եթե դրանով զորություն չհոսի: Աստվածային սերը հավատքի զորությունն է:

Երբեմն պատմում եմ մի կնոջ մասին, որը տարիներ առաջ համաժողովից հետո մոտեցավ ինձ ու ասաց. «Ուզում եմ, որ ինձ մի բան խոստանաք»:

«Ի՞նչ խոստանամ. չեմ կարող ոչինչ խոստանալ, քանի դեռ չեք ասել, թե ինչի մասին է խոսքը»,- պատասխանեցի ես:

Հետո նա խեղճացավ ու սկսեց լաց լինել: Ես չեմ ծաղրում նրան, պարզապես արձանագրում եմ փաստերը:

Այդ կինն ասաց. «Ես այրի եմ, ունեմ տասնհինգամյա որդի: Նա եկեղեցում չի մեծացել, քանի որ ես ընդամենը երեք տարի է, ինչ քրիստոնյա եմ: Որդիս անկարգ է. ոչինչ չեմ կարողանում նրա հետ անել: Գիշերը մինչև ժամը երեքը-չորսը դրսում է:

Իսկ ես անկողնում պառկած սպասում եմ, որ ոստիկանությունից զանգահարեն ու տեղեկացնեն, որ նա ձերբակալված է, քանի որ թմրադեղեր ու նման այլ բաներ է օգտագործել: Ուզում եմ խոստանաք, որ ամեն օր կաղոթեք նրա համար»:

Իմ պատասխանը եղավ հետևյալը. «Նման բան չեմ կարող անել. չեմ կարող խոստանալ, քանի որ, ամենայն հավանականությամբ, կլինեն օրեր, երբ կմոռանամ աղոթել նրա համար»:

«Այդ դեպքում խոստացեք, որ կաղոթեք, երբ կհիշեք»:

«Ես առհասարակ չեմ պատրաստվում աղոթելու նրա համար»,- ասացի ես, որ գրավեմ նրա ուշադրությունը: Նա նայեց ինձ ու թարթեց աչքերը, ինչպես գորտը արևմտյան Տեխասի ուժեղ փոթորկի ժամանակ:

«Չե՞ք աղոթի»,- հարցրեց նա:

«Ո՛չ. ոչ մի անգամ էլ չեմ աղոթելու նրա համար»:

«Իսկապե՞ս»:

«Իսկապես,- շարունակեցի ես,- ոչ մի օգուտ չի լինի նրա համար աղոթելուց, եթե Դուք շարունակեք վարվել այնպես, ինչպես վարվում եք»:

«Ի՞նչ նկատի ունեք»:

«Քանի դեռ դուք շարունակում եք դատապարտել նրան, իմ աղոթքը ոչ մի օգուտ չի տա: Կարող եմ ենթադրել, որ հանգիստ չեք տալիս Ձեր որդուն, անընդհատ փորձում եք կրոնը խցկել նրա մեջ, հրել նրան դեպի Հիսուսը»:

«Որտեղի՞ց իմացաք, որ նման բան եմ անում»:

«Այն բանից, որ այսօր Ձեր որդին այդպիսին է,- ասացի ես:- Դուք

հեռացրել եք նրան Աստծուց: Եվ հիմա Դուք ինձ մի բան պետք է խոստանաք. այսօրվանից սկսած՝ ոչ մի բառ չասեք նրան Հիսուսի մասին: Եվ դադարեք անընդհատ նախատելուց:

Նույնիսկ մի՛ համոզեք, որ եկեղեցի գա: Կրոնի, Աստվածաշնչի, եկեղեցու, Հիսուսի և առհասարակ ոչ մի բանի մասին ոչ մի բառ մի՛ ասեք նրան. պարզապես սիրո՛վ վարվեք նրա հետ,- հետո ավելացրի,- իսկ երբ նա գիշերը դրսում կլինի, դադարեք անկողնում պառկած անհանգստանալուց, փոխարենը ասեք. «Տեր, ես շրջապատում են նրան հավատքով և սիրով»»:

Հասկանո՞ւմ եք, հավատքն առանց սիրո չի գործում: Այդ կնոջ հավատքը «կարճ միացում» ուներ, քանի որ նա սիրով չէր վարվում որդու հետ: Նա միայն բացասականն էր ասում նրա մասին. ոչ մի դրական բան չասաց նրա մասին, ոչ մի բան, որը ցույց կտար Աստծո սերը:

Ես ասացի այդ կնոջը. «Պարզապես ասեք. «Ես շրջապատում եմ նրան հավատքով և սիրով: Չեմ հավատում, որ նա բանտում կհայտնվի. հավատում եմ, որ նա ծառայելու է Տիրոջը»»:

Իսկ նա պատասխանեց. «Բայց ես նույնիսկ չգիտեմ՝ հավատում եմ դրան, թե ոչ»:

«Սկսեք հավատալ: Եթե սկսեք ասել այդ խոսքերը, ի վերջո հավատալու եք դրանց: Ու քնեք և մոռացեք այդ ամենի մասին: Հանգի՛ստ թողեք նրան»,- եղավ իմ պատասխանը:

«Լավ, կփորձեմ»,- ասաց նա:

«Փորձելով չի ստացվի, - ասացի ես:- Կստացվի միայն, եթե վարվեք այդպես»:

«Շատ լավ: Այդ դեպքում կվարվեմ այդպես: Բայց Դուք կաղոթեք նրա համար, այնպես չէ՞»:

«Ո՛չ,- ասացի ես:- Ես նրա համար չեմ աղոթելու. դա Դուք եք անելու»:

Ինչպես տեսնում եք, այդ կնոջ խնդիրն այն էր, որ նա իր հավատքը գործի չէր դնում: Նա սխալ բանի էր հավատում, սխալ կերպ էր մտածում, սխալ բաներ էր ասում, և այդ ամենը խոչընդոտում էր նրա հավատքը: Սերն է այն գործողությունը, որը խթանում է հավատքը: Սերը հավատքին զորություն է տալիս:

Մոտ տասնհինգ ամիս անց նույն վայրում համաժողով էի անցկացնում: Հավաքույթից հետո ինձ մի կին մոտեցավ ու ասաց. «Հիշո՞ւմ եք ինձ»:

Ես ասացի. «Ո՛չ, տիկի՛ն, չեմ հիշում. շատերի հետ եմ հանդիպումներ ունենում»:

«Մոտ տասնհինգ ամիս առաջ Դուք այստեղ էիք, և ես Ձեզ խնդրեցի ամեն օր աղոթել որդուս համար»:

«Օ՜, հիշեցի, բայց չճանաչեցի Ձեզ. փոխվել եք»: Իրականում նա շատ ավելի երիտասարդ ու գեղեցիկ տեսք ուներ:

Նա ասաց. «Ես գնացի տուն ու արեցի այն, ինչ Դուք ասել էիք: Պետք է ասեմ, որ դժվար էր, բայց արեցի, ու գիտե՞ք՝ ինչ»:

«Ի՞նչ»,- հարցրի ես:

«Մոտ վեց ամիս առաջ որդիս տուն եկավ գիշերը՝ ժամը չորսին. շաբաթ էր:

Հաջորդ առավոտյան արթնացա այն ժամին, երբ սովորաբար արթնանում եմ, և սկսեցի նախաճաշ պատրաստել, քանի որ գնալու էի կիրակնօրյա դպրոց և եկեղեցի:

Որդիս նույնպես վեր կացավ և ինձ հետ նախաճաշեց ու ասաց. «Մայրի՛կ, այսօր ուզում եմ քեզ հետ կիրակնօրյա դպրոց և եկեղեցի գալ»:

Ներսումս թռչկոտում էի, բայց արտաքուստ պարզապես ասացի. «Որդի՛ս, երեկ շատ ուշ ես տուն եկել, հանգստի կարիք ունես, իսկ վաղը դպրոց պետք է գնաս»:

«Ո՛չ,- ասաց նա,- ուզում եմ գալ»:

Ես ինձ այնպես էի պահում, կարծես ինձ համար միևնույնն էր՝ կգար նա եկեղեցի, թե ոչ: Ամեն դեպքում եկավ»,- շարունակեց կինը:

«Հաջորդ շաբաթ երեկոյան նույն բանը տեղի ունեցավ: Նա եկավ տուն գիշերը՝ ժամը չորսին, բայց հաջորդ առավոտյան վաղ արթնացավ, ինձ հետ նախաճաշեց ու ասաց, որ ուզում է ինձ միանալ ու գալ կիրակնօրյա դպրոց և եկեղեցի:

Ես պատասխանեցի. «Որդի՛ս, դու հանգստի կարիք ունես. վաղը դպրոց պետք է գնաս»:

«Ո՛չ,- ասաց նա,- գալիս եմ»: Եվ եկավ:

Եվ այդ նույն կիրակի երեկոյան ասաց, որ ինձ հետ ուզում է գալ եկեղեցի: Եկեղեցում, երբ կանչեցին ապաշխարության, նա գնաց խորանի մոտ և փրկություն ստացավ:

Գիտե՞ք, մինչև փրկվելը նա հարյուր տոկոսով սատանայինն էր, իսկ հիմա, երբ փրկվել է, հարյուր քսան տոկոսով Աստծունն է. հավատում եմ, որ քարոզիչ է դառնալու»,- ասաց այդ կինը:

Հետո ավելացրեց. «Այնքա՜ն ուրախ եմ, որ լիովին նոր որդի ունեմ: Այնքա՜ն ուրախ եմ, որ արեցի այն, ինչ ասել էիք ինձ»: Շնորհակալություն հայտնեց, շրջվեց և հեռացավ:

Հետո վերադարձավ ու ասաց. «Գիտե՞ք՝ էլ ինչ կասեմ Ձեզ. ոչ միայն ես լիովին նոր որդի ունեմ, այլև նա լիովին նոր մայր ունի:

Ես այլևս չեմ անհանգստանում նրա համար: Սովորել եմ հավատքով աղոթել և սիրով վարվել:

Երբեմն քիչ է մնում կսմթեմ ինքս ինձ ու հարցնեմ՝ «Սա իրոք դո՞ւ ես». հիմա մտածելակերպս լիովին փոխվել է»:

Ընկերնե՛ր, սիրով վարվելը մեծ փոփոխություններ է բերում: Երբ սիրով եք վարվում, ձեր հավատքը գործում է:

Երբեմն մարդիկ մտածում են, թե հավատում են Աստծուն, մինչդեռ իրականում նրանց հավատքն արգելակվում է սիրո պակասից:

Թույլ տվեք մի բան ասել, քանի դեռ այս թեման ենք քննարկում: Դուք կարող եք խոչընդոտել Ձեր երեխաների ընթացքը Աստծո հետ՝ մեծացնելով նրանց այնպիսի մթնոլորտում, որտեղ սեր չկա:

Երեխաները պետք է մեծանան այնպիսի մթնոլորտում, որտեղ աստվածային սերն է իշխում: Նրանք ոչ միայն ձեր հավատքը պետք է տեսնեն գործի մեջ, այլև ձեր սերը: Այդ դեպքում նրանք կյանք կմտնեն և հաղթանակ կունենան:

Ես և կինս այդպիսի մթնոլորտ ենք ապահովել մեր տանը: Ահա այդ պատճառով երբևէ խնդիրներ չենք ունեցել մեր երեխաների հետ:

Նկատի չունեմ այն, որ նրանք երեխայաբար չեն վարվել: Իհարկե, նրանք էլ երեխա էին ու իրենց երեխայի նման էին պահում: Սակայն մենք նրանց մեջ լավագույնին էինք հավատում և նրանց մասին ամենալավն էինք խոսում:

Եթե ամենավատն եք տեսնում ձեր երեխաների մեջ ու անընդհատ ասում նրանց դրա մասին, ապա նրանք ոչ մի բանի չեն հասնի, չեն լինի ավելին, քան ձեր խոսքերն են:

Երեխաները երբեմն կսխալվեն, քանի որ երեխա են. չեք կարող երեխայի վրա մեծահասակի գլուխ դնել: Բայց երբ նրանց մեջ լավագույնն եք տեսնում և սիրում եք նրանց, այդպես դուք երևան եք հանում նրանց մեջ եղող լավագույնը, և նրանք կյանքում ինչ-որ բանի են հասնում. ապրում են այն աստվածային սիրուն համապատասխան, որը դուք ներդրել եք նրանց մեջ:

Աստվածային սերը կատարում է օրենքը

Եկեք սուրբգրային մեկ այլ խոսք ուսումնասիրենք Գաղատացիների գրքից: Այստեղ Պողոսը գրում է Գաղատիայի եկեղեցիներին: Դրանք նախկին հեթանոսներից կազմված եկեղեցիներ էին, բայց թուղթն ուղղված չէ միայն մեկ եկեղեցու:

Այն գրվել էր, որ ընթերցվեր ամբողջ Գաղատիայում և վերաբերում է բոլոր քրիստոնյաներին:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.14

14 Որովհետև ԲՈԼՈՐ ՕՐԵՆՔՆ ԱՅՍ ՄԵԿ ԽՈՍՔՈՒՄ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ. ՔՈ ԸՆԿԵՐՈՋԸ ՔՈ ԱՆՁԻ ՊԵՍ ՍԻՐԻՐ:

Տվյալ սուրբգրային խոսքում ասվում է, որ ամբողջ Օրենքն այս մեկ խոսքում է ամփոփված՝ սիրի՛ր: Օրենքը կատարում ենք, երբ պարզապես սիրում ենք մեր մերձավորներին այնպես, ինչպես ինքներս մեզ: Օրենքի ո՛ր մասն ենք կատարում՝ սիրով վարվելով: Ամբողջ Օրենքը:

Եթե վարվում եք աստվածային սիրով, կարիք չունեք անհանգստանալու, որ գուցե չեք հնազանդվել Օրենքի ինչ-որ կետի, այնպես չէ՞: Երբ կատարում եք սիրո օրենքը, կարիք չկա մտահոգվելու մի շարք կանոններ, պատվերներ և օրենքներ կատարելու մասին:

Ոմանք վիճում են այն թեմայով, թե արդյոք պետք է կատարենք Տասը պատվիրանները: Իրականում ճշմարտությունն այստեղ շատ պարզ է. սիրո օրենքը ներառում է Տասը պատվիրանները: Մարդիկ շփոթվում են Աստվածաշնչում գրվածի պարզությունից և բաց են թողնում Խոսքի ճշմարտությունը:

Աստծո որդիները սիրո որդիներ են

Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ է ասում Հովհաննեսն իր առաջին թղթում: Նա մեզ ավելին է սովորեցնում աստվածային սիրո մասին: Աստծո՝ վերստին ծնված, նոր ստեղծված որդիները պետք է վարվեն աստվածային սիրով:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.1,2

1 Տեսե՛ք, թե Հայրն ինչպիսի սեր շնորհեց մեզ, որ Աստծո որդիներ կոչվենք, սրա համար աշխարհը չի ճանաչում մեզ, որ Նրան չճանաչեց:

2 Սիրելինե՛ր, ՀԻՄԱ ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆԵՐ ԵՆՔ...

Մենք չենք *դառնալու* Աստծո որդիները, երբ գնանք Երկինք: Եթե վերստին ծնվել ենք, ապա հիմա արդեն Աստծո որդիներն ենք: Եվ եթե Աստծո որդիներ ենք, ապա սիրո որդիներ ենք, որովհետև Աստված սեր է, իսկ մենք Նրա պատկերով ենք ստեղծված:

Քանի որ Աստված սեր է, իսկ մենք Աստծո զավակներն ենք, ուստի մենք սիրո զավակներ ենք: Երբ վերստին ծնվեցինք, Աստծո կյանքը փոխանցվեց մեր հոգիներին:

Հավատացյալները պետք է թույլ տան, որ Աստծո կյանքն ու սերը ղեկավարեն իրենց էությունը:

Ահա թե ինչու մենք պետք է ինչ-որ բան անենք մեր մտքերի և մարմինների հետ, քանի որ աստվածային սերը չի սփռվել դրանցում: Եվ եթե մենք ինչ-որ բան չանենք մեր մարդկային բնության հետ, այն կխոչընդոտի մեր սիրո ընթացքը:

Մեր չնորոգված միտքն ու չվերածնված մարմինը կփորձեն ղեկավարել մեր ներսի մարդուն՝ մեր հոգուն:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.1,2

1 Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ՁԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՔ ԿԵՆԴԱՆԻ, սուրբ և Աստծո ընդունելի ՊԱՏԱՐԱԳ, որ է ձեր բանավոր պաշտոնը:

2 Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ ՆՈՐՈԳՎԵ՛Ք [ինչպե՞ս] ՁԵՐ ՄՏՔԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՄԲ, որ դուք քննեք, թե ինչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը:

Մենք պետք է նորոգենք մեր մտքերն Աստծո սիրով: Քրիստոսի Մարմինը չի նորոգել իր միտքն աստվածային սիրով ինչպես հարկն է, մինչդեռ Աստվածաշունչն այնքա՛ն բան է ասում մտքի նորոգության մասին: Մենք պետք է նորոգենք մեր մտքերը, եթե պատրաստվում ենք սիրով վարվելու ուրիշների հետ:

Շատ հաճախ որպես քրիստոնյա պատասխանատվություն վերցնելու փոխարեն մենք ցանկանում ենք, որ Աստված անի մեր հոգևոր աճի և զարգացման ամբողջ աշխատանքը: Ակնկալում ենք, որ Նա կտա ավելին, քան արդեն տվել է. մինչդեռ մեր պատասխանատվությունն է զարգացնել մեր սերը, որպեսզի այն աճի և ավելանա:

Աստվածային սիրո հարցում շատ հավատացյալներ նման են առակի՝ մեկ տաղանդ ունեցող մարդուն: Նա փաթաթեց իր տա-

ղանդն անձեռոցիկի մեջ և թաքցրեց: Շատերս թաքցրել ենք Աստծո սերը, որն արդեն սփռված է մեր սրտերում: Մենք այն թաքցրել ենք՝ գործածելու, զարգացնելու և դրանում վարժվելու փոխարեն:

Դա ճիշտ չէ. մենք պետք է պարզենք, թե ինչ է Աստծո Խոսքն ասում սիրո մասին, և մեր մտքերը նորոգենք՝ ըստ Նրա Խոսքի: Իսկ հետո պետք է գործի դնենք, կիրառենք և զարգացնենք այն, ինչն Աստված արդեն տվել է:

Մենք պետք է այնքան ներծծված լինենք Աստծո Խոսքով, որ ներծծվենք նաև Նրա սիրով: Եթե այդպես անենք, ապա աստվածային սիրով վարվելը կլինի մեր առաջին արձագանքը ցանկացած իրավիճակում՝ անկախ այն բանից, թե ինչպես են մեզ հետ վարվել:

Աստվածային սերը միշտ հետևյալ հարցն է տալիս. «Ինչ ազդեցություն կունենա դիմացինի վրա այն, ինչ ես ցանկանում եմ անել կամ ասել»:

Աստված մեզնից պահանջելու է սիրով վարվել, նույնիսկ երբ մեր շրջապատում մեզ հետ սիրով չեն վարվում: Սիրո մեջ վարժվելու շատ առիթներ կլինեն, երբ ուրիշները մեր հանդեպ սիրով չեն վարվի:

Ես նման շատ առիթներ եմ ունեցել ծառայության մեջ: Օրինակ՝ մի անգամ Աստված սրտումս ամուր դրեց, որ հովվություն անեմ մի եկեղեցում: Հարանվանությունը ևս ցանկանում էր, որ ես լինեի նրանց հաջորդ հովիվը, մինչդեռ նախկին հովիվը ցանկանում էր, որ իր զարմիկը ստանձնի հովվությունը, այնպես որ նա սկսեց այնպիսի քաղաքականություն վարել եկեղեցում, որ իմ փոխարեն իր զարմիկին ընտրեին:

Աստվածային սերը երբեք չէր բաժանի եկեղեցին: Ես կարող էի վերցնել այդ եկեղեցու անդամների նվազագույնը կեսին և մեկ այլ եկեղեցի հիմնել, քանի որ այդ մարդկանցից շատերը ցանկանում էին, որ ես լինեի իրենց հաջորդ հովիվը: Սակայն ես չէի կարող վարվել սիրով և միաժամանակ բաժանել եկեղեցին. հնարավոր չէ համատեղել այդ երկու գործողությունները:

Ինձ ապշեցնում է այն, որ վերստին ծնված, Հոգով լցված որոշ քրիստոնյաներ կարող են գառների գողեր լինել, բաժանել եկեղեցիները և գողանալ ինչ-որ մեկի հարանվանությունը՝ առանց նույնիսկ մտահոգվելու դրա մասին: Իսկ հետո մեղադրում են Աստծուն՝ ասելով, թե Աստված է իրենց նման բան ասել:

Բայց Աստված այդպիսին չէ: Կա՛մ նրանք են խաբում, կա՛մ Աստված, քանի որ Խոսքում գրված է. «Սերն ընկերոջը չար չի անի»:

Այնուամենայնիվ, ես կարող էի բաժանել եկեղեցին և նախկին

հովվի հարանվանության անդամների կեսի հետ հիմնել իմ եկեղեցին: Բայց ես ընտրեցի լսել իմ ներսի մարդուն և ոչ թե իմ մարդկային բնությանը:

Ականջ դրեցի իմ ներսում ապրող Աստծո սիրուն, և Սուրբ Հոգին ասաց ինձ. «Պարզապես գնա՛ քո ճանապարհով ու մի՛ բաժանիր այս եկեղեցին»: Թեև ես գիտեի, որ Աստված էր ինձ հետ խոսել այդ եկեղեցին հովվելու մասին, հանեցի իմ անունը թեկնածուների ցանկից և հեռացա այդ քաղաքից:

Ավելի ուշ հարցրի Տիրոջը. «Տե՛ր, իսկ եկեղեցի՞ն. ի՞նչ է լինելու այդ մարդկանց հետ»:

Տերը պատասխանեց ինձ. «Նրանք կտուժեն, քանի որ Իմ կատարյալ կամքի մեջ չեն: Նրանք լսեցին սխալ մարդկանց և սխալ մարդու նշանակեցին հովիվ, բայց ես հոգ կտանեմ քո մասին, քանի որ դու սիրով վարվեցիր»:

Փա՛ռք Աստծուն, Նա հոգ տարավ իմ մասին հրաշալի ձևով: Եվ պատկերացնո՞ւմ եք, տարին չբոլորած՝ Աստված ինձ հովիվ նշանակեց այդ նույն եկեղեցում, իսկ ես դրա համար ոչինչ չէի արել: Աստված Ինքը կարգավորեց այդ ամենը:

Երբեմն մարդկանց խնդիրն այն է, որ երբ Աստված խոսում է նրանց հետ, նրանք փորձում են անցնել այլ մարդկանց վրայով, որպեսզի իրականացնեն այն, ինչ Աստված ասել է: Այդպես նրանք թողնում են սերը, իսկ Աստված չի կարողանում օրհնել նրանց, քանի որ նրանք հոգևորապես այն դիրքում չեն, որ կարողանան ստանալ Նրա օրհնությունները:

Աստված, իհարկե, ցանկանում է առավելագույնս օրհնել մեզ, սակայն Նա չի կարող դա անել, եթե մենք չենք քայլում Նրա ծրագրի մեջ: Իսկ Աստծո ծրագիրն այն է, որ մենք ուրիշների հանդեպ սիրով վարվենք: Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց ես դեռ շատ վաղուց եմ որոշել, որ սիրով եմ վարվելու՝ անկախ այն բանից մյուսներն այդպես վարվում են, թե ոչ:

Ծառայության մեջ մարդկային բնությանը հետևելու փոխարեն սիրով վարվելու շատ առիթներ են լինում: Օրինակ՝ հոգեգալստական բոլոր եկեղեցիներում, որտեղ ես հովիվ եմ եղել, հարկավոր էր գործի դնել սիրով վարվելու կանոնը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը խնդրահարույց եկեղեցու համբավ ուներ:

Սակայն բոլոր իրավիճակներում Աստված սովորեցրել է ինձ ինչպես լուծել շատ խնդիրներ այս եկեղեցիներում՝ պարզապես սիրով վարվելով և մարդկանց աստվածային սիրո մասին

սովորեցնելով: Աստված սովորեցրել է ինձ ինչպես սիրել գառներին, ոչ թե ծեծել նրանց:

Մասնավորապես մի եկեղեցում շատ խնդիրներ կային: Դա քսաներեք տարվա եկեղեցի էր, իսկ ես ընդամենը քսանմեկ տարեկան էի, երբ հովվություն ստանձնեցի:

Քսաներեք տարիների ընթացքում եկեղեցու շատ ընտանիքների երեխաներ ամուսնացել էին իրար հետ, և եկեղեցում շատ էին ազգակցական կապերը, ու անդամներն անընդհատ ընտանեկան վեճերի մեջ էին: Նրանց հովվելու համար ես պետք է սովորեի խաչել մարդկային բնությունս և ճնշել մարմինս:

Ժամանակ առ ժամանակ կիրակի առավոտները միակ բանը, որ կարողանում էի անել, մարմինս ճնշելն էր: Երբեմն ուզում էի բարձրանալ բեմ, բոլորին կենդանի-կենդանի մաշկազերծ անել ու նրանց կաշին պատին գամել: Ուզում էի սկսել խորհրդի սարկավագից ու հերթով անցնել կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներին, նրանցից հետո՝ ամբողջ հարանվանությանը:

Շատ է խոսվում մարդկային բնությունը խաչելու, իսկ մարմինը հոգուն հնազանդեցնելու մասին. այդ եկեղեցում ես պետք է սովորեի դա անել:

Բայց մարդկային բնությանս տեղ տալու ու բոլորին կենդանի մաշկազերծ անելու փոխարեն մի կիրակի քարոզում էի սիրո, հաջորդ կիրակի՝ Երկնքի մասին: Մարդկային բնությանս տեղ տալու և Աստծո Խոսքով բոլորի գլուխները ջարդելու փոխարեն քարոզում էի Ա Կորնթացիների 13-րդ գլխից՝ սիրո գլխից:

Եթե կարողանաք ստիպել, որ բոլորն իրար սիրեն և խանդավառվեն Երկնքում հավիտենական հույսից, բնական շատ հանգամանքներ ինքնըստինքյան կշտկվեն:

Մարդիկ վիճում են և իրենց համար խնդիրներ ստեղծում բնական մակարդակում, սակայն հոգևորապես ցանկանում են հասնել այն մակարդակին, որ Աստված է կամենում: Եթե ասենք, թե Աստված նրանց ինչպիսին է տեսնում՝ փոխանակ ասելու, թե ինչպիսին է սատանան նրանց տեսնում, մենք կօգնենք, որ նրանք դրսևորեն իրենց ամբողջ ներուժը: Մեր մեջ և մեր միջոցով գործող Աստծո սերը չի ձախողվում:

Բացի սիրուց՝ ոչինչ պարտք մի՛ մնացեք

Հռոմեացիների 13.8-րդ խոսքի վերջին հատվածում տեսնում ենք, որ սերը կատարում է Տասը պատվիրանները: Իսկ հիմա եկե՛ք նայենք այդ խոսքի առաջին հատվածին:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 13.8
8 ՈՉ ՈՔԻ ՈՉԻՆՉ ՊԱՐՏԱԿԱՆ ՉՄՆԱՔ՝ ԲԱՑԻ ԻՐԱՐ ՍԻՐԵԼՈՒՑ, որովհետև ընկերոջը սիրողը օրենքը կատարել է:

Երբեմն մարդիկ համատեքստից կտրում են այս խոսքը և հաղորդում դրան իմաստ, որն այն չի կրում: Շատերը տուժել են դրա հետևանքով:

Օրինակ՝ ոմանք մեջբերում են այս խոսքը՝ ասելու, թե չենք կարող ապառիկ գնումներ անել:

Այո՛, մենք չպետք է այնքան պարտքեր կուտակենք, որ չկարողանանք վճարել, բայց այս խոսքը չի նշանակում, որ չենք կարող ապառիկ գնումներ անել: Իհարկե, պետք է մարել բոլոր վարձավճարները: Եվ եթե դուք չգիտեք օգտվել վարկից ինչպես հարկն է, ապա միշտ պարտքի մեջ կընկնեք. այդ դեպքում լավ կլինի հրաժարվել վարկով որևէ բան գնելու մտքից:

Այնուհանդերձ, ոմանք ուսուցանում են, որ չի կարելի վարկով որևէ բան ձեռք բերել, և այդպես էլ սովորեցնում են ուրիշներին: Եկե՛ք խորհենք սրա շուրջ: Մենք ամեն օր ենք վարկից օգտվում: Բոլորս ենք դա անում: Տանն էլեկտրականություն ունե՞ք: Ամեն ամիս պարտքով էլեկտրականություն չե՞ք օգտագործում: Գազից կամ ջրից չե՞ք օգտվում: Դրանց համար պետք է վճարեք, ճի՞շտ է:

Եթե տուն եք վարձակալում, ապա պարտք եք նաև այդ գումարը: Ո՞րն է տարբերությունը վարձակալման վճարի և տան գրավով վճարի միջև: Միակ տարբերությունն այն է, որ վարկը մարելով՝ տունն ի վերջո ձերն է լինելու:

Եթե ողջամտորեն և խոհեմաբար վարվեք, ապա ոչ մի սխալ բան չկա վարկով գնումներ անելու մեջ: Իրականում, եթե վարկով ինչ-որ բան եք գնում, ոչինչ պարտք չեք, քանի դեռ չի հասել մարելու պահը: Եվ եթե ժամանակին եք կատարում մարումները, ապա կրկին պարտք չեք, քանի որ արդեն վճարել եք:

Ոմանք կարող են հիմարություններ անել՝ կարծելով, թե հնազանդվում են Խոսքին, երբ իրականում ընդհանրապես ականջ չեն դնում Աստվածաշնչին:

Ինչպես տեսնում եք, չի կարելի համատեքստից կտրել խոսքի մի մասը և փորձել դրանով ինչ-որ բան ապացուցել: Ես երբեմն կատակում եմ, թե նման դեպքում կարող եք նույնիսկ այնպիսի խոսք գտնել, որի հիման վրա պիտի գնաք ու կախվեք:

Կա սուրբգրային հատված, որում ասվում է. «Հուդան գնաց և ինքն իրեն խեղդեց» (Մատթ. 27.5): Կարող եք նաև կարդալ Բարի սամարացու պատմությունը, որում Հիսուսն ասում է. «Գնա՛, դու էլ այնպես արա» (Ղուկ. 10.37):

Եթե այս երկու խոսքերը միացնենք, կստացվի՝ Հուդան գնաց և ինքն իրեն կախեց, դուք էլ գնացե՛ք և այդպե՛ս արեք:

Գուցե սա մեզ զվարճալի թվա, ու ծիծաղենք, բայց Հռոմեացիների 13.8-ի մի մասը համատեքստից կտրելը և այնպիսի իմաստ հաղորդելը, որն այն չի կրում, պակաս ծիծաղելի չէ:

Լսել եմ մի ծառայողի մասին, որ ճիշտ նույն բանն է արել: Այդ ծառայողի քաղաքում կար մի մկրտական եկեղեցի, որի անդամների թիվն այնքան էր աճել, որ եկեղեցաշենքում այլևս չէին տեղավորվում: Մկրտական եկեղեցու հովիվը որոշեց վաճառել շենքը, բայց նա ուզում էր այն վաճառել հավատացյալների, որպեսզի շենքը շարունակեր օգտագործվել որպես եկեղեցաշենք:

Մեկ այլ ծառայող, որը ևս հովիվ էր ու ապրում էր նույն քաղաքում, ցանկանում էր գնել այն: Մկրտական հովիվը, որ վաճառում էր եկեղեցաշենքը, մոտենում է նրան ու ասում. «Մարդիկ, որոնք հիմա Երկնքում են, այս եկեղեցու համար գումար են նվիրաբերել, որ այն հոգիներ շահելու վայր լինի:

Դուք ևս կարևորում եք մարդկանց փրկությունը, և մենք ցանկանում ենք շենքը Ձեզ առաջարկել»: Մկրտական հովիվն առաջարկում էր շենքը անհավատալիորեն ցածր գնով, քանի որ ցանկանում էր, որ այն օգտագործվեր որպես եկեղեցաշենք:

Մկրտական եկեղեցու անդամ կանանցից մեկը, այդ մասին իմանալով, պատմում է իր ամուսնուն, որն իրավաբան էր: Վերջինս փրկված չէր, բայց երբեմն կնոջ հետ գալիս էր եկեղեցի:

Նա մոտենում է այն ծառայողին, որն ուզում էր շենք գնել, և առաջարկում իր օգնությունը. «Եթե ցանկանում եք գնել շենքը, ես կարող եմ երկու տոկոս տոկոսադրույքով վարկ ձևակերպել: Ինձ դրա համար վճարել պետք չէ, բայց որոշակի գումար անհրաժեշտ կլինի

վճարել քարտուղարուհուս, որ թղթերը ձևակերպի: Իսկ մեկ տարի անց տոկոսադրույքը կիջեցնենք մեկ տոկոսի»:

Այդ ծառայողը պատասխանում է. «Ո՛չ, մենք չենք կարող գնել եկեղեցաշենքը: Հասկանում եմ, որ բացառիկ ցածր գնով է վաճառվում, բայց Աստվածաշունչն ասում է՝ «Ոչ մեկին ոչինչ պարտական մի՛ մնացեք», այնպես որ մենք չենք կարող պարտքի մեջ ընկնել»: Այդպիսով՝ նա մերժում է գործարքը:

Երբ ես լսեցի այս ամենի մասին, մտածեցի. «Հիմա նրանք ամսական վարձակալման վճարումներ են անում այն շենքի համար, որն այս պահին օգտագործում են, և որն արդյունքում իրենցը չի լինելու: Ո՞րն է տարբերությունը վարձավճարների և գրավով վճարների միջև: Եթե գնեին շենքը, ապա դա կլիներ իրենցը, և դրա հետ կկարողանային անել, ինչ ցանկանային»:

Տասնութ ամիսների ընթացքում այդ երկրորդ ծառայողի եկեղեցում մնաց ընդամենը երեսուն մարդ: Ի վերջո նրանք ստիպված եղան փակվել, իսկ ծառայողը հեռացավ քաղաքից:

Սուրբգրային այդ հատվածի իմաստը վերոնշյալը չէ, և վտանգավոր է Խոսքը համատեքստից կտրելն ու դրա հիման վրա ուսուցանելը:

Մեկ այլ հովիվ իր կնոջ հետ եկեղեցի հիմնեց այն տանը, որտեղ ապրում էին, բայց անդամներն այնքան շատացան, որ սկսեցին մեկ այլ շենք վարձակալել:

Նրանք շարունակ գումար էին խնայում եկեղեցաշենքի ֆոնդում և այդպես հավաքեցին 1.5 միլիոն դոլար:

Ի վերջո այդ գումարն օգտագործեցին որպես կանխավճար իրենց շենքի համար, իսկ հետո վերանորոգեցին այն: Մոտ երկու տարի անց նրանք շենքի համար արդեն վճարել էին 4 միլիոն դոլար, այդպիսով ամբողջովին մարել էին գումարը, և այն դարձել էր իրենց սեփականությունը, ու այլևս ոչինչ ստիպված չէին վճարել:

Իսկ ի՞նչ կլիներ, եթե նրանք հավատքի այդ քայլը չանեին և 1.4 միլիոն դոլարը չօգտագործեին որպես շենքի կանխավճար:

Ինչպես տեսնում եք, Աստված օրհնեց նրանց, քանի որ նրանք ինչ-որ բան նախաձեռնեցին: Հիմա այդ հարանվանության անդամների թիվը գերազանցում է 3500-ը:

«Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց» խոսքը չի վերաբերում վարկով ինչ-որ բան գնելուն: Այն չի վերաբերում նման իրավիճակներին: Սակայն դա չի նշանակում, որ մենք պետք է

մարդկանցից կախվածության մեջ լինենք:

Դա նաև նշանակում է, որ մենք բոլորին սեր ենք պարտք, և այդ պարտքը երբեք չի մարվելու: Մենք պարզապես շարունակաբար սիրով պետք է վարվենք: *«Ուեյմաութի»* թարգմանությունում Հռոմեացիների 13.8-րդ խոսքը հետևյալ կերպ է ձևակերպված. «Ոչ մի պարտք չմարված չթողնե՛ք՝ բացի փոխադարձ սիրո պարտքից»:

Աստվածաշունչն ասում է, որ Աստված կօրհնի ամենը, ինչ մենք ձեռնարկենք (Երկրորդ Օրինաց 28.12): Եթե մենք Տիրոջ համար ոչինչ չձեռնարկենք, Նա օրհնելու ոչինչ չի ունենա: Հարկավոր է հավատքի քայլ անել և ինչ-որ բան ձեռնարկել, որպեսզի օրհնվենք:

Աստված կարողացավ օրհնել այդ մարդկանց, քանի որ նրանք հավատքով գործեցին: Նրանք ինչ-որ բան ձեռնարկեցին Տիրոջ համար: Ուստի կար մի բան, որի հետ Աստված կարող էր աշխատել, որ օրհներ նրանց:

Առաջին եկեղեցին, որի մասին խոսեցինք, չօրհնվեց: Նրանք հետ քաշվեցին Տիրոջ օրհնությունից և չհաջողեցին: Երկու տարում այդ եկեղեցին փակվեց: Այնտեղ մարդ չմնաց, քանի որ հովիվը չհնազանդվեց Աստծո առաջնորդությանը:

Եթե Տուլսայից օդանավ նստեք, և օդաչուն մի փոքր շեղվի երթուղուց, երբ հասնի վայրէջքի ժամանակը, բավականին շեղված կլինեք վերջնակետից:

Սկզբում շեղումն այդքան էլ մեծ չէր: Այդուհանդերձ, եթե չշտկեք ձեզ, ժամանակի ընթացքում բավականին կշեղվեք երթուղուց:

Հոգևորում նույն սկզբունքն է գործում: Եթե երթուղուց մի փոքր շեղվում եք և չեք շտկում ձեզ, որքան առաջ եք շարժվում, այնքան ավելի եք ձեր մտածելակերպով հեռանում նրանից, ինչ Խոսքն իրականում ասում է: Ի վերջո դա դուռ է բացում սատանայի համար դեպի ձեր մտածելակերպը, և խառնաշփոթ է առաջանում:

Տարիներ առաջ մեկ այլ ծառայողի էի ճանաչում, որը ճամփորդող ավետարանիչ էր: Նա սեփականություն գնեց անհավատալիորեն ցածր գնով: Բավականաչափ կանխիկ գումար ուներ՝ ամբողջը միանգամից վճարելու համար: Հետո այդ շենքը վերածեց գրասենյակային տարածքների. ի սկզբանե այն չէր օգտագործվել գրասենյակների համար:

Ժամանակի ընթացքում շենքի տարածքը սկսեց չբավականացնել, և նա ցանկացավ ավելի մեծ հողատարածք գնել, որ ավելի մեծ գրասենյակներ կառուցեր:

Ինչ-որ մեկը հայտնվեց, որը նրան առաջարկեց մոտ երեք անգամ ավելի մեծ գումար, քան նա ի սկզբանե վճարել էր այդ տարածքի համար: Հողատարածքի համար վճարել էր մոտ 125000 դոլար, իսկ նրան առաջարկում էին 600000 դոլար՝ հողատարածքի և իր վերակառուցած շինության համար: Հիմա գուցե դա այնքան էլ մեծ չէ, բայց այն ժամանակ զգալի գումար էր:

Այդ ծառայողը կարող էր 600000 դոլարով ավելի մեծ հողակտոր գնել և դրա վրա կառուցել: Տարածքը գոնե իրենը կլիներ: Հետո կարող էր վարկով գումար վերցնել ու դրա վրա շինություն կառուցել:

Բայց նա որոշեց իր սեփականության դիմաց ստացած այդ 600000 դոլարով հողակտոր էլ չգնել: Նա ասաց. «Աստվածաշունչն ասում է՝ «Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք», իսկ եթե մենք շինարարություն սկսենք այդ նոր հողատարածքի վրա, ապա ստիպված կլինենք վարկ վճարել, ինչը չի կարելի»: Ուստի նա չգնեց սեփականությունը:

Փոխարենը վերցրեց 600000 դոլար շահույթը և գրասենյակային շենքում մի ամբողջ հարկ վարձակալեց: Այնուհետև փորձեց գումար հավաքել, որ կարողանար կանխիկ վճարել այն նոր հողակտորի համար, որը ցանկանում էր գնել, բայց գրասենյակային տարածքները նորից սկսեցին չբավականացնել, ու նա ստիպված շենքի երկրորդ հարկը ևս վարձակալեց:

Փաստորեն իր սեփականության վաճառքից ստացված 600000 դոլար շահույթը նա ծախսեց վարձավճարի վրա՝ սեփականություն ձեռք բերելու փոխարեն: Իրականում մի քանի տարվա ընթացքում միայն վարձակալության համար վճարեց 800000 դոլար:

Մինչդեռ կարող էր վերցնել իր հողակտորի դիմաց ստացած 600000 դոլարը, ավելի մեծ հողակտոր գնել և պարտք վերցնել այն գումարը, որն անհրաժեշտ կլիներ շինարարության համար: Դա պետք է որ չգերազանցեր այն գումարը, որը նա կստանար, երբ վարձակալության տար իր կառուցած գրասենյակները, իսկ շենքը իր սեփականությունը կլիներ:

Սակայն նա «Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք» խոսքը կտրեց համատեքստից և որոշեց, որ չի կարող գրասենյակի շենք կառուցել, քանի որ չի կարող պարտքով գումար վերցնել:

Երբ Աստվածաշունչն ասում է «Ոչ ոքի ոչինչ պարտքական չմնաք՝ բացի սիրելուց», նկատի ունի, որ մենք բոլորին սեր ենք պարտք, ու այդ պարտքը երբեք չի մարվի:

Մեր երկարաժամկետ պարտքը բոլորին լինելու է սեր: Եվ մենք այդ պարտքը մարելու ենք մինչև մեր կյանքի վերջը:

Շարունակաբար սիրով պետք է վարվենք, որպեսզի մարենք այն: Այնպես որ եկե՛ք սկսենք: Եկե՛ք սովորենք վարվել Աստծո սիրո թագավորական օրենքի համաձայն, որպեսզի կարողանանք քաղել դրա օգուտները:

ԴԱՎԱՆԱՆՔ

Աստծո սերը՝ աստվածային սերը, Սուրբ Հոգով սփռված է իմ սրտում: Ուստի ես սիրող եմ, ինչպես իմ Երկնային Հայրն էլ սիրող է: Ես ատող չեմ:

Հետևաբար ես թույլ կտամ, որ այդ սերը՝ Աստծո սիրո բնությունը, ղեկավարի իմ ամբողջ էությունը:

Ես կքայլեմ Աստծո թագավորական օրենքի համաձայն: Ես կխոսեմ Աստծո թագավորական օրենքի համաձայն: Ես կվարվեմ Աստծո թագավորական օրենքի համաձայն, քանի որ նոր արարած եմ Հիսուս Քրիստոսի մեջ:

Նոր Ուխտի մեջ Նոր Ուխտի օրենքը, այն է՝ սիրո թագավորական օրենքը կատարելով՝ ես կատարում եմ Աստծո պատվիրաններն ու կանոնները:

Գլուխ 4

Աստվածային սերը ներում է

Աստվածային սիրո հատկանիշներից է ներումը: Աստծո սերը դրսևորվում է նաև ներողամիտ վերաբերմունքի միջոցով, քանի որ սերն ու ներումը անբաժան են:

Աստվածային սերը պետք է կիրառել, դրանում պետք է վարժվել, որպեսզի այն ձեզ օգուտ տա: Իսկ դրանում վարժվելու եղանակներից մեկը ներելն է: Երբ սիրո մեջ վարժվում ենք, այն աճում է և զարգանում:

Այլ կերպ ասած՝ երբ գործի ենք դնում սերը, այն արդյունք է տալիս: Եվ ոչ միայն արդյունք է տալիս, այլև մեծ վարձք է բերում՝ թե՛ այս, թե՛ գալիք կյանքում:

Եկե՛ք տեսնենք, թե ինչ է գրել Պողոսը Եփեսոսի եկեղեցուն Աստծո սիրո մեջ վարժվելու մասին: Սա վերաբերում է ամեն հավատացյալի. ես սիրում եմ այսպես ձևակերպել. Սուրբ Հոգին այս հոգևոր ճշմարտությունը Պողոս առաքյալի միջոցով փոխանցել է բոլոր հավատացյալներին ամենուր:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.32
32 Եվ իրար հետ քա՛ղցր եղեք, գթած՝ ԻՐԱՐ ՆԵՐԵԼՈՎ, ինչպես Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց:

Ինչպիսի՞ն է աստվածային սերը: Հարցնելով, թե ինչպիսին է Աստծո սերը՝ հարցնում ենք, թե ինչպիսին *է* Աստված: Աստվածային սերը լի է քաղցրությամբ և կարեկցող է: Քանի որ այն քաղցր է և գթած, ապա միշտ պատրաստ է ներելու:

Աստվածաշունչը պատվիրում է մեզ քաղցր լինել միմյանց նկատմամբ: Այս խոսքն ուղղված է քրիստոնյաներին: Տարօրինակ չէ՞ արդյոք այն, որ Սուրբ Հոգին վերստին ծնված մարդկանց պետք է ասեր, որ իրար հանդեպ քաղցր լինեին: Բանն այն է, որ Նա գիտեր, որ այն ժամանակ մարդիկ ունեին մարդկային նույն բնությունը, ինչ հիմա:

Շատ հաճախ հավատացյալները *ղեկավարվում են* իրենց մարդկային բնությամբ և չնորոգված մտքով՝ փոխարենը թույլ տալու, որ Աստծո սերը *զսպի* իրենց:

Երբեմն ինձ թվում է, թե մարդիկ այս խոսքը մեկնաբանում են հետևյալ կերպ. մենք պետք է ներենք նրանց, ովքեր քաղցր են մեր նկատմամբ. եթե մարդիկ քաղցր և գթած են մեր հանդեպ, ապա մենք ևս պետք է քաղցր և գթած լինենք նրանց հանդեպ:

Ուստի եթե մարդիկ սխալ են վարվել մեզ հետ, վատն են խոսել մեր մասին, ապա կարելի է կոշտացնել մեր սրտերը և նրանց հետ մեր հաշիվները պարզել՝ նրանց մասին վատը խոսելով: Սակայն այս մոտեցումն ամենևին աստվածաշնչյան չէ:

Տվյալ խոսքում չի ասվում. «Ներե՛ք միմյանց, երբ վիրավորանքը չափազանց մեծ չէ: Իսկ եթե մարդիկ շատ վատ են վարվել ձեզ հետ, ապա կարելի է նաև չներել նրանց»: Նման բան չի ասվում, ճի՞շտ է: Սակայն շատ հաճախ մարդիկ հենց այդպես են *կիրառում* այս խոսքը:

Սրբացում

Աստված գիտեր, որ կա անհրաժեշտություն մեզ ասելու, որ միմյանց նկատմամբ քաղցր լինենք, քանի որ մենք ապրում ենք մարդկային մարմիններում, որոնք դեռևս փրկագնված չեն: Մեր ներսի մարդը վերստին ծնված է, սակայն դրսի մարդը նույնն է, ինչ նախկինում է եղել: Մարդկային բնությունը չի ցանկանում լինել քաղցր, գթած կամ ներող: Փառք Աստծուն, որ երբ գնանք Երկինք, նոր մարմիններ կունենանք:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 9.27

Այլ իմ մարմինը ճնշում եմ և նվաճում, որ միգուցե ուրիշներին քարոզելով՝ ինքս անպիտան գտնվեմ:

Թեև Պողոսը նոր արարած էր, նա ստիպված էր իր մարմինը հնազանդեցնել ներսի մարդուն: Մարմինները հոգիներին հնազանդեցնելը Աստծո առջև սրբացման ընթացքի մաս է կազմում:

Շատերը կարծում են, թե այս խոսքը վերաբերում է միայն սեռական մեղքերին, բայց մարդկային բնությունը հոգուն հնազանդեցնելու շատ այլ ոլորտներ ևս կան:

Սա նաև վերաբերում է սրբացման վերոնշյալ ոլորտին: Մարդկային բնությունը չի ցանկանում քաղցր լինել ուրիշների նկատմամբ, հատկապես եթե ձեզ հետ չեն վարվում այնպես, ինչպես կարծում եք,

թե պետք է վարվեն: Եվ մարդկային բնությունը ցանկանում է հեռու մնալ այդպիսի մարդկանցից և պատժել նրանց:

Սակայն անհրաժեշտ է ճնշել մարդկային բնությունը, քանի որ հակառակ պարագայում անախորժության մեջ կհայտնվեք: Եթե ձեզ ղեկավարի ձեր մարդկային բնությունը, աստվածային սիրով վարվել չեք կարողանա: Իսկ եթե սիրով չվարվեք, ձեր հավատքը չի գործի:

Սրբացումը սիրով վարվելը և մարդկային բնությունը ճնշել սովորելն է: Մինչ հափշտակվելը շարունակաբար բախվելու եք ձեր հին, չփրկագնված մարդկային բնությանը, քանի որ այն փոխակերպված չէ:

Եվ Աստված ոչինչ չի անելու ձեր մարմինների հետ, քանի դեռ այստեղ՝ երկրի վրա եք, սակայն Նա արդեն ինչ-որ բան արել է ձեր հոգիների հետ: Հիմա *ձեր* հերթն է աշխատել ձեր մարմինների և մտքերի հետ: Դա ձեր՝ որպես քրիստոնյայի պատասխանատվությունն է:

Ինչպես տեսնում եք, սրբացումը մի վերապրում չէ, որն ունենում ենք մեկ անգամ ամբողջ կյանքի համար: Սրբացումը շարունակական կենսակերպ է՝ մնացյալ ամբողջ կյանքի ընթացքում մարդկային բնությունը վերահսկողության տակ պահելը: Այն մտքի նորոգման և աստվածային սիրով վարվելու կենսակերպ է:

Բազում քրիստոնյաներ թույլ են տալիս, որ իրենց մարդկայինը ղեկավարի իրենց, իսկ հետո զարմանում են, թե ինչու չեն ստանում Աստծո լավագույնն իրենց կյանքերում: Սակայն անհնար է վարվել աստվածային սիրով, եթե պատրաստվում եք թույլ տալու, որ ձեր մարդկային բնությունը կառավարի ձեզ:

Ուստի եթե մտադիր ենք հնազանդվել Աստվածաշնչին, ապա պետք է թույլ տանք, որ մեր ներսի մարդը ղեկավարի մեզ, որպեսզի կարողանանք «իրար հետ լինել քաղցր ու գթած՝ իրար ներելով»:

Ներսի մարդն արդեն իսկ ունի այդ հատկանիշները Աստծո սիրո շնորհիվ: Սակայն մենք պետք է վարժվենք իրար ներելու մեջ, ինչպես Աստված էլ հանուն Քրիստոսի ներեց մեզ:

Որպես քրիստոնյաներ՝ մեր դրսի մարդու վրա պետք է «հագնենք» Քրիստոսին: Իսկ դա ինքնըստինքյան տեղի չի ունենում:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 13.14

Բայց Տեր Հիսուս Քրիստոսի՛ն հագեք և մարմնի համար խնամք մի՛ տարեք դեպի ցանկություն:

Միայն Քրիստոսին «հագնելով» և մարդկային բնության համար խնամք չտանելով է, որ կկարողանանք ներել միմյանց, ինչպես Աստված ներեց մեզ՝ հանուն Քրիստոսի:

Աստվածային սերը ներում է և մոռանում

Ինչպե՞ս կարող ենք Աստծո նման ներել: Աստվածաշունչն ասում է, որ Աստված սեր է: Եվ այն սերը, որն Աստված *է,* Սուրբ Հոգով սփռվել է մեր սրտերի կամ հոգիների՝ մեր ներսի մարդու մեջ:

Ինչպիսի՞ն է այդ սերը: Արդյոք դա բնական, մարդկայի՞ն սեր է: Ո՛չ, այն աստվածային է: Իսկ աստվածային սիրո հատկանիշներից է ներումը:

Եկե՛ք ուսումնասիրենք Խոսքը և տեսնենք, թե ինչպես է Աստված ներում: Աստվածային սիրուն հատկանշական է հետևյալը. երբ Աստված ներում է, Նա մոռանում է:

Երբ մենք ապաշխարում ենք ու Աստծուց ներում խնդրում, Նա ջնջում է մեր հանցանքները և այլևս չի հիշում մեր մեղքերը:

> **ԵՍԱՅԻ 43.25**
> **25 Ես Ես եմ, որ ՋՆՋՈՒՄ ԵՄ ՔՈ ՀԱՆՑԱՆՔՆԵՐՆ Իմ պատճառով և քո մեղքերը ՉԵՄ ՀԻՇՈՒՄ:**

Նոր Ուխտում Աստված կրկին ասում է մեզ, թե ինչպես է Ինքը ներում:

> **ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 8.12**
> **Որովհետև նրանց անօրինությունները ներող կլինեմ և նրանց մեղքերը և նրանց անօրինություններն այլևս չեմ հիշի:**

Ինչպե՞ս է Աստված ներում: Ըստ սուրբգրային այս խոսքերի՝ երբ մենք Աստծուց ներում ենք խնդրում, Նա *այլևս* չի հիշում մեր մեղքերը, *այլևս երբե՛ք*: Վերոնշյալ խոսքում գրված չէ. «Ես քո դեմ ոխ եմ պահելու այն ամենի համար, ինչ դու երբևէ արել ես, և ամեն անգամ քո մեղքերը մտաբերելիս դրանք քեզ հիշեցնելու եմ»:

Պատկերացնո՞ւմ եք: Իսկ ի՞նչ կլիներ, եթե ամեն անգամ, երբ աղոթեինք, Աստված հիշեցներ մեզ այն ամենն, ինչ անցյալում արել ենք: Հավատք չէինք ունենա, այնպես չէ՞: Անցյալի պատճառով անընդհատ մեղքի զգացում կունենայինք: Չէինք կարողանա համարձա-

կությամբ Նրա առջև գալ և ակնկալել, որ ինչ-որ բան կստանանք Նրանից, քանի որ անընդհատ կդատապարտեինք մեզ:

Արդյոք ուրախ չե՞ք, որ Աստված ներում է և մոռանում: Փառք Աստծուն, տվյալ խոսքում ասվում է, որ երբ մենք Աստծուց ներում ենք խնդրում, Նա *այլևս* չի հիշում մեր մեղքերը: Աստվածաշնչում գրված է, որ Նա հավատարիմ է՝ ներելու մեր մեղքերը (Ա Հովհ. 1.9):

Որոշ ընտանիքներում ամեն անգամ, երբ ինչ-որ բան է պատահում, ամուսինները հիշեցնում են միմյանց իրենց անցյալի մեղքերը: Եթե շարունակ այդպես վարվեն, չեն կարողանա լավ հարաբերություններ կառուցել: Բացի այդ՝ անցյալի սխալներն ու ձախողումները անընդհատ միմյանց հիշեցնելը կքանդի նաև նրանց անհատական աղոթքի կյանքը և ապարդյուն կդարձնի նրանց հավատքը:

Ա ՊԵՏՐՈՍ 3.7

7 Նմանապես, մարդի՛կ, իմաստությամբ բնակվեք նրանց հետ, ինչպես տկար անոթի՝ կանանց պատիվ տալով, իբրև կյանքի շնորհքի ժառանգակիցներ, ՈՐ ՁԵՐ ԱՂՈԹՔԸ ՉԽԱՓԱՆՎԻ:

Այս խոսքում նշված է, թե ինչն է խափանում աղոթքները: Աստված ցանկանում է, որ մեր աղոթքներն անխափան լինեն: Եթե ամուսինները չներում և անբարյացակամություն ունենան միմյանց նկատմամբ, դա կխափանի նրանց աղոթքները և կարող է ազդել նրանց առողջության վրա: Նման դեպքում հավատքը չի գործի:

Ամուսինները պետք է ներեն միմյանց այնպես, ինչպես Աստված է ներում: Նրանք պետք է կարողանան ասել միմյանց. «Սիրելի՛ս, ների՛ր ինձ, ես սխալ էի, ճիշտ չվարվեցի քո հանդեպ»:

Չներումն ու անբարյացակամությունը բացասաբար են ազդելու ձեր աղոթքի կյանքի վրա: Սերը, ներումը և հավատքը միասին են գործում. չեք կարող դրանք առանձնացնել:

Ուզում եք, որ ձեր աղոթքներն *ան*խափա՞ն լինեն: Այդ դեպքում վարվե՛ք սիրով և ներե՛ք, այլապես, ըստ այս խոսքի, ինքներդ կարող եք խափանել ձեր աղոթքները: Սովորե՛ք Աստծո նման ներել ու մոռանալ:

Երեսնական թվականներին մի ծառայողի համար հավաքույթ էի անցկացնում, որից հետո նրա եղբոր եկեղեցում ևս քարոզեցի: Երկուսն էլ Ամբողջական Ավետարանի հովիվներ էին: Ավագ եղբայրը շատ ավելի հաճելի անձնավորություն էր, քան կրտսերը. նա առհա-

սարակ ամեն առումով ավելի լավ քարոզիչ էր: Իրականում կրտսեր եղբորից անհամեմատ ավելի լավ էր քարոզում:

Թեև կրտսեր եղբայրը նման չէր իր ավագ եղբորը ու վերջինիս նման լավ քարոզիչ չէր, բայց նրա հովված եկեղեցիները միշտ լավն էին, և նա նոր ավտոմեքենա էր վարում նույնիսկ Մեծ ճգնաժամի օրերին: Անգամ նրա եկեղեցին շատ ավելի մեծ էր, քան եղբոր եկեղեցին: Ավագ եղբայրը ծառայության մեջ այդքան հաջողակ չէր, թեև ավելի հաճելի անձնավորություն էր և ավելի լավ քարոզիչ էր:

Մի մարդ ասաց ինձ. «Ես հասկացել եմ, թե ինչու ավագ եղբայրը հովվական ծառայության մեջ այդքան հաջողակ չէ: Մինչ փրկվելը նա ավելի վատ մարդ էր, քան նրա եղբայրը: Չար էր, ուստի հիմա վճարում է իր մեղքերի համար: Աստված պարզապես պատժում է նրան»: Ինչին ես պատասխանեցի. «Ինչպե՞ս Աստված կարող է պատժել, երբ Նա նույնիսկ չի հիշում, որ այդ մարդը սխալ բան է արել»:

Ինչպե՞ս Աստված կպատժի մի բանի համար, որի մասին նույնիսկ չի հիշում: Երբ վերստին ծնվում եք, Աստված միշտ սրբում ու մոռանում է ձեր անցյալը. դուք դառնում եք *նոր* արարած:

Այնուամենայնիվ, ես պարզեցի, թե ինչու էր եղբայրներից մեկը ծառայության մեջ հաջողակ, իսկ մյուսը՝ ոչ: Ավագ եղբայրը, որ հաճելի անձնավորություն էր, ուներ նաև հաջողակ լինելու համար անհրաժեշտ բոլոր ունակությունները: Նա ուներ նաև հռետորական զարմանալի հմտություն և շատ ավելի լավ էր քարոզում, քան կրտսեր եղբայրը, բայց նա չէր սովորում:

Կինս և ես հյուրընկալվել էինք ավագ եղբոր հովվական կացարանում: Նա միշտ դրսում էր, զրուցում էր մարդկանց հետ ու կատակներ անում: Կատակները վատը չէին, սակայն նա դրանով էր լցնում իր ամբողջ ժամանակը: Իսկ հետո, երբ բարձրանում էր ամբիոնի մոտ, բացի կատակներից՝ ասելու այլ բան չէր ունենում. մերթընդմերթ էր անցնում բուն թեմային ու քարոզում:

Իսկ մյուս եղբայրն անընդհատ սովորում էր: Գիտեմ դա, քանի որ նրա եկեղեցում հավաքույթներ եմ անցկացրել: Ամեն օր մի քանի ժամ անցկացնում էր իր աշխատասենյակում, սերտում էր Աստվածաշունչն ու աշխատում իր գրքերի վրա: Նրան հաճախ չէիր տեսնի, որովհետև զբաղված էր սովորելով:

Երբ այցելում էի նրան, նա միշտ իր աշխատասենյակում էր՝ Աստվածաշնչի և իր գրքերի հետ: Դա էր պատճառը, որ նա բարձրացավ և հասավ ծառայության գագաթնակետին:

Խնդիրն այն չէր, որ նրանցից մեկը պատժվում էր իր անցյալի համար. երբ Աստված ներում է, Նա *մոռանում* է: Եվ Նա ցանկանում է, որ ես և դուք նույնպես այդպես վարվենք: Եթե վարվում եք աստվածային սիրով, ապա դուք նույնպես կներեք այնպես, ինչպես Աստված է ներում, քանի որ *սերն ու ներումն անբաժան են:*

Աստված նայում է սրտին

Մի եկեղեցում հավաքույթ էի անցկացնում, ու թվում էր, թե ծառայությունները դժվար էին անցնում: Արդեն մեկուկես շաբաթ էր, ինչ սկսել էինք, բայց կարծես ոչինչ տեղի չէր ունենում:

Այդուհանդերձ, մի երեկո Սուրբ Հոգին զարմանալի կերպով շարժվեց: Հարանվանությունում մի մարդ կար, որի միջոցով Սուրբ Հոգին դրսևորեց Իր պարգևները դինամիկ ու գերբնական ձևով: Արդյունքում զարմանահրաշ բաներ տեղի ունեցան:

Բեմում կանգնած՝ ինքս ինձ ասացի. «*Սա այս հավաքույթների շրջադարձային կետն է*»: Եվ դա այդպես էր: Այդ հավաքույթը փոխեց մյուս բոլոր ծառայությունները: Ուղղակի սքանչելի էր:

Երբ տուն գնացի, չէի կարողանում քնել: Հիմա կասեմ, թե ինչու: Այդ հավաքույթից մեկ-երկու օր առաջ ավտոմեքենայով անցնում էի այդ մեծ քաղաքի փողոցներից մեկով, երբ տեսա այն մարդուն, որին Աստված այդքան զարմանալիորեն օգտագործեց հավաքույթի ժամանակ: Տեսա, թե ինչպես էր նա փողոցով քայլում ու մտնում մի մութ գինետուն:

Այդ գիշեր, երբ չէի կարողանում քնել, աչքերիս առջև անընդհատ այդ տեսարանն էր: Չէի կարողանում մտքիցս հանել:

Գիշերը՝ մոտ 12:30-ին, ուղիղ նստեցի անկողնուս մեջ ու ասացի. «Տե՛ր, հանի՛ր ինձ այս վիճակից: Ինչպե՞ս ստացվեց, որ օգտագործեցիր այդ մարդուն: Ես տեսա, թե ինչպես էր նա մտնում այն մութ գինետունը. ինչպե՞ս կարող էիր օգտագործել *նրան*»:

Այնուհետև շարունակեցի. «Դու գիտես, որ այդ եկեղեցում կան Աստծո սուրբեր, որոնք հիսուն-վաթսուն տարի է, ինչ անարատ կյանքով են ապրում: Ինչո՞ւ փոխարենը նրանց չօգտագործեցիր»:

Աստված ինձ պատասխանեց այնպես, կարծես սենյակում կանգնած լիներ. «Դու տեսածովդ ես դատում: Այո՛, դու տեսար, թե ինչպես նա մտավ այդ վայրը, բայց շարունակեցիր ճանապարհդ ու չտեսար, թե ինչպես հանկարծ ուշքի եկավ և ասաց՝ «Ի՞նչ եմ ես այստեղ անում. Աստվա՛ծ իմ, ների՛ր ինձ», և շրջվեց ու դուրս եկավ»:

Այնուհետև Տերն ասաց. «Բացի այդ՝ նա խնդրել էր, որ ներեմ իրեն, ուստի Ես նույնիսկ չէի էլ հիշում, որ սխալ բան է արել: Դրա շնորհիվ Ես կարողացա օգտագործել նրան ճիշտ այնպես, ինչպես այն մարդուն, որ վաթսուն տարի անարատ կյանքով է ապրել»:

Ես այդ իրավիճակից դաս քաղեցի. երբ Աստված *ներում է*, Նա *մոռանում է*: Աստված ասել է. «Ես Ես եմ, որ ջնջում եմ քո հանցանքներն Իմ պատճառով ու ՔՈ ՄԵՂՔԵՐԸ ՉԵՄ ՀԻՇՈՒՄ» (Ես. 43.25):

Ուստի եթե Աստված կարող է մոռանալ ձեր սխալներն ու ձեր անցյալը, դուք ինքներդ էլ պետք է մոռանաք դրանք: Նույն կերպ պետք է ներեք ու մոռանաք նաև ուրիշների անցյալի սխալները:

Ներե՛ք մարդկանց այնպես, ինչպես Աստված է ներում, որպեսզի մնաք սիրո ընթացքի մեջ: Թո՛ղ Աստծո սերը ղեկավարի ձեզ: Այդ դեպքում դուք կկարողանաք հաղթանակ ակնկալել ձեր կյանքի ցանկացած բնագավառում:

Ինչպես տեսնում եք, եթե իրականում սիրում ու ներում եք մարդկանց, չեք շարունակի հիշեցնել նրանց իրենց անցյալի սխալներն ու ձախողումները, թե ինչպես են ձեզ ցավեցրել, հիասթափեցրել կամ վիրավորել:

Սատանան կարող է ձեզ մտքեր բերել ու հիշեցնել, թե ինչ է տեղի ունեցել ձեր և տվյալ անձնավորության միջև, սակայն դուք չպետք է ընդունեք սատանայի մտքերը:

Եթե դուք եք սխալ վարվել, բայց խոստովանել եք ձեր մեղքն Աստծուն ու ապաշխարել, ապա Աստված ներել է ձեզ:

Եթե սատանան փորձում է հիշեցնել ձեզ, թե ինչ է ուրիշն արել ձեր նկատմամբ, ապա ծիծաղե՛ք նրա վրա և ասե՛ք. «Պարո՛ն սատանա, ամեն բան կարգին է: Դա պարզապես տեղի ունեցածի մտապատկերն է, ես այդ մարդուն ներել եմ: Տեղի ունեցածն ինձ համար այլևս գոյություն չունի»:

Հետո կարող եք շարունակել ձեր ճանապարհը ներման մեջ՝ իմանալով, որ Աստված ներել է ձեզ:

Ներումը Նոր Ուխտում

Ինչպե՞ս պետք է ներենք Նոր Ուխտում, ինչպես մարդի՞կ են ներում մեզ: Ո՛չ, մենք ներում ենք, ինչպես գրված է Եփեսացիների 4.32-ում. «*...իրար հետ քաղցր եղեք, գթած՝ իրար ներելով, ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ էլ Քրիստոսով ՁԵԶ ՆԵՐԵՑ*»:

Մենք ներում ենք այնպես, ինչպես Աստված է Քրիստոսով մեզ նե-

րել: Ներում ենք այնպես, ինչպես Աստված է ներում: Այլ կերպ ասած՝ ներում ենք՝ անկախ այն բանից մարդիկ մեզ ներում են, թե ոչ:

Իսկ ինչպե՞ս է Աստված մեզ ներում: Աստված սեր է: Նա ասել է. «Ես այլևս չեմ հիշի ձեր անօրինությունները» (Եբր. 10.17): Ուստի *սերն* է ասում. «Ես այլևս չեմ հիշի ձեր անօրինությունները»:

Եթե Աստված մեզ ներում է ու չի հիշում մեր անօրինությունները, քանի որ սիրում է մեզ, ապա մենք ևս պետք է ներենք իրար և չհիշենք միմյանց մեղքերը: Ներելը Նոր Ուխտի սիրո օրենքի մասն է կազմում:

Ոմանք ասում են. «*Ես* պարզապես չեմ կարող ներել»: Բայց դա Խոսքին չի համապատասխանում, որովհետև եթե դուք վերստին ծնված եք, ապա աստվածային սերը սփռված է ձեր սրտում:

Ուրիշներն ասում են. «Ես չեմ կարող ներել այնպես, ինչպես Աստված է ներում, քանի որ Աստված չեմ»: Իհարկե, Աստված չեք: Բայց Աստված ներում է մեզ, քանի որ Նա սեր է (Ա Հովհ. 4.8): Իսկ ձեր մեջ բնակվում է այն նույն սերը, որ Աստված *է:* Հետևաբար դուք *կարող եք* ներել Նրա սիրով, ինչպես Նա է ներում:

Աստծո սերը Սուրբ Հոգով սփռվել է մեր սրտերում. դա նշանակում է, որ Աստված ինձ և ձեզ մատակարարել է այն սերը, որով մենք պետք է ներենք: Սակայն շատ հավատացյալներ սխալվում են՝ առաջնորդվելով գլխով և ոչ թե սրտով:

Արդյո՞ք ուրախ չեք, որ Աստված ասել է, որ չի հիշի մեր անօրինությունները (Ես. 43.25, Սաղմ. 103.3): Մեկ այլ խոսքում Նա ասում է. «Նա մեր բոլոր մեղքերը կգցի ծովի խորքերը» (Միք. 7.19):

Արդյո՞ք սա հրաշալի չէ: Եթե մենք ապաշխարել ու խնդրել ենք, որ Աստված ների մեզ, ապա Նա չի հիշում, թե ես կամ դու ինչ սխալ բան ենք երբևէ արել:

Գուցե հարցնեք. «Ինչպե՞ս է Նա կարողանում անել դա»: Կարողանում է, քանի որ, ըստ Աստվածաշնչի, սերը *ծածկում* կամ *ջնջում է* մեղքերի շատությունը (Ա Պետր. 4.8):

Ուստի աստվածային սերը ոչ միայն ներում է, այլև մոռանում: Ահա այդպես էլ Աստված ցանկանում է, որ մենք ներենք: Եվ մենք կարող ենք ներել ու մոռանալ, քանի որ Աստված մեր սրտերն արդեն լցրել է Իր սիրով, որպեսզի կարողանանք ներել: Հետևաբար չկա ներելու մեր կարողության մեջ ձախողվելու արդարացում:

Ներումը ոխ չի պահում

Եթե ասում եք, թե ինչ-որ մեկին ներել եք, բայց ձեր սրտում ոխ եք պահում, իրականում բոլորովին էլ չեք ներել:

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3.13

13 Իրար համբերելով և ԻՐԱՐ ՆԵՐԵԼՈՎ, ԵԹԵ ՄԵԿԸ ՄՅՈՒՍԻ ԴԵՄ ՏՐՏՈՒՆՋ ՈՒՆԵՆԱ, ԻՆՉՊԵՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԷԼ ՁԵԶ ՆԵՐԵՑ, այնպես էլ դուք:

1939 թվականին ես և կինս գնացել էինք հովվություն անելու Տեխասի հյուսիսում գտնվող մի եկեղեցում: Առաջին շաբաթն էր, որ այնտեղ էինք, և մեզ այցելեց եկեղեցու քույրերից մեկը:

Կարճ զրույցից հետո նա ասաց. «Եղբա՛յր Հեգին, ուզում եմ պատմել Ձեզ այսինչ քրոջ մասին, և թե ինչպես է նա ինձ հետ վարվել»: Եվ երկար պատմեց մեզ, թե ինչ վատ վերաբերմունքի էր այդ քույրն իրեն արժանացրել:

Մտածեցի. «Երևի անցած շաբաթ են գժտվել այդ քրոջ հետ»: «Ե՞րբ է դա տեղի ունեցել»,- հարցրի նրան:

Նա սկսեց հաշվել. «Մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ...»: Կարծում էի, թե կասեր՝ ութ օր առաջ, բայց ասաց. «Հաջորդ երեքշաբթի կլինի ութ տարի»:

Դեմքիս զարմացած արտահայտությունը տեսնելով՝ անմիջապես ավելացրեց. «Սխալ մի՛ հասկացեք ինձ. ես նրան ներել եմ, բայց երբեք չեմ մոռանա, թե ինչպես վարվեց ինձ հետ այդ ծեր սատանան»:

Առանց մտածելու պատասխանեցի. «Քույրի՛կ, դուք բացահայտ ստախոս եք: Դուք նրան չեք ներել. եթե ներած լինեիք, ապա հիմա դրա մասին չէիք պատմի ինձ»:

Երբ մենք քայլում ենք Խոսքի լույսի մեջ, կարող ենք վայելել դրա բոլոր բարիքները: Սակայն որպեսզի քայլենք Խոսքի լույսի մեջ, պետք է քայլենք սիրո ու ներման մեջ:

Աստվածաշունչն ասում է. «*Բայց ամենից առաջ սերը սերտ ունեցեք իրար հետ, որ սերը ծածկում է մեղքերի շատությունը*» (Ա Պետր. 4.8): Այս քույրն ասում էր, թե ներել է այն կնոջը, բայց չէր քայլում սիրո և ներման մասին Խոսքի լույսի մեջ: Եթե քայլեր, ապա տեղի ունեցածը սիրով կծածկեր և կմոռանար դրա մասին:

Չներումը՝ հավատքի և աղոթքի խոչընդոտ

Կա ևս մի բան, որը մենք պետք է իմանանք սիրո և ներման մասին: Չներումը՝ ներման պակասը, *աղոթքի* խոչընդոտներից մեկն է, որի մասին խոսել է Հիսուսը:

ՄԱՐԿՈՍ 11.23-25

23 Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ով որ այս սարին ասի՝ վե՛ր կաց և ծո՛վն ընկիր, և իր սրտում չերկմտի, բայց հավատա, թե ինչ որ ասում է, կլինի նրան, կլինի, ինչ որ ասի:

24 Սրա համար ասում եմ ձեզ, թե՝ ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք, և կլինի ձեզ:

25 Եվ որ ժամանակ որ կանգնեք, ԱՂՈԹՔ ԱՆԵՔ, ՆԵՐԵ՛Ք, եթե մեկի դեմ բան ունենաք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ձեր հանցանքը թողնի ձեզ:

Հաճախ մարդիկ այս խոսքերը կտրում են համատեքստից և դրանց այնպիսի իմաստ տալիս, որն այդ խոսքերն իրականում չեն կրում, իսկ հետո փորձում են այդ իմաստով կիրառել դրանք: Բայց, ինչպես տեսնում եք, Մարկոս 11.23-րդ և 24-րդ խոսքերի համար կան նախադրյալներ: Նկատե՛լ եք, որ Աստծո խոստումների մեծ մասը նախադրյալներ ունի:

Աստծո օրհնությունները պարզապես չեն թափվում մեզ վրա, ինչպես հասած բալն է ծառից թափվում: Մենք ունենք մեր դերակատարումը դրանում՝ պատասխանատվության մեր բաժինը:

Երբ Մարկոս 11.23,24-րդ խոսքերում Հիսուսն ասում է, որ մենք կարող ենք ունենալ այն, ինչ կխնդրենք, բոլորս ուրախանում ու ցնծում ենք այդ ճշմարտությունից: Եվ այդպես էլ պետք է լինի: Բայց գիտե՞ք, որ դա ամենը չէ, որ Հիսուսն ասել է պատասխանվող աղոթքների մասին:

Մարկոս 11.23,24-րդ խոսքերում հավատքի թեմային վերաբերող ամբողջ պատմությունը չէ, որ ներառված է: Օրինակ՝ Գաղատացիների 5.6-րդ խոսքում Աստվածաշունչը հավատքի վերաբերյալ մեկ այլ բան է ասում: Այնտեղ ասվում է, որ հավատքը միայն սիրով է գործում:

ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 5.6

6 Քանի որ Քրիստոս Հիսուսում ո՛չ թլփատությունն է մի բան կարող և ո՛չ անթլփատությունը, այլ հավատքը, որ սիրով գործում է:

Հետևաբար չեք կարող գործի դնել ձեր հավատքը, եթե չեք քայլում սիրո ու ներման մեջ: Կարևոր չէ, թե Աստվածաշնչից քանի դավանություն եք անում. առանց աստվածային սիրո Ձեր հավատքը չի գործի:

Կարող եք դավանություններ անել, որքան ցանկանաք, բայց դրանք չեն գործի ձեզ համար, եթե չներեք: Կարող եք ամեն առավոտ արթնանալ և անցնել ձեր ցուցակի կետերով, կեսօրին ժամանակ հատկացնել հավատքի դավանություններին, նույնիսկ գիշերվա կեսին արթնանալ ու կրկնել նույն դավանությունները, բայց ձեր հավատքը կրկին չի գործի ձեզ համար, եթե սիրո մեջ չքայլեք:

Նման կերպ նույնիսկ հարյուր տարի կարող եք կրկնել ձեր հավատքի դավանությունները, բայց չներման մթնոլորտում ձեր հավատքն անարդյունավետ կլինի:

Ինչպես տեսնում եք, հավատալը, թե ունեք այն, ինչ խնդրել եք, և շուրթերով դավանելը արդյունավետ հավատքի և աղոթքի պատասխաններ ստանալու միայն մի մասն են: Իրականում Մարկոս 11.23-րդ և 24-րդ խոսքերը չեն գործի առանց Մարկոս 11.25-ի. *«Եվ որ ժամանակ որ կանգնեք, ԱՂՈԹՔ ԱՆԵՔ, ներե՛ք...»:* Ինչո՞ւ այդ խոսքերը չեն գործի առանց Մարկոս 11.25-ի. քանի որ հավատքը չի կարող գործել առանց սիրո, իսկ սերը ներում է:

Նկատի՛ առեք, որ 25-րդ խոսքը սկսվում է «և» բառով: «Եվ»-ը շաղկապ է. այն միացնում է Հիսուսի նախորդ խոսքը այս խոսքի հետ:

Տեսե՛ք, թե ինչ է ասում Հիսուսը Մարկոսի 11.24-ում. «*Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ինչ, որ ԱՂՈԹՔ ԱՆԵԼՈՎ խնդրեք...»:* Հիսուսը խոսում է աղոթքի մասին. Նա խոսում է այն մասին, թե ինչպես մեր հավատքը արդյունավետ դարձնենք:

25-րդ խոսքում Հիսուսն ասում է. «Եվ որ ժամանակ որ կանգնեք, աղոթք անեք, ներե՛ք, եթե մեկի դեմ բան ունենաք»: Երբ աղոթում եք, ներե՛ք:

Ինչո՞ւ է Հիսուսը նման բան ասում: Քանի որ գիտի, որ եթե ինքներս մեր շուրջը չներման մթնոլորտ ստեղծենք, մեր աղոթքներն արդյունավետ չեն լինի: Հավատքը միայն սիրով է գործում (Գաղ. 5.6):

Եթե Հիսուսը միայն հետևյալն ասեր՝ «Երբ կանգնեք աղոթքի,

կստանաք այն, ինչ խնդրում եք», բոլորս էլ կանեինք դա ինչպես հարկն է: Բայց Նա այդտեղ կանգ չառավ, այլ ասաց՝ երբ կանգնում ենք աղոթք անելու, կա մի բան, որ *մենք* պետք է անենք: Եվ ինչ պետք է անենք. ներե՛նք: Եթե ինչ-որ մեկի դեմ ինչ-որ բան ունենք, պետք է ներենք:

Աղոթքն ու հավատքը չեն գործի, եթե ձեր շուրջը չներման մթնոլորտ եք ստեղծել: Եվ հենց չներումն է պատճառը, որ շատ մարդիկ իրենց հավատքի և աղոթքի կյանքում հայտնվել են փակուղում:

Հասկանո՞ւմ եք. ձեր աղոթքի կյանքում հավատքը չի գործի, եթե դուք ներող անձնավորություն չլինեք: Այնպես որ, երբ աղոթքի եք կանգնում, ներե՛ք: Երբևէ մտածե՞լ եք այն մասին, որ ներելու համար հավատք է անհրաժեշտ, իսկ եթե չներեք, կխափանվեն ձեր աղոթքները:

Շատ ենք քարոզում ներման մասին, շատ ենք լսում ուրիշներին ներելու մասին, բայց չենք կիրառում դա այնպես, ինչպես Աստվածաշունչն է ասում: Երբ իսկապես սկսեք ուսումնասիրել, թե Աստվածաշունչն ինչ է ասում ներման մասին, երբ ծանոթանաք այս թեմայի մանրամասներին, ապա կցնցվեք՝ հասկանալով Աստծո տեսանկյունը դրա վերաբերյալ:

Օրինակ՝ եկե՛ք ուսումնասիրենք մի առակ, որը Հիսուսը պատմեց աշակերտներին: Պետրոսը հարցրել էր Հիսուսին, թե քանի անգամ պետք է ների իր եղբորը: Հիսուսը պատասխանել էր՝ «Յոթանասուն անգամ յոթ» (Մատթ. 18.22), և Իր պատասխանը պարզաբանելու համար աշակերտներին պատմել հետևյալ առակը.

ՄԱՏԹԵՈՍ 18.23-35

23 Սրա համար երկնքի արքայությունը նմանվեց մի թագավոր մարդու, որ ուզեց իր ծառաների հետ հաշիվ տեսնել:

24 Եվ երբ սկսեց *հաշիվը* տեսնել, նրա մոտ մեկը բերվեց տասը հազար քանքար պարտական:

25 Բայց որովհետև չուներ վճարելու, նրա տերը հրամայեց, որ նա և նրա կինը և նրա որդիները և ամեն ինչ, որ ուներ, ծախվի, և *պարտքը* վճարվի:

26 Եվ ծառան էլ, երեսի վրա ընկնելով, երկրպագում էր նրան և ասում՝ տե՛ր, համբերի՛ր ինձ համար, և բոլորը կհատուցեմ քեզ:

27 Տերն էլ գթաց այն ծառայի վրա, նրան արձակեց և

ՊԱՐՏՔՆ ԷԼ ՇՆՈՐՀԵՑ ՆՐԱՆ:

28 Եվ երբ այն ծառան դուրս եկավ, իր ծառայակիցներից մեկին գտավ, որ իրեն հարյուր դահեկան էր պարտական, և նրան բռնած խեղդում էր և ասում՝ վճարի՛ր ինձ, ինչ որ պարտական ես:

29 Հիմա նրա այն ծառայակիցը նրա ոտքերն ընկավ, նրան աղաչում էր և ասում՝ համբերի՛ր ինձ համար, և բոլորը կհատուցեմ քեզ:

30 Բայց նա չէր կամենում, այլ գնաց, նրան գցեց բանտը, մինչև որ պարտքը վճարի:

31 Երբ նրա ծառայակիցները տեսան եղած *բաները,* շատ տրտմեցին և եկան, իրենց տիրոջը հայտնեցին բոլոր եղածը:

32 Այն ժամանակ նրա տերը մոտը կանչեց նրան և ասաց՝ ՉԱ՛Ր ԾԱՌԱ, ԵՍ ԱՅՆ ԲՈԼՈՐ ՊԱՐՏՔԸ ՇՆՈՐՀԵՑԻ ՔԵԶ, որովհետև դու աղաչեցիր ինձ:

33 ՊԵՏՔ ՉԷ՞Ր, ՈՐ ԴՈՒ ԷԼ ՔՈ ԾԱՌԱՅԱԿՑԻՆ ՈՂՈՐՄԵԻՐ, ինչպես որ ես էլ քեզ ողորմեցի:

34 Եվ նրա տերը բարկանալով նրան մատնեց դահիճներին, մինչև որ ամբողջ պարտքը վճարի նրան:

35 Այսպես էլ Իմ երկնավոր Հայրը կանի ձեզ, ԵԹԵ ԴՈՒՔ ԱՄԵՆ ՄԵԿԴ ԻՐ ԵՂԲՈՐԸ ՁԵՐ ԲՈԼՈՐ ՍՐՏԻՑ ՉԹՈՂՆԵՔ ՆՐԱՆՑ ՀԱՆՑԱՆՔԸ:

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ տերն իր ծառային անվանեց «չար»: Ինչո՞ւ այդպես անվանեց նրան. պարզապես որովհետև նա չէր ցանկանում ներել: Այստեղ իմաստ չունի քննարկելու՝ ինչն է ավելի կամ պակաս չար: Եթե ինչ-որ բան չար է, մենք չպետք է դրա հետ որևէ առնչություն ունենանք: Եթե որևէ բան չար է, այն մեզ չի պատկանում, և մենք դրա հետ անելիք չունենք:

Ուշադրությո՛ւն դարձրեք ևս մի բանի, որ նշված է մեջբերված սուրբգրային հատվածում: Սրտացավությունը և ներումը միասին են գործում: 33-րդ խոսքում ասվում է. *«Պետք չէ՞ր, որ դու էլ քո ծառայակցին ողորմեիր, ինչպես որ ես էլ քեզ ողորմեցի»:*

Գիտակցե՛ք դուք դա, թե ոչ, սրտացավության պակասը և ուրիշներին ներելու անպատրաստակամությունը խանգարում են մեզ՝ Աստծուց ինչ-որ բան ստանալու և հոգևորապես աճելու: Չներումը թույլ չի տա, որ մենք լինենք *այն*, ինչ Աստված ցանկանում է, որ լի-

նենք, և *նա*, ով Աստված ցանկանում է, որ լինենք:

Աստված ուղղակիորեն ասում է, թե ինչ է մտածում չներման մասին. *«Այսպես էլ Իմ երկնավոր Հայրը կանի ձեզ, եթե դուք ամեն մեկդ իր եղբորը ձեր բոլոր սրտից չթողնեք նրանց հանցանքը»* (խոսք 35):

Մենք չենք ցանկանում դասվել չար ծառաների շարքին, այնպես չէ՞: Հիսուսն այս ծառային «չար» անվանեց, պարզապես որովհետև վերջինս հրաժարվել էր ներելուց: Ուստի եկե՛ք սրտանց ներենք բոլոր նրանց, ովքեր մեր հանդեպ սխալ են վարվել:

Ես ծառայության մեջ անցկացրած հիսունից ավելի տարիների իմ փորձառությունից և հազարավոր մարդկանց հետ ունեցած զրույցներից գիտեմ, որ չներումն է հիմնական պատճառն այն բանի, որ մարդկանց հավատքը չի գործում: Ինչպես նաև չներումն է հիմնական պատճառը, որ մարդիկ չեն ստանում իրենց բժշկությունը:

Կարդացե՛ք Ավետարանները, ինքնե՛րդ ուսումնասիրեք Խոսքը և դո՛ւրս գրեք հավատքի վերաբերյալ բոլոր խոսքերը, որոնք Հիսուսը հիշատակել է:

Կտեսնեք, որ չներումը, այն է՝ սիրով վարվելու մեջ թերանալը, խոչընդոտում է Հիսուսի նշած հավատքը և աղոթքը (Մարկ. 11.23-25): Սա չի նշանակում, որ հավատքի և աղոթքի այլ խոչընդոտներ չկան, սակայն նշանակում է, որ չներումը դրանց *հիմնական* խոչընդոտն է:

Մարդիկ հոգևոր բաների մասին ամենաանհեթեթ պատկերացումներն ունեն, հատկապես, երբ խոսքը վերաբերում է սիրուն և ներմանը:

Օրինակ՝ շատերը գիտեն, որ սխալ է ինչ-որ մեկի դեմ մեծ ոխ պահելը, սակայն նրանց թվում է, թե ընդունելի է *մի փոքր ոխը* կամ *փոքր* չներումը:

Այսպես են մտածում. *«Ոչ մեկին ոչ մի վնաս չի լինի, եթե փոքր ոխ պահեմ ինչ-որ մեկի դեմ»*:

Սակայն մտածե՛ք այն մասին, ինչ Հիսուսն ասել է Մարկոս 11.25-ում. «Եվ որ ժամանակ որ կանգնեք, աղոթք անեք, ներե՛ք, եթե մեկի դեմ *բան* ունենաք»:

«Բան» բառը այստեղ նշանակում է ցանկացած տեսակի ոխ, անբարյացակամություն կամ սխալ զգացողություն ցանկացած մեկի նկատմամբ: Սա ներառում է և՛ փոքր ոխը, և՛ միջին ոխը, և՛ մեծ ոխը՝ *ցանկացած բան*, որ կարող եք ունենալ մեկ այլ մարդու դեմ:

Ի վերջո Աստվածաշունչն ասում է, որ դրանք նման են այն փոքր

աղվեսներին, որոնք ավերում են այգիները (Երգ երգոց 2.15): Շատ հաճախ հավատացյալների կյանքում մեծ բաները չեն, որ ավերում են նրանց քրիստոնեական ընթացքը: Հավատքը քանդում են այն բազում փոքր մեղքերը, որոնց հարցերը նրանք չեն լուծում:

Երբեմն հավատքն ապարդյուն, իսկ աղոթքներն անպատասխան դարձնողն այն փոքր մեղքերն են, որոնց դուք մատների արանքով եք նայում: Այդ փոքր «բաներն» են՝ փոքր ոխերը, որոնց դուք ուշադրություն չեք դարձնում, բայց որոնք թույլ չեն տալիս, որ ձեր ձայները լսելի լինեն Բարձրում:

Արագ՝ ապաշխարելու մեջ և արագ՝ հավատալու մեջ

Մի անգամ այս տողերի վերաբերյալ մի կին հարցրեց. «Եղբա՛յր Հեգին, այս եկեղեցում չկա մի այնպիսի ընտանիք, որն այնքան հավատարիմ լինի, որքան իմ ընտանիքն է, բայց նույնիսկ մեկ մարդ իմ ընտանիքից երբևէ բժշկություն չի ստացել, մինչդեռ ամուսնուս ընտանիքում, որն այդքան էլ հավատարիմ չէ, միշտ բժշկվում են: Ո՞րն է դրա պատճառը»:

Ես ասացի. «Ես չեմ կարող ասել, թե ինչու է մեկը ստանում բժշկություն, իսկ մյուսը՝ ոչ, եթե Աստված չհայտնի ինձ պատճառը: Սակայն գիտեմ, որ եթե մարդիկ երկար ժամանակ լավ արդյունքներ են ունենում, դրա պատճառն այն է, որ Աստծո Խոսքով են վարվում»:

Այնուհետև ավելացրի. «Առանց ամուսնուդ ընտանիքը ճանաչելու կարող եմ ասել, որ եթե նրանք միշտ բժշկություն են ստանում, դա վկայում է երկու արտառոց հատկանիշների մասին:

Առաջինը՝ նրանք արագ են ապաշխարելու և ներելու մեջ: Հասկանո՞ւմ եք, ապաշխարությունն ու ներումը միասին են գործում: Երկրորդը՝ նրանք արագ են հավատալու մեջ»:

Այդ կնոջ աչքերը զարմանքից մեծացան, իսկ բերանը բաց մնաց: Նա ասաց. «Եղբա՛յր Հեգին, Դուք ուղիղ նշանակետին դիպաք»:

Ես պատասխանեցի. «Ո՛չ, նշանակետին ոչ թե ես, այլ Աստված դիպավ: Ես այդքան խելացի չեմ: Պատասխանը ստացա Մարկոս 11.23-25-րդ խոսքերից»:

Աստվածաշնչում պատասխան կա ամեն խնդրի և ամեն իրավիճակի համար: Ինչ էլ որ կյանքում պատահի, Աստվածաշունչն ունի դրա պատասխանը: Գուցե դա չլինի այն պատասխանը, որը մենք ցանկանում ենք լսել, բայց դա է պատասխանը:

Նա ասաց. «Կարծում եմ, ամուսնուս ընտանիքի անդամներն իմ ճանաչած ամենաարագ ներող ու ապաշխարող մարդիկ են»:

Հետո ավելացրեց. «Բացի այդ՝ երբ վիճաբանություն է լինում, նրանք դրա ամբողջ պատասխանատվությունն իրենց վրա են վերցնում, նույնիսկ եթե իրենք մեղավոր չեն:

Կներեն ձեզ, ինչ էլ որ արած լինեք, առհասարակ ոխ չեն պահում որևէ մեկի դեմ, նույնիսկ մեկ վայրկյան: Միշտ ասում են. «Ես եմ մեղավոր, խնդրում եմ, ների՛ր ինձ»: Եվ դա սրտանց են անում»:

Այնուհետև շարունակեց. «Ամուսնուս ընտանիքը գյուղում է ապրում, և նրանց համար դժվար է եկեղեցի հասնելը: Բայց երբ կարողանում են գալ, ամենաարագն են մոտենում խորանին, ապաշխարում ու հավատում Աստծուն և օրհնվում են ավելի, քան որևէ մեկը, ում երբևէ հանդիպել եմ»:

Աստված օրհնում է այն մարդկանց, ովքեր ապաշխարում են, ներում ու հավատում:

Սմիթ Վիգլսֆորթն ասել է. «Աստծուն հավատալու մեջ մի այնպիսի բան կա, որը Նրան ստիպում է անցնել միլիոնավոր մարդկանց կողքով և հասնել քեզ»:

«Իսկ եթե իմ ընտանիքին նայենք,- ասաց նա,- մենք ի վերջո ներում ենք, որովհետև գիտենք, որ պետք է ներենք, բայց տեղի չենք տալիս այնքան, որքան թույլ է տալիս մեր համարձակությունը»:

Խնդիրն այն է, որ մարդը կարող է նման կերպ տեղի չտալու ընթացքում մահանալ:

«Իսկ ինչ վերաբերում է հավատալուն,- ասաց նա,- մենք ամենադանդաղկոտն ենք Աստծուն հավատալու մեջ»:

Նա գտավ իր պատասխանը: Այն մարդիկ, որոնք դանդաղում են ապաշխարելու և ներելու մեջ, չեն կարողանում հավատալ, որ Աստված լավագույնն ունի իրենց համար, քանի որ հավատքը սրտից է:

Եթե *սրտում* չներում կա, դա թույլ չի տա հավատալ Աստծուն:

Ինչպես տեսնում եք, սերն ու ներումը միասին են գործում: Սերը ներում է: Սերն ընկերոջը չար չի անում: Ուստի սերը հաշվի չի առնում իր հանդեպ թույլ տրված սխալը (Ա Կորնթ. 13.5 *Amp.*):

Եթե սիրով եք վարվում, ապա կատարում եք Օրենքը՝ Աստծո բոլոր պահանջները: Առանց սիրո չեք կարողանա քայլել Աստծո ճանապարհներով, քանի որ Աստված սեր *է:*

Թեև Աստծո բոլոր օրհնություններն արդեն իսկ տրվել են ձեզ Հիսուս Քրիստոսով, եթե ձեր սրտում չներում լինի, Դուք հավատք չեք

ունենա՝ ստանալու այդ օրհնությունները: Սա բացարձակ ճշմարտություն է:

Նշանակություն չունի՝ որքան հոգևոր եք դուք, կամ Հոգու որքան շատ պարգևներ են գործում ձեր միջոցով, կան որոշ հատկանիշներ, որ պետք է ունենաք, եթե ցանկանում եք վայելել Աստծո լավագույնը ձեր կյանքում: Արա՛գ եղեք ապաշխարելու, ներելու և Աստծուն հավատալու մեջ:

Ներե՛ք նաև ինքներդ ձեզ

Հարկավոր է ներել ոչ միայն ուրիշներին, այլև ինքներդ ձեզ: Երբեմն ինչ-որ թերացման կամ ձախողման համար ինքներդ ձեզ ներելը դժվար է, ճի՞շտ է: Սակայն պետք է անեք դա, եթե ցանկանում եք, որ ձեր հավատքն ու աղոթքները գործեն:

Ինքներդ ձեզ չներելը կարող է խոչընդոտել ձեր բժշկությունը և աղոթքների պատասխանվելը, քանի որ հավատքը գործում է միայն սիրով:

Եթե ինքներդ ձեզ չներեք, դա կխոչընդոտի ձեր հավատքը նույնքան, որքան մեկ ուրիշի հանդեպ չներումը: *Ինքներդ ձեզ* չներելը, ինքներդ ձեր հանդեպ անբարյացակամություն և թշնամանք ունենալը նույնքան սխալ են, որքան ուրիշին չներելը:

> **Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.18-21**
>
> **18 Որդյակնե՛ր, չսիրենք խոսքով և ոչ էլ լեզվով, այլ գործով և ճշմարտությունով:**
>
> **19 Եվ սրանով ենք ճանաչում, թե ճշմարտությունից ենք, և Նրա առաջ ի հանդես բերենք մեր սրտերը:**
>
> **20 Որ եթե մեր սիրտը մեղադրի մեզ, այլ Աստված մեր սրտից ավելի մեծ է և ամեն բան գիտի:**
>
> **21 Սիրելինե՛ր, եթե մեր սրտերը չմեղադրեն մեզ, համարձակություն ունենք առ Աստված:**

Ինչպես տեսնում եք, եթե ձեր սրտում չներում ու անբարյացակամություն ունենաք, ձեր սիրտը կմեղադրի ձեզ, և դուք չեք կարողանա համարձակությամբ գալ Աստծո առջև և ստանալ ձեր խնդրվածքների պատասխանները. ձեր աղոթքները կխափանվեն:

Սակայն եթե սիրով վարվեք, ձեր սիրտը ձեզ չի մեղադրի: Եթե ներեք՝ ոչ միայն ուրիշներին, այլև *ինքներդ ձեզ,* ձեր սիրտը ձեզ չի

մեղադրի, և դուք Աստծո առջև աղոթքով գալու համարձակություն կունենաք:

Ինքներդ գիտեք, որ երբեմն, երբ գալիս եք Աստծո ներկայության մեջ՝ աղոթելու, սատանան ամեն տեսակի մեղադրանքներ է ներկայացնում ձեզ, որպեսզի հետ պահի աղոթքից: Նույն կերպ կարող է հիշեցնել ձեզ ձեր անցյալը, որպեսզի խանգարի Աստծուց ստանալու այն, ինչի կարիքն ունեք:

Երբ սատանան մեղադրում է ձեզ անցյալի ձախողումների մեջ, նա մտապատկեր է բերում՝ դրվագ ձեր անցյալից, բայց եթե դուք Աստծուց ներում եք խնդրել, ձեր անցյալի մեղքերն այլևս գոյություն չունեն:

Աստված ասել է, որ ջնջել է ձեր մեղքերը: Եթե Աստված ներել է ձեր մեղքերը, ապա դրանք այլևս գոյություն չունեն:

ԵՍԱՅԻ 43.25,26

25 Ես Ես եմ, որ ջնջում եմ քո հանցանքները Իմ պատճառով և քո մեղքերը չեմ հիշում:

26 Հիշեցրո՛ւ ինձ, միասին դատվենք. դու պատմի՛ր, որպեսզի արդարանաս:

Կցանկանամ՝ այս խոսքերում ուշադրություն դարձնեք մի բանի. Եսայի 43.25-ում Աստված ասում է, որ ջնջում է մեր մեղքերը: Նա նկարագրում է աստվածային ներումը: Եվ ոչ միայն *ջնջում է* մեր մեղքերը, այլև մոռանում է դրանք:

Այնուհետև՝ 26-րդ խոսքում, Աստված ասում է. *«Հիշեցրո՛ւ ինձ, միասին դատվենք»*: Այստեղ Նա խոսում է աղոթքի մասին: Իմ Աստվածաշնչի լուսանցքում գրված է. «Ներկայացրո՛ւ քո իրավիճակը»: Սա հրավեր է Աստծուց՝ Իր առջև գալու, ձեր իրավիճակի մասին աղոթքով Նրան պատմելու, որ Նա կարողանա օրհնել ձեզ:

Դուք չեք կարողանա աղոթքով պատմել Աստծուն ձեր իրավիճակի մասին, քանի դեռ չեք սովորել մոռանալ ձեր մեղքերը: Եթե չեք գիտակցում 25-րդ խոսքում նշված ճշմարտությունը՝ *«Ես Ես եմ, որ ջնջում եմ քո հանցանքները»,* ապա չեք կարողանա ձեր իրավիճակն ու իրադրությունը Աստծո առաջ բերել:

Մինչև չգիտակցեք, որ ձեր մեղքերը ջնջված են, սատանան կտանջի ձեզ ձեր աղոթքներում՝ անընդհատ հիշեցնելով անցյալ զանցառությունները: Սակայն բավարար չէ միայն գիտակցելը, որ ձեր մեղքերը ներված ու ջնջված են: Դուք պետք է *ներեք* ինքներդ

ձեզ այն սխալների համար, որ գործել եք, և *մոռանաք* ձեր անցյալը:

Այլապես կարող եք հաջողությամբ ներել ուրիշներին, բայց դատապարտել ինքներդ ձեզ: Կարող եք մտածել. «Ես անհաջողակի մեկն եմ. կյանքս խառնաշփոթի եմ վերածել ու ինքս ինձ հիմարացրել եմ»:

Հիշե՛ք, թե ինչ ասաց Սավուղը. նա ասաց. «Մեղք գործեցի… ահա հիմարություն արեցի և մեծապես սխալվեցի» (Ա Թագ. 26.21): Բոլորս էլ ժամանակ առ ժամանակ մեղք ենք գործում և սխալներ անում, սակայն պետք է ներենք ինքներս մեզ, որ կարողանանք առաջ շարժվել և հաջողել Աստծո մեջ: Չենք կարողանա որևէ բանում հաջողել, եթե անցյալը ճնշում է մեզ:

Քանի դեռ թույլ եք տալիս, որ սատանան հիշեցնի ձեզ անցյալի մեղքերն ու ձախողումները, նա կօգտվի առիթից: Անընդհատ անցյալով ապրելը ձեր հավատքը ապարդյուն կդարձնի: Եվ քանի դեռ դուք վստահ չեք ձեր իսկ հավատքի մեջ, ձեր աղոթքները կխափանվեն:

Կցանկանամ՝ նկատի առնեք մեկ այլ բան, որը նշված է 25-րդ խոսքում: Արդյոք Աստված ասաց, որ մեր հանցանքները ջնջել է *մե՞ր* պատճառով. ո՛չ, Նա ասաց, որ ջնջել է *ԻՐ պատճառով:*

Ինչո՞ւ է Աստված ասում, որ չի հիշի մեր մեղքերը *Իր* պատճառով. որպեսզի կարողանա օրհնել մեզ: Նա մեր մեղքերը ջնջում է Իր պատճառով, որպեսզի կարողանա օգնել մեզ և ցուցաբերել Իր մեծ ողորմությունն ու սերը մեր հանդեպ: Իհարկե, մենք ենք շահում Աստծո ներումից:

Երբ գիտակցում եք, որ ձեր մեղքերը ջնջված են, կարողանում եք անել այն, ինչը գրված է 26-րդ խոսքում: Կարողանում եք արդյունավետորեն աղոթել՝ ձեր իրավիճակն Աստծո առաջ բերելով: Սակայն դա կարող եք անել միայն, երբ սովորեք մոռանալ:

Ոմանք պարզապես պետք է արձանագրեն Տիրոջ առջև, որ ներել են իրենք իրենց: Կարող եք նույնն անել նաև, եթե ուրիշներին ներելու կարիք ունեք: Ներե՛ք ձեզ ձեր անցյալի սխալների, ձախողումների և մեղքերի համար, իսկ հետո մոռացե՛ք դրանք: Սերը *մոռանում է:* Եթե չեք *մոռացել* ձեր սխալներն ու ձախողումները, նշանակում է՝ չեք ներել ինքներդ ձեզ:

Մի մեծ քաղաքում հավաքույթ էի անցկացնում: Մի քանի անգամ ձեռք դնելով աղոթեցի այդ եկեղեցու անդամներից մեկի համար, որ գործարար էր: Իրականում այդ մարդու համար ձեռք դնելով աղոթել էին Ամերիկայի՝ բժշկության պարգև ունեցող այդ ժամանակի բոլոր

ավետարանիչները, քանի որ նա հիվանդ էր:

Տերն ասաց, որ խոսեմ այդ մարդու հետ, ուստի ես խնդրեցի նրան հաջորդ երեկո հավաքույթից առաջ գալ եկեղեցի. գիտեի, որ սրտի խնդիր ուներ:

Բժիշկներն ասել էին նրան, որ եթե թոշակի անցներ, ընդուներ դեղահաբերը և ժամանակի մեծ մասը հանգստանար, գուցե ևս երկու տարի ապրեր: Սակայն նա դեռևս չէր ցանկանում թոշակի անցնել:

Հաջորդ երեկո սափրվում և պատրաստվում էի եկեղեցի գնալու, երբ Տերը խոսեց ինձ հետ: Նա ասաց. «Ի՞նչ ես կարծում, Ես կպահանջե՞ի անել մի բան, որն Ինքս չէի ցանկանա անել»:

Ես պատասխանեցի. «Ո՛չ, Տե՛ր: Դու այդպես չէիր վարվի, քանի որ դա անարդար կլիներ, իսկ Դու անարդար չես»:

Վերջացրի սափրվելը, հագնվեցի, և Տերը նորից խոսեց հետս ու նույն բանն ասաց. «Ի՞նչ ես կարծում, Ես կպահանջե՞ի անել մի բան, որն Ինքս չէի ցանկանա անել»:

Ես ասացի. «Ո՛չ, ո՛չ, քանի որ եթե Դու ինձնից մի բան պահանջեիր, որն Ինքդ չէիր անի, դա անարդար կլիներ, իսկ Դու անարդար չես»:

Պատրաստվեցի և գնացի եկեղեցի: Մեքենայի մեջ Տերն ինձ նույն բանն ասաց, և ես Նրան նույնը պատասխանեցի: Այնուհետև Տերն ինձ հիշեցրեց սուրբգրային հետևյալ հատվածները Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններից:

ՄԱՏԹԵՈՍ 18.21,22

21 Այն ժամանակ Պետրոսը, Նրա մոտ գալով, ասաց՝ Տեր, քանի՞ անգամ եթե իմ եղբայրն ինձ դեմ մեղք անի, ես ներեմ նրան. մինչև յո՞թ անգամ:

22 Հիսուսը նրան ասաց՝ չեմ ասում քեզ՝ մինչև յոթ անգամ, այլ ՄԻՆՉԵՎ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ԱՆԳԱՄ ՅՈԹ:

ՂՈՒԿԱՍ 17.3-5

3 Զգո՛ւյշ կացեք ձեր անձերին: Եթե քո եղբայրը մեղանչի քո դեմ, հանդիմանի՛ր նրան, և եթե ապաշխարի, ների՛ր նրան:

4 Եվ եթե օրը յոթ անգամ քո դեմ մեղանչի և յոթ անգամ քեզ մոտ դառնա և ասի՝ ապաշխարում եմ, ների՛ր նրան:

5 Եվ առաքյալներն ասացին Տիրոջը՝ ՄԵՐ ՀԱՎԱՏՔՆ ԱՎԵԼԱՑՐՈՒ՛Ն:

Հիսուսն ասաց, որ մենք պետք է յոթանասուն անգամ յոթ անգամ ներենք, և դա ոչ թե ամբողջ կյանքում, այլ մեկ օրում: Սա նշանակում է, որ մենք պետք է վարժվենք ներողամիտ վերաբերմունք ունենալու մեջ:

Ուշադրությունն դարձրեք նաև, որ Հիսուսը խոսում է ներման մասին, և դրանից անմիջապես հետո աշակերտներն ասում են. «Մեր հավատքն ավելացրո՛ւ»: Երբեմն մարդկանց ներելու համար հավատք է պահանջվում, ճի՞շտ է: Միևնույն ժամանակ դուք չեք կարող ավելացնել ձեր հավատքը առանց ներելու: Սա բացարձակ ճշմարտություն է:

Երբ Տերն ինձ հիշեցրեց սուրբգրային այս հատվածները, ես փորձում էի հասկանալ, թե դրանով ինչ է ուզում ասել:

Հետո Նա ասաց. «Եթե Ես պահանջում եմ, որ դու եղբորդ ներես, եթե անգամ նա մեկ օրում 490 անգամ քո դեմ մեղք գործի, իսկ Ես պատրաստ չեմ նույնն անելու, դա կնշանակի, որ անարդար եմ»:

Դեռևս չէի հասկանում, թե ինչու էր Տերն այդ ամենն ասում ինձ: Գնացի եկեղեցի, որ մինչև ծառայությունը սկսվելը խոսեի այդ մարդու հետ: Երբ սկսեցինք խոսակցությունը, անմիջապես հասկացա, թե ինչու էր Տերն ասել ինձ այդ ամենը:

Այդ մարդն ասաց ինձ. «Ես սրտի խնդիր ունեմ, նաև երիկամների անբավարարություն: Բժիշկներն ասել են, որ վաճառեմ ընկերությունս և ամբողջ օրը պառկեմ, հանգստանամ ու դեղորայք ընդունեմ. այդ դեպքում գուցե մի քանի տարի էլ ապրեմ:

Բայց եթե շարունակեմ ապրել այնպես, ինչպես ապրում եմ, ապա ցանկացած պահի կարող եմ մահանալ»:

Հետո այդ գործարարն ասաց. «Արդեն երեսունհինգ տարի է՝ ինչ Ամբողջական Ավետարանի եկեղեցու անդամ եմ: Եղբա՛յր Հեգին, Ձեզ հետ անկեղծ կլինեմ: Գիտեմ, որ Դուք սովորեցնում եք հավատքի մասին, բայց ամեն անգամ, երբ առաջ եմ գնում՝ բժշկություն ստանալու, գիտեմ, որ Աստված չի բժշկի ինձ»:

«Ինչո՞ւ չպետք է բժշկի»,- հարցրի ես:

«Դե, ես այնքա՞ն շատ եմ ձախողվել ու թերացել. մեղքեր եմ գործել»:

Թեև գիտեի, որ նրա գործած ոչ մի մեղք չէր կարող այնքան մեծ լինել, որ Աստված չկարողանար նրան ներել, հարցրի. «Այդ ի՞նչ սար-

սափելի մեղք եք գործել. բանկ եք թալանել, թե՞ մարդ սպանել»:

«Ո՛չ այն, ո՛չ այն»:

«Այդ դեպքում ի՞նչ սարսափելի մեղք եք գործել»:

Նա պատասխանեց. «Որքան գիտեմ՝ ոչ մի սարսափելի մեղք չեմ գործել: Քննել եմ սիրտս: Սակայն ես իմ ընկերությունն ունեմ և բավականին գումար եմ աշխատել: Տասանորդս միշտ տվել եմ իմ եկեղեցուն, աջակցել եմ միսիային: Բայց ֆինանսապես շատ ավելին կարող էի անել, քան արել եմ: Շատ ավելի կարող էի աղոթել, քան աղոթել եմ: Ես անգործության մեղքն եմ գործել»:

Շատ հավատացյալներ կենտրոնանում են գործողությամբ դրսևորվող մեղքերի վրա, բայց Աստվածաշունչը սովորեցնում է նաև անգործության մեղքերի մասին: Սրանք այն մեղքերն են, երբ կարող ենք ճիշտ վարվել, բայց չենք վարվում: Աստվածաշնչում գրված է. *«...արդ ով որ բարին գիտենա և չանի, նրա համար մեղք է»* (Հակ. 4.17):

Ես այդ գործարարին ասացի այն, ինչ Տերն էր ինձ ասել. «Ի՞նչ ես կարծում, Տերը կպահանջե՞ր անել մի բան, որն Ինքը չէր ցանկանա անել»:

«Ո՛չ. Նա չէր անի դա»: Եվ ես ցույց տվեցի նրան սուրբգրային այն հատվածները, որ Տերը տվել էր ինձ Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններից, հետո ցույց տվեցի Հակոբոս 5.14,15-րդ խոսքերը:

> **ՀԱԿՈԲՈՍ 5.14,15**
>
> **14 Եթե ձեզնից մեկը հիվանդ է, թող եկեղեցու երեցներին կանչի, որ նրա վրա աղոթք անեն, նրան յուղով օծեն Տիրոջ անունով:**
>
> **15 Եվ հավատքով աղոթքը կփրկի այն հիվանդին, և Տերը վեր կկացնի նրան, և եթե մեղք գործած լինի, կթողվի նրան:**

Նկատեցի՞ք, որ Աստվածաշունչը չի ասում՝ «եթե նա մի մեղք գործած լինի»՝ եզակի թվով, այլ ասում է՝ «եթե մեղք գործած լինի»՝ առհասարակ *(անգլերենում օգտագործված է հոգնակի ձևը՝ «մեղքեր»):* Այնուհետև ասվում է «*կ*թողվի նրան»: Չի ասվում՝ «գուցե նրա մեղքերը ներվեն», ասվում է՝ «*կ*ներվեն»:

Ես ասացի նրան. «Աստված ոչ միայն ուզում է բժշկել քեզ, այլև ներել, նույնիսկ անգործության մեղքերի համար: Տերը ներել է քեզ, ուստի դադարի՛ր ինքդ քեզ մեղադրելուց: Գիտե՞ս, թե որն է քո խնդիրը,

դու ինքդ քեզ չես ներել: Բացի այդ՝ արդյոք մեկ օրում 490 անգամ սխալվե՞լ ես»:

«Ո՛չ»,- ասաց նա:

«Այդ դեպքում դեռ տեղ ունես այդ թիվը լրացնելու»,- պատասխանեցի ես:

Հենց այդ մարդը ներեց ինքն իրեն, նրա հավատքը սկսեց գործել: Չներումը, որ նա ուներ ինքն իր հանդեպ, խոչընդոտ էր նրա հավատքի համար: Ես ձեռք դրեցի և աղոթեցի նրա համար, ու նա անմիջապես բժշկվեց:

Տարիներ անց քարոզում էի նույն նահանգում, և այդ մարդու ազգականներից մեկին հանդիպեցի, ու պատմեց ինձ նրա մասին: Ասաց, որ այս բոլոր տարիների ընթացքում նա վարել է իր ընկերությունը և թոշակի անցել միայն յոթանասունհինգ տարեկանում:

Ըստ բժիշկների՝ նա կարող էր մահացած լինել հիսունվեց տարեկանում, քանի որ սրտի լուրջ խնդիր ուներ: Եվ եթե ինքն իրեն չներեր անցյալի ձախողումների համար, չէր կարողանա ստանալ իր բժշկությունը:

Ինչպես տեսնում եք, հավատացյալները շատ անգամներ խճճվում են մեղքերի վերաբերյալ հարցերում: Նկատի ունեմ հետևյալը. շատ հավատացյալներ կարծում են, թե ինչ-որ մեղք շատ լուրջ է, իսկ մեկ ուրիշ մեղք՝ ոչ այնքան: Նրանք կարծում են, որ Աստված կների իրենց մանր մեղքերի համար, բայց ո՛չ մեծ մեղքերի: Եթե չզգուշանանք, բոլորս կարող ենք խճճվել մեղքի մասին մեր մարդկային պատկերացումներում:

Սակայն եկե՛ք տեսնենք, թե ինչ է Աստվածաշունչն ասում մեղքի մասին:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 2.1,2

1 Որդյակնե՛րս, սա գրում եմ ձեզ, որ չմեղանչեք, և ԵԹԵ ՄԵԿԸ ՄԵՂԱՆՉԻ, ԲԱՐԵԽՈՍ ՈՒՆԵՆՔ ՀՈՐ ՄՈՏ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՐԴԱՐԻՆ:

2 Եվ ՆԱ ՔԱՎՈՒԹՅՈՒՆ Է ՄԵՐ ՄԵՂՔԵՐԻ ՀԱՄԱՐ և ոչ միայն մերինների, այլև ամբողջ աշխարհի էլ:

Հիսուս Քրիստոս Արդարը քավություն է մեր *բոլոր*՝ գործողությամբ դրսևորվող և անգործության մեղքերի համար: Իսկ այս մարդուն թվում էր, թե իր չարածն այնքան մեծ էր, որ Աստված չէր կարող ներել իրեն դրա համար, գուցե ներեր այլ մեղքերի համար, բայց ո՛չ

դրա: Սակայն Աստվածաշունչն այլ բան է ասում:

ՀԱԿՈԲՈՍ 2.10,11

10 Որովհետև ՈՎ ՈՐ ԲՈԼՈՐ ՕՐԵՆՔԸ ՊԱՀԻ և ՄԵԿՈՒՄ ՄԵՂԱՆՉԻ, ԱՄԵՆ ՕՐԵՆՔԻՆ ԵՂԱՎ ՊԱՐՏԱԿԱՆ:

11 Որովհետև այն մի՛ շնացիր ասողը ասաց էլ՝ մի՛ սպանիր, իսկ եթե շնություն չանես, բայց սպանես, եղար օրինազանց:

Աստվածաշունչն ասում է, որ եթե ամբողջ Օրենքը կատարես, սակայն մեկ կետը խախտես, ապա մեղավոր կլինես բոլոր կետերի խախտման համար: Դա նշանակում է, որ մի մեղք գործելու դեպքում նույնքան մեղավոր ես, որքան եթե մեկ ուրիշ մեղք գործած լինեիր: Օրինակ՝ եթե քո հարևանի դեմ կեղծ վկայություն տաս, նույնքան մեղավոր ես, որքան նա, ով գողացել է իր հարևանից:

Սա չի համընկնում մեր մարդկային մտածելակերպի հետ, ճի՞շտ է: Սակայն դրա համար է Աստծո Խոսքն ասում. *«Որովհետև ամենքը մեղանչեցին, և Աստծո փառքից պակասված են»* (Հռոմ. 3.23):

Ոմանք ասում են. «Դե՛, ես այնքան էլ վատ մարդ չեմ, որքան ուրիշները»: Սակայն պետք է հիշել, որ մեղքը մեղք է, իսկ Աստված աչառ չէ: Դուք գուցե չեք գործում այն նույն մեղքը, ինչ ուրիշն է գործում, բայց մեղքը մեղք է:

Մենք հակված ենք մեղքն ուրիշի վրա գցելու. մեկ ուրիշը շատ վատն է, իսկ մենք այդքան էլ վատը չենք: Բայց բոլորս ենք մեղանչել ու Աստծո փառքից ընկել: Բոլորս ենք խախտել Օրենքի ինչ-որ՝ թեկուզև փոքր կետ: Ոչ մեկս գլուխ գովելու առիթ չունենք: Փառք Աստծուն Նրա ողորմության և ներման համար:

Իսկ եթե Հակոբոս 2.10-ը ճշմարիտ չէ, եկե՛ք պոկենք այդ էջը: Սակայն եթե սկսեք Աստվածաշնչից էջեր պոկել, չեք էլ նկատի՝ ինչպես ոչինչ չի մնա:

Սա հիշեցնում է ինձ մի պատմություն մի աղջնակի մասին, որ եկեղեցի էր հաճախում: Մի անգամ՝ եկեղեցական ծառայությունից հետո, հովիվը, կանգնած դռան մոտ, սեղմում էր մարդկանց ձեռքերը, երբ տեսավ այդ աղջնակին, որի թևի տակ կիրակնօրյա դպրոցի նրա դասագիրքն էր ու մանկական Աստվածաշնչի կազմը: Հովիվը կարծեց, թե էջերը թուլացել ու ընկել են, ու հարցրեց աղջնակին.

«Քաղցրի՛կս, Աստվածաշնչիդ մեջ ոչինչ չի մնացել՝ բացի կազմից. կորցրե՞լ ես բոլոր էջերը»:

Աղջնակը պատասխանեց. «Ո՛չ, չեմ կորցրել: Ամեն անգամ, երբ Դուք ասում էիք, որ ինչ-որ խոսք այսօր մեզ չի վերաբերում, ես այդ էջը պոկում էի, ու հիմա մնացել է միայն կազմը. մտածում եմ՝ այսօր դա էլ դեն կնետեմ»:

Սա շատ լավ նկարագրում է այն, թե ինչպես են քարոզում որոշ ծառայողներ: Սակայն ճշմարտությունն այն է, որ Աստծո Խոսքը մեզ *վերաբերում է* այսօր: Իսկ Հիսուսն արդեն վճարել է մեր յուրաքանչյուր մեղքի համար՝ թե՛ մեծ, թե՛ փոքր:

Ուստի եթե պատրաստվում եք Աստծո մեջ հաջողություն ունենալու, ապա ինքներդ ձեզ պետք է ներեք անցյալի բոլոր սխալների ու ձախողումների համար: Մեզնից ո՞վ երբևէ չի ձախողվել: Ճանաչո՞ւմ եք այդպիսի մեկին:

Ոմանք ասում են. «*Ես* հավատում եմ մեղքից վեր ապրելուն»: Ես էլ եմ հավատում, սակայն չեմ ճանաչում որևէ մեկին, ում դա հաջողվել է: Մենք բոլորս դեռևս աշխատում ենք այդ ուղղությամբ: Միակ կատարյալ Անձը, Որին ճանաչում եմ, Հիսուսն է, ու Նրան խաչել են դրա համար:

Ուրիշներն էլ ասում են. «Կարող եք մեղք գործել, ինչքան ցանկանաք, որովհետև Աստված կների ձեզ»: Խիստ կասկածում եմ, որ նման բաներ ասող մարդիկ երբևիցե վերստին ծնվել են, քանի որ երբ վերստին ծնվում ես, բնությունդ փոխվում է. Աստծո սերն է բնակվում սրտիդ մեջ, ու չես ցանկանում անել այն, ինչ սխալ է:

Քանի դեռ սիրով եք վարվում, ինքնակամ մեղք չեք գործի: Սակայն սիրուց դուրս ամեն քայլ մեղք է: Շատ անգամներ ենք մեղք գործում, երբ սիրով չենք վարվում և չենք էլ գիտակցում դա:

Օրինակ՝ բավականաչափ լուրջ չենք գիտակցել այն, որ ներել, *բայց չմոռանալ* նշանակում է սիրով չվարվել: Մեղք է ուրիշների ու նույնիսկ մեր սխալներից կառչելը:

Արդյո՞ք ուրախ չեք, որ ունենք Խոսքը: Արդյո՞ք ուրախ չեք, որ կարող ենք քայլել Խոսքի լույսի մեջ: Սաղմոսերգուն ասել է. *«Խոսքերիդ հայտնությունը լույս է տալիս...»* (Սաղմ. 119.130): Երբ մենք Աստծո լույսն ենք ունենում ներման հարցում, կարող ենք ներել ինքներս մեզ և մեր անցյալը գցել մոռացության ծովը:

Պողոսը պետք է ներեր ինքն իրեն

Աստվածաշնչում նայենք մեկին, ով ինքն իրեն ներելու կարիք ուներ: Պողոս առաքյալը Փիլիպիայի եկեղեցուն գրում է հետևյալ խոսքերը.

> **ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 3.12-14**
>
> **12 Ոչ իբր արդեն բռնած լինեմ կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ, բայց հետևում եմ, որ գուցե թե հասնեմ նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ:**
>
> **13 Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա, ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում:**
>
> **14 Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում:**

Պողոսն ինքն ասում է, որ դեռևս իրեն կատարյալ կամ կատարելության հասած չի համարում: «Կատարյալ» բառը նշանակում է *«լիովին հասունացած»* կամ *«բնավորությամբ հասունացած»*:

Այլ կերպ ասած՝ Պողոսն էլ սիրո մեջ դեռ կատարյալ չէր: Եթե Պողոսը դեռևս կատարելության չէր հասել սիրո մեջ, բայց շարունակում էր առաջ շարժվել՝ դեպի նպատակը, ապա մենք լավ ընկերակցության մեջ ենք, քանի որ մենք էլ շարժվում ենք առաջ՝ դեպի հոգևոր հասունություն Քրիստոսի մեջ:

Մեզնից որևէ մեկը դեռ կատարյալ կամ լիովին հասունացած չէ սիրո մեջ, սակայն բոլորս ձգտում ենք դրան: Փառք Աստծուն, որ կարող ենք աճել ու զարգանալ սիրո մեջ: Մենք շարունակում ենք առաջ շարժվել՝ դեպի Քրիստոս Հիսուսում Աստծո բարձր կոչման մրցանակը:

Կցանկանամ՝ երկու բանի ուշադրություն դարձնենք փիլիպեցիներին ուղղված սուրբգրային այս հատվածում: Պողոսը պետք է մոռանար այն, ինչն անցել էր, այդ թվում նաև անցյալի սխալներն ու ձախողումները, այնուհետև պետք է ձգտեր դեպի այն բաները, որոնք առջևում էին:

Սա հոգևոր ճշմարտություն է: Պետք է սովորեք մոռանալ անցյալի սխալները, որպեսզի կարողանաք Աստծո հետ առաջ շարժվել:

Պողոսը սա գրել է փիլիպեցիների եկեղեցուն: Նշանակում է, որ

մինչ այս խոսքերն ինչ-որ մեկին ուղղելը նա ինքը պետք է կիրառեր այդ ճշմարտությունը: Ինչո՞ւ Պողոսը պետք է ներեր ինքն իրեն: Արդյոք նա անցյալում արե՞լ էր ինչ-որ բան, ինչի համար ամաչում էր: Կարդացե՛ք, թե ինչ է նա ասում իր մասին Տիմոթեոսին ուղղված նամակում:

Ա ՏԻՄՈԹԵՈՍ 1.11-16

11 Երանելի Աստծո փառավոր ավետարանի համեմատ, որն ինձ հավատացվեց:

12 Եվ շնորհակալ եմ ինձ մեր Տեր Հիսուս Քրիստոսում զորացնողից, որ ինձ հավատարիմ համարեց և սպասավորության մեջ դրեց,

13 ՈՐ ԱՌԱՋՈՒՑ ՀԱՅՀՈՅԻՉ և ՀԱԼԱԾՈՂ և ԹՇՆԱՄԱՆՈՂ էի, բայց ողորմություն գտա, որովհետև չգիտենալով էի գործում անհավատությունով:

14 Բայց էլ ավելի շատ եղավ մեր Տիրոջ շնորհքը հավատքով և սիրով, որ Քրիստոս Հիսուսում է:

15 Ճշմարիտ է այս խոսքը և ամեն ընդունելության արժանի, որ Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ մեղավորներին փրկելու, որոնց առաջինը ես եմ:

16 Սակայն ՆՐԱ ՀԱՄԱՐ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԳՏԱ, որ Հիսուս Քրիստոսը առաջ ինձանում ցույց տա բոլոր երկայնամտությունը՝ օրինակ լինելու նրանց, որ պիտի հավատան Նրան հավիտենական կյանքի համար:

Մինչ դարձի գալը Սողոսը, որին հետագայում կոչեցին Պողոս, հալածել և վնաս էր հասցրել Առաջին եկեղեցուն: Պողոսն ասում է, որ ինքը հայհոյիչ էր, հալածող և թշնամացող ուրիշների նկատմամբ:

Օրինակ՝ Աստվածաշնչում գրված է, որ Սողոսը կամակից էր Ստեփանոսի սպանվելուն (Գործք 7.59): Եվ երբ Առաջին եկեղեցին հալածողները քարկոծեցին Ստեփանոսին, նրանք իրենց հագուստները դրեցին Պողոսի ոտքերի մոտ (Գործք 7.57):

Այնուհետև Գործք առաքելոց 9-րդ գլխում մեկ այլ հիշատակում ենք տեսնում այն մասին, որ Սողոսը հալածում էր Առաջին եկեղեցին, այնուհետև, թե ինչպես է նա դարձի գալիս:

ԳՈՐԾՔ 9.1-6

1 Բայց Սողոսը, ԴԵՌ ՍՊԱՌՆԱԼԻՔ և ՄԱՀ ՇՆՉԵԼՈՎ ՏԻՐՈՋ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎՐԱ, քահանայապետի մոտ եկավ:

2 Եվ նրանից թղթեր խնդրեց Դամասկոս՝ ժողովարանների վրա, որ ԵԹԵ ՄԵԿԻՆ ԳՏՆԻ ԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՀԵՏԵՎՈՂ՝ տղամարդիկ կամ կանայք, ՆՐԱՆՑ ԿԱՊԱԾ ԲԵՐԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ:

3 Եվ նա գնալիս մոտեցավ Դամասկոսին, և հանկարծակի նրա չորս կողմով լույս փայլեց երկնքից:

4 Եվ նա, գետնի վրա ընկած, մի ձայն լսեց, որ ասում էր նրան՝ ՍԱՎՈ՛ՒՂ, ՍԱՎՈ՛ՒՂ, ԻՆՉՈ՞Ւ ԵՍ ԻՆՁ ՀԱԼԱԾՈՒՄ:

5 Եվ նա ասաց՝ Ո՞վ ես, Տե՛ր, և Տերն ասաց՝ ԵՍ ՀԻՍՈՒՍՆ ԵՄ, ՈՐԻՆ ԴՈՒ ՀԱԼԱԾՈՒՄ ԵՍ. դժվար է քեզ խթանին քացի տալ:

6 Եվ դողալով ու զարհուրելով ասաց՝ Տե՛ր, ի՞նչ ես կամենում, որ անեմ:

Սուրբգրային այս հատվածը կարդալիս կարող եք տեսնել, որ Պողոսը մոռանալու շատ բաներ ուներ: Նա ոչ միայն հալածել էր հավատացյալներին, այլև, ըստ 5-րդ խոսքի, իրականում հալածել էր Հիսուսին: Սա պատճառներից մեկն է, թե ինչու է Պողոսն ասում՝ «Ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջի լինողներն եմ նկրտում...»:

Պողոսի համար սարսափելի էր հիշել այն վնասը, որ հասցրել էր եկեղեցուն: Նա ոչ միայն կամակից էր Ստեփանոսի սպանությանը, այլև, ինչպես Աստվածաշունչն է ասում, սպառնալիք ու մահ էր տարածում և շատ հավատացյալների բանտարկում:

Դարձի գալուց հետո Պողոսը պետք է սովորեր մոռանալ իր անցյալի սխալները՝ ներառյալ այն սարսափելի հալածանքները, որ ենթարկել էր քրիստոնյաներին, որպեսզի կարողանար քայլել Աստծո հետ: Լիարժեք ներուժով ծառայելու համար, որի մեջ Աստված կանչել էր իրեն, Պողոսը պետք է մոռանար իր անցյալն ու ներեր ինքն իրեն:

Նույնը վերաբերում է նաև ձեզ: Եթե չսովորեք ներել ինքներդ ձեզ ու մոռանալ անցյալի սխալները, ապա դա կխանգարի ձեզ անելու այն, ինչի մեջ Աստված ձեզ կանչել է:

Պետք է սովորեք ներել ոչ միայն ուրիշներին, այլև ինքներդ ձեզ և

գիտակցել, որ ներել սովորելը սերտորեն փոխկապակցված է մոռանալ սովորելու հետ:

Եթե շարունակեք կառչել անցյալից, ապա կաշկանդված կլինեք ձեր ամբողջ կյանքի ընթացքում և չեք կարողանա ապրել Աստծո համար: Եթե միշտ հետ նայեք, չեք կարողանա լինել հաջողակ քրիստոնյա:

Եթե ներում եք խնդրել Աստծուց, ու Նա այլևս չի հիշում ձեր անցյալը, ապա դուք ինչո՞ւ պետք է հիշեք այն: Ձեր հավատքը չի գործի, եթե դատապարտեք ինքներդ ձեզ և մշտապես մեղքի զգացում ունենաք:

Բոլորս էլ ափսոսում ենք, երբ թերանում ենք: Եթե իսկապես քայլում ենք Աստծո հետ, ապա մեզնից ոչ ոք չի ցանկանա թերանալ, սակայն մենք մարդ ենք և երբեմն-երբեմն սխալվում ենք: Ահա թե ինչու Փրկչի կարիք ունենք: Ահա թե ինչու Հիսուսի կարիքն ունենք:

Տեսե՛ք, թե ինչ է ասել Հովհաննեսն իր թղթում:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.7-12

7 Սիրելինե՛ր, իրար սիրենք, որ սերն Աստծուց է, և ամեն ով որ սիրում է, Աստծուց է ծնված և ճանաչում է Աստծուն:

8 Նա, որ չի սիրում, Աստծուն չի ճանաչել, որովհետև Աստված սեր է:

9 Սրանով Աստծո սերը երևաց մեզանում, որ Աստված Իր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որ Նրանով կյանք ունենանք:

10 Սրանում է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ որ Նա սիրեց մեզ և ուղարկեց ԻՐ ՈՐԴՈՒՆ ՔԱՎՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՄԵՂՔԵՐԻ ՀԱՄԱՐ:

11 Սիրելինե՛ր, եթե Աստված այսպես սիրեց մեզ, ապա մենք էլ պետք է իրար սիրենք:

12 Աստծուն երբեք մեկը չի տեսել. եթե իրար սիրենք, Աստված մեզանում է բնակվում, և Նրա սերը կատարյալ է մեզանում:

Հատկապես ուշադրությունն դարձրեք 10-րդ խոսքին. *«Սրանում է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ որ Նա սիրեց մեզ և ուղարկեց Իր Որդուն քավություն մեր մեղքերի համար»:*

Աստված Հիսուսին քավություն դարձրեց մեր մեղքերի համար:

Այդ պատճառով Աստվածաշունչն ասում է, որ եթե խոստովանենք մեր մեղքերը, Աստված հավատարիմ է՝ ներելու դրանք և մաքրելու մեզ ամեն անօրինությունից (Ա Հովհ. 1.9):

Այս խոսքերը հասցեագրված չէին մեղավորներին. դրանք չեն վերաբերում մեղավորներին. Հովհաննեսը գրել է քրիստոնյաներին: Նա ասում է. *«ՈՐԴՅԱԿՆԵՐՍ, սա գրում եմ ձեզ, ՈՐ ՉՄԵՂԱՆՉԵՔ...»* (Ա Հովհ. 2.1):

Աստված չի ցանկանում, որ Իր երեխաները մեղանչեն: Սակայն նայեք այս խոսքի շարունակությանը՝ *«...և եթե մեկը մեղանչի, բարեխոս ունենք Հոր մոտ Հիսուս Քրիստոս արդարին»:*

Եթե մենք թերանանք ու մեղանչենք, ապա Աստծո մոտ բարեխոս ունենք՝ Հիսուս Քրիստոս Արդարին:

Պատահել է, երբ մարդիկ մոտեցել են ինձ ու ասել. «Եթե մարդկանց նման բան սովորեցնես, ապա մեղք գործելու լիազորություն կտաս»:

Ես միշտ պատասխանել եմ. «Մեղք գործելու համար լիազորություն պետք չէ. առանց լիազորության էլ բավականաչափ մեղք կգործեն»:

Մենք պետք է ուրախ լինենք, որ Հոր մոտ Պաշտպան ունենք, և այդ Պաշտպանը Հիսուս Քրիստոս Արդարն է: Պաշտպան նշանակում է իրավաբան կամ ինչ-որ մեկը, ով միջնորդում է մեզ համար կամ պաշտպանում է մեզ արդար Դատավոր Աստծո առջև:

Հաջորդը խոսքը կստիպի ձեզ ուրախությունից բացականչել:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 2.2
2 Եվ ՆԱ [Հիսուսը] ՔԱՎՈՒԹՅՈՒՆ Է ՄԵՐ ՄԵՂՔԵՐԻ ՀԱՄԱՐ և ոչ միայն մեր, այլև ամբողջ աշխարհքի էլ:

Ուշադրությունն դարձրեք, որ Աստվածաշունչը առանձնացնում է քրիստոնյաների և աշխարհի մեղքերը: Դրա պատճառն այն է, որ քրիստոնյաները Հոր մոտ Պաշտպան ունեն՝ Հիսուս Քրիստոս Արդարին: Նրանք կարող են գործի դնել Ա Հովհաննես 1.9-րդ խոսքը՝ համարձակությամբ գալ Հոր առջև և մեղքերի համար ներում ստանալ:

Իսկ աշխարհի մեղավորները չեն կարող անել դա: Իրենց մեղքերից ազատվելու համար մեղավորը նախ և առաջ պետք է ընդունի Հիսուսին՝ որպես իր Փրկչի:

Փա՛ռք Աստծուն, որ Հիսուսը մեր մեղքերի քավությունն է: Այս

ամենն ասացի, որ ներեք ինքներդ ձեզ և բժշկություն ստանաք, եթե դրա կարիքն ունեք, ներեք ինքներդ ձեզ, որպեսզի կարողանաք առաջ շարժվել ձեր կյանքում:

Հիշե՛ք, թանկագի՛ն ընկերներ, որ եթե պատրաստվում եք Աստծո հետ առաջ շարժվելու և հաջողակ լինելու ձեր քրիստոնեական կյանքի ու ծառայության մեջ, ապա պետք է սովորեք մոռանալ: Եթե չսովորեք ձեր անցյալի սխալները մոռանալու դասը, կյանքում հոգևորապես կաղ կլինեք:

Հենվե՛ք Աստծո Խոսքի վրա

Տեխասում հավաքույթ էի անցկացնում, երբ մի կին մոտեցավ ինձ հավաքույթի ավարտին և ասաց. «Ուզում եմ, որ աղոթեք ինձ համար»:

«Ինչի՞ համար եք ցանկանում, որ աղոթեմ»,- հարցրի ես:

«Պետք է ասե՛մ»,- պատասխանեց նա:

«Չեմ աղոթի, եթե չասեք»,- եղավ իմ պատասխանը:

Չէ՞ որ երբ մարդիկ խնդրում են, որ ես աղոթեմ իրենց համար, նրանք ակնկալում են, որ հավատք կունենամ նրա համար, ինչ խնդրում եմ: Ես չեմ կարող հավատք ունենալ ինչ-որ բանի համար, երբ չգիտեմ, թե ինչի համար պետք է հավատամ:

Ուստի նա ասաց. «Արդեն ութ տարի է, ինչ փրկված եմ ու մկրտված Սուրբ Հոգով: Ամուսինս փրկված չէ և մերթընդմերթ ալկոհոլ է օգտագործում: Նա լավ մարդ է և ինձ սիրում է. մենք լավ ամուսիններ ենք:

Որոշ ժամանակ առաջ, երբ տուն եկավ, այնպես էր իրեն պահում, կարծես հարբած լիներ: Ես միշտ տաքարյուն եմ եղել՝ ինքս էլ չհասկանալով, թե ինչպես եմ հունից դուրս գալիս. այդ օրը ևս կորցրի ինքնատիրապետումս և ասացի բաներ, որ չպետք է ասեի»:

Ամուսինս ասաց. «Ես հարբած չեմ, պարզապես ձևացնում էի, մեկ բաժակ եմ խմել. կարծեցի՝ ծիծաղելի կլինի, եթե մտնեմ ներս և ձևացնեմ, թե հարբած եմ»:

Դա ինձ ավելի բորբոքեց: Գնացի իմ սենյակ և շրխկոցով փակեցի դուռը: Մի քանի ժամ պահանջվեց, որ հանդարտվեմ: Սակայն բառերը, որ ասել էի, շարունակաբար մտքիս էին գալիս:

Մտածում էի. *«Մի՞թե նման բան եմ ասել. չի կարող պատահել»*: Ամաչում էի խոսքերիս համար: Ամուսինս նույնիսկ քրիստոնյա չէ, իսկ ես, լինելով փրկված, Սուրբ Հոգով լցված կին, թույլ եմ տալիս

ինձ նման կերպ կորցնել ինքնատիրապետումս ու սխալ բաներ ասել:

Ապաշխարեցի և ամբողջ գիշերն անցկացրի ծնկներիս վրա՝ խնդրելով Աստծուն, որ ների ինձ: Ես ուսուցանում եմ կիրակնօրյա դպրոցում ու հաջորդ առավոտ այնտեղ պետք է գնայի:

Առավոտյան նախաճաշի սեղանի շուրջը խնդրեցի, որ ամուսինս ների ինձ, իսկ նա ասաց. «Կարիք չկա, որ դու ինձնից ներողություն խնդրես. ես պետք է ներողություն խնդրեմ, քանի որ ես էի սխալ»»:

«Քույրիկ, Դուք ինձ չասացիք աղոթքի ձեր խնդրվածքը, այլ պատմություն պատմեցիք»,- ասացի ես:

«Ահա՛ աղոթքի խնդրվածքը,- պատասխանեց նա,- գիտեմ, որ Տերն ասում է, որ եթե մենք խոստովանենք մեր մեղքերը, կների մեզ: Սակայն խնդրում եմ, աղոթե՛ք, որ Աստված ինձ թույլ տա զգալ, որ ներել է ինձ»:

«Քույրիկ, գիտե՞ք, թե հենց նոր ինձ ինչ ասացիք. ասացիք, որ ավելի շատ հավատում եք Ձեր չփրկված ամուսնուն, քան Աստծուն,- պատասխանեցի ես:- Դուք Ձեր ամուսնուն հավատացիք, երբ ասաց, որ ներում է Ձեզ, բայց չեք հավատում Աստծուն, Ով Իր խոսքում ասում է, որ ներել է Ձեզ»:

«Ես ճանաչում եմ ամուսնուս,- ասաց նա, - գիտեմ, որ նա դա սրտանց է ասում»:

«Դուք հենվում եք ձեր ամուսնու խոսքի վրա, սակայն չեք կարողանում հենվել Աստծո Խոսքի վրա: Դուք պետք է ծանոթանաք Աստծո հետ:

Հարկավոր է փոխել առաջնահերթությունը. Աստծո Խոսքը պետք է լինի առաջին տեղում: Այս պահին Ձեր հավատքը Աստծո Խոսքի նկատմամբ երկրորդ տեղում է: Իսկ զգացմունքները պետք է դնել վերջին տեղում: Ձեր զգացմունքներն ի վերջո կհամապատասխանեն նրան, ինչին Դուք հավատում եք՝ Աստծո Խոսքին»,- ասացի ես այդ քույրիկին:

Իմ հավատքը հիմնված չէ իմ զգացմունքների վրա. ինձ համար միևնույնն է, թե ինչ եմ ես զգում: Այն հիմնված է նրա վրա, ինչ Աստված է ասել:

Աստծո Խոսքը գործում է, սակայն դուք Խոսքը կատարող պետք է լինեք, որպեսզի այն ձեզ համար գործի: Աստծո Խոսքը կատարելու մաս է կազմում ուրիշներին և ինքներդ ձեզ ներելը:

Աստծո Խոսքը գործում է մեր կյանքի բոլոր բնագավառներում, սակայն այն ինքնաբերաբար չի գործում. մենք պետք է այն գործի դնենք:

Այլ կերպ ասած՝ պետք է վարվենք Խոսքի համաձայն:

Աստծո Խոսքին հավատալը, դրա համաձայն վարվելը և այն դավանելն է, որ Խոսքը գործի է դնում ձեզ համար: Եթե պատրաստակամ չեք ներելու, ապա չեք կարողանա վարվել Խոսքի համաձայն և լինել Խոսքը կատարող. դա անհնար է:

Այնպես որ սովորե՛ք ներել, որպեսզի կարողանաք Աստծո լավագույնը ստանալ Ձեր կյանքերում: Արե՛ք այն, ինչ Պողոսն արեց՝ «մոռացե՛ք ետևի բաները, դեպի առաջի լինողները նկրտե՛ք, հետևե՛ք դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 3.14):

Գլուխ 5

Սիրով վարվելու օգուտները

Աստվածաշունչը քաջալերում է մեզ Աստծո սերը դարձնել մեր գերնպատակը և կյանքում ամենամեծ ձգտումը (Ա Կորնթ. 14.1): Աստված պետք է պատճառ ունենա՝ ցանկանալու, որ աստվածային սիրով վարվելը մեր կյանքում առաջնահերթություն լինի: Իրականում, երբ վարվում ենք սիրով, հրաշալի արդյունք և օգուտ ենք ունենում:

Օրինակ՝ ես ավելի քան վաթսունհինգ տարի է, ինչ աստվածային առողջություն ունեմ: Վերջին անգամ գլխացավ ունեցել եմ 1933 թվականի օգոստոսին, իսկ հիմա արդեն չափազանց ուշ է գլխացավեր սկսվելու համար: Ինքս ինձնով չեմ պարծենում, այլ Հիսուսով և Նրա Խոսքով:

Սխալ մի՛ հասկացեք ինձ: Եղել են դեպքեր, երբ գլխացավերն այցելել են, բայց ես դրանք չեմ ընդունել: Վերջին անգամ ինձ փորձել է գլխացավ դիպչել 1977 թվականին: Նոր էի փողոց դուրս եկել ՌԵՄԱ-ի մեր գրասենյակից:

Հանկարծ գլուխս սկսեց ցավել, բայց ես ասացի. «Ո՛չ, սատանա՛, չհամարձակվե՛ս. դու պետք է հեռանաս Հիսուսի անունով»: Մինչ անկյունից կշրջվեի, գլխացավն անցել էր: Դա վերջին անգամ էր, որ գլխացավն ինձ այցելեց, ու ես նրան մերժեցի:

Բոլոր այս տարիների ընթացքում երբևէ չեմ հիվանդացել, եթե, իհարկե, չեմ թերացել սիրով վարվելու և Աստծուն հնազանդվելու հարցում: Սիրուց դուրս ամեն քայլ մեղք է: Եվ ամեն անգամ, երբ թերացել եմ, անմիջապես ապաշխարել եմ և վերադարձել սիրուն ու հնազանդությանը:

Սովորաբար հենց ապաշխարության պահին բժշկվել եմ: Նկատի ունեմ՝ ստիպված չեմ եղել մի քանի օր սպասել, որ ախտանշանները վերանան. կա՛մ անմիջապես բժշկվել եմ, կա՛մ այդ պահից սկսվել է վերականգնումը:

Ավելի քան վաթսուն տարի ծառայության մեջ միշտ ասել եմ, որ

եթե հավատքս չի գործում, իսկ աղոթքներս չեն պատասխանվում, ապա առաջինը քննում եմ, թե արդյոք սրտումս չներում կա՞: Ասածս այն չէ, որ *բոլոր* հիվանդությունների ու ախտերի պատճառը չներումն է. պարզապես ասում եմ, որ դա առաջին բանն է, որին ուշադրություն եմ դարձնում:

Խնդրում եմ ինձ սխալ չհասկանալ: Եթե մարդիկ դեղորայքի կարիք ունեն, ապա պետք է այն ընդունեն, իհարկե, բժշկի հսկողությամբ: Պատահել է, երբ ես եմ մարդկանց ուղարկել բժշկի մոտ և անգամ նրանց համար դեղորայք գնել: Եթե ինքս էլ ասպիրինի կարիք եմ ունեցել ու որևէ այլ կերպ չեմ բուժվել, ապա ընդունել եմ այն:

Բայց սիրով վարվելն այնքան օգուտներ ունի, որ ես ուզում եմ օգտվել դրանցից: Այդ օգուտներից են առողջությունն ու բժշկությունը: Նախընտրելի է, իհարկե, երիտասարդ տարիքում սկսել, որպեսզի կյանքիդ մնացյալ հատվածում կարողանաս վայելել աստվածային սիրով վարվելու օգուտներն ու օրհնությունները:

Ես շատ զգույշ եմ սիրով վարվելու հարցում: Սերն է հոգու, շնչի և մարմնի բարգավաճման՝ Աստծո ճանապարհը: Աստվածային սիրով վարվելն է կյանքի ամեն բնագավառում հաջողելու ուղին: Սերը ի՞նչ չի անի. ընկերոջը չար բան չի անի, նշանակում է՝ ոչ մեկին չար բան չի անի: Եվ սա պետք է գործի հատկապես քրիստոնյաների շրջանում:

Սիրով վարվելն օգտակար է

Եկե՛ք կարդանք սուրբգրային մի հատված, որում խոսվում է սիրով վարվելու վարձքի մասին: Սիրով վարվելը աստվածապաշտություն է: Երբ կարդաք Ա Տիմոթեոսից հետևյալ խոսքը, «աստվածապաշտություն» բառը փոխարինեք «աստվածային սիրով վարվել» արտահայտությամբ:

Ա ՏԻՄՈԹԵՈՍ 4.8

8 ...մարմնի վարժությունը քիչ բանի համար է օգտակար, բայց աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով այժմյան և գալու կենաց խոստմունքը:

Պողոսը, Սուրբ Հոգուց ներշնչված, այս խոսքերը գրել է Տիմոթեոսին: Սրանք պարզապես Պողոսի խոսքերը չեն. սա *մարդկային* դա-

տողություն չէ: Սուրբ Հոգին այս խոսքերն ասել է ամբողջ աշխարհի քրիստոնյաներին Պողոս առաքյալի միջոցով: *Աստված* է մեզ ասում, որ աստվածապաշտությունը մեզ համար օգտակար է:

Խոսքի հանդեպ մեղք գործած չենք լինի, եթե այն կարդանք հետևյալ կերպ. «Սիրով վարվելը ամեն բանի համար օգտակար է»: Ինչո՞ւ է Աստվածաշունչն ասում, որ մարմնի վարժությունը քիչ բանի համար է օգտակար, քանի որ դրա արդյունքը միայն այս կյանքում է երևում:

Սակայն, ըստ Աստվածաշնչի, աստվածապաշտությունն օգտակար է *ամեն* բանի համար: Ե՞րբ է աստվածապաշտությունն օգտակար: Արդյո՞ք այն օգտակար կլինի միայն այն ժամանակ, երբ գնանք երկինք: Ո՛չ, այն օգտակար է և՛ այս, և՛ գալիք կյանքում:

Ուստի աստվածապաշտությունը կամ սիրով վարվելը մեզ համար օգտակար է մեր ամբողջ կյանքի ընթացքում: Բայց եթե մենք հիմա ապրենք Աստծո համար և վարվենք աստվածային սիրով, դա մեզ համար օգտակար կլինի նաև, երբ գնանք Երկինք:

Աստծո համար ապրել նշանակում է պահել Աստծո Խոսքը: Եթե պատրաստվում եք ապրելու Աստծո համար, ապա պետք է պահեք Նրա պատվիրանները: Իսկ Նոր Ուխտում ի՞նչ պատվիրաններ պետք է պահենք: Կա միայն մեկ պատվիրան, և դա սիրո օրենքն է:

Հետևաբար աստվածային սիրով վարվելն օգտակար է. այն վարձք ունի ոչ միայն այս, այլև գալիք կյանքում:

Անբարյացակամ լինելը կվնասի *ձեզ*

Ավելի քան հիսուն տարի ես քարոզել և կիրառել եմ Մարկոս 11.23-րդ և 24-րդ խոսքերը: Գործել եմ այն հոգևոր ճշմարտությունների համաձայն, որոնք Հիսուսը մեջբերում է այդ խոսքերում, և ունեցել եմ հրաշալի արդյունքներ:

Սակայն Մարկոսի 11.23-րդ և 24-րդ խոսքերին զուգահեռ կիրառել եմ նաև 25-րդ խոսքը, որը վերաբերում է ներմանը: Իմ ամբողջ քրիստոնեական կյանքում միշտ հրաժարվել եմ որևէ մեկի նկատմամբ նույնիսկ չնչին թշնամանք, անբարյացակամություն կամ սխալ զգացմունքներ ունենալուց:

Երբ ինչ-որ մեկի նկատմամբ անբարյացակամություն կամ թշնամանք է փորձել սողոսկել սրտիս մեջ, ես տեղ չեմ տվել, մեկ րոպե անգամ ինքս ինձ չեմ զբաղեցրել նման մտքերով, ճիշտ այնպես, ինչպես չէի մտածի ինչ-որ բան գողանալու կամ ինչ-որ մեկին սպանե-

լու մասին: Ուրիշների հանդեպ սխալ զգացմունքներ ունենալն *ինձ է վնասելու*:

Ես նույնքան զգույշ եմ սրտումս ինչ-որ մեկի նկատմամբ չներում կամ թշնամանք պահելուց, որքան կզգուշանայի թույն խմելուց կամ բոժոժավոր օձ բռնելուց: Չներումն ու սխալ զգացմունքներն ուրիշների նկատմամբ ավելի մահաբեր են, քան թույնը կամ բոժոժավոր օձի խայթոցը:

Հավատում եմ՝ սա է պատճառներից մեկը, որ երկար տարիներ է՝ վայելում եմ, ինչպես ես եմ կոչում, աստվածային առողջություն: Ինքս ինձնով չեմ պարծենում. պարծենում եմ Հիսուսով և նրանով, ինչ Խոսքը կարող է անել:

Ահա թե ինչու երբեք չեք լսի, որ ես քննադատեմ եղբորս կամ ծառայակցիս: Հիսուն տարուց ավելի ոչ ոք չի լսել, որ ես քննադատեմ ուրիշներին: Չեմ անի նման բան:

Երբեմն կարող եմ որոշ կառուցողական քննադատություն առաջարկել: Սխալ է քայքայիչ քննադատությունը, բայց կառուցողականի նպատակը մարդկանց օգնելն է: Եվ նույնիսկ երբ կառուցողական քննադատություն եմ անում, ոչ մեկի անունը չեմ տալիս:

Թույլ տվեք մի բան ասել Աստծո լավագույնի մեջ քայլելու մասին. եթե ցանկանում եք առողջ լինել, ապա պետք է վարվեք սիրով և հետևեք ձեր լեզվին:

Պետրոսն ասում է, թե ինչպես պետք է կիրառենք սիրով վարվելու մասին Աստծո Խոսքը:

Ա ՊԵՏՐՈՍ 3.8,9

8 Եվ վերջապես ամենդ համամիտ, կարեկից, ԵՂԲԱՅՐԱՍԵՐ, բարեսիրտ, քաղցրաբարո եղեք:

9 Չարի փոխարեն չար չհատուցեք կամ բամբասանքի փոխարեն բամբասանք, այլ ընդհակառակը, օրհնեք՝ գիտենալով, որ իսկ սրա մեջ կանչվեցիք, ՈՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳԵՔ:

«Ընդլայնված» թարգմանության մեջ գրված է. «...կարեկից [մեկդ մյուսի նկատմամբ]՝ սիրելով [միմյանց], ինչպես եղբայրներ (մեկ ընտանիքից), սրտացավ և բարեկիրթ՝ գթած և խոնարհամիտ» (խոսք 8): Սա աստվածային սերն է՝ գործողությամբ արտահայտված:

Հետևե՛ք ձեր լեզվին, որ պահեք ձեր կյանքը

Երբեմն սիրով վարվելու համար ձեզնից ջանք կպահանջվի. անհրաժեշտ կլինի լեզուն հնազանդեցնել ներսի մարդուն, որը ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ:

Ա ՊԵՏՐՈՍ 3.10,11

10 Որովհետև ով որ կամենում է կյանք սիրել և լավ օրեր տեսնել, ԹՈՂ ԻՐ ԼԵԶՈՒՆ ՉԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԼՈՒՌ ՊԱՀԻ և իր շրթունքները, որ նենգություն չխոսեն,

11 ՉԱՐԻՑ ԵՏ ՔԱՇՎԻ և բարի անի, խաղաղություն որոնի և նրան հետևի:

Այս խոսքերը Պետրոսը մեջբերել է 34-րդ սաղմոսից: Սաղմոսերգուն գիտեր, որ պետք է պահեր իր լեզուն չարից, որպեսզի իր ձայնը լսելի լիներ Բարձրում:

ՍԱՂՄՈՍ 34.12-15

12 Ո՛վ մարդ, որ կյանք ես ուզում և *լավ* օրեր սիրում բարություն տեսնելու համար,

13 ՊԱՀԻՐ ՔՈ ԼԵԶՈՒՆ ՉԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ և ՔՈ ՇՐԹՈՒՆՔՆԵՐԸ, ՈՐ ՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ ՉԽՈՍԵՆ:

14 Հեռացի՛ր չարից և գործի՛ր բարին, խնդրի՛ր խաղաղություն և նրա ետևից գնա՛:

15 ՏԻՐՈՋ ԱՉՔԵՐԸ ԱՐԴԱՐՆԵՐԻ ՎՐԱ ԵՆ, և ՆՐԱ ԱԿԱՆՋՆԵՐԸ՝ ՆՐԱՆՑ ԱՂԱՂԱԿԻ ՎՐԱ:

Երբևէ կանգ առել և մտածե՞լ եք, որ ձեր կյանքի որակը մեծապես կախված է ձեր լեզվից: Դրանով է պայմանավորված նաև այն, թե որքան կապրեք այս երկրի վրա, ինչպես նաև ձեր ապրած օրերը լավը կլինեն, թե վատը: Ձեր արտաբերած խոսքերով է պայմանավորված երկար ու *լավ* կյանք վայելելը:

Կյանքը վայելելու և շատ, լավ օրեր ունենալու գաղտնիքն ամփոփված է Ա Պետրոս 3.10-ում. *«...պահի՛ր քո լեզուն չարությունից...»:* Սերը միշտ հետ է քաշվում չարը խոսելուց: Սերը նենգն ու չարը չի ասում ուրիշների մասին. աստվածային սերը խաղաղության է ձգտում բոլորի հետ:

Եթե ցանկանում եք երկար ու *լավ* օրեր տեսնել, ապա չեք կարող ձեր սրտում չներում պահել և ուրիշների մասին վատը խոսել:

Երբ հիվանդ եք, լավ օրեր չեն, ճի՞շտ է: Երբեմն մարդիկ դժվարանում են գործի դնել իրենց հավատքը, երբ հիվանդ են, չնայած որ ամբողջովին արմատացած են Խոսքի ճշմարտության մեջ և անում են բոլոր ճիշտ դավանությունները:

Նրանք ունեն հավատք, սակայն թվում է, թե չեն կարողանում այն ակտիվացնել: Ինչո՞ւ հավատքը չի գործում: Առաջին բանը, որ պետք է քննեն, սիրո ընթացքն է. արդյոք անբարյացակամություն կամ չներում կա՞ իրենց սրտում, արդյոք վատը խոսո՞ւմ են ուրիշների մասին, քննադատո՞ւմ են, բամբասո՞ւմ են ուրիշներից:

Ա ՊԵՏՐՈՍ 3.12
12 Որովհետև Տիրոջ աչքերն ԱՐԴԱՐՆԵՐԻ վրա են, և ՆՐԱ ԱԿԱՆՋՆԵՐԸ՝ ԴԵՊԻ ՆՐԱՆՑ ԱՂՈԹՔԸ, Տիրոջ երեսը չարագործների վրա է:

Այս խոսքը կարող ենք հետևյալ կերպ կարդալ. «Տիրոջ աչքերը նրանց վրա են, ովքեր ճիշտ են վարվում»: Կարելի է նաև այսպես կարդալ. «Տիրոջ աչքերը նրանց վրա են, ովքեր սիրով են վարվում, Նրա ականջները բաց են այդպիսինների աղոթքների համար»:

Ինչպես տեսնում եք, աստվածային սիրով վարվելու դեպքում ձեր աղոթքների համար արգելքներ չեն լինի: Սակայն Աստվածաշունչը նաև ասում է. *«...Տիրոջ երեսը չարագործների վրա (անգլերենում՝ դեմ) է»*: Սիրուց դուրս ամեն քայլ մեղք է: Այս խոսքը կարելի է կարդալ նաև հետևյալ կերպ. «Տիրոջ երեսը դեմ է նրանց, ովքեր վատն են խոսում ուրիշների մասին»:

Ինչպե՞ս է քրիստոնյան մեղք գործում. սիրով չվարվելով, ուրիշների մասին վատը խոսելով: Կարող ենք այսպես ձևակերպել. ամեն քայլ, որ արվում է սիրուց դուրս, վնաս է հասցնում: Իսկ սերը ընկերոջը չար չի անում: Սերը հետ է քաշվում չարը խոսելուց: Սերը՝ Աստծո սերը, երբեք վատ բան չի ասի որևէ մեկի մասին:

Երբ քննադատում եք ուրիշներին կամ վատն եք խոսում նրանց մասին, մեղք եք գործում, քանի որ սիրով չեք վարվում:

Հիշում եմ մի դեպք, որ պատահել է տարիներ առաջ, երբ երիտասարդ տղա էի և հովվություն էի անում հյուսիսային Տեխասում գտնվող մի փոքրիկ եկեղեցում: Մեզնից քառասունհինգ մղոն հեռավորության վրա գտնվող մի խոշոր քաղաքում մի ծառայող որոշ խնդիրների մեջ էր հայտնվել և հեռացվել էր իր հարանվանությունից:

Ավելի ուշ՝ մեր եկեղեցու տարածքային համաժողովի ժամանակ, առավոտյան ծառայությանը քարոզող տարածքային հովիվներից մեկն իր քարոզի մեջ հիշատակեց այդ դեպքը: Թեև նա ծառայողի անունը չտվեց, բոլորս հասկացանք, թե ում մասին էր խոսում: Քարոզի մեջ նա դատապարտեց այդ մարդուն և, այսպես ասած, ուղարկեց դժոխք:

Որոշ մարդիկ, որ չէին կարողացել ներկա լինել առավոտյան ծառայությանը, հետաքրքրվեցին ինձնից դրա մասին: Նրանք հարցրին. «Եղբա՛յր Հեգին, ի՞նչ եք մտածում դրա մասին. արդյո՞ք այն ամենը, ինչ քարոզիչն ասաց այն ծառայողի մասին, ճիշտ է»:

«Այո՛, ես համաձայն եմ նրա հետ»,- ասացի ես:

Դրանից երկու շաբաթ անց մեզ այցելության եկան կնոջս ծնողները: Նրանք ապրում էին մեզնից մոտ քառասուն մղոն հեռու գտնվող մի ագարակում: Կիրակի երեկոյան՝ ծառայությունից հետո, կինս և երկու երեխաներս նրանց հետ գնացին նրանց տուն: Եկեղեցում գործ ունեի անելու, որից հետո ես նույնպես պատրաստվում էի միանալու նրանց:

Քանի որ կինս ու երեխաներս գնացել էին, հովվական կացարանում մենակ էի. ռադիոլուրերն էի լսում (այն ժամանակ հեռուստատեսություն դեռ չկար):

Կացարանը մի հին տուն էր, որ կառուցվել էր, երբ դեռ էլեկտրական հոսանքի լարերը ներկառուցելու հնարավորություն չկար: Սենյակի կենտրոնում առաստաղից մի շղթա էր կախված, որը ձգելով էլ միացնում ու անջատում էինք լույսը:

Երբ պատրաստվում էի անկողին մտնելու, ձգվեցի վեր, լույսն անջատեցի, անկողնուս մոտ ծնկեցի և սկսեցի աղոթել: Հանկարծ ամբողջ սենյակը լուսավորվեց: Աստվածաշնչում գրված է, որ Պողոսը տեսավ լույս, որը կեսօրի արեգակի լույսից ավելի պայծառ էր (Գործք 9.3, 22.6): Այս լույսն էլ դրա նման պայծառ էր: Ամբողջ սենյակն ավելի լուսավոր էր, քան այն ժամանակ, երբ լույսը վառ էր. ես կարող էի տեսնել սենյակում ամեն մանրուք:

Եվ այդ պայծառ լույսից ձայն լսեցի. «Ո՞վ ես դու, որ ուրիշի ծառային դատես». գիտեի, որ դա Տերն էր:

Ասացի. «Տե՛ր, ես չեմ դատել Քո ծառային»: Միանգամից հասկացա, թե ում մասին էր խոսքը: Նա նկատի ուներ այն ծառայողին, որ խնդրի մեջ էր հայտնվել:

Տերն ինձ պատասխանեց՝ հարցը կրկնելով. «Ո՞վ ես դու, որ ուրիշի ծառային դատես»:

Ես նույնպես կրկնեցի. «Տե՛ր, ես չեմ դատել Քո ծառային»:

Տերը երրորդ անգամ ասաց. «Ո՞վ ես դու, որ ուրիշի ծառային դատես»:

Եվ ես երրորդ անգամ պատասխանեցի. «Տե՛ր, ես չեմ դատել Քո ծառային»:

Տերն ասաց՝ «Չե՞ս դատել...», և մեջբերեց այն խոսքերը, որ ասել էի այդ ծառայողի մասին:

Նման իրավիճակներում մարդկային բնությունդ երբեմն կարող է գլուխ բարձրացնել: Հիշո՞ւմ եք, երբ Ադամը խնդրի մեջ հայտնվեց, նա ցանկացավ մեղքը գցել կնոջ վրա: Երբ այդ տարբերակը չգործեց, նա ասաց. «Այս կինը, որին *Դու* ես ինձ տվել»: Իրականում նա փորձում էր մեղադրել բոլորին, որպեսզի պատասխանատվություն չկրեր: Մարդկային բնությունը միշտ ցանկանում է ուրիշին մեղադրել:

Եվ ես ասացի. «Տե՛ր, ես պարզապես մեջբերեցի տարածքային հովվի խոսքերը»:

Տերն ասաց. «Երբ դու կրկնեցիր այդ խոսքերը, դա նույնն էր, ինչ եթե ինքդ ասեիր: Ո՞վ ես դու, որ ուրիշի ծառային դատես»:

Երբ Տերն ասաց դա, կարծես ոտքերիս տակից հողը փախչեր: Ես ասացի. «Կարծում էի, թե նա սխալ է վարվել: Արդյոք այդպես չէ՞»:

Տերն ինձ չասաց՝ ճիշտ է վարվել այդ մարդը, թե ոչ, բայց հետևյալ հարցը տվեց. «Ո՞ւմ ծառան է նա՝ Ի՞մ, թե՞ քո»:

«Եթե ինչ-որ մեկի ծառան է, ապա Քոնն է, Տե՛ր: Անշուշտ իմը չէ»,- պատասխանեցի ես:

Տերն ասաց. «Եթե Իմ ծառան է, ապա Ես կարող եմ նրան ոտքի կանգնեցնել»: Եվ գիտե՞ք ինչ. Նա այդպես էլ արեց: Տերը ոտքի կանգնեցրեց այդ մարդուն, ու նա դարձավ նահանգի այդ հատվածի ամենակարկառուն ծառայողը: Նա շատ հարգված էր, չնայած որ անցյալում մեկ անգամ թերացել էր:

Ո՞վ ենք մենք, որ քննադատենք Տիրոջ ծառաներին: Երբեմն մարդկանց մասին մեր ասած խոսքերը մեր հիվանդության պատճառն են դառնում:

Նման մեկ այլ փորձառություն ևս ունեցել եմ: Կինս և ես հավաքույթ էինք անցկացնում Տեխասի Ամբողջական Ավետարանի եկեղեցիներից մեկում: Այդ հավաքույթից հետո գնալու էինք մի համաժողովի, որը մեր հարանվանությունն էր անցկացնում:

Նահանգի այդ հատվածում ծառայողներից մեկը անախորժության մեջ էր հայտնվել և պետք է լքեր եկեղեցին: Մեկին հարցրի, թե

ինչ էր այդ մարդն արել, ու նա ինձ պատմեց եղելությունը:

Առանց մտածելու ասացի. «Կարծում եմ, խելք ունեցող ցանկացած մեկը պետք է հասկանար, որ նման բան չպետք է աներ»: Ու այլևս ոչինչ չմտածեցի այդ մասին: Ես ու կինս ավարտեցինք հավաքույթը և գնացինք մեր համաժողովին:

Ես, որպես կանոն, աստվածային առողջություն ունեմ. ինքնազգացողությունս միշտ լավ է: Սակայն համաժողովի ընթացքում ֆիզիկապես այնքան էլ լավ չէի զգում, իսկ գիշերը չկարողացա քնել. սովորաբար գլուխս բարձին դնելուց հետո անմիջապես քնում եմ:

Արեցի բոլոր ճիշտ դավանությունները և հավատացի, որ ստացել եմ բժշկությունս, բայց ինքնազգացողությունս չէր լավանում: Համաժողովի երրորդ գիշերն էր, իսկ ես դեռ չէի կարողանում քնել: Ասացի. «Տե՛ր, եթե վաղն էլ շարունակեմ այսպես զգալ, ապա չեմ կարողանա հավաքույթներին մասնակցել. մարմինս տեղի է տալիս»:

Վեր կացա անկողնուցս, ծնկեցի և սկսեցի աղոթել: Հիշեցի, թե ինչ էր ասում դոկտոր Լիլիան Բ. Յեոմանսը: Նա բժիշկ էր, որ ժամանակին կախվածություն էր ունեցել թմրադեղերից, ի վերջո հիվանդացել էր ու հասել մահվան շեմին: Սակայն փրկվել էր, Աստված նրան մահվան մահճից ոտքի էր կանգնեցրել: Մնացյալ ամբողջ կյանքն անցկացրել էր՝ աստվածային բժշկության մասին քարոզելով:

Դոկտոր Յեոմանսն ասել է. «Եթե աղոթում եմ ու արդյունքը չեմ տեսնում, ապա *ինքս* եմ սկսում փոխվել: Ինչո՞ւ. որովհետև ինչ-որ տեղ փոփոխություն պետք է տեղի ունենա, որպեսզի պատասխանը տեղ հասնի: Բայց փոփոխությունն Աստծո մեջ չի լինելու, քանի որ Նա երբեք չի փոխվում»:

Հիշեցի դոկտոր Յեոմանսի այս խոսքերն ու սկսեցի փոխվել: Անում էի աստվածաշնչյան բոլոր ճիշտ դավանությունները և ասում բոլոր ճիշտ խոսքերը, բայց դրական փոփոխություն չկար:

Ի վերջո ասացի Տիրոջը. «Տե՛ր, ի՞նչն այն չէ ինձ հետ. չի հաջողվում Քեզ հետ հավատքի կապ հաստատել»:

Տերը խոսեց ինձ հետ և ասաց. «Արդյոք այսպիսի բան չե՞ս ասել այսինչ եղբոր մասին»: Ու տվեց այդ հովվի անունը:

«Տե՛ր, ընդամենն ասել եմ՝ «Կարծում եմ, խելք ունեցող ցանկացած մեկը պետք է հասկանար, որ նման բան չպետք է աներ»»:

Եվ Տերն ինձ հարցրեց. «Գիտե՞ս արդյոք, թե ինչ ճնշման տակ էր նա»:

Ասացի. «Ո՛չ»:

Նա հարցրեց. «Գիտե՞ս արդյոք, թե ինչ իրավիճակում էր և ինչ հանգամանքներով էր շրջապատված»:

Ասացի. «Ո՛չ»:

«Եթե դու նրա փոխարեն լինեիր, գուցե ավելի մեծ սխալ աներիր»,- ասաց Տերը:

«Աստվա՜ծ իմ, ների՛ր ինձ: Աստվա՜ծ իմ, խնդրում եմ, ների՛ր ինձ. ապաշխարում եմ»,- արտասվախառն պատասխանեցի ես:

Ապաշխարելուց անմիջապես հետո ինքնազգացողությունս լավացավ: Բժշկությանս համար ժամանակ նույնիսկ չպահանջվեց, վայրկենապես առողջացա: Մտա անկողին և վերջին մի քանի օրերի ընթացքում առաջին անգամ խոր քուն մտա:

Ինչպես տեսնում եք, այստեղ սկզբունք կա: Մենք չենք կարող դատել ու քննադատել ուրիշներին, քանի որ չգիտենք նրանց շրջապատող հանգամանքների և ճնշումների մասին. չգիտենք՝ ինչն է տվյալ անձնավորությանը ստիպել այդպես վարվել. միայն Տերը գիտի:

Նման իրավիճակներն ինձ սովորեցրել են բերանս փակ պահել և Տիրոջ ծառաներին չքննադատել: Ուրիշին քննադատելն այնքա՜ն հեշտ է, բայց նույն իրավիճակում մենք գուցե ավելի վատ վարվեինք: Աստվածաշնչում գրված է. «Մի՛ դատիր, որ չդատվես» (Մատթ. 7.1): Ուստի մենք չպետք է դատենք, որ Տերն էլ մեզ չդատի:

Որոշ հավատացյալներ միշտ քննադատում են ուրիշներին և բամբասանքներ են տարածում: Օրինակ՝ մի օր մեկն ասաց ինձ. «Լսե՞լ եք, թե ինչ է պատահել. այդ քարոզիչը հարաբերություններ է ունեցել իր քարտուղարուհու հետ»:

«Իսկապե՞ս: Բայց Աստված կարծես օրհնում է նրան ու նրա եկեղեցին: Ե՞րբ է դա տեղի ունեցել»:

«Մոտ յոթ տարի առաջ»:

«Այդ դեպքում ինչո՞ւ եք հիմա դրա մասին խոսում: Պետք չէ դրա մասին հիշատակել, դա սուտ է, որը սատանան տարածում է նրա մասին. այդ մարդն ապաշխարել է և վերականգնել հարաբերություններն Աստծո հետ: Հետևաբար այդ մեղքը ջնջվել է Հիսուսի արյամբ:

Այն մոռացության ծովն է գցվել: Աստված մոռացել է դրա մասին, և եթե ցանկանում եք սիրով վարվել, ապա դուք ևս այսուայնտեղ այդ մասին խոսելու փոխարեն պետք է մոռանաք դա»:

Աստվածաշնչում կարդացե՞լ եք հետևյալ խոսքերը. *«Բայց ամենից առաջ սերը սերտ ունեցեք իրար հետ, որ սերը ծածկում է*

մեղքերի շատությունը» (Ա Պետր. 4.8), ինչպես նաև *«Ատելությունը կռիվներ կքրքրի, բայց սերը ամեն հանցանքները կծածկի»* (Առ. 10.12):

Սերը չի մերկացնում մեղքերը, այլ ծածկում է: Մոտ տասներկու տարի հովիվ եմ եղել. ինչ-որ բաներ եմ նկատել եկեղեցու որոշ անդամների մեջ, սակայն երբեք ոչ մեկին չեմ ասել, ոչ էլ կնոջս: Ինչո՞ւ: Քանի որ դա կարող էր վնասել նրանց:

Գուցե ասեք. «Բայց այդ անդամները սխալ են վարվել»: Մեծ մասամբ նրանք ուշքի են եկել և ասել. «Տե՛ր Աստված, ինչպե՞ս էի այդտեղ հայտնվել: Տե՛ր, խնդրում եմ, ների՛ր ինձ»: Եվ դուրս են եկել այդտեղից:

Իսկ եթե ես բարձրաձայնեի դրա մասին, ապա բոլորը կիմանային և ամեն անգամ տվյալ անձնավորությանը տեսնելիս կհիշեին նրա սխալը: Այդպիսով սատանան տվյալ մարդուն ևս կհիշեցներ իր սխալները: Ո՛չ. սերը *ծածկում է* մեղքերի շատությունը:

Շատ անգամներ *մարդիկ* դժվարանում են ներել և մոռանալ: Օրինակ՝ մի քաղաքում ավետարանչական արշավ էի անցկացնում, երբ մի ծառայողի մասին լուրեր տարածվեցին: Մի մարդ մոտեցավ ինձ և հարցրեց, թե ինչ եմ մտածում դրա մասին:

Նա ասաց. «Ինչ ես մտածում այսինչի հետ պատահածի մասին»:

«Չեմ ցանկանում մեկնաբանել»,- պատասխանեցի ես:

«Իսկապե՞ս»,- ասաց նա:

Ես ավելացրի. «Մեկ ուրիշի մոմը հանգցնելը քոնն ավելի վառ չի դարձնում»:

Ես չեմ պատրաստվում որևէ մեկի մոմը հանգցնելու: Կփորձեմ վառել այն, եթե կարողանամ: Թանկագի՛ն ընկերներ, եթե ցանկանում ենք քայլել Աստծո հետ, ապա պետք է վարվենք սիրով, քանի որ Աստված սեր *է*:

Հիշում եմ, մի անգամ ես և կինս հավաքույթ էինք անցկացնում Տեխաս նահանգի Մաքքինի քաղաքի մեր եկեղեցում: Մի տարեց պարոն էր եկել հավաքույթին, եղբայր Սմիթը. մենք նրանք ճանաչում էինք: Երբ երիտասարդ մկրտական քարոզիչ էի, նրա մոտ էի աշխատում:

Ծառայությունից հետո եղբայր Սմիթը մոտեցավ ինձ ու ասաց. «Եղբա՛յր Հեգին, միշտ հաճելի է Ձեզ լսելը, որովհետև հավատք ու բժշկություն եք քարոզում,- հետո ավելացրեց,- գիտե՞ք, քառասուն տարի է՝ չեմ հիվանդացել, իսկ հաջորդ ամիս կդառնամ իննսուն

տարեկան: Քառասուն տարի առաջ ինչ-որ մեկը եկել էր մեր եկեղեցի և քարոզում էր աստվածային բժշկության մասին:

Այդ ծառայողը հարանվանության անդամներին առաջ հրավիրեց՝ Հիսուսին ընդունելու որպես մեր Բժշկի, այնպես, ինչպես ընդունում ենք Նրան որպես մեր Փրկչի: Ես քայլեցի դեպի խորանը և ընդունեցի Հիսուսին թե՛ որպես իմ Փրկչի, թե՛ որպես իմ Բժշկի: Եվ հիմա՝ իննսուն տարեկանում, զգում եմ ինձ ինչպես քսանմեկ տարեկան երիտասարդ»:

Եղբայր Սմիթը շարունակեց. «Ես ամեն օր աշխատում եմ»: Նա բավականին հարուստ մարդ էր ու ամեն օր աշխատելու կարիք չուներ, բայց շարունակում էր աշխատել:

Հետո ասաց. «Հիսուսին որպես իմ Փրկչի ընդունելուց հետո Աստվածաշնչում կարդացի հետևյալ խոսքերը՝ *«...ձեր գլխի ամեն մազերն էլ համարված են»* (Մատթ. 10.30), ու ասացի. «Տեր, եթե Դու գիտես, թե քանի մազ ունեմ, ապա նաև կարող ես պահել այդ մազերը»:

Այնուհետև ավելացրեց. «Եղբա՛յր Հեգին, ես Աստծուն հավատացել եմ նաև իմ ատամների համար»: Եվ նա բացեց իր բերանն ու ցույց տվեց ատամները. ոչ մի ատամնալիցք չուներ. իննսուն տարեկան էր, և բոլոր ատամները տեղում էին:

«Թույլ տվեք մի բան էլ ասել, աղոթել եմ նաև, որ Աստված օգնի ինձ՝ զսպելու սա,- շարունակեց նա և դուրս հանեց լեզուն,- հասկացել եմ, որ եթե ցանկանում եմ աստվածային առողջություն ունենալ, ապա պետք է զսպեմ *սա*»:

Երբ եղբայր Սմիթն ասաց դա, մի միջադեպ հիշեցի, որը պատահել էր, երբ աշխատում էի նրա մոտ մինչ Երկրորդ համաշխարհային պատերազմը: Քաղաքում մի մարդ կար, որ Առաջին համաշխարհային պատերազմի վետերան էր: Պատերազմի ընթացքում նա գազով թունավորվել էր, ինչի հետևանքով երբեմն խելագարության նոպաներ էր ունենում և մարդկանց դանակով վնասում էր:

Ինը հազար բնակչություն ունեցող քաղաքում բոլորը գիտեին նրա վիճակի մասին և կարեկցում էին նրան, քանի որ վետերան էր և վնասվել էր պատերազմի ժամանակ՝ իր երկրին ծառայելով:

Երբ այդ մարդը նման նոպաներ էր ունենում, մեկ կամ երկու օր անցկացնում էր բանտում, հետո նրան բաց էին թողնում, և նա որոշ ժամանակ իրեն լավ էր զգում: Նրա դեմ մեղադրանքներ չէին ներկայացնում նույնիսկ այն մարդիկ, որոնց վրա նա հարձակվում էր, քանի որ գիտեին, որ պատերազմի միջով էր անցել:

Սակայն մի շաբաթ երեկո ոստիկանապետին կանչեցին, որ բռնի այդ մարդուն, քանի որ մյուս ոստիկաններից ոչ մեկը չէր կարողանում գործ ունենալ նրա հետ: Երբ այդ մարդը հարբում էր, ոստիկանապետը միշտ կարողանում էր զրուցելով դուրս բերել նրան ագրեսիայից ու տանել բանտ՝ այնտեղ քնելու և այդ վիճակից դուրս գալու:

Բայց այդ երեկո, երբ կանչեցին ոստիկանապետին, այդ մարդը հրաժարվեց դանակը վայր դնելուց: Խեղճ մարդն այնքան էր տառապել, որ ցնորվել էր. իսկապես ցանկանում էր մահանալ:

Նա ասաց ոստիկանապետին. «Կամ կոկորդդ կկտրեմ, կամ կթողնես՝ ինքս ինձ սպանեմ, երկուսից մեկը»: Դա ասելով՝ նա նետվեց դեպի ոստիկանապետը, որը, այլընտրանք չունենալով, կրակեց: Գիշերը՝ ժամը չորսին, այդ մարդը հիվանդանոցում մահացավ:

Նրա մահվան մասին լուրերը տարածվեցին ամբողջ քաղաքում. բոլորը դրա մասին էին խոսում: Գրեթե ողջ քաղաքը հանգստացած շունչ քաշեց՝ իմանալով, որ նա մահացել է: Մարդիկ շատ բաներ էին խոսում այդ մասին, բայց ես նկատեցի, որ եղբայր Սմիթը ոչինչ չէր ասում:

Ոմանք ասում էին. «Այդինչին պետք էր էլեկտրական աթոռին նստեցնել»:

Այնպիսի տպավորություն էր, որ բոլորը նրա մասին ասելու ինչ-որ վատ բան ունեին: Երբ մարդիկ դադարեցին այդ մարդու մասին խոսելուց, եղբայր Սմիթն ասաց. «Մի բան եմ միայն նկատել. նա գեղեցիկ աչքեր ուներ»: Երբ եղբայր Սմիթն ասաց դա, բոլորը լռեցին ու հեռացան: Եղբայր Սմիթը երբեք ոչ մի վատ բան ոչ մեկի մասին չէր ասում:

Եվ տարիներ անց այդ օրը, երբ նա խոսում էր ինձ հետ, հիշեցի այդ դեպքը: Ահա նա իննսուն տարեկան էր և առողջ, քանի որ սովորել էր լեզուն չարից պահելու և սիրով վարվելու գաղտնիքը:

Ինչպես տեսնում եք, Աստված պարզապես չի նայում Երկնքից ու ասում. «Եկեք, օրինակ, Սմիթ անունով այդ մարդուն, որ ապրում է Տեխասի Քոլին շրջանում, երկար ու լավ կյանք տանք»:

Ո՛չ, դրանում եղբայր Սմիթն իր դերակատարումն ուներ: Նա Աստվածաշնչում կարդացել էր, որ կյանքով լի, լավ օրեր ապրելու համար հարկավոր է լեզուն պահել չարից: Դա անելու համար նա պետք է սիրով վարվեր՝ զսպելով իր լեզուն և ներելով ուրիշներին:

Փառք Աստծուն Նրա Խոսքի համար: Եթե ցանկանում եք երկար ու լավ կյանքով ապրել, ապա ձեր լեզուն պետք է պահեք չարից: Հեռացեք չարից. ոչ միայն չարը խոսելուց, այլև ձեր կյանքի բոլոր

բնագավառներում հեռացեք չարից և բարին գործեք: Ձեր շուրջը գտնվողների հետ ոչ միայն *ձգտեք* խաղաղության, այլև *գնացեք դրա հետևից* (Սաղմ. 34.12-14):

Ինչ կապ ունի սա սիրով վարվելու հետ: Իհարկե կապ ունի: Աստված գիտեր, որ մենք ստիպված ենք լինելու ներել միմյանց: Ահա թե ինչու է Նա ասել, որ բոլոր մարդկանց հետ հարաբերություններում հետևենք խաղաղության:

Ուշադրությունն դարձրեք նաև, որ եփեսացիներին ուղղված այս ուղերձը հասցեագրված էր եկեղեցուն:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.32
4 Եվ ԻՐԱՐ ՀԵՏ ՔԱ՛ՂՑՐ ԵՂԵՔ, ԳԹԱԾ՝ ԻՐԱՐ ՆԵՐԵԼՈՎ, ինչպես Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5.1,2
1 Արդ նմանո՛ղ եղեք Աստծուն ինչպես սիրելի որդիներ:
2 Եվ ՍԻՐՈ՛Վ ԳՆԱՑԵՔ, ԻՆՉՊԵՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԷԼ ՄԵԶ ՍԻՐԵՑ և Իր անձը մեզ համար մատնեց, պատարագ և զոհ՝ Աստծո անուշ հոտ լինելու:

Խորհեք սրա շուրջ: Եթե ներելու ոչինչ չլիներ, Աստված չէր ասի մեզ, որ ներեինք իրար: Հաճախ ներելու շատ բան է լինում, ճի՞շտ է: Այդ պատճառով Աստված ասել է, որ միմյանց հանդեպ քաղցր, գթած և ներողամիտ լինենք: Նա գիտեր, որ մենք աստվածային սերն ու ներումը գործի դնելու շատ առիթներ պիտի ունենայինք:

Օրինակ՝ կա՞ն այնպիսի մարդիկ, որոնք նյարդայնացնում են ձեզ: Կա՞ն մարդիկ, որ պարզապես բարկացնում են ձեզ: Եթե այո, ապա չպետք է թույլ տաք, որ դա անհանգստացնի ձեզ. պարզապես պետք է ներեք նրանց, անկախ ամեն ինչից՝ սիրեք նրանց և լավը խոսեք նրանց մասին: Այլապես դա կխոչընդոտի ձեր հավատքը և կարող է նույնիսկ ձեր հիվանդանալու պատճառ դառնալ:

Աստվածային սերն ի հակադրություն մարդկային սիրուն

Աստծո սերը ոչ միայն ներող է, այլև անշահախնդիր: Աստծո սերը նախ և առաջ ուրիշների մասին է մտածում, մինչդեռ մարդկային բնությանը հատուկ են եսասիրությունը և եսակենտրոնությունը: Մարդկային սերը առաջնահերթությունն իրեն է տալիս:

Երբեմն ինձ թվում է՝ մարդիկ շփոթում են, թե ինչ է սերը: Որոշ քրիստոնյաներ սիրո մասին խոսելիս մտածում են մարդկային սիրո մասին, փորձում են աստվածային սերը համեմատել բնական մարդկային սիրո հետ, սակայն դա անել հնարավոր չէ: Մենք խոսում ենք ոչ թե բնական մարդկային, այլ աստվածային սիրո մասին:

Աստվածաշնչում գրված է. «Աստված սեր է»: Աստված վեր է մարդկայինից. Նա սեր է: Աստծուն որևէ բան այնպես չի բնութագրում, ինչպես այն, որ Նա սեր է:

Մեր օրերում շատ ենք լսում բնական մարդկային սիրո մասին, բայց ամբողջ աշխարհում չկա այնպիսի սեր, ինչպիսին Աստծո սերն է: Բնական մարդկային սերը եսասեր է և եսակենտրոն:

Հիշում եմ՝ մի եկեղեցում հավաքույթի ժամանակ մի կին մոտեցավ ինձ ու լացելով ասաց. «Աստված գիտի, որ ես սիրում եմ իմ երեխաներին: Ես նրանց ճիշտ եմ դաստիարակել, բայց նրանցից ոչ մեկը՝ բացի աղջկանիցս, ինձ հետ չի գալիս եկեղեցի»: Նրա դուստրը եկեղեցում դաշնամուր էր նվագում:

Նա ասաց. «Եկեղեցում չկա որևէ մեկը, որն իր երեխաներին ավելի շատ սիրի, քան ես՝ իմ երեխաներին»:

Բայց երբ նայում էի դաշնամուր նվագող նրա դստերը, տեսնում էի, որ նրա հետ մի բան այն չէ: Նա մոտ քսանչորս տարեկան էր, երաժշտական կրթություն ուներ, նույնիսկ համալսարանն էր ավարտել, սակայն երբ նայում էիր նրան, երեսը թաքցնում էր:

Ես հարցրի նրա մայրիկին. «Երբ ձեր դուստրը փոքր էր, Դուք նրան թույլ տվե՞լ եք ընկերներ ունենալ: Նա խելացի աղջիկ է երևում, համալսարանում բարձր գնահատականներ է ստացել, երաժշտական դիպլոմով է ավարտել»: Ես մի փոքր ծանոթ էի ընտանիքին՝ ըստ հովվի պատմածի:

Հարցրի. «Երբևէ թույլ տվե՞լ եք, որ նա ընկերներ ունենա դպրոցում կամ տղայի հետ ընկերություն անի»:

«Ո՛չ,- պատասխանեց մայրը,- ես նրան տանն եմ պահել. ուզում էի պաշտպանել նրան, քանի որ շատ եմ սիրում»:

Ասացի. «Ստում եք. Դուք նրան տանը չեք պահել շատ սիրելու պատճառով, այլ որովհետև ձեր սերը եսակենտրոն է»: Ես գիտեմ, որ այդպես խոսելով՝ հազիվ թե ընկերանաս մարդու հետ, բայց երբեմն պետք է ուշքի բերել մարդկանց, որ տեսնեն ճշմարտությունը:

«Ես նրան չափից շատ եմ սիրում, որ բաց թողնեմ,- ասաց մայրը:- Նա իր ամբողջ կյանքում ոչ մի երեկո տնից դուրս չի անցկացրել»:

Ես ասացի. «Ո՛չ, Դուք նրան չեք սիրում: Ձեր սերը եսակենտրոն մարդկային սեր է: Եթե իսկապես սիրեիք նրան աստվածային սիրով, ապա կցանկանայիք, որ նա ընկերներ ունենար, կցանկանայիք, որ շփվեր իր հասակակիցների հետ, մեծանար և նորմալ կյանք ունենար»:

Այնուհետև այդ կինն ասաց. «Տղաս տասնյոթ տարեկան է և փախել է տնից: Չգիտեմ, թե ուր է: Աղոթե՛ք, որ վերադառնա»:

Ես ասացի. «Ո՛չ. ես կաղոթեմ, որ նա չվերադառնա: Փա՛ռք Աստծուն, որ նա բավականաչափ խելացի է գտնվել ու դուրս է եկել այդ խառնաշփոթից: Իսկ այս խեղճ աղջիկը, որ նստած է այնտեղ՝ դաշնամուրի մոտ, այդքան խելամիտ չի գտնվել, քանի որ Դուք խեղաթյուրել եք նրա ինքնությունը»:

Ինչպես տեսնում եք, այս կինը վերստին ծնված էր և նույնիսկ լցված էր Սուրբ Հոգով, հաճախում էր Ամբողջական Ավետարանի եկեղեցի, սակայն իր երեխաներին բոլորովին չէր սիրում աստվածային սիրով: Նա սիրում էր նրանց բնական մարդկային սիրով, իսկ այդ սերը կարող է եսակենտրոն լինել:

Հավատացյալները չեն կարող ասել, թե իրենց համար անհնար է Աստծո սիրով սիրելը, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ Աստծո սերը վերստին ծնունդով արդեն սփռվել է մեր սրտերում: Աստծո ընտանիքում բոլորն այն ունեն, հակառակ դեպքում վերստին ծնված չեն:

Գուցե նրանք չեն *կիրառում* Աստծո սերը, բայց ունեն այն: Պարզապես պետք է սովորեն թույլ տալ, որ աստվածային սերը ղեկավարի իրենց: Եթե սովորեն վարվել սիրով, ապա կվարվեն Հոգով, քանի որ սերը վերստեղծված մարդկային հոգու պտուղ է:

Եթե մենք սովորենք վարվել սիրով և թույլ տանք, որ աստվածային սերը ղեկավարի մեզ, ապա այն փոփոխություն կբերի մեր կյանքերում. այն կբժշկի մեր ընտանիքների դժբախտությունները:

Մի բան կասեմ. սա կարող է ցնցել ձեզ, սակայն ճշմարտություն է. աստվածային սերը երբեք ապահարզանի գործով դատարանում չի եղել ու չի լինի: Բնական, մարդկային սերը կգնա ապահարզանի,

իսկ աստվածային սերը՝ ոչ. այն երբեք չի ձախողվում:

Ինչպես տեսնում եք, ընկերներ, աստվածային սերն իրենը չի որոնում: Աստվածային սիրուն հետաքրքրում է, թե ինքն ինչ կարող է *տալ*, ոչ թե ինչ կարող է *ստանալ*: Այն եսասեր չէ կամ իրենը չի որոնում: Աստվածային սերը չի հարցնում. «Ես ի՞նչ կարող եմ ստանալ»: Փոխարենը հարցնում է. «Ի՞նչ կարող եմ տալ»:

Մարդկային սիրուն հետաքրքրում է իր *ես*ը՝ «*Ես* ի՞նչ օգուտ կունենամ այս իրավիճակից»: Մարդկային, եսակենտրոն սերը ասում է այնպիսի բաներ, ինչպես, օրինակ՝ «Ես դա չեմ պատրաստվում հանդուրժելու» կամ «Պետք է *իմ ուզածով* լինի: Դա իմ վերջնական կարծիքն է»: Եսակենտրոն քրիստոնյաներին նկատելը շատ հեշտ է. «Ես...», «Ես...», «Ես...»: Նրանք խոսում են միայն «ես»-ի մասին:

Չափազանց շատ քրիստոնյաներ են եսասեր: Նրանք թույլ են տալիս, որ իրենց ղեկավարի բնական մարդկային սերը՝ Աստծո սիրո փոխարեն, որը սփռված է իրենց հոգիներում՝ իրենց սրտերում:

Բնական մարդկային սերը բաժանում կբերի ընտանիքներում, եկեղեցիներում, քանի որ եսակենտրոն է և իր ուզածն է անում:

Երբևէ կանգ առել և մտածե՞լ եք սրա մասին: Եսասիրությունը կործանում է աշխարհը: Այն կործանում է ամուսնությունները, կործանում է եկեղեցին: Սակայն աստվածային սերը երբեք չի ձախողվում, քանի որ եսակենտրոն չէ. այն միշտ դիմացինին է տալիս առաջնահերթությունը:

Աստծո սերը տալիս է, այն առաջին հերթին մյուսների մասին է մտածում, ինչպես Աստված արեց. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ *տվեց*...» (Հովհ. 3.16): Երբ աշխարհի մեղավորները սիրո արժանի չէին, Աստված տվեց Իր Միածին Որդուն, «*...որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա*» (Հովհ. 3.16):

Սակայն մեր մարդկային զգացմունքները վիրավորված են, և մենք ցանկանում ենք պատասխան հարված տալ, վրեժ լուծել՝ ներելու փոխարեն: Մենք ցանկանում ենք դրսևորել մեր զգացմունքները, մեր մարդկային բնությունը ցանկանում է գործի անցնել:

Ահա թե ինչ է նշանակում «խաչ հանել մեր մարմինը» (Գաղ. 5.24): Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց ես հրաժարվում եմ որևէ բանից վիրավորված զգացմունքներ ունենալուց:

Ոմանք հեկեկալով, հեծկլտալով ասում են. «Բայց դու չես հասկանում, թե որքան են ինձ ցավեցրել»: Այդպես դրսևորվում է եսասիրությունը և ոչ թե աստվածային սերը, քանի որ նման պարագայում մտածում եք միայն ձեր մասին: Երբ խոսում եք նման կերպ, թույլ եք

տալիս, որ ձեր մարմինը և զգացմունքները ղեկավարեն ձեզ:

Երբ ձեր զգացմունքները սկսում են ղեկավարել ձեզ, ապա պետք է թողնեք մարդկային բնությունը և մտնեք Հոգու մեջ, որպեսզի կարողանաք վարվել աստվածային սիրով: Աստվածաշունչն ասում է. *«...բայց դուք մարմնով չեք, այլ ՀՈԳՈՎ, եթե Աստծո Հոգին ձեզանում բնակված է...»* (Հռոմ. 8.9):

Եկեք գնանք Հոգով. վե՛ր բարձրանանք և վարվենք աստվածային սիրով: Այդպես վարվելը շատ ավելի լավ է, և թույլ տվեք ասել, որ շահն էլ մեծ է:

Եթե ցանկանում եք սիրել կյանքն ու շատ, լավ օրեր տեսնել, ապա ակա՛նջ դրեք ինձ: Փառք Աստծուն, Աստծո սերը գործում է:

Գուցե ասեք. «Սակայն անցյալում ես այնքա՛ն եմ ձախողվել»: Եթե անցյալում ձախողվել եք, ապա Աստծուց ներո՛ւմ խնդրեք և այդ ամենը հետևո՛ւմ թողեք: Նորի՛ց սկսեք: Եվս մի բան կասեմ սրա վերաբերյալ, Աստված թույլ կտա, որ նորից սկսեք, Իր մեծ ողորմության ու սիրո շնորհիվ, Նա ներողամիտ է:

Արդյո՞ք ուրախ չեք, որ Աստված այդպիսին է: Աստված ասաց. *«Ես Ես եմ, որ ջնջում եմ քո հանցանքներն Իմ պատճառով և քո մեղքերը չեմ հիշում»* (Ես. 43.25):

Թերացման դեպքում, եթե ապաշխարեք, Աստված կների ձեզ, կջնջի դա ու նույնիսկ չի հիշի, որ ինչ-որ սխալ բան եք արել: Այնպես որ սկսե՛ք քայլել Նրա ներման և ողորմության մեջ և առա՛ջ շարժվեք:

Աստվածային սերը կարող է խիստ լինել

Երբ խոսում ենք սիրուց, նկատի ունենք աստվածային սերը: Շատ հաճախ մարդիկ փորձում են համեմատել աստվածային սերը բնական մարդկային սիրո հետ, սակայն դրանք բացարձակապես տարբեր են:

Բնական մարդկային սերը հանկարծակի կարող է վերածվել ատելության: Կամ այն կարող է լինել փափուկ և քաղցր, երբ պետք է լինի վճռական ու երբեմն նույնիսկ խիստ: Մինչդեռ աստվածային սերը երբեմն կարող է շատ խիստ լինել: Կա աստվածային սիրո նաև մյուս կողմը:

Օրինակ՝ արդյոք Հիսուսը սիրո՞ Մարդ էր, երբ քայլում էր երկրի վրա: Իհա՛րկե: Նա նաև հավատքի, զորության և Աստծո մարդ էր: Նա բոլոր առումներով փորձվեց, ինչպես մենք, բայց մեղք չգործեց: Նա միակ Մարդն էր, որ մեղք չգործեց:

Սակայն հիշե՛ք նաև այն դրվագը, երբ նա դրամափոխներին մտրակով դուրս հանեց տաճարից: Արդյոք նա սիրո՞վ էր գործում: Այո՛: Կա սիրո նաև խիստ կողմը: Աստված սեր է. Նա մեղմ է և գթառատ, սակայն Աստծո սերն ունի նաև խիստ և դատող կողմ:

Այն նման է երեխաների նկատմամբ ծնողների սիրուն: Երբեմն ծնողները պետք է նախատեն իրենց երեխաներին և շատ խիստ լինեն նրանց նկատմամբ: Արդյո՞ք ծնողները պատժում են երեխաներին, որովհետև ատում են նրանց: Ո՛չ, պատժում են, որովհետև սիրում են:

Մարդիկ տարիներ շարունակ մեջբերել են հետևյալ խոսքերը. «Խնայի՛ր գավազանը և կկործանես երեխային»: Գիտեի՞ք, որ դա Աստվածաշնչից չէ:

Իրականում Աստվածաշունչն ավելի խիստ է արտահայտվում. *«Գավազանը խնայողը ատում է իր որդուն, բայց նրան սիրողը կանուխ կխրատի նրան»* (Առ. 13.24): Այլ կերպ ասած, եթե սիրում ես երեխաներիդ, ապա կպատժես նրանց:

Երբեմն սերը՝ աստվածային սերը, նաև խիստ պետք է լինի: Թույլ տվեք բացատրել, թե ինչ նկատի ունեմ: Ես և կինս 1946 թվականին գնացել էինք մի եկեղեցում հովվություն անելու: Երբ նոր էինք գնացել, այդ եկեղեցում փրկված երիտասարդներ չկային, դեռահասներն էլ իրենց վատ էին պահում:

Այդ ժամանակ միայն մի փոքր սրահ ունեինք: Չկային մանկական կամ այլ սենյակներ, ոչ էլ նույնիսկ աղոթքի սենյակ, իսկ սրահը երեք հարյուր մարդու համար էր նախատեսված:

Դեռահասները նստում էին վերջին շարքում և բարձր խոսում ու ծիծաղում էին եկեղեցական ծառայությունների ընթացքում: Այնքան բարձր էին խոսում, որ քարոզիս ընթացքում լսում էի նրանց ձայները:

Երբեմն երգիչներ էին այցելում եկեղեցի և հատուկ երգեր էին կատարում, կիթառ էին նվագում: Իսկ վերջին շարքերում նստած պատանիներն իրենց անկարգ էին պահում, ձևացնում էին, թե կիթառ են նվագում և ավելի բարձր էին երգում, քան հյուրընկալված երգիչները:

Ես հասկանում էի, որ չես կարող նոր տեղ գնալ և անմիջապես փոփոխություններ անել: Ուստի մի քանի ամիս համակերպվեցի դրա հետ՝ փորձելով աշխատել մարդկանց հետ, ասել այնպիսի բաներ, ինչպես, օրինակ՝ «Եկեղեցական ծառայությունների ժամանակ հարկավոր է պահպանել կարգուկանոնը»:

Մի կիրակի երեկո քարոզում էի, սրահը լիքն էր մարդկանցով:

Պատուհանները բաց էին, և քարոզը դրսում կանգնած լսողներն ավելի շատ էին, քան սրահում գտնվողները:

Երկու երիտասարդ տղա, որ նոր էին եկեղեցում, հետևի շարքում նստած այնքան բարձր էին խոսում, որ առջևի շարքերից շրջվում ու նրանց էին նայում:

Ի վերջո դադարեցրի քարոզը, փակեցի Աստվածաշունչը և ասացի. «Բավակա՛ն է»: Չէի ցանկանում ամաչեցնել այդ երիտասարդներին, քանի որ նրանք նոր էին եկեղեցում, ուստի հարցրի. «Ինչ-որ մեկը խոսո՞ւմ է այդտեղ»:

Հարանվանությունից ինչ-որ մեկը պատասխանեց. «Այո՛»:

Ես ասացի. «Ավելի քան երեք ամիս հանգիստ զգուշացրել եմ ձեզ ուղերձի ընթացքում չխոսելու և կարգուկանոն պահպանելու մասին: Սակայն այս պահից ի վեր հաջորդը, ով բարձր կխոսի եկեղեցում կամ որևէ կերպ կխանգարի ծառայությունը, կձերբակալվի՝ հանրային երկրպագությունը խանգարելու համար»:

Ինչ-որ մեկը պատասխանեց. «Արդեն լսել ենք դրա մասին»: «Իսկ հիմա կտեսնեք, թե ինչպես է դա լինում»,- ասացի ես: Ծառայությունը դադարեցրի. իմաստ չկար քարոզելու, քանի որ ծառայությունն արդեն ընդհատված էր:

Ավելի ուշ իմացա, որ նախկին հովիվներից ոմանք ստիպված են եղել ծառայությունները խանգարելու համար ձերբակալել տալ ոմանց: Բայց չեն ցանկացել, որ իրենց դեմ մեղադրանքներ հնչեն, ուստի գործին ընթացք չտալով՝ ձերբակալվածներին բաց են թողել:

Ես սկսեցի զրուցել նման անկարգություններ անող երեխաների ծնողների հետ. նախ գնացի եղբայր Հ.-ի մոտ, որ երկու դեռահաս դուստր ուներ:

Ասացի նրան. «Եղբա՛յր Հ., ես պատրաստվում եմ Ձեր երկու դուստրերին ձերբակալել տալու՝ հանրային երկրպագությունը խանգարելու համար: Դուք ստիպված կլինեք տուգանք վճարել, կամ նրանք ստիպված կլինեն մարզային ագարակում աշխատել»:

Այն ժամանակ հնարավոր էր տուգանքը հատուցել՝ մարզային ագարակում աշխատելով: Կարծում էի՝ նա կհակառակվի, սակայն ասաց. «Եղբա՛յր Հեգին, դուք ճիշտ եք: Այդպես էլ արե՛ք, թող ձերբակալեն նրանց: Ես չեմ կարող վճարել տուգանքը, ուստի նրանք ստիպված կլինեն աշխատել մարզային ագարակում»:

Հետո ավելացրեց. «Գիտե՞ք, ես բազմիցս ասել եմ նրանց. «Եթե չեք կարող եկեղեցում ձեզ պատշաճ պահել, ապա մի՛ գնացեք այն-

տեղ»: Գուցե մտածեք, թե ինչպես է, որ մեկ մետր իննսուն սանտիմետր հասակ ունեցող մարդը ի վիճակի չէ իր երկու դեռահաս աղջիկների դաստիարակությամբ զբաղվելու: Սակայն հիմնական պատճառը կինս է. նա ինձ հետ չի գործակցում»:

Երբ զույգը միասին չի գործում՝ սիրով լի վերաբերմունքով երեխաներին դաստիարակելու հարցում, դա մեծ խնդրի և խառնաշփոթի պատճառ կարող է դառնալ:

Մեկ այլ թանկագին քույրիկի մոտ գնացի (Աստված օրհնի նրան) և ասացի. «Այնպես արեք, որ Ձեր երեխաները Ձեզ հետ միասին նստեն առջևի շարքում, որ կարողանաք հետևել նրանց և ստիպել, որ իրենց կարգին պահեն»:

Նա ասաց. «Եղբայր Հեգին, եթե երեխաներս կողքիս նստեն, ես չեմ կարողանա ծառայության վրա կենտրոնանալ, բացականչել ու պարել»:

«Դուք ավելի մեծ օրհնություն կլինեք եկեղեցու համար, եթե պարելու և բացականչելու փոխարեն հետևեք Ձեր երեխաներին»,- եղավ իմ պատասխանը:

Այնուհետև մեկ այլ ծնողի՝ պարոն Հ.-ի մոտ գնացի. նա քրիստոնյա չէր, բայց նրա կինը եկեղեցու անդամ էր: Նա իրենց տղաներին բերում էր եկեղեցի և նրանց հետ միասին կանգնում դրսում. ներս չէին մտնում:

Իսկ դուստրերը գալիս էին սրահ, միշտ խոսում ու անկարգություն էին անում: Քանի որ նրանց հայրը քրիստոնյա չէր, նրա մոտ գնալիս որպես վկա ինձ հետ եկել էին եկեղեցու ծառայողներից երկուսը:

Ասացի նրան. «Պարո՛ն Հ., եթե Ձեր դուստրերը շարունակեն իրենց անկարգ պահել, ապա ստիպված կլինեմ նրանց ձերբակալել տալ: Սակայն հանուն արդարության ցանկանում էի նախ և առաջ Ձեզ հետ խոսել դրա մասին: Եթե շարունակեն խանգարել ծառայությունները, ապա Դուք ստիպված կլինեք նրանց համար տուգանք վճարել, կամ նրանք ստիպված կլինեն մարզային ագարակում աշխատել»:

Նա վախեցրեց ինձ՝ ասելով. «Դուք և այս ծառայողները մի՛շտ չեք լինելու այս եկեղեցու տարածքում»:

Երբ նա ասաց դա, ես քայլ արեցի դեպի առաջ և, շատ մոտ կանգնելով նրան, պատասխանեցի. «Մի բան իմացեք. ես *ոչ մի բանից* ամաչելու պատճառ չունեմ և չեմ վախենում *ոչ մեկից»:*

Նա հետ քաշվեց ու ասաց. «Միայն իմ աղջիկները չէ, որ անկարգ են պահում իրենց»:

«Ո՛չ, միայն նրանք չեն,- ասացի ես,- բայց նրանք ամենաանկարգն են»:

Եվ գիտեք ինչ, երբ նա տեսավ, որ ես հետ չեմ քաշվելու, փոխվեց և սկսեց սիրալիր խոսել ինձ հետ: Երբեմն սերը պետք է լինի խիստ ու անվախ և չնահանջի, եթե ճիշտ է:

Գիտեք՝ ինչ տեղի ունեցավ այդ եկեղեցում. վեց շաբաթվա ընթացքում պատանիներից քսանմեկը փրկվեցին և լցվեցին Սուրբ Հոգով: Դրանք այն պատանիներն էին, որոնք միշտ խոսում էին եկեղեցում:

Ինչպես տեսնում եք, աստվածային սիրով վարվել չի նշանակում թույլ տալ, որ բոլորը քայլեն ձեր վրայով: Դա չի նշանակում, որ պետք է լինեք ուղեգորգ և թույլ տաք, որ մարդիկ անցնեն ձեր վրայով: Փոխարենը նշանակում է, որ պետք է անեք այն, ինչը ճիշտ է, իսկ երբեմն նաև չնահանջեք:

Իմ ծառայության սկզբում, որպես երիտասարդ մկրտական քարոզիչ, քարոզում էի մի արվարձանում: Այդ ժամանակ դեռ մկրտված չէի Սուրբ Հոգով, ավելի ուշ լցվեցի Հոգով: Տասնութ տարեկան էի, ծառայությանս ընթացքում հյուրընկալվել էի մի թանկագին ընտանիքի տանը. նրանք երկու որդի ունեին. մեկը տասնյոթ տարեկան էր, մյուսը՝ տասնվեց:

Երկուսն էլ ինձնից ավելի հաղթանդամ էին: Խոշոր, ամրակազմ տղաներ էին, նրանք մեծացել էին ագարակում: Ես կշռում էի ընդամենը 138 ֆունտ, քանի որ նոր էի ապաքինվել մի քանի տարի տևած ծանր հիվանդությունից:

Ավագ որդին՝ Ռեյը, կատաղության բռնկումներ էր ունենում, ջարդում էր կահույքը, ապտակում մորը, վերցնում էր հրացանն ու, այն թափահարելով, տան մեջ շրջում:

Երբ քարոզում էի նրանց քաղաքում, հյուրընկալվել էի նրանց տանը: Մի օր ավագ որդին, կատաղության բռնկման ժամանակ թափահարելով հրացանը, մտավ իմ սենյակ և հայհոյեց ինձ:

Ես վեր կացա և կանգնեցի ուղիղ նրա առաջ. «Ռեյ, մի բոպե: Գիտե՞ս, թե ում հետ ես խոսում: Ես այս քաղաքի քարոզիչն եմ: Ես այստեղ չեմ ապրում, սա իմ տունը չէ, բայց սա իմ սենյակն է. այնպես որ հանգստացի՛ր և դուրս արի այստեղից»:

Այն պահից, երբ ես ոտքի կանգնեցի, նա միանգամից հանդարտվեց ու այլևս երբեք չեկավ իմ ննջասենյակ: Որոշ ժամանակ անց՝ իմ ամուսնությունից հետո, կնոջս հետ վերադարձանք այդ քաղաք, այնտեղ հավաքույթ անցկացրինք և մնացինք այդ նույն մարդկանց տանը:

Երբ այնտեղ էինք, Ռեյի մոտ հերթական կատաղության բռնկումը եղավ, բայց նա չհամարձակվեց գալ մեր սենյակ, թեև առաջին դեպքից տարիներ էին անցել: Նա անցավ ամբողջ տնով՝ բոլորին հայհոյելով, բայց մեր սենյակ չմտավ:

Ո՛չ, աստվածային սիրով սիրել չի նշանակում թույլ տալ, որ բոլորը քայլեն ձեր վրայով: Մյուս կողմից՝ չի նշանակում, որ դուք ձեզ պետք է անկարգ պահեք և վիճեք բոլորի հետ: Սակայն երբեմն Աստծո սերը թելադրում է լինել խիստ և պաշտպանել այն, ինչը ճիշտ եք համարում:

Աստծո սերը չի ձախողվում: Ուստի եթե վարվում եք Նրա աստվածային սիրով, դուք նույնպես չեք ձախողվի. Նրա սերը, որը գործում է ձեր մեջ և ձեր միջոցով, ավելի քան բավարար է ցանկացած իրավիճակի համար:

Աստվածային սերը ձեզ հաջողակ կդարձնի, քանի որ Աստված սեր *է*: Եվ Աստծո սիրո մեջ քայլելը օգտակար է ոչ միայն այս, այլև գալիք կյանքում: Վայելե՛ք Աստծո սիրով վարվելու օգուտներն ու մեծ վարձքը:

ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես վարվելու եմ Աստծո սիրով: Չեմ քննադատելու ուրիշներին, որովհետև Աստծո սերն ընկերոջը չար չի անում:

Երբ վարվում եմ Աստծո սիրով, կարող եմ հավակնել Աստծո լավագույն օրհնություններին իմ կյանքում: Ես կլինեմ քաղցր և ներող, հետևաբար օրհնություն կհնձեմ:

Ես կպահեմ իմ լեզուն չարը խոսելուց, կխուսափեմ չարը գործելուց և կհետևեմ խաղաղության բոլորի հետ:

Շնորհակալ եմ, Հա՛յր, որ Դու օգնում ես ինձ լինելու ամենը, ինչ կարող եմ լինել Քո մեջ, մինչ ես ջանում եմ աճեցնել սիրո պտուղը:

Գլուխ 6

Սիրով վարվելու մեջ ձախողելը կարող է ազդել ձեր առողջության վրա

Եթե ցանկանում եք աստվածային առողջություն ունենալ, ապա պետք է վարվեք աստվածային սիրով: Եթե ցանկանում եք, որ ձեր *հավատքը* գործի և արդյունավետ լինի, ապա պետք է գործի դնեք աստվածային սերը:

Աստծո սերը միակ բանն է, որն ի վերջո հաղթելու է: Երբեմն կարող է թվալ, թե սերը չի հաղթում, բայց եթե շարունակեք կիրառել այն և վարժվել դրանում, այն վերջիվերջո կհաղթի, քանի որ Աստվածաշունչն ասում է, որ սերը երբեք չի ձախողվում:

Գաղատացիների 5.6-ում ասվում է. *«Քանի որ Քրիստոս Հիսուսում ո՛չ թլփատությունն է մի բան կարող և ո՛չ անթլփատությունը. այլ հավատքը, որ սիրով գործում է»*: Եթե սիրով չեք վարվում, ձեր հավատքը չի գործի. սա սուրբգրային սկզբունք է:

Ուղիղ սիրտը ստանում է Աստծուց

Երանի՜ մարդիկ հասկանային, թե որքան մեծ կապ ունի սիրով վարվելը բժշկություն ստանալու հետ: Հենց այդ պատճառով իմ հավաքույթներին ես խրախուսում եմ մարդկանց որքան հնարավոր է շատ լսել Խոսքը նախքան բժշկության համար հերթ կանգնելը:

Բժշկություն ստանալու համար երբեմն պարզապես պետք է շտկումներ անել սիրո ընթացքի մեջ:

Երբեմն մարդիկ, Խոսքը լսելով, հասնում են խնդրի խորքային պատճառին և հասկանում, թե որն է իրենց հավատքը խոչընդոտող թերացումը: Շատ անգամներ թերանում ենք հենց սիրով վարվելու և ներելու մեջ:

Տարիների ընթացքում նկատել եմ, որ մարդիկ, որոնք լսում են Խոսքը և համապատասխան շտկումներ անում իրենց սրտում, ստա-

նում են իրենց բժշկությունը: Մարդկանց փոքր տոկոսն է բժշկություն ստանում միայն մեկ հավաքույթի մասնակցելով՝ առանց Խոսքն ուսումնասիրելու և անհրաժեշտ փոփոխություններն անելու:

Օրինակ՝ մի հավաքույթից հետո մի կին մոտեցավ ինձ ու կնոջս և ասաց. «Ինչ-որ ժամանակ ստամոքսի և շնչառական համակարգի խնդիրներ ունեի: Որոշեցի մասնակցել Ձեր բոլոր հավաքույթներին և շաբաթվա վերջում հերթ կանգնել, որ աղոթեք, և բժշկություն ստանամ»: Մինչ այդ նա արդեն մոտեցել էր Ամերիկայի՝ այն ժամանակի բոլոր ավետարանիչներին, որոնք բժշկության ծառայություններ էին անցկացնում, բայց չէր բժշկվել:

Հետո շարունակեց. «Շաբաթվա վերջը մոտ էր, երբ հասկացա, որ մինչ բժշկության համար հերթ կանգնելը և ակնկալելը, որ Աստված ինչ-որ բան կանի ինձ համար, պետք է շտկեմ սիրտս, զանգահարեմ եղբորս և խնդրեմ, որ ների ինձ»:

Նա բացատրեց ինձ և կնոջս, որ ինքն ու եղբայրը քսանհինգ տարի առաջ անհամաձայնություն էին ունեցել և այդ պահից ի վեր չէին խոսել իրար հետ, թեև երկուսն էլ իրենց քրիստոնյա էին համարում:

Մարդիկ պետք է հասկանան, որ եթե մի քանի անգամ ձեռք դնելով աղոթելուց հետո, հատկապես այն մարդկանց կողմից, որոնց Աստված օգտագործում է այդ բնագավառում, բժշկություն չեն ստանում, ապա պետք է նայեն իրենց ներսը՝ տեսնելու, թե արդյոք ինչ-որ տեղ չեն շեղվել Աստծո Խոսքից: Պետք է իրենք իրենց քննեն և սկսեն անհրաժեշտ փոփոխություններն ու շտկումներն անել, քանի որ Աստված երբեք չի փոխվում:

Սակայն շատ անգամներ, երբ բժշկություն չեն ստանում, ամբողջ պատասխանատվությունը գցում են Աստծո կամ մեկ ուրիշի վրա, մինչդեռ առաջինն իրենք իրենց պետք է քննեն:

Այս կինը քննել էր իր ներսը և հասկացել, որ հակառակություն և չներում ուներ իր եղբոր հանդեպ մի բանի պատճառով, որ տեղի էր ունեցել քսանհինգ տարի առաջ:

Երկար տարիներ փրկված լինելով՝ նա միայն վերջերս էր լցվել Սուրբ Հոգով: Եթե ականջ դներ իր հոգուն, ապա Սուրբ Հոգին դեռևս տարիներ առաջ կառաջնորդեր նրան՝ հաշտվելու եղբոր հետ: Որոշ մարդկանց դեպքում փոփոխությունը երկար տարիներ է պահաջում, բայց դա պարտադիր պայման չէ: Մարդիկ կարող են ավելի արագ փոխվել, եթե պարզապես սովորեն սիրով վարվել:

Ինչևիցե, նա զանգահարել էր եղբորը, որը հեռու էր ապրում, և ասել. «Զանգահարել եմ, որ ներողություն խնդրեմ. ես սխալ էի»:

Իսկ եղբայրը պատասխանել էր. «Շատ ուրախ եմ, որ զանգահարել ես, ես նույնպես մտածում էի քեզ զանգահարելու մասին. դու չէիր մեղավոր, այլ ես: Ինքս ցանկանում էի զանգահարել ու խնդրել քեզ, որ ներես ինձ»:

Վերջապես նրանք համաձայնել էին կիսել մեղքի բաժինը, և այդ կինը եղբորն ասել էր, որ հավաքույթից հետո կմեկնի Նյու Յորք՝ նրան այցելության:

Ինձ պատմեց, որ եղբոր հետ հարաբերությունները շտկելուց հետո խոր խաղաղություն է վերապրել, բարելավվել է ինքնազգացողությունը: Մինչ երեկոյան ծառայությունը ցերեկը քնել է, իսկ երբ արթնացել է, հիվանդության նշույլ չի եղել. բոլոր ախտանշաններն ու ցավն ամբողջովին անհետացել են:

«Ամբողջ կյանքումս երբեք այսքան լավ չեմ զգացել ինձ. ստամոքսիս բոլոր խնդիրներն անհետացել են. անհետացել են նաև թոքերիս խնդիրները»,- շարունակեց նա:

Եկել եմ հավաքույթի և նույնիսկ հերթ չեմ կանգնել բժշկության համար: Երբ ներեցի եղբորս և շտկեցի հարաբերություններս նրա հետ, բժշկություն ստացա»: Այն պահից ի վեր, երբ սկսել էր սիրով վարվել, կարողացել էր հավակնել բժշկության վերաբերյալ Աստծո խոստմանը:

Տարիներ շարունակ մարդիկ մեկը մյուսի հետևից ինձ նույնն են ասել. սկզբում ներել են ինչ-որ մեկին և շտկել իրավիճակը, հետո ստացել են իրենց բժշկությունը: Եղել են նույնիսկ այնպիսի դեպքեր, երբ հիվանդությունը կարող էր մահացու լինել:

Մի օր մի մարդ ասաց ինձ. «Բժիշկս ասել է, որ երեսուն օրից մահանալու եմ»: Նա իր սրտում արել էր անհրաժեշտ շտկումները, ձերբազատվել անբարյացակամությունից, թշնամանքից և չներումից ու բժշկվել էր, և մինչ օրս ապրում է:

Նրա համար աղոթելու կամ նրա վրա ձեռք դնելու կարիք նույնիսկ չեղավ: Խորհեք սրա շուրջ. նա բժշկվեց մահացու քաղցկեղից, երբ գործի դրեց ներումը:

Ավելի քան կես դար իմ ծառայության մեջ տեսել եմ բժշկության կարիք ունեցող հազարավոր մարդկանց, իհարկե ոչ միաժամանակ: Խոսքս այն մասին է, որ տարիներ շարունակ երես առ երես շփվել եմ բազում հիվանդ մարդկանց հետ:

Տեսել եմ մարդկանց, որոնք բժշկություն ստանալու համար հերթ են կանգնել բոլոր հայտնի ավետարանիչների մոտ, հատկապես այն ժամանակներում, երբ ամենուր բժշկության արթնություն էր: Բայց

նրանց վիճակը չի բարելավվել:

Տեսել եմ նաև, թե ինչպես են նույն այդ մարդիկ մտել աղոթքի սենյակ և շտկել իրենց սրտերն Աստծո առջև, որից հետո առանց նրանց համար աղոթելու անգամ կատարելապես բժշկվել են:

Իմ ծառայությունների ընթացքում ևս շատ են եղել մարդիկ, որոնք առաջ են եկել և բժշկության համար հերթ կանգնել, մարդիկ, որոնք նույնն արել էին երկրի մյուս բոլոր ավետարանիչների ծառայությունների ժամանակ: Իսկ հետո նրանք գնացել են աղոթքի սենյակ, շտկել իրենց սրտերը և անմիջապես բժշկվել են:

Նրանք այլևս *ինչ-որ մեկի* աղոթելու համար հերթ կանգնելու կարիք չունեին: Իրականում բժշկվում էին առանց որևէ մեկի աղոթքի:

Ոմանք դժվարությամբ են ընկալում այն փաստը, որ հավատքը չի գործում առանց սիրո: Սակայն մարդիկ պետք է հասկանան, որ եթե Աստծո ծառաները, հատկապես նրանք, որոնց Աստված օգտագործում է բժշկության ծառայության մեջ, ձեռք են դնում իրենց վրա, բայց իրենք չեն բժշկվում, ապա պետք է սկսեն քննել իրենց ներսը:

Աստված երբեք չի փոխվում: Ուստի իրենք պետք է փոխվեն և շտկումներ անեն իրենց սիրո ընթացքի մեջ:

Աստվածաշունչն ասում է, որ Աստծո Խոսքի հայտնությունն է, որ լույս է տալիս (Սաղմ. 119.130): Երբ քայլում եք Խոսքի լույսի մեջ, ստանում եք արդյունքներ, օգուտներ և ունենում պտուղներ:

Ես մոտ վաթսուն տարի է՝ բժշկության ծառայության մեջ եմ և իմ փորձից գիտեմ, որ շատ քրիստոնյաներ չեն կարողանում ստանալ իրենց բժշկությունը, քանի որ պատրաստակամ չեն ուրիշների հետ իրենց հարցերը շտկելու. պատրաստակամ չեն իրենց սրտերից հանելու այն ամենը, ինչն Աստծո առջև ճիշտ չէ:

Երբեմն ուրիշին, իսկ երբեմն հենց ինքներդ ձեզ ներելու անհրաժեշտություն կարող է լինել: Լինում են դեպքեր, երբ մարդիկ ներում են ուրիշներին, բայց ոչ իրենց, մինչդեռ առողջ լինելու համար ինքներդ ձեզ ևս պետք է ներեք:

Թշնամանքի վնասները

Հավատացյալները պետք է հասկանան, թե որքան կարող են վնասվել, եթե անբարյացակամություն կամ թշնամանք ունենան որևէ մեկի հանդեպ: Դա կարող է ազդել նրանց հոգևոր աճի վրա, խոչընդոտել նրանց աղոթքները և նույնիսկ հիվանդացնել նրանց:

Օրինակ՝ երբ ես դաշտային հավաքույթներ էի անցկացնում, հան-

դիպեցի մի հովվի, որն այդ քաղաքում եկեղեցի ուներ: Նրա տեսքը լավ չէր, ուստի հարցրի, թե ինչ է պատահել:

Ի պատասխան նա հարցրեց. «Այսինչ եղբորը ճանաչո՞ւմ ես»:

Ասացի. «Այո»:

«Նա եկել է *իմ* քաղաք և մեկ այլ եկեղեցի հիմնել»,- եղավ նրա պատասխանը:

«*Քո՞* քաղաք»,- հարցրի ես:

«Այո՛»,- ասաց նա:

«Չգիտեի, որ քաղաքը քեզ է պատկանում»:

«Իմ եկեղեցին Ամբողջական Ավետարանի միակ եկեղեցին էր այստեղ,- ասաց այդ հովիվը:- Նա սխալ է վարվել իմ հանդեպ՝ այստեղ մեկ այլ եկեղեցի հիմնելով, և ես երբեք նրան դա չեմ ների»:

Այնուհետև հարցրեց. «Քենե՛թ, կաղոթե՞ս ինձ համար: Ես խոցեր ունեմ»:

Ես արդեն գիտեի, թե որն էր այդ խոցերի պատճառը: Եվ գիտեի, որ ոչ մի օգուտ չէր տա նրա համար աղոթելը, քանի դեռ նա իր սրտի մեջ թշնամանք ու չներում էր պահում: Իմացա նաև, որ ըստ այդ հովվի հարանվանության կանոնների՝ մյուս հովիվն այդ քաղաքում եկեղեցի հիմնելու լիարժեք իրավունք ուներ:

Բացի այդ՝ ինչպես պարզվեց, իրականում եկեղեցին հիմնել էին այլ մարդիկ և ոչ թե այդ հովիվը: Մի խումբ մարդիկ հավաքվել էին և ցանկություն հայտնել քաղաքի ծայրամասում եկեղեցի ունենալու, այնուհետև վաթսունյոթ հոգով կազմակերպել էին ամեն բան և հիմնել եկեղեցին, հետո միայն ընտրել հովվին:

Այդ նոր հովիվն ինքը չէր հիմնել եկեղեցին: Մինչ որևէ մեկը կքվեարկեր այդ հովվի օգտին, մարդիկ հասցրել էին մի քանի հազար դոլար հավաքել և հողամաս գնել՝ եկեղեցաշենք կառուցելու համար:

Ես ասացի առաջին հովվին. «Դու պետք է աղոթես, որ Աստված *մեկ ուրիշին* ևս ուղարկի այս քաղաք՝ *մեկ այլ* եկեղեցի հիմնելու համար»:

Հետո հարցրի. «Միջինում քանի՞ մարդ էր հավաքվում ձեր կիրակնօրյա դպրոցում մինչ մյուս եկեղեցու բացվելը»:

Նա ասաց. «Մոտ հարյուր տասներեք մարդ՝ ներառյալ երեխաները, նորածինները»:

Հարցրի. «Իսկ հիմա՞ միջինում քանի մարդ է հավաքվում»:

Նա ասաց. «Մոտ երկու հարյուր քառասունից երկու հարյուն վաթսուն մարդ»:

«Իսկ մյուս հովվի եկեղեցում միջինում քանի՞ մարդ է հավաքվում»,- հնչեց հաջորդ հարցս:

«Ցավով պիտի ասեմ, որ մոտ երկու հարյուր վաթսունից երկու հարյուն ութսուն մարդ. նրանք թվով գերազանցում են մեզ»:

Կարո՞ղ եք պատկերացնել, որ Աստծո մարդը կարող է նման վերաբերմունք ցուցաբերել: Դա Աստծո սիրո դրսևորում չէր: Ո՛չ. դա եսասիրական, մարդկային սեր էր:

Ես ասացի. «Օ՜, փառք Աստծուն: Հապա մտածի՞ր դրա մասին: Ահա դուք միասին տասնհինգ հազար բնակչություն ունեցող այդ փոքրիկ քաղաքում ամեն կիրակի հավաքում եք ավելի քան հինգ հարյուր մարդու: Պետք է աղոթես, որ մեկ այլ հովիվ գա և ևս մեկ եկեղեցի հիմնի քաղաքի արևելյան հատվածում, իսկ մեկ ուրիշը՝ հյուսիսային հատվածում»:

«Բայց սա *իմ* տարածքն է: Նա մտել է *իմ* տարածք: Չեմ կարողանում ներել նրան: Ուզում եմ ներել, բայց չեմ կարողանում: Բայց նաև ուզում եմ, որ աղոթես ինձ համար»:

Գիտեի, որ ոչ մի օգուտ չէր տա նրա բժշկության համար աղոթելը, քանի դեռ նա չէր շտկել իր սիրտը: Արդյունքը նույնը կլիներ, ինչ եթե ասեի «աբրա՛ կադա՛բրա»:

Ավելի ուշ իմացա, որ այդ հովիվը վիրահատվել էր: Դրանից կարճ ժամանակ անց հանդիպեցի նրան մի համաժողովում, ու նա ասաց, որ վիրահատությամբ չորս ուռուցք էին հեռացրել ստամոքսից, բայց դրանք նորից էին առաջացել, և խնդրեց, որ աղոթեմ իր համար:

Ես գիտեի, որ նրա բժշկության համար աղոթելն իմաստ չէր ունենա, քանի դեռ նա չէր ձերբազատվել իր եղբոր և ծառայակցի դեմ ոխից: Փառք Աստծուն, որ նա այդպես էլ արեց: Եվ երբ վերջապես ապաշխարեց այդ հովվի նկատմամբ չներում ունենալու համար, ստամոքսի խնդիրները դադարեցին, և նա այլևս ստիպված չեղավ վիրահատվել. խոցերն անհետացան:

Սերն ու ներումը միասին են գործում: Չեք կարող ասել, որ սիրով եք վարվում, եթե ձեր սրտում անբարյացակամություն կա:

Սիրուց դուրս ամեն քայլ մեղք է: Չեք կարող լինել առողջ կամ ստանալ բժշկություն, եթե ձեր սրտում ոխ կամ չներում եք պահում: Եթե դուրս եք եկել սիրո ընթացքից, ապա որքան հնարավոր է արագ վերադարձե՛ք դրա մեջ: Այդ դեպքում կկարողանաք ապրել Աստծո

առատ հոգածության ներքո, Նրա խոստումների մեջ և վայելել Նրա լավագույն օրհնությունները ձեր կյանքում:

Եղբայրների հանդեպ սիրով չվարվելը կարող է բացասաբար անդրադառնալ ձեր առողջության վրա. այն նույնիսկ կարող է կրճատել ձեր կյանքի տարիները, քանի որ սատանային հենման կետ է տալիս ձեր կյանքում:

Լուրջ միտք է, ճի՞շտ է: Մենք պետք է սթափ մտածենք սիրո թեմայի շուրջ: Ի վերջո Աստվածաշունչն ասում է, որ սերն ավելի մեծ է, քան հավատքը կամ հույսը. *«Ապա ուրեմն մնում է հավատք, հույս, սեր. այս երեքը, և սրանցից մեծը սերն է»* (Ա Կորնթ. 13.13):

Սերը երբեք չի ձախողվում: Սերը՝ Աստծո սերը մեզանում, կարող է հարթել ամեն վեճ ու կռիվ: Այն կարող է լուծել ցանկացած խնդիր, քանի որ Աստված սեր է:

Տարիների ընթացքում բազմիցս տեսել եմ, թե ինչպես է գործում Աստծո սերը:

Ինչպես տեսնում եք, սիրով վարվելը բացում է աստվածային բժշկության ճանապարհը. սրա մասին ևս պետք է քարոզել: Շատերս ցանկանում ենք երկար ապրել և լրացնել մեր կյանքի տարիներն այս երկրի վրա: Գիտե՞ք, որ դա հնարավոր է: Աստվածաշունչը նման խոստում տալիս է: Բայց դրա համար հարկավոր է քայլել սիրո և հնազանդության մեջ:

Արդյոք սիրո՞ւմ եք ձեր եղբորը

Ինքներդ ձեզ հա՛րց տվեք. *«Ինչպե՞ս եմ ես վարվել այն աստվածային սիրո հետ, որն ապրում է իմ սրտում: Արդյոք զարգացրել և կիրառե՞լ եմ այն»:*

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.16,17,20,21

16 Եվ մենք ճանաչեցինք և ՀԱՎԱՏԱՑԻՆՔ ԱՅՆ ՍԻՐՈՒՆ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՈՒՆԻ ՄԵԶ ՎՐԱ. Աստված սեր է, և ՈՎ ՈՐ ՄՆՈՒՄ Է ՍԻՐՈ ՄԵՋ, ԱՍՏԾՈ ՄԵՋ Է ԲՆԱԿՎՈՒՄ, և Աստված՝ նրանում:

17 ՍՐԱՆՈՒՄ Է ՍԵՐԸ ԿԱՏԱՐՅԱԼ [հասուն] ՄԵԶ ՀԵՏ, որ համարձակություն ունենանք դատաստանի օրում, որովհետև ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում:

20 Եթե մեկն ասի, թե Սիրում եմ Աստծուն, և ԻՐ

ԵՂԲՈՐՆ ԱՏԻ, նա ստախոս է, որովհետև նա, որ ԻՐ ՏԵՍԱԾ ԵՂԲՈՐԸ ՉԻ ՍԻՐՈՒՄ, Աստծուն, որ չի տեսել, ինչպե՞ս կարող է սիրել:

21 Եվ այս պատվիրանն ունենք Նրանից, թե ՆԱ, ՈՐ ԱՍՏԾՈՒՆ ՍԻՐՈՒՄ Է, ԻՐ ԵՂԲՈՐՆ ԷԼ ՍԻՐԻ...

Կցանկանամ՝ ուշադրություն դարձնեք 16-րդ խոսքին. *«...մենք ճանաչեցինք և հավատացինք այն սիրուն, որ Աստված ունի մեզ վրա»:* Աստվածաշունչն ասում է, որ մենք ոչ միայն հավատում ենք Աստծուն, այլև, որպես քրիստոնյա, հավատում ենք Նրա սիրուն: Դուք հավատո՞ւմ եք աստվածային սիրուն: Եթե այո, ապա կիրառե՛ք այն՝ վարվե՛ք սիրով:

Աստծո սերը, որը ձեր սրտում է, չի զարգանա, եթե *դուք* չվարժվեք դրանում: Աստծո սերը ձեզ չի զսպի, եթե *դուք* թույլ չտաք, որ այն զսպի ձեզ: Այն ինքնաբերաբար չի գործում: Դուք ձեր դերակատարումն ունեք նրանում, թե արդյոք Աստծո սերը կաճի ու կզարգանա ձեր կյանքում:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.14,15

14 Մենք գիտենք, որ մահից ի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք, բայց ով որ չի սիրում եղբորը, մնում է մահի մեջ:

15 Ամեն ով որ իր եղբորն ատում է, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան հավիտենական կյանք չունի հաստատված իրենում:

Սուրբ Գիրքն ասում է, որ եթե մենք ատում ենք մեր եղբորը կամ որևէ մեկին, ապա դեռևս հոգևոր մահվան մեջ ենք: Իսկ 15-րդ խոսքն ավելի խիստ է արտահայտվում. գրված է՝ նա, ով ատում է իր եղբորը, մարդասպան է: Խիստ եզրույթ է օգտագործված:

Ըստ Աստվածաշնչի՝ պարտադիր չէ ինչ-որ մեկին սպանել, որ *մեր սրտում* մարդասպան լինենք: Ըստ այս սահմանման՝ կարող ենք ասել, որ եկեղեցու դահլիճում բազմաթիվ մարդասպաններ են նստում:

Կան նաև մարդիկ, որոնք բառի ուղիղ իմաստով սպանություն են գործել, և նրանք պետք է վճարեն իրենց հանցանքի համար: Մյուս կողմից՝ եթե ինչ-որ մեկին ատում եք, Աստծո աչքերում մարդասպան եք, և Աստված համարում է, որ դուք ձեր սրտում մարդասպան եք:

Կինը, որն ասաց, որ ատում է իր սկեսուրին

Ես և կինս հավաքույթ էինք անցկացնում Միացյալ Նահանգների արևմտյան մասում: Ծառայությունից հետո մի երիտասարդ ծառայող զույգի հետ գնացինք ընթրելու:

Այդ երիտասարդ կինն ասաց ինձ. «Եղբա՛յր Հեգին, այսօր երեկոյան Դուք մեջբերեցիք Ա Հովհաննես 3.15-րդ խոսքերը. «*Ամեն ով որ իր եղբորն ատում է, մարդասպան է, և գիտեք, որ ամեն մարդասպան հավիտենական կյանք չունի հաստատված իրենում*»:

Ասացի. «Ինչ մեղքս թաքցնեմ, ասել եմ»: Քարոզի ժամանակ երբ այդ խոսքը մեջբերեցի, Սուրբ Հոգին ներշնչել էր ինձ ավելացնելու. «Խոսքը վերաբերում է նաև *սկեսուր-մայրիկին*»:

Նա պատասխանեց. «Ես ատում են իմ սկեսուրին»: Այդ կինը ձեռնադրված ծառայող էր և ասում էր, թե ատում է սկեսուրին:

«Եթե դա այդպես է, ապա, ըստ Աստվածաշնչի, դու մարդասպան ես և քեզանում հաստատված հավիտենական կյանք չունես: Աստված չէր ասի, որ սիրեիր եղբորդ, դա նշանակում է՝ նաև սկեսուրիդ, եթե դա անհնար լիներ»:

Ես գիտեի, որ նա իրականում չէր ատում իր սկեսուրին, բայց ցանկանում էի, որ ինքն իրեն տեսներ Աստծո Խոսքի լույսի ներքո: Միայն այն, որ *ես* հասկանում էի, որ նա իրականում չի ատում իր սկեսուրին, բավարար չէր. դա նրան չէր օգնի: Հարկավոր էր, որ *նա ինքը* տեսներ դա:

Միայն այն, որ դուք տեսնում եք ինչ-որ հոգևոր ճշմարտություն, օգուտ չի տա ուրիշին. նա ինքը պետք է տեսնի դա: Եվ միայն այն, որ *ուրիշն* է տեսնում ինչ-որ հոգևոր ճշմարտություն, օգուտ չի տա ձեզ. *դուք ինքներդ* պետք է տեսնեք դա:

Ես գիտեի, որ նա փրկված էր, լցված Սուրբ Հոգով և սիրում էր Աստծուն: Բայց տեսնում էի նաև, որ նա թույլ էր տալիս, որ իր գլուխը միջամտեր այդ ամենին, և թույլ էր տալիս, որ իր մարդկային բնությունը ղեկավարեր իրեն:

Ուստի ասացի նրան. «Նայի՛ր աչքերիս մեջ ու ասա՛. «Ես ատում եմ սկեսուրիս», և միևնույն ժամանակ քննի՛ր հոգիդ»:

Աստվածաշունչը չի ասում, որ Աստծո սերը սփռվել է մեր գլխի մեջ: Այն ասում է, որ Աստծո սերը սփռվել է մեր սրտի կամ հոգու մեջ: Այդ պատճառով էլ ասացի, որ քննի իր սիրտը:

Նա սեղանի վրայով դեպի ինձ նայեց ու ասաց. «Ես ատում եմ

սկեսուրիս»:

«Երբ ասացիր դա, ի՞նչ տեղի ունեցավ հոգումդ»,- հարցրի ես:

«Ինչ-որ բան հոգումս ճանկռում էր ինձ»,- պատասխանեց նա:

Ասացի. «Գիտեմ. դա Աստծո սերն է, որ քո հոգում է և փորձում է գրավել ուշադրությունդ: Աստծո սերը փորձում է ստիպել քեզ, որ սիրես այնպես, ինչպես Աստված է սիրում»:

«Իսկ ես ի՞նչ պետք է անեմ»,- հարցրեց նա:

«Պետք է քեզ պահես այնպես, ինչպես կպահեիր, եթե սիրեիր սկեսուրիդ, որովհետև իրականում դու նրան սիրում ես: Տվյալ իրավիճակից դուրս գալու համար դու պետք է վարվես սիրով նույնիսկ այն ժամանակ, երբ մարդկային բնությունդ դա չի ուզում»,- պատասխանեցի ես:

«Սերն արտահայտվում է խոսքով և գործով, ուստի պետք է վարվես այնպես, ինչպես կվարվեիր, եթե սիրեիր նրան, քանի որ իրականում սիրում ես»:

Սիրով վարվել նշանակում է սիրո *գործեր անել*, քանի որ աստվածային սերը միայն զգացմունք չէ, այն որոշում և գործողություն է: Հարկավոր է ցույց տալ այդ սերը: Այլապես, այն չդրսևորելով, դուք գերի եք պահում և լռեցնում եք ձեր սրտում սփռված սերը:

Ինչպե՞ս թույլ տալ, որ Աստծո սերը հորդի ձեր սրտից, ինչպե՞ս արտահայտել այն: Այն արտահայտվում է գործերի միջոցով, խոսքերի միջոցով: Նույնը վերաբերում է նաև հավատքին, քանի որ հավատքն էլ գործում է սիրով: Կարող եք հավատքով լցված սիրտ ունենալ և մահանալ:

Կարող եք հավատքով լցված սիրտ ունենալ և երբեք աղոթքի պատասխան չստանալ: Հավատքը պետք է հորդի ձեր սրտից և դրսևորվի: Հարկավոր է այն գործի դնել: Իսկ ինչպե՞ս են դա անում՝ գործերի և խոսքերի միջոցով: Սերն առանց արտահայտման կամ գործողության ի վերջո կպակասի և կմահանա:

Սա նման է այն հին սիրային նամակին, որ տղան գրում է իր ընկերուհուն.

> **«Ամենաբարձր սարը կմագլցեմ քեզ համար, ամենախոր գետը կանցնեմ քեզ համար, ամենամեծ օվկիանոսը կկտրեմ միայն քեզ համար: Եվ եթե անձրև չգա, շաբաթ երեկոյան կգամ քեզ տեսնելու»:**

Ո՛չ. սերն արտահայտվում է խոսքով *և* գործողությամբ:

Ես ասացի այդ երիտասարդ ծառայողի կնոջը. «Եթե իսկապես ատում ես սկեսուրիդ, ապա, ըստ Ա Հովհաննես 3.15-ի, մարդասպան ես: Ես չեմ կարծում, թե դու մարդասպան ես, քանի որ վերստին ծնված ես և քո մեջ ունես հավիտենական կյանքը: Իսկ դա նշանակում է, որ քեզանում ապրում են Աստծո սերն ու կյանքը: Սակայն դու պետք է գործես այդ սիրուն համաձայն, մինչև որ այն քո կյանքում իրականություն կդառնա»:

Նա չէր ատում իր սկեսուրին, սակայն թույլ էր տվել այն սխալը, որը շատ հավատացյալներ են անում՝ առաջնորդվում էր գլխով և ոչ թե սրտով:

Ինձ ապշեցնում է այն, թե ինչպես են որոշ քրիստոնյաներ օգտագործում «ատել» բառը: Շատերն այնքան հեշտությամբ են գործածում այն: Այդ բառն իմ բառապաշարում չկա: Չեմ սիրում ասել նույնիսկ՝ «Ատում եմ սպանախը»: Գուցե ինչ-որ բաներ ինձ դուր չգան, բայց ես չեմ ատում *առարկաները*, առավել ևս՝ *մարդկանց*:

Նույնիսկ լսել եմ, թե ինչպես են քրիստոնյաներն ասում. «Ատում եմ այսինչին»: Նման պահերի մտածել եմ. *«Այդ դեպքում դու փրկության կարիք ունես»:*

Գիտեմ, որ իրականում նկատի չունեն այն, ինչ ասում են, պարզապես գլխից դուրս խոսում են և թույլ են տալիս, որ իրենց մարդկային բնությունը ղեկավարի իրենց: Եթե իրականում ատեին ինչ-որ մեկին, ապա իրենց սրտում մարդասպան կլինեին և հավիտենական կյանք չէին ունենա:

Իհարկե, փրկված են, բայց կարելի է ասել, կողպված են պահում իրենց սրտում ապրող սերը: Նման խոսքեր ասող մարդիկ մարմնավոր քրիստոնյաներ են, որոնք թույլ են տալիս, որ իրենց բնական միտքն ու մարդկային բնությունը ղեկավարեն իրենց: Նրանք սիրո մեջ աճելու ու զարգանալու կարիք ունեն:

Երբ մարդիկ վերստին ծնվում են, չեն ատում ուրիշներին: Եթե ատում են, ուրեմն իրենց ներսում չունեն Աստծո կյանքն ու սերը: Մարդկանց հանդեպ ատելություն ունենալ նշանակում է սրտումդ մարդասպան լինել:

Եթե հավատացյալներն ասում են, թե ինչ-որ մեկին ատում են, ապա պարզապես խաչը պետք է հանեն իրենց մարդկային բնությունը և ապրեն իրենց հոգում ապրող աստվածային սիրով: Դա միշտ չէ, որ հեշտ է և մարմնին դուրեկան: Իրականում մարդկային բնության համար սա դժվար է:

Հենց այդ պատճառով է, որ մենք պետք է նորոգենք մեր մտքե-

րը Խոսքով և թույլ տանք, որ Աստծո սերը բնակվի մեր ներսում և դրսևորվի մեզանում: Մենք պետք է սովորենք գործել այն սիրո համեմատ, որն արդեն մեր ներսում է:

Մի քանի օր անց այդ կինն ինձ և կնոջս հրավիրեց իրենց տուն: Հրավիրել էր նաև իր սկեսուրին և նրա ընտանիքին: Այս ընթացքում մոտեցավ ինձ ու ասաց. «Դուք ճիշտ էիք: Ես չեմ ատում սկեսուրիս: Նրանք քրիստոնյա են և սիրում են Աստծուն»:

Ես պարզապես շարժվում էի բնական կերպով և թույլ էի տվել, որ զգացմունքներս գլուխ բարձրացնեն: Տեղ էի տվել մարդկային տրամաբանությանս և բնությանս: Սակայն իրականում Աստծո սերը իմ սրտում է, և ես նրանց սիրում եմ: Նրանք հրաշալի մարդիկ են և նույնպես սիրում են Աստծուն:

Այդ երիտասարդ զույգի հետ խոսելուց հետո իմացանք, որ նրանք հավատքով աղոթում էին իրենց փոքր աղջկա բժշկության համար: Նրանց ամենափոքր երեխան երկու տարեկանից ի վեր էպիլեպտիկ նոպաներ էր ունենում: Երեխային տարել էին առաջատար մասնագետներից մեկի մոտ, որն ասել էր, թե դա էպիլեպսիայի ամենածանր դեպքն էր, որ իր երեսունութ տարիների բժշկական պրակտիկայում տեսել էր:

Բացի այդ՝ երեխան կարծես մտավոր խնդիրներ ուներ, կոորդինացիան էլ ճիշտ չէր:

Որոշ ժամանակ անց այդ զույգը զանգահարեց մեզ և խնդրեց գնալ ու աղոթել իրենց երեխայի համար, քանի որ վերջինիս մոտ էպիլեպտիկ նոպա էր սկսվել: Ես և կինս մեքենայով գնացինք նրանց տուն՝ աղոթելու. ճանապարհին Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ այնքան իրական, ինչպես կխոսեր մեքենայի ետնամասում նստած մեկը:

Հիմա խնդրում եմ, որ շատ ուշադիր լինեք, թե ինչ եմ պատրաստվում ասելու, քանի որ դրանից կարող է կախված լինել կյանքն ու մահը: Դրանից կարող է կախված լինել, թե որքան կապրեք և արդյոք կբժշկվեք, թե ոչ:

Սուրբ Հոգին ասաց ինձ. «Չաղոթես երեխայի համար, ձեռք չդնես նրա վրա: Երբ հասնես, ասա՛ մորը հետևյալը. «Հին Ուխտում Իսրայելին ասել էի՝ քայլե՛ք Իմ կանոնների համաձայն և պահե՛ք Իմ պատվիրանները, արե՛ք այն, ինչը ճիշտ է Իմ առջև, և Ես հիվանդությունը կվերցնեմ ձեր միջից, և դուք կլրացնեք ձեր օրերի թիվը»»:

Հետո Սուրբ Հոգին շարունակեց. «Իսկ Նոր Կտակարանի լեզվով ասել էի հետևյալը. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք

իրար: Սրանով կգիտենան բոլորը, որ Իմ աշակերտներն եք, եթե իրար վրա սեր ունենաք»» (Հովհ. 13.34,35):

Իհարկե, ես գիտեի, թե ինչ է Աստված ասել Հին Կտակարանի Ելից գրքի 23-րդ գլխում:

ԵԼԻՑ 23.25,26

25 Եվ ձեր Եհովա Աստծուն պաշտեք, և Նա կօրհնի քո հացը և քո ջուրը, և ԵՍ ՔՈ ՄԻՋԻՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՐՁՆԵՄ:

26 Քո երկրի մեջ վիժող և ամուլ չի լինի, ՔՈ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ՊԻՏԻ ԼՑՆԵՄ:

Մեղք գործած չենք լինի, եթե նշված խոսքերն այսպես ձևակերպենք. «Պահե՛ք Իմ սիրո պատվիրանը, և Ես ձեր միջից կհեռացնեմ հիվանդությունը և կլրացնեմ ձեր օրերի թիվը»:

Այնուհետև Սուրբ Հոգին ասաց. «Ասա՛ այդ երեխայի մորը, որ նա սատանային ասի. «Սատանա՛, ես հիմա քայլում եմ սիրո մեջ: Ձեռքերդ քաշի՛ր իմ երեխայից»»:

Ինչպես տեսնում եք, չպետք է ձեռք դնել մարդկանց վրա բժշկության համար: Կան որոշ պայմաններ, որոնք պետք է բավարարված լինեն. այլապես նույնիսկ եթե ձեր ձեռքերը դնեք նրա վրա այնքան, մինչև նրա գլխի մազերը թափվեն, նա, միևնույնն է, ոչինչ չի ստանա բացի ճաղատ գլխից:

Երբ մարդիկ իրենց սրտում շտկումներ անելու կարիք ունեն, նրանց վրա ձեռք դնելը միայն կվնասի նրանց հավատքին, քանի որ ոչինչ տեղի չի ունենա:

Երբ հասանք այդ զույգի տուն, ես երեխայի մորը ճշտորեն փոխանցեցի այն, ինչ Աստված ասել էր: Մայրը մատն ուղղեց դեպի երեխան, որն այդ պահին էպիլեպտիկ նոպայի մեջ էր, ու ասաց. «Սատանա՛, ես հիմա քայլում եմ սիրո մեջ: Ձեռքերդ քաշի՛ր իմ երեխայից»: Նոպան վայրկենապես դադարեց, և երեխայի վիճակը կարգավորվեց. բոլոր ախտանշանները միանգամից թողեցին աղջնակի մարմինը:

Եթե սիրով չեք վարվում, ապա չեք կարողանա նույնն անել, ինչ այդ կինը, ու սատանան կծիծաղի ձեզ վրա, մինչ դուք փորձում եք սանձել նրան: Ինչո՞ւ. որովհետև Աստվածաշունչն ասում է, որ սատանային տեղ չտանք (Եփես. 4.27): Եթե սիրով չեք վարվում, սատանային ձեր կյանքում տեղ եք տալիս. դուռ եք բացում նրա համար:

Սակայն երբ սկսեք սիրով վարվել, կտեսնեք, որ Հոգով եք գնում. երկար չի տևի Հոգու մեջ մտնելը: Պարզապես ապաշխարեք, խնդրեք, որ Տերը ների ձեզ սիրո ընթացքի մեջ թերանալու համար, այնուհետև որոշում կայացրեք. «Այս պահից սիրով եմ վարվելու»: Այդ ամենն անելով՝ դուք արդեն կլինեք այն դիրքում, որից կարող եք սատանային իր տեղը ցույց տալ:

Եթե քրիստոնյաները երբևէ սովորեն ղեկավարվել աստվածային սիրով, ապա բժշկվելու համար նրանց յուղով օծելու և նրանց համար աղոթելու կարիք չի լինի: Առանց դրա էլ կբժշկվեն և աստվածային առողջություն կունենան:

Շատ քրիստոնյաների ձախողման պատճառն այն է, որ թույլ են տալիս՝ չներումը ղեկավարի իրենց. նրանք թերանում են սիրո ընթացքի մեջ: Այն հավատացյալները, որոնք չներման և սիրո պակասի խնդիր ունեն, վարվում են ինչպես մարմնավոր քրիստոնյաներ:

Թարգմանություններից մեկում «մարմնավոր քրիստոնյաներ»-ի փոխարեն գործածված է «մարմնով ղեկավարվող քրիստոնյաներ» արտահայտությունը: Մանուկ քրիստոնյաները հիմնականում մարմնով են ղեկավարվում: Եթե թույլ եք տալիս, որ ձեր մարմինը ղեկավարի ձեզ, նշանակում է՝ ղեկավարվում եք բնական մարդկային մտքով: Իսկ բնական միտքը տիրապետում է միայն այն տեղեկությանը, որն իրեն փոխանցվում է ֆիզիկական հինգ զգայարանների միջոցով:

Երբ մարդիկ հասկանում են աստվածաշնչյան ուսմունքն այն մասին, թե ինչպես է պետք կիրառել և զարգացնել աստվածային սերը, աճում են, զարգանում և դուրս գալիս քրիստոնեական մանկության շրջանից:

Երբ քրիստոնյաները հասկանան աստվածային սիրով վարվելու առավելությունները, նրանց կյանքը կփոխվի: Եվ հավատացյալները ստիպված կլինեն եկեղեցուց դուրս փնտրել բժշկության աղոթքի կարիք ունեցող մարդկանց, քանի որ եկեղեցում բոլորը բժշկված կլինեն:

Հինգ տարի անց էպիլեպսիայից տառապող այդ երեխայի ծնողները եկան մեկ այլ նահանգում անցկացվող իմ հավաքույթներից մեկին: Այդ ժամանակ երեխան արդեն ութ տարեկան էր: Երբ տեսա նրանց, հետաքրքրվեցի նրանց դստեր առողջությամբ:

Նրանք պատասխանեցին. «Նա կատարյալ առողջ է և դպրոցում բոլորին գերազանցում է մտավոր կարողություններով»:

«Այս հինգ տարիներին ախտանշաններ ունեցե՞լ է»,- հարցրի ես:

Մայրն ասաց. «Երկու անգամ եղել են աննշան ախտանշաններ»:

«Իսկ ի՞նչ եք արել»,- նորից հարցրի ես:

Նա պատասխանեց. «Ես պարզապես ասացի. «Օ՜, ո՛չ, սատանա՛, չհամարձակվե՛ս. հիմա ես սիրո մեջ եմ քայլում»: Եվ մեր դստեր վիճակը կարգավորվեց»:

Այդ խոսակցությունը տեղի է ունեցել շատ տարիներ առաջ, իսկ հետո՝ 1991 թվականին, այդ զույգը եկավ մասնակցելու մեր ամենամյա ճամբարային հավաքույթին: Այդ ժամանակ նրանց դուստրն արդեն հասուն աղջիկ էր:

Ես ու կինս զրուցեցինք նրանց հետ և հետաքրքրվեցինք նրանց դստեր առողջությամբ, ինչին ի պատասխան նրանք ասացին, որ այն ժամանակից ի վեր ոչ մի նոպա չի ունեցել:

Գուցե ասեք. «Երանի՜ ինձ հետ էլ այդպես լիներ»: Միայն ցանկանալով՝ արդյունքի չեք հասնի: Բժշկությունը գործում է, երբ վարվում ենք աստվածային սիրով: Հարկավոր է գործել Աստծո Խոսքի համաձայն և վարժվել աստվածային սիրո մեջ, քանի որ հավատքը գործում է սիրով:

Գուցե ասեք. «Ես միշտ չէ, որ սիրով եմ վարվել»: Այդ կինը նույնպես միշտ չէ, որ սիրով էր վարվել, բայց այն պահին, երբ նա ապաշխարեց և սկսեց սիրով վարվել, Աստծու խոստմունքներին հավակնելու իրավունք ստացավ:

Շատերի խնդիրն այն է, որ կանգ են առնում անցյալի վրա: Կենտրոնանում են նրա վրա, ինչը սխալ են արել, փոխանակ կենտրոնանալու Աստծո ողորմության և ներման վրա:

Օրինակ՝ ասում են. «Ես սա եմ արել, նա եմ արել. արժանի չեմ Աստծո ներմանը»: Պետք չէ կանգ առնել ձեր թերացումների վրա. պարզապես ապաշխարե՛ք: Հենվե՛ք Աստծո Խոսքի վրա: Աստված ասել է. *«Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից»* (Ա Հովհ. 1.9): Մեր ո՞ր անիրավությունից՝ *բոլորից*:

Եթե գիտեք, որ սիրով եք վարվում, իսկ սատանան փորձում է հարձակվել ձեզ, ձեր երեխաների, ձեր տան վրա, ապա կարող եք համարձակությամբ ասել. «Սատանա՛, ձեռքերդ քաշի՛ր իմ երեխաներից, որովհետև ես սիրով եմ վարվում: Ձեռքերդ քաշի՛ր ինձնից և իմ տնից, որովհետև ես սիրով եմ վարվում»:

Իսկ եթե դուրս եք եկել սիրո ընթացքից, ապա որքան հնարավոր է արագ վերադարձե՛ք սիրո պաշտպանող հովանու տակ: Նոր Ուխ-

տը ձեզ է պատկանում. այնպես որ վարվե՛ք սիրով, որպեսզի կարողանաք հաջողել ձեր կյանքի բոլոր բնագավառներում: Սիրով վարվելու սկզբունքը կգործի ձեր կյանքում այնպես, ինչպես ցանկացած այլ մարդու կյանքում: Այնպես որ սովորե՛ք վարվել սիրով և քաղե՛ք Աստծո սիրո օգուտները:

«Ձեր միջից կդարձնեմ հիվանդությունը»

Երբ Սուրբ Հոգին խոսեց ինձ հետ Ելից 23.25,26-րդ խոսքերով, ես իրական հայտնություն ստացա: Նախկինում երբեք այդ լույսի ներքո չէի ընկալել այս խոսքերը:

Ճշմարտությունն այն է, որ այդ խոստմունքը պատկանում է նաև մեզ՝ Նոր Ուխտի մեջ լինողներիս, այն պարզ պատճառով, որ մենք ավելի լավ ուխտի մեջ ենք, որը հիմնված է ավելի լավ խոստմունքների վրա: Երբ ինչ-որ բան ավելի լավն է, այն ընդգրկում է հնում եղած ամենը և դրանից ավելին, այլապես ավելի լավը չէր համարվի:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 8.6
6 Բայց հիմա Հիսուսն ԱՎԵԼԻ ԱՋՆԻՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ հասավ, որքան որ Ինքն ԱՎԵԼԻ ԼԱՎ ՈՒԽՏԻ ՄԻՋՆՈՐԴ է, որ ԱՎԵԼԻ ԱՋՆԻՎ ԽՈՍՏՄՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՕՐԻՆԱԴՐՎԵՑ:

Իսրայելացիներին տրված էր խոստմունք, ըստ որի՝ եթե քայլեին Աստծուն հնազանդության մեջ, ապա Նա կհեռացներ հիվանդությունը նրանց միջից և կլրացներ նրանց օրերի թիվը: Եթե Հին Ուխտում նրանք այդ խոստմունքն ունեին, ապա հասկանալի է, որ մենք ևս կարող ենք հավակնել դրան, քանի որ մենք ավելի լավ ուխտի մեջ ենք, քան նրանք էին:

Խորհե՛ք սրա շուրջ: Հին Ուխտում Աստծո պատվիրանները և կանոնները պահելով, անելով այն, ինչ Աստված էր ասել՝ իսրայելացիներն իրենց կյանքի օրերն այստեղ՝ երկրի վրա լրացնելու և առանց հիվանդության ապրելու հնարավորություն ունեին:

Եթե այս խոստմունքը Նոր Ուխտում մեզ չի վերաբերում, նշանակում է, որ Հիսուսի գալով, Նրա Խաչի մահով և նոր ու ավելի լավ ուխտի հաստատմամբ մենք ինչ-որ օգուտներ *կորցրինք*:

Սակայն Աստվածաշունչը նման բան չի ասում: Այն չի ասում, որ մենք ավելի վատ ուխտի մեջ ենք, որը հիմնված է *ստորադաս* խոստմունքների վրա: Ո՛չ, այն ասում է, որ մենք *ավելի լավ* ուխտի մեջ ենք,

որը հիմնված է *ավելի լավ* խոստմունքների վրա:

Ինչ կմտածեիք, եթե նման երկխոսություն լսեիք. «Լսել եմ՝ տուն ես գնել»: «Այո՛, մենք ապրում էինք լիովին նոր մի տանը, որն ուներ չորս ննջասենյակ՝ պատերին գորգեր, և երեք սանհանգույց: Իսկ հիմա ապրում ենք մի հին տանը՝ մեկ ննջասենյակով և կես սանհանգույցով. այս տունն այնքա՜ն *ավելի լավն է*»:

Եթե ինչ-որ մեկը նման բան ասեր, կմտածեիք, որ խելքը թռցրել է, ճի՞շտ է: Երբ ինչ-որ բան ավելի լավն է, այն ներառում է հնի առավելությունները և ավելին, այլապես չի կարող ավելի լավը լինել:

Այլ կերպ ասած՝ Աստված Իսրայելից հեռացնում էր հիվանդությունը, երբ Իր ժողովուրդը շարժվում էր Իր օրենքներով: Շատ լավ. արդյո՞ք մենք, Հիսուսի գալուստից հետո նոր ու ավելի լավ ուխտի մեջ լինելով, պետք է ապրենք հիվանդ և տառապյալ կյանքով: Եթե այդպես է, ապա ավելի լավ կլիներ, որ Նա չգար: Սա անհեթեթ է:

Արդյո՞ք սա նշանակում է՝ մենք կարող ենք Օրենքը կատարել՝ սիրով վարվելով, բայց պետք է հիվանդ մնանք. կա՞մ արդյոք սրանում տրամաբանություն: Հիմարություն է, այնպես չէ՞:

Դեռ ավելին՝ Ելից 15.26-ում գրված խոստմունքը տրվել է իսրայելացիներին, որոնք Աստծո *որդիներ* չէին, այլ Աստծո *ծառաներ*: Եթե Աստծո կամքը չէր, որ Իր *ծառաները* հիվանդ լինեին, ինչպե՞ս կարող էր Նրա կամքը լինել, որ Իր *որդիները* հիվանդ լինեին (Ղևտ. 25.55, Ա Հովհ. 3.2):

Չգիտեմ՝ դուք ինչպես, բայց ես Աստծո լավագույնն եմ ցանկանում: Տարիներ առաջ տեսա սիրով վարվելու օգուտները և սրտումս որոշում կայացրի, որ ես սիրով եմ վարվելու՝ անկախ այն բանից՝ ուրիշներն այդպես կանեն, թե ոչ:

ԵԼԻՑ 15.26

26 ...Եթե իրավ լսես քո Եհովա Աստծո ձայնին, և ինչ որ Նրա աչքի առաջ ուղիղ է, անես, և Նրա պատվիրաններին ականջ դնես և Նրա բոլոր կանոնները պահես, այն ախտերից ոչ մեկը քեզ վրա չեմ բերի, որոնք եգիպտացիների վրա բերեցի, որովհետև ԵՍ ԵՄ ԵՀՈՎԱՆ՝ ՔՈ ԲԺԻՇԿԸ:

Եթե այդ խոսքը կարդաք *«Քինգ Ջեյմս»* թարգմանությամբ, տպավորություն կստեղծվի, որ Աստված բառացիորեն ախտեր է բերում մարդկանց վրա: Սակայն եբրայերեն որոշ բայեր պետք է թարգման-

վեին ոչ թե *պատճառական* եղանակով, այլ *թույլատրական*:

Այլ կերպ ասած, ամբողջ Աստվածաշունչն ուսումնասիրելով՝ հասկանում ենք, որ հիվանդությունն ու ախտերը Երկնքից չեն: Աստված չէ հիվանդությունների կամ ախտերի *պատճառը*, և Նա դրանցով ոչ մեկին չի չարչարում:

Ելից 15-րդ գլխի անգամ այդ խոսքը կարդալով՝ կարող ենք հստակ տեսնել, որ հիվանդությունն Աստծո կամքը չէր իսրայելացիների համար: Աստված ցանկանում էր, որ Իր ժողովուրդն առողջ լիներ: Դա էր պատճառը, որ Նա ասաց. «Ես եմ քեզ *բժշկող* Աստվածը»:

Գուցե ինչ-որ մեկն ասի. «Ելից 15.26-րդ խոսքում գրված է, որ Աստված է հիվանդություն բերում մարդկանց վրա»: Եթե դուք կարծում եք, թե Աստված է մարդկանց վրա հիվանդություն բերողը, ապա պետք է խորությամբ ուսումնասիրեք Խոսքը:

Թույլ տվեք հետևյալ օրինակով ցույց տալ ձեզ, թե ինչ նկատի ունեմ: Ոսկու տենդի օրերին Կալիֆոռնիայում ոսկի հայտնաբերվեց: Շերեփով հնարավոր էր գետից ոսկու փոշի հանել, իսկ երբեմն նույնիսկ ոսկու կտոր գտնել: Բայց եթե իսկապես ցանկանում էիր հարուստ հանքավայր գտնել, պետք է խոր փորեիր:

Նույնը վերաբերում է Աստվածաշնչին: Կարող եք թռուցիկ կարդալ Աստվածաշունչը և շերեփով մի փոքր ոսկի՝ որոշ հոգևոր ճշմարտություններ հավաքել, այստեղ ու այնտեղ կարող եք նույնիսկ ոսկու կտոր գտնել: Բայց եթե իսկապես ցանկանում եք հարստանալ, ապա պետք է Խոսքի խորքերը հասնեք, իսկ դրա համար անհրաժեշտ է փորել:

Իրականում Ելից 15.26-րդ խոսքը կարելի էր ավելի ճշգրիտ թարգմանել հետևյալ բառերով. «Եթե ջանասիրաբար ականջ դնեք ձեր Տեր Աստծո Ձայնին և անեք այն, ինչը ճիշտ է Նրա առջև... Ես *թույլ չեմ տա*, որ ձեզ վրա հիվանդություններ գան...»:

Հին Կտակարանի որոշ հատվածներ անգլերեն պետք է թարգմանվեն թույլատրական եղանակով և ոչ թե պատճառական:

Օրինակ՝ Եսայի 45.7-րդ խոսքում գրված է. «*Որ հաստատում եմ լույսը և ստեղծում խավարը, որ անում եմ խաղաղությունը և ստեղծում չարիքը. Ես՝ Տերս եմ այս բոլորն անողը*»: Երբ այս խոսքը կարդում ենք ամբողջ Աստվածաշնչի համատեքստում, այն համատեղելի չէ սուրբգրային մյուս խոսքերի հետ, քանի որ ստացվում է, որ Աստված Ինքն է *ստեղծում* չարիքը:

Արդյոք Աստվա՞ծ է ստեղծում չարիքը: Ո՛չ, եթե այդպես լիներ, ապա Աստված սատանան կլիներ: Աստված կարող է թույլ տալ, որ

չարիքը գա, երբ մարդիկ խախտում են Իր Խոսքը, սակայն Նա չի *ստեղծում* չարիքը: Եթե Աստված ստեղծեր չարիքը, ապա Նա կլիներ չարի հեղինակը: Սակայն մենք գիտենք, որ Աստված չէ չարի հեղինակը:

Նոր Կտակարանում ասվում է, թե ով է չարի հեղինակը. *«Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա, սպանի և կորցնի. Ես եկա, որ կյանք ունենան և էլ ավելի ունենան»* (Հովհ. 10.10): Սատանան է գողը և ոչ թե Աստված:

Երբ հասկանում եք, որ Եսայի 45.7-ի բայը օգտագործված պետք է լինի թույլատրական եղանակով, ապա պարզ է դառնում, որ չարիքին *թույլ է տրվում* գալ, երբ մարդիկ դուրս են գալիս Աստծո կամքից:

Օրինակ՝ պատկերացրեք, որ այսօր աշխատավայրից տուն վերադառնալիս բենզալցակայանի մոտ կանգնեիք ու կողոպտեիք այն: Աստված թույլ կտար, բայց չէր *ցանկանա*, որ անեիք դա, քանի որ դա Նրա կամքը չէ: Վստահաբար, Նա չէր *հանձնարարի* ձեզ նման բան անել: Իրականում, եթե Նրան լսեիք, ապա Նա կփորձեր ձեզ հետ պահել այդ քայլից: Այդուհանդերձ, դուք ունեք ազատ կամք և *կարող եք* նման բան անել:

Աստված չի *հանձնարարում* ձեզ սխալ բաներ անել. Նրա կամքը չէ, որ դուք սխալ վարվեք, բայց դուք ունեք ազատ ընտրություն, և Նա *թույլ կտա*, որ սխալվեք, եթե պնդեք և ընտրեք այն, ինչը սխալ է:

Ենթադրենք՝ չորսամյա երեխա ունեք և չուգունե թավայի մեջ ինչ-որ բան եք պատրաստում: Տեսնում եք, թե ինչպես է երեխան ուզում ձեռքը դնել տաք թավայի վրա և ասում եք. «Քաղցրիկս, մի՛ արա. կվառվես»:

Այդուհանդերձ, երեխան պարզում է ձեռքը և, հակառակ ձեր զգուշացմանը, դիպչում թավային: Դուք նրան չեք *հանձնարարել*, որ անի դա, բայց *թույլ տվեցիք*, քանի որ նա ունի ազատ կամք և, հակառակ ձեր զգուշացմանը, կարող է ձեռքը դնել տաք այրիչի վրա:

Դուք նրան ասացիք, որ նման բան չանի և անգամ զգուշացրիք հետևանքների մասին, բայց երեխան պնդեց իրենը և ամեն դեպքում դիպավ տաք թավային:

Հանձնարարե՞լ էիք, որ նման բան աներ: Իհարկե ո՛չ: Ձեր թույլ տալը պայմանավորված էր նրանով, որ երեխան ազատ է ընտրելու և կարող է ընտրել ձեզ չհնազանդվելը: Տեսնո՞ւմ եք. մարդն ունի ընտրության ազատություն: Աստված ցանկանում է օրհնել մարդուն, բայց եթե նա անհնազանդ է, ապա ստիպում է, որ Աստծո օրհնող ձեռքը հեռանա իրենից:

Ահա թե ինչ տեղի ունեցավ իսրայելացիների հետ: Աստված ստիպված էր *թույլ տալ*, որ հիվանդությունն ու ախտերը գային նրանց վրա, երբ նրանք մեղք գործեցին և չհնազանդվեցին Աստծուն:

Հենց դրա մասին էր Աստված խոսում՝ ասելով. «Եթե Իմ պատվիրանները չպահեք, այս բաները ձեզ վրա կգան: Բայց Ես դա չեմ կամենում. եթե Իմ կանոնները պահեք, այդ բաներից ոչ մեկը ձեզ հետ չի պատահի»:

Տեսնենք, թե ինչ է գրված Ամովսի գրքում:

ԱՄՈՎՍ 3.6

6 Կամ եթե փող փչվի քաղաքում, և ժողովուրդը չի՞ վախենալ, կամ չարիք կլինի՞ մի քաղաքում, որ Տերը չլինի արած այն:

Այս խոսքին կարելի է տարբեր մեկնաբանություններ տալ: Այն ասում է. *«...եթե քաղաքում չարիք լինի...»*: Արդյոք անցած գիշեր որևէ վատ բան պատահե՞լ է այն քաղաքում, որտեղ դուք եք ապրում: Իհարկե, պատահած կլինի: Իսկ արդյոք Աստվա՞ծ է դա արել: Ո՛չ, ո՛չ Նա: Հասկացե՛ք, որ եթե Աստված չար բան աներ, Նա իրավունք չէր ունենա դատելու մարդուն մեղք կամ չարիք գործելու համար:

Աստված չար բան չի անում և չարը չի ստեղծում: Նա կարող է միայն թույլ տալ դա, քանի որ մարդիկ ունեն ազատ կամք, կարող են Նրան չհնազանդվել և դուրս գալ Նրա պաշտպանող և օրհնող ձեռքի տակից: Մեծ տարբերություն կա հանձնարարության և թույլտվության միջև:

Սա շատ նման է երեխայի և տաք թավայի օրինակին: Չէ՞ որ դուք չէիք հանձնարարել երեխային դիպչել թավային, բայց թույլ տվեցիք, որ դա պատահեր, քանի որ նա ունի ազատ կամք և կարող է ընտրել թավային դիպչելը՝ հակառակ այն բանի, որ դուք նրան զգուշացրել էիք նման բան չանել:

Դոկտոր Ռոբերտ Է. Յանգը՝ *«Յանգի եբրայերեն և հունարեն բառացանկի»* հեղինակը, հրեա բացառիկ գիտնական է: Նա նշում է, որ թիրախ լեզուն չուներ այդ բայերի թույլատրական եղանակը, ուստի դրանք թույլատրականի փոխարեն թարգմանվել են պատճառական եղանակով:

Օրինակ՝ վերոնշյալ Ամովս 3.6-րդ խոսքը թարգմանված պետք է լիներ թույլատրական եղանակով, ոչ թե պատճառական. «Եթե քա-

ղաքում չար բան է պատահել, Տերն է դա թույլ է տվել»: Աստված կարող է թույլ տալ չարիքն այն պատճառով, որ մարդիկ ունեն ազատ ընտրություն և կարող են ընտրել չարիք գործելը, բայց Նա՛ չէ դրա պատճառը և ոչ էլ համաձայնում է դրա հետ:

Ա Թագավորաց 16-րդ գլխում ևս այս թեմային առնչվող խոսք կա, որը նույնպես բուռն քննարկումների տեղիք է տվել:

Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 16.14

14 Եվ Տիրոջ Հոգին հեռացավ Սավուղից, և Տիրոջ կողմից մի չար ոգի նեղում էր նրան:

Քանի որ անգլերենում բացակայում է տվյալ եբրայերեն բառերին համապատասխանող թույլատրական եղանակը, դրանք թարգմանվել են պատճառական եղանակով: Դա շփոթության մեջ է գցում, քանի որ տպավորություն է ստեղծվում, թե Աստված է ստեղծում և մարդկանց վրա ուղարկում չար ոգիներին:

Ո՛չ, Աստված մարդկանց վրա չար ոգիների չի ուղարկում: Նա կարող է թույլ տալ, որ նման բաներ պատահեն մարդկանց սխալ վարմունքի կամ անհնազանդության պատճառով: Իրականում, երբ մարդն անհնազանդ է Աստծուն, նա դուրս է գալիս Աստծո պաշտպանող և օրհնող ձեռքի տակից, սակայն Աստված չի կամենում, որ մարդուն չար բան պատահի: Աստված չէ մարդկանց վրա հիվանդություն ու ախտ բերողը:

Օրինակ՝ երբ Սավուղ թագավորը շեղվեց, արդյո՞ք Աստված վերցրեց Սուրբ Հոգին նրանից, և արդյո՞ք Աստված չար ոգուն ուղարկեց, որ չարչարեր նրան: Ո՛չ, քանի որ դա հակասում է Աստվածաշնչի մնացյալ վարդապետությանը:

Ո՛չ, դևերն ու չար ոգիներն Աստծուց չեն: Իրականում տեղի էր ունեցել հետևյալը. Սավուղը մեղք էր գործել և հեռացել էր Աստծո ընկերակցությունից, ինչը չար ոգու համար ճանապարհ էր հարթել դեպի Սավուղի կյանք: Աստված չէր տվել նման հանձնարարական, բայց Նա թույլ էր տվել, որ սատանայից ուղարկված չար ոգին չարչարեր Սավուղին:

Իրականում հենց Սավուղի անհնազանդությունն էր թույլ տվել, որ չար ոգին մտներ նրա կյանք:

Սուրբգրային այս խոսքերի եբրայերեն բնագրում գործածված է թույլատրական եղանակը: Բայց այն ժամանակ, երբ տեքստը թարգմանվել է, անգլերենում բացակայում էր համապատասխան թույլատ-

րական եղանակը, ուստի բայերը թարգմանվել են պատճառական եղանակով: Այդ ժամանակից ի վեր դա թյուրըմբռնումների տեղիք է տվել Աստվածաշնչի մեկնաբանություններում:

Ո՛չ, Աստված մարդկանց վրա չի ուղարկում պատուհասներ և հիվանդություններ, ինչպես որոշ թարգմանություններում է գրված: Աստված Իր ժողովրդին չի հիվանդացնում, այն պարզ պատճառով, որ Աստծո Խոսքը մեզ սովորեցնում է, որ հիվանդությունը սատանայից է (Հովհ. 10.10, Գործք 10.38):

Բացի այդ՝ Աստված չունի հիվանդություններ. Երկնքում չկա ոչ մի հիվանդություն: Հետևաբար, եթե Աստված մարդկանց վրա հիվանդություն է ուղարկում, ապա պետք է գողանա դրանք սատանայից, բայց Աստված գող չէ: Ո՛չ, Աստված չէ, որ հիվանդություն է ուղարկում մարդկանց վրա. դա անում է սատանան:

Բացի այդ՝ մեկ սուրբգրային խոսքը պետք է լուսաբանել մեկ այլ սուրբգրային խոսքով: Աստվածաշունչը կարդալով՝ հասկանում ենք, որ այստեղ հայտնությունները միմյանց լրացնում են: Հին Կտակարանում գրվածից ամբողջական հայտնություն չենք ստանում, քանի դեռ չենք հասել Նոր Կտակարանին. այդ ժամանակ է, որ սկսում ենք Խոսքի ամբողջական հայտնությունը ստանալ:

Աստծո Խոսքը *չի* սովորեցնում, որ չարիքը, հիվանդությունն ու ախտերն Աստծուց են: Բայց Աստծո պատվիրանները խախտելու հետևանքով Աստծո ժողովուրդը դուրս է գալիս Նրա աստվածային պաշտպանությունից: Այդպես *նրանք* իրենք են դուռ բացում սատանայի համար և թույլ տալիս, որ սատանան տառապանք բերի իրենց վրա իրենց իսկ անհնազանդության պատճառով:

> **Գործք 10.38**
> **38 Այն Հիսուսին, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությունով օծեց, որ ման եկավ՝ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով, որովհետև Աստված Նրա հետ էր:**

Ինչպես տեսնում եք, Նոր Կտակարանում հիվանդությունը համարվում է հարստահարում *սատանայի,* ոչ թե *Աստծո* կողմից: Եթե Աստված մարդկանց վրա հիվանդություն բերեր, ապա դա կլիներ հարստահարում *Աստծո* կողմից:

Սակայն դա այդպես չէ. մարդիկ հարստահարված էին *սատանայի* կողմից: Ուստի երբ հիվանդության հետ գործ ունեք, ապա

գործ ունեք սատանայի հետ, քանի որ «սատանան» և «հիվանդությունը» հոմանիշներ են:

Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսը քանդում էր սատանայի գործերը, այդ թվում նաև հիվանդությունն ու ախտերը: Իսրայելի մեղքերն ու անօրինություններն էին, որ սարսափելի պատուհասներ ու հիվանդություններ էին բերել նրանց վրա: Նույնը տեղի է ունենում այսօր:

Աստված չի ցանկանում, որ հիվանդությունը հարվածի մեզ, բայց երբ մենք Նրա ճանապարհներով չենք քայլում, դուռ ենք բացում սատանայի համար, և մեզ վրա կարող է գալ հիվանդություն և ախտ: Այդ պատճառով էլ Նոր Ուխտում Հիսուսը մեզ տվեց սիրո նոր պատվիրանը: Եվ երբ մենք կատարում ենք Նոր Կտակարանի սիրո պատվիրանը, սատանան չի կարողանում մեր կյանք ներխուժել:

«Քո օրերի թիվը պիտի լցնեմ»

Հին Կտակարանում իսրայելացիները խախտում էին Աստծո պատվիրանները և, այդպես վարվելով, դուրս գալիս Աստծո պաշտպանությունից: Նրանք այլևս չէին կարող հավակնել Աստծո պաշտպանությանը և օրհնություններին, այնպես որ հենց իրենք էին սատանային իրենց կյանք մտնելու իրավունք տալիս:

Նրանց անհնազանդության պատճառով Աստված ստիպված էր թույլ տալ, որ հիվանդություն, ախտ ու չարիք գար նրանց վրա, մինչև որ ապաշխարեին, քանի որ իրենք էին դուռ բացել չարի համար:

Իրենց մեղքերն ու անօրինություններն էին այդ սարսափելի հիվանդություններն ու պատուհասները բերել Իսրայելի վրա: Աստված խոստացել էր. «Եթե պահեք Իմ պատվիրանները, Ես հիվանդությունը կհեռացնեմ ձեզնից, քանի որ Ես եմ Տերը՝ ձեր Բժիշկը»: Քանի դեռ իսրայելացիները պահում էին Աստծո կանոններն ու պատվիրանները, հիվանդանալու պատճառ չունեին:

Եթե Աստված պատրաստ էր հեռացնելու հիվանդությունը նրանց միջից Հին Ուխտում, որն այնքան լավ ուխտ չէր, որքան մերը, ապա որքա՜ն ավելին Նա կանի մեզ համար Նոր Ուխտում: Նոր և ավելի լավ ուխտի մեջ *չի* ասվում. «Պահի՛ր Նոր Ուխտի սիրո օրենքը և ամբողջ կյանքումդ կլինես հիվանդ ու տառապյալ»:

Նոր Ուխտի սիրո օրենքը տեղադրելով Ելից 15.26-րդ և 23.25,26-րդ խոսքերում՝ կարող ենք կարդալ. «Քայլե՛ք սիրո Իմ նոր պատվիրանի համաձայն և պահե՛ք սիրո Իմ կանոնները, արե՛ք այն,

ինչը ճիշտ է Իմ առջև՝ վարվե՛ք սիրով, և Ես կդարձնեմ հիվանդությունը ձեր միջից և ձեր օրերի թիվը կլցնեմ»:

Նոր Ուխտում Հռոմեացիների 13.8-ն ասում է. *«...որովհետև ընկերոջը սիրողը օրենքը կատարել է»*: Եթե Նոր Ուխտի՝ Հիսուսի տված պատվիրանը պահելով, այն է՝ մեկս մյուսին սիրելով կատարում ենք Օրենքը, ապա կարող ենք հավակնել նույն այն խոստմունքին, ինչ իսրայելացիներն այն ժամանակ:

Տրամաբանությունից դուրս է ասել, թե Նոր Ուխտի սիրո օրենքը կատարելով՝ մենք անեծք կստանանք օրհնության փոխարեն: Դա սուրբգրային չէ:

Երկրորդ Օրինաց 28-րդ գլխում թվարկված են այն անեծքները, որոնք գալիս են Աստծո օրենքը խախտելու հետևանքով: Այդ անեծքները ներառում են տասնմեկ տարբեր հիվանդություններ: Բացի այդ՝ Օրենքի անեծքում ասվում է՝ «նաև ամեն հիվանդություն և ամեն հարված, որ այս օրենքների գրքում գրված չէ, Եհովան քեզ վրա կբերի, մինչև որ դու բնաջինջ լինես» (Երկր. Օր. 28.61):

Երկրորդ Օրինաց 28-րդ գլխից պարզ երևում է, որ հիվանդությունն Օրենքի անեծք է: Դա անեծք է, որը մարդկության վրա գալիս է Աստծո պատվիրանները խախտելու հետևանքով:

Սակայն Նոր Ուխտում Հիսուսը փրկագնեց մեզ Օրենքի անեծքից (Գաղ. 3.13): Հիսուսը եկավ, որ բժշկի հիվանդներին և չարչարվածներին: Հովհաննես 10.10-ում Հիսուսն ասում է. *«...Ես եկա, որ կյանք ունենան և էլ ավելի ունենան»:*

Մենք օգուտներ *չկորցրինք*, երբ Հիսուսը եկավ աշխարհ և մահացավ մարդկության մեղքերի համար, ընդհակառակը՝ *ստացանք* օգուտներ և օրհնություններ, քանի որ Հիսուսը եկավ՝ տալու մեզ կյանք և ավելին:

> **Ելից 23.25,26**
>
> **25 Եվ ձեր Եհովա Աստծուն պաշտեք, և Նա կօրհնի քո հացը և քո ջուրը, և ԵՍ ՔՈ ՄԻՋԻՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱՐՁՆԵՄ:**
>
> **26 Քո երկրի մեջ վիժող և ամուլ չի լինի, ՔՈ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ՊԻՏԻ ԼՑՆԵՄ:**

Ինչ է նշանակում՝ *«...քո օրերի թիվը պիտի լցնեմ»*: Աստված չխոստացավ իսրայելացիներին, որ չեն մահանա, Նա ասաց, որ կլրացնեն իրենց օրերի թիվը:

Ո՞րն է մեր օրերի թիվը: Սաղմոս 91.16-ում Դավիթը մեջբերում է Տիրոջ խոսքերն ու ասում. *«Երկար օրերով կկշտացնեմ նրան ու Իմ փրկությունը ցույց կտամ նրան»:*

Ո՞րն է համարվում երկար կյանք: Սաղմոս 90.10-ում ասվում է. *«Մեր տարիների օրերը յոթանասուն տարի են և եթե զորությունով՝ ութսուն տարի էլ լինեն...»*:

Երբ յոթանասունամյակդ լրանա, և կյանքից կշտացած չլինես, գնա՛ դեպի ութսուն. ապրի՛ր այնքան, մինչև կշտանաս:

Եթե ութսունդ էլ լրանա, և կշտացած չլինես, ապա մի փոքր էլ մնա այստեղ:

Լավ օրերով լի երկար կյանք ապրելը մեզնից է կախված՝ ավելի, քան մենք դա պատկերացնում ենք: Հիշո՞ւմ եք, թե ինչ էր Պողոսը գրել փիլիպեցիներին.

> **ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 1.21-24**
>
> **21 Քանի որ ինձ համար կյանքը Քրիստոս է, և մեռնելը՝ շահ:**
>
> **22 Բայց եթե մարմնի մեջ ապրելը իմ գործին պտուղ է *բերում*, էլ չգիտեմ, թե որն ընտրեմ:**
>
> **23 Երկու կողմից էլ նեղ տեղ եմ. փափագելով դուրս գալ և Քրիստոսի հետ լինել, որ շատ ավելի լավ է:**
>
> **24 Բայց մարմնում կենալը ավելի հարկավոր է ձեզ համար:**

Այլ կերպ ասած՝ Պողոսն ասում է, որ իր՝ մարմնի մեջ ապրելը ավելի հարկավոր էր եկեղեցուն, քանի որ այդպես կարող էր սովորեցնել և ծառայել նրանց: Բայց նաև ասում է. «Չգիտեմ՝ ընտրեմ մնալ այստեղ, թե գնալ Քրիստոսի մոտ, որն ավելի լավ է»:

Ինչպես երկարացնել կյանքը

Մարդիկ հաճախ ասում են. «Մենք չենք մեր մահվան օրը որոշողը. Աստված է որոշում»: Ո՛չ, ամբողջությամբ չէ, որ Աստծուց է կախված: Աստված սահմանում է որոշակի օրենքներ, իսկ մեզ տվել է Իր Խոսքը: Այնպես որ մեծ մասամբ մեզնից է կախված:

Վերադարձեք և կարդացեք Սաղմոսներն ու Առակաց գիրքը: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե Աստվածաշնչի այդ գրքերում քանի անգամ է խոսվում այն մասին, որ մարդիկ սխալ էին վարվում, և

«նրանց օրերը կարճանում էին» (Սաղմ. 89.45, 102.23, Առ. 10.27):

Այլ խոսքերում գրված է, որ որոշ բաներ անելով *կերկարացնես* քո կյանքը և կավելացնես կյանքիդ օրերը (Առ. 3.16): Ուստի մասամբ մարդկանցից է կախված՝ կերկարեն, թե կկարճանան նրանց կյանքի օրերը:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 4.40

40 Եվ պահես Նրա կանոններն ու պատվիրանները, որոնք ես այսօր քեզ պատվիրում եմ, որ քեզ համար և ՔԵԶՆԻՑ ՀԵՏՈ ՔՈ ՈՐԴԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ բարի լինի, և ՔՈ ՕՐԵՐԸ ԵՐԿԱՐ ԼԻՆԵՆ ԱՅՍ ԵՐԿՐԻ ՎՐԱ, որ քո Եհովա Աստվածը տալիս է քեզ ամեն ժամանակի համար:

Խոսքը չի ասում. «Պահի՛ր Իմ պատվիրանները և կարճ կյանք կունենաս երկրի վրա»: Ո՛չ, Աստված փորձում է ասել մեզ, որ մենք կարող ենք *երկարացնել* մեր օրերը:

Ի՞նչ է նշանակում «երկարացնել օրերը»: Նշանակում է երկար ապրել այս երկրի վրա, և այս Խոսքի համաձայն՝ նույնիսկ երեխաներդ օրհնված կլինեն:

Այլ կերպ ասած՝ Աստծո Խոսքը կատարելով՝ մենք երկարացնում ենք մեր օրերը և ավելի երկար ենք ապրում երկրի վրա: Սա չի նշանակում, որ չենք մահանալու, սակայն նշանակում է, որ եթե Տիրոջը հնազանդվենք, կարող ենք ապրել երկար ու լավ կյանք ունենալ: Նոր Ուխտում Աստծո տված պատվիրանը, որին պետք է հնազանդվենք, սիրո օրենքն է:

Ինչպես ասացի, Առակաց գրքում մի քանի տեղ նշվում է այն մասին, թե ինչպես կարող ենք երկարացնել և կարճացնել մեր կյանքի օրերը:

ԱՌԱԿԱՑ 3.16

16 ՆՐԱ [իմաստության] **ԱՋ ՁԵՌՔԻՆ ՕՐԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ** [երկար կյանք] **ԿԱ, նրա ձախ ձեռքին՝ հարստություն և փառք:**

ԱՌԱԿԱՑ 9.11

11 Որովհետև ՔՈ ՕՐԵՐՆ ԻՆՁՆՈՎ [Աստծո Խոսքի իմաստությամբ] ԿՇԱՏԱՆԱՆ, և ՔՈ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԻՆԵՐԸ ԿԱՎԵԼԱՑՆԵՍ:

ԱՌԱԿԱՑ 10.27

27 ՏԻՐՈՋ ԵՐԿՅՈՒՂԸ ԿԱՎԵԼԱՑՆԻ ՕՐԵՐԸ, և ամբարիշտների օրերը կկարճանան:

ԱՌԱԿԱՑ 28.16

16 Խոհեմությունը պակաս իշխանի զրկանքը շատ կլինի, իսկ ագահությունն ատողը ՕՐԵՐԸ ԿԵՐԿԱՐԱՑՆԻ:

Ինչպես տեսնում եք, Աստված հոգացել է այն մասին, որ մենք կարողանանք երկարացնել մեր կյանքի օրերը: Հիմա մեր հերթն է որոշելու՝ կօգտվե՞նք նրա հոգածությունից, թե՞ ոչ: Իսկ ինչպե՞ս ենք դա անում. ուրիշների հանդեպ սիրով վարվելով: Ինքնե՛րդ ուսումնասիրեք սիրո թեման Աստվածաշնչում: Կտեսնեք, թե որքան բան է Աստվածաշունչն ասում սիրո, առողջության և երկրի վրա երկար ապրելու մասին:

Իրականում վստահ եմ, որ եթե Քրիստոսի Մարմինը Աստծո սիրով վարվի, *բժշկության* կարիք չի ունենա, կկարողանա քայլել աստվածային *առողջության* մեջ:

Միայն այն փաստը, որ Աստվածաշնչում այդքան շատ է շոշափվում Աստծո սիրո թեման, ցույց է տալիս, թե որքան կարևոր է, որ Քրիստոսի Մարմինն ավելին իմանա այդ թեմայի մասին:

Երբ երիտասարդ ծառայող էի, լսեցի մի տարեց ծառայողի, որ հիսուն տարուց ավելի ծառայության մեջ էր. նրա խոսքերը տարիներ շարունակ օգնել են ինձ:

Նա ասում էր. «Եթե ինչ-որ խոսք կամ աստվածաշնչյան թեմա միայն մեկ անգամ է շոշափվում Սուրբ Գրքում, ապա դա խիստ չի կարևորվում»:

Այս խոսքերում մեծ ճշմարտություն է ամփոփված: Երբևէ մտածե՞լ էիք սրա մասին: Աստվածաշնչում գրված է. *«...երկու կամ երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի»* (Բ Կորնթ. 13.1): Քանի՞ վկաների՝ երկու կամ երեք:

Ուստի եթե ինչ-որ թեմա Աստվածաշնչում մեծ կարևորություն ունի, այն Խոսքում հիշատակվում է նորից ու նորից: Իսկ մարդիկ երբեմն վերցնում են մեկ փոքր խոսք և փորձում դրա վրա մեծ վարդապետություն կառուցել: Դա հիմարություն է:

Իսկ հիմա խորհե՛ք այն մասին, թե քանի անգամ է սիրո թեման շոշափված Աստվածաշնչում: Նոր Կտակարանը գրողները բազմիցս են գրել սրա մասին:

Եթե ցանկանում եք ուսումնասիրել աստվածաշնչյան որևէ թեմա, ապա Նոր Կտակարանում գտեք այլ խոսքեր, որոնք հաստատում են դա կամ նույն թեման: Մենք նույնքան չենք շեշտադրում Հին Կտակարանը, քանի որ Հին Ուխտում չենք: Իրականում չեք կարողանա հաջողակ քրիստոնյա լինել, եթե կանգ առնեք Հին Կտակարանի վրա:

Օրինակ՝ ոմանք սովորեցնում են, թե այս կյանքին վերաբերող խոստմունքներ չունենք: Նրանք ասում են. «Այո՛, մենք կարող ենք փրկվել և վերստին ծնվել, բայց այստեղ՝ այս աշխարհում, միակ բանը, որ կարող ենք ակնկալել, տաք ու ցուրտ օրերին թափառականի պես դեգերելն է. շուտով այս ամենն ավարտվելու է, սակայն չկան խոստմունքներ, որոնց վրա կարող ենք հենվել»:

Մի ծառայող նույնիսկ այսպիսի բան է ասել. «Երկար կյանքը Նոր Կտակարանի խոստմունք չէ. նման բան խոստացված էր Իսրայելին»:

Մի՛ ընդունեք ինչ-որ բան միայն այն պատճառով, որ ինչ-որ քարոզիչ է ասել դա: Պատանեկության տարիներից վարժեցրել եմ իմ անձը, որ անկախ այն բանից՝ ինչ կանի կամ կասի ուրիշը, նախ և առաջ ինքս ինձ պետք է հարց ուղղեմ. *«Իսկ Աստծո Խոսքն այդ մասին ի՞նչ է ասում»*:

Չենք վիճարկում այն, որ Իսրայելն ուներ երկար ապրելու խոստմունքը: Բայց երբ այդ քարոզիչն ասաց, որ դա նորկտակարանյան խոստմունք չէ, ես մտածեցի. *«Միշտ կարծել եմ, թե Եփեսացիների գիրքը Նոր Կտակարանում է»*:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.1-3

1 Որդինե՛ր, հնազա՛նդ եղեք ձեր ծնողներին Տիրոջով, որ այն է արժանը:

2 Պատվի՛ր քո հորը և մորը, ՍԱ Է ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԻՐԱՆԸ ԽՈՍՏՄՈՒՆՔՈՎ,

3 Որ ՔԵԶ ԼԱՎ ԼԻՆԻ, և ԵՐԿԱՐ ԱՊՐԵՍ ԵՐԿՐԻ ՎՐԱ:

Պողոսն ասում է, որ այն երեխաները, որոնք հնազանդվում են իրենց ծնողներին, երկար կապրեն որտե՞ղ՝ երկրի վրա: Այս խոսքը վերաբերում է մեր բնական կյանքին երկրի վրա:

Արդյո՞ք Պողոսն ասում է՝ հնազանդվե՛ք ծնողներին, որ *կարճ* կյանք ունենաք երկրի վրա: Ո՛չ, նա ասում է, որ եթե հնազանդվում եք ծնողներին, ոչ միայն երկար կապրեք երկրի վրա, այլև լավ կյանք

կունենաք:

Իսկ եթե քայլեք աստվածային սիրո մեջ, կպատվե՞ք ձեր ծնողներին: Իհարկե, այո՛: Ծնողներին պատվել նշանակում է սիրով վարվել: Այդ իսկ պատճառով ինչ իրավիճակ էլ ստեղծվի, հարցրե՛ք ինքներդ ձեզ. *«Ի՞նչ կաներ սերը»*:

«Պատվի՛ր քո հորը և մորը» խոսքը Պողոսը մեջբերում է Հին Կտակարանի Տասը պատվիրաններից:

> **ԵԼԻՑ 20.12**
>
> **12 Պատվի՛ր քո հորը և քո մորը, որ քո օրերը երկարանան այն երկրի վրա, որ քո Եհովա Աստվածը կտա քեզ:**

Գուցե ինչ-որ մեկն ասի. «Ես կարծում էի, թե Տասը պատվիրանները պահելու կարիք չկա»: Ես նման բան չեմ ասել, այլ ասել եմ, որ եթե սիրով ենք վարվում, ինքնըստինքյան կատարում ենք *բոլոր* Տասը պատվիրանները:

Ծնողներին հնազանդ լինելու պատվիրանը Տասը պատվիրաններից առաջինն է, որ խոստմունք է պարունակում: Սա Աստծո խոստմունքն է ձեզ. եթե պատվեք ձեր հորը և մորը, ապա «ձեզ համար *լավ* կլինի և *երկար* կյանք կունենաք այստեղ՝ երկրի վրա»:

Եթե երեխաները աստվածային սիրով վարվեն ծնողների հետ, ապա կհնազանդվեն նրանց: Այն երեխաները, որոնք հնազանդ են ծնողներին, երկար ապրելու մասին խոստմունքի կրողներն են, քանի որ այդ պատվիրանը կատարում են՝ պահելով Նոր Կտակարանի սիրո օրենքը:

Սակայն կան մարդիկ, որոնք կարծում են, թե Աստծո Խոսքը կգործի իրենց կյանքերում՝ անկախ այն բանից՝ իրենք ճիշտ են ապրում և վարվում են սիրով, թե ոչ: Դա այդպես չէ: Հավատքի բոլոր դավանություններն անարդյունք կլինեն, եթե ճիշտ չեք ապրում:

Ծնողնե՛ր, սիրո՛վ վարվեք ձեր երեխաների հետ

Կա նաև սրա հակառակ կողմը: Եթե երեխաները պետք է սիրով վարվեն ծնողների հետ, որ երկար կյանք ունենան երկրի վրա, ապա ծնողները ևս ունեն երեխաների հետ սիրով վարվելու պատասխանատվություն:

Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց ես երեխաներիս մեծացնելիս երբեմն նրանցից ներողություն խնդրելու առիթներ եմ ունեցել: Ես նրանց ասում էի. «Ես ճիշտ էի ձեզ ուղղելու հարցում, բայց սխալ կերպ դա

արեցի. խնդրում եմ, ներե՛ք ինձ»: Աստծո սերը ձեր սրտում ունենալով երեխաներին մեծացնելը լիովին այլ արդյունք է տալիս:

Եթե ծնողները սիրով վարվեն իրենց երեխաների հետ և նրանց առջև ճիշտ կյանք վարեն, դա իր դրական ազդեցությունը կունենա երեխաների վրա՝ հոգևոր, մտավոր և ֆիզիկական առումներով: Դա կազդի անգամ նրանց առողջության վրա:

Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց ես ամուր համոզմունքներ ունեմ այս հարցերից շատերի շուրջ: Գուցե ինքս եմ բարկությանը տեղ տալիս, կամ գուցե արդար վրդովմունք է բարձրանում ներսումս: Բայց մարդիկ, որոնք լքում են իրենց ընտանիքները և թողնում իրենց երեխաներին, պետք է իմանան, որ գալու է օրը, և վճարելու են դրա համար: Եթե միայն նրանք հասկանային, թե ինչ ազդեցություն է ունենում երեխայի վրա ծնողից լքված լինելը:

Տարիներ առաջ Կալիֆոռնիայում հավաքույթ էի անցկացնում, երբ ձեռքս մի թերթ ընկավ, և կարդացի, որ գիտաշխատողները ուսումնասիրություն էին կատարել Կալիֆոռնիայի քրեակատարողական հիմնարկներում և պարզել, որ այնտեղ գտնվող ծանր հանցագործություն կատարած բոլոր անձինք վաղ տարիքում բռնության էին ենթարկվել, բոլորն առանց բացառության:

Սա չի նշանակում, որ ծնողները չպետք է պատժեն իրենց երեխաներին: Ծնողը, իհարկե, պետք է պատժի երեխային: Նույնիսկ երբ սիրով ես վարվում երեխաներիդ հետ, ժամանակ առ ժամանակ նրանց նախատելու կարիք է լինում: Երբեմն անհրաժեշտ է լինում նույնիսկ ապտակել: Իսկ երբեմն ստիպված ենք տղաներին ավելի շատ պատժել, քան աղջիկներին:

Բայց ես Քենին երբեք չեմ ապտակել, առանց նախ նրա համար Խոսքը կարդալու: Եթե բարկությամբ եք ապտակում երեխային, սխալ եք գործում նրա հանդեպ, քանի որ դա սիրով վարվել չէ:

Մինչ Քենին ապտակելը բացում էի Աստվածաշունչը՝ Եփեսացիների գրքի նշված հատվածը, ու ասում. «Որդի՛ս, ապտակիս պատճառն այն չէ, որ ուզում եմ քեզ հետ վատ վարվել: Ընդհակառակը, ցանկանում եմ, որ քեզ համար լավ լինի, և դու երկար կյանք ունենաս այս երկրի վրա»: Հետո կարդում էի Եփեսացիների 6.1-3-րդ խոսքերը:

Ես ու կինս ամեն գիշեր քնելուց առաջ մեր երեխաների համար կարդում էինք Խոսքը և նրանց հետ աղոթում: Իսկ երբ դպրոցական էին, Խոսքը կարդում և աղոթում էինք ամեն առավոտ՝ մինչ դպրոց գնալը:

Մեր երկու երեխաներն էլ մեծացել են՝ Տիրոջը ծառայելով, իսկ հիմա ձեռնադրված ծառայողներ են: Հավատքի ոչ մի դավանություն օգուտ չէր տա, եթե մենք սիրով չվարվեինք նրանց հետ և նրանց առջև անարատ կյանքով չապրեինք:

Որպես ծնող՝ երբեմն ստիպված եք նախատել ձեր երեխաներին, քանի որ Աստվածաշունչն էլ ասում է, որ բաց ընկած երեխան անարգանք կբերի ծնողներին (Առ. 29.15): Սակայն դու կարող ես վարվել աստվածային սիրով և միաժամանակ խրատել քո երեխային:

Հիշում եմ՝ մի երեկո Քենը եկավ իմ աշխատասենյակ, երբ աղոթում էի (այդ ժամանակ նա վեց տարեկան էր), ու ասաց.

«Հայրի՛կ, խնդրում եմ, որ ներես ինձ»:

«Ինչի՞ համար, որդի՛ս»,- հարցրի ես:

«Դու այսօր առավոտյան ասել էիր ինձ, որ աղբը թափեի, իսկ ես դա չեմ արել: Կարդա՛ ինձ համար այն խոսքը, որտեղ ասվում է՝ «քեզ համար լավ կլինի, հիվանդ չես լինի և երկար կյանք կունենաս երկրի վրա»»:

Ես նրա համար կարդացի Եփեսացիների 6.1-3-րդ խոսքերը, հետո ասացի. «Ես քեզ ներում եմ, տղա՛ս: Հիմա ե՛կ ծնկի գանք այստեղ և խնդրենք, որ Տերն էլ ների քեզ»:

Կա խոստմունք, որը հետևում է ծնողներին պատվելուն և նրանց հետ սիրով վարվելուն. այդ խոստմունքը երկար ու լավ կյանքն է:

Բոլորս էլ գիտենք, որ կարող ենք իմանալ աստվածաշնչյան այս կամ այն ճշմարտությունը, բայց դրանից ոչ մի օգուտ չստանալ, եթե չենք կիրառում այն: Սիրո սկզբունքները կիրառելն է, որ պտուղ է բերում:

Աստվածային սերը կարևոր է կյանքի բոլոր բնագավառների համար: Սիրով վարվելն ազդեցություն է ունենում կյանքի բոլոր ոլորտների վրա՝ ներառյալ նաև նրա, թե որքան երկար կապրեք այս երկրի վրա: Սկսե՛ք գործի դնել Աստծո սերը և կտեսնեք, թե որքան մեծ պտուղ այն կարող է բերել:

Գլուխ 7

Ինքներդ ձեզ դատե՛ք, և չեք դատվի

Երբ Աստված տվեց մեզ Նոր Կտակարանի սիրո օրենքը, ասաց, որ պետք է սիրենք մեր մերձավորին, ինչպես ինքներս մեզ: Սա նշանակում է, որ մենք պետք է սիրենք մեր ընկերոջը, հավատացյալ եղբորն ու քրոջը այնպես, ինչպես սիրում ենք ինքներս մեզ: Աստվածաշունչն ասում է նաև. *«Ուրեմն քանի որ ժամանակ ունենք, բարի գործենք ամենին, մանավանդ հավատքի ընտանիքներին»* (Գաղ. 6.10):

Կարիք չկա նայելու շուրջբոլորն ու դատելու ուրիշներին, տեսնելու, թե որքանով են ուրիշները սիրով վարվում: Մենք պետք է ամեն բան անենք, որ *ինքներս* ճիշտ վարվենք, *ինքներս* սիրո մեջ քայլենք: Միակ բանը, որ ուրիշներին դատելու հետևանքով կունենանք, վեճերն ու տարաձայնություններն են Քրիստոսի Մարմնում:

Ուշադրությունն դարձրեք, թե ինչ է ասվում Գաղատացիների 5.15-ում վեճերի ու տարաձայնությունների մասին:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.15
15 Բայց եթե իրար կծեք և ուտեք, զգուշացե՛ք, որ իրարից չփչանաք:

Իրար կծելն ու ուտելը սիրով վարվել չեն: Ոմանց հաճախ հիվանդանալու և վաղաժամ մահվան պատճառն այն է, որ սիրո մեջ չեն քայլում: Վեճեր ու տարաձայնություններ ցանելը և ուրիշներին դատելն ունենում են հետևանքներ:

ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 6.7,8
7 Մի՛ խաբվեք. Աստված չի ծաղրվի,
8 ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՆՉ ՈՐ ՄԱՐԴ ՍԵՐՄԻ, ԱՅՆ ԷԼ ԿՀՆՁԻ:

Սովորաբար այս խոսքը կարդալիս մտածում ենք այն մեղավո-

րի մասին, որ հարբում է, հայհոյում և ստում: Բայց արդյոք կանգ առել և խորհե՞լ եք այս խոսքի շուրջ: Այն հասցեագրված է ոչ թե մեղավորներին, այլ մեզ՝ քրիստոնյաներիս: «Մարդ ինչ որ սերմի, այն էլ կինձի» ասելով՝ Աստված նկատի ուներ հավատացյալներին: Եթե որպես հավատացյալ սիրով չեք վարվում, ապա համապատասխան հունձք կունենաք:

Իհարկե, այս խոսքում կա ճշմարտություն, որը վերաբերում է մեղավորներին: Եվ ոմանք այս խոսքերը քարոզում են մեղավորներին, բայց Պողոսը դրանք հասցեագրել է Գաղատիայի հավատացյալներին և ամբողջ աշխարհի քրիստոնյաներին:

Այս խոսքերով նա քրիստոնյաներին հորդորում էր արթնանալ և հասկանալ, որ թեև Աստված սիրող Աստված է, Նա չի ծաղրվում. մարդը *հնձելու է* այն, ինչ ցանում է: Այլ կերպ ասած՝ վաղ թե ուշ դա վատ է անդրադառնալու մարդու վրա, և մարդու «մեղքերն իրեն գտնելու են» (Թվոց 32.23):

Ես մոտ վաթսունհինգ տարի անցկացրել եմ ծառայության մեջ և տեսել եմ, որ շարունակաբար սիրով վարվելու դեպքում որոշ մարդիկ, որոնք ձեզ դատել և ձեր հանդեպ սխալ են վարվել, գալիս են ձեզ մոտ և օգնություն խնդրում: Շատ հաճախ հենց Աստված է նրանց հետ ուղարկում: Եվ փա՛ռք Աստծուն, դուք կկարողանաք օգնել նրանց, քանի որ սիրո մեջ եք քայլում:

Սակայն Գաղատացիների 6.7-ում գրված խոսքը մեկ այլ կիրառություն ևս ունի:

Սիրով վարվելու համար նույնպես վարձք կա: Եվ այսպես, ի՞նչ կինձեք սիրով վարվելով՝ առողջություն, բժշկություն, երկար կյանք և բարգավաճում:

Եթե ձեր ներսում բնակվող սիրո բնությունը շարունակաբար սնեք Խոսքով և կիրառեք Խոսքը, ապա ձեր կյանքում կաճի և կզարգանա աստվածային սերը: Իսկ աստվածային սերը կիրառելով և դրա համաձայն գործելով՝ կինձեք սիրով վարվելու օգուտներն ու արդյունքները:

Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց ես պատրաստվում եմ սեր ցանելու: Եթե ցանեմ Աստծո սերը, կկատարեմ Օրենքը և կինձեմ այն արդյունքները, որոնք սերն է բերում: Ինձնից կհեռացվի հիվանդությունը, և Աստված կլրացնի իմ օրերի թիվը:

Ճանաչե՛ք Տիրոջ Մարմինը

Մենք պետք է գիտակցենք, որ Նոր Ուխտում մեծ մասամբ մեզնից է կախված՝ կլրացնենք մեր օրերի թիվը, թե ոչ: Ինչո՞ւ. քանի որ մեր մարմինների բժշկությունը ապահովված է քավությամբ: Աստվածաշունչն ասում է. *«...Նա մեր հիվանդությունները վեր առավ և մեր ցավերը կրեց»* (Մատթ. 8.17):

Հիսուսն այս խոսքերը մեջբերել է Եսայի 53.4-ից.*«Հիրավի՛, Նա մեր ցավերը վեր առավ և մեր վշտերը բեռնեց Իր վրա»:*

Եբրայերենից բառացի թարգմանության մեջ ասվում է. «Նա կրեց մեր *հիվանդությունները* և տարավ մեր *ցավը*»:

Ա Պետրոս 2.24-ում խոսվում է նաև մեր բժշկության ուխտի մասին:

Ա ՊԵՏՐՈՍ 2.24

24 Որ Ինքը մեր մեղքերն Իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք, որ ՆՐԱ ԽՈՑԵՐՈՎ ԲԺՇԿՎԵՑԻՔ:

Ուստի բժշկությունը պատկանում է մեզ: Սակայն մենք երբևիցե չենք կարողանա Աստծո տված բժշկությունը վայելել, եթե չսովորենք սիրով վարվել:

Եթե Աստված Քավությամբ մեզ համար հասանելի է դարձրել բժշկությունը, ապա ինչո՞ւ բոլորը չեն բժշկվում: Կա մի բան, որը պետք է հասկանանք սիրով վարվելու վերաբերյալ, եթե ցանկանում ենք առողջ լինել: Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ է ասում Աստվածաշունչը Ա Կորնթացիների 11-րդ գլխում:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 11.23-30

23 Որովհետև ես Տիրոջից ընդունեցի այն, որ ձեզ էլ ավանդեցի, որ Տեր Հիսուսն այն գիշերը, որ մատնվում էր, հաց առավ

24 և գոհանալուց հետո կտրեց և ասաց՝ առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը, որ ձեզ համար կոտրվում է. այս արե՛ք Իմ հիշատակի համար:

25 Այնպես էլ ընթրիքն ուտելուց հետո բաժակն առավ և ասաց՝ այս բաժակը նոր ուխտն է Իմ արյունով. այս արե՛ք, քանի անգամ որ խմեք, Իմ հիշատակի համար:

26 Որովհետև քանի անգամ որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, Տիրոջ մահը պատմեք, մինչև որ Նա կգա:

27 Ուրեմն ՈՎ ՈՐ ԱՅՍ ՀԱՑՆ ՈՒՏԻ ԿԱՄ ՏԻՐՈՋ ԲԱԺԱԿԸ ԽՄԻ ԱՆԱՐԺԱՆՈՒԹՅԱՄԲ, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին և արյանը:

28 Ուրեմն ԹՈՂ ՄԱՐԴԸ ՓՈՐՁԻ ԻՐ ԱՆՁԸ և ապա այն հացից ուտի և այն բաժակից խմի:

29 Որովհետև անարժանությամբ ուտողը և խմողը իր անձի համար դատաստան է ուտում և խմում, որ ՉԻ ՈՐՈՇՈՒՄ ՏԻՐՈՋ ՄԱՐՄԻՆԸ:

30 Նրա համար էլ ձեր մեջ շատ ՀԻՎԱՆԴՆԵՐ և ՑԱՎԱԳԱՐՆԵՐ կան, և ՇԱՏԵՐՆ ԷԼ ՆՆՋԱԾ ԵՆ:

Եկեք վերադառնանք և վերլուծենք այն, ինչ վերևում կարդացինք: Հացը վերցնելով՝ Հիսուսն ասաց. «Սա Իմ Մարմինն է, որ ձեզ համար կոտրվում է»: Հիսուսի վերքերով է, որ մենք բժշկվել ենք: Նրա մարմինը կոտրվեց մեզ համար որպես Քավություն, որպեսզի կարողանանք մեր ֆիզիկական մարմիններում բժշկություն ընդունել:

Այնուհետև Հիսուսն ասաց. «Այս բաժակը Նոր Ուխտն է Իմ արյունով»: Ըստ Աստվածաշնչի՝ առանց արյուն թափելու չկա մեղքերի թողություն (Եբր. 9.22): Հիսուսի արյունը մեր փրկագնման և մեր մեղքերից մաքրման նշանն է: Սուրբգրային տվյալ հատվածում խոսվում է թե՛ մեր մարմինների բժշկության և թե՛ մեր մեղքերի թողության մասին:

Իսկ հիմա եկեք ուշադրություն դարձնենք 27-րդ խոսքում նշված «անարժանություն» բառին:

«Ուրեմն ով որ այս հացն ուտի կամ Տիրոջ բաժակը խմի անարժանությամբ, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին և արյանը»:

Այստեղ օգտագործված է «անարժանություն» բառը: Հաճախ մարդիկ ասում են՝ «Ես ինձ անարժան եմ զգում»՝ կարծելով, թե այս խոսքը վերաբերում է անարժանության զգացողությանը: Սակայն 27-րդ խոսքում *չի* ասվում, թե մենք անարժան ենք՝ մասնակցելու Տիրոջ Ընթրիքին:

«Անարժանությամբ» բառը վերաբերում է *վարվելակերպին և վերաբերմունքին*, որով մասնակցում ենք Տիրոջ Ընթրիքին:

Եթե կարդաք նախորդ խոսքերը և ուսումնասիրեք համատեքստը,

կտեսնեք, որ մարդիկ հավաքվում և ճաշում էին միասին, ինչպես նաև մասնակցում Տիրոջ Ընթրիքին: Սակայն նրանցից ոմանք գինի էին խմում ու նույնիսկ հարբում: Ուստի Պողոսն ասում է. «Նրանք, ովքեր անարժանությամբ են մոտենում Տիրոջ Ընթրիքին, իրենց անձերի վրա դատապարտություն կամ դատաստան են բերում»:

Այնուհետև Աստվածաշունչը շարունակում է. «Այս պատճառով է, որ ձեզանում շատերն են հիվանդ ու ցավագար, և շատերը վաղաժամ ննջում կամ մահանում են»: Սա նշանակում է, որ հիվանդ ու ցավագար լինելը նորմալ չէ: Պողոսն այստեղ խոսում է մարդու ֆիզիկական մարմնի մասին: Նա ասում է, որ նրանք, ովքեր անարժանությամբ են մոտենում Տիրոջ Ընթրիքին, կարող են հիվանդանալ, ցավեր ունենալ կամ նույնիսկ վաղաժամ մահանալ:

Խոսքում գրված է. «Տիրոջ մարմինը չճանաչելու (*կամ չորոշելու*) պատճառով շատերը հիվանդ են և ցավագար, շատերն էլ ննջած են»: «Ննջել» բառն Աստվածաշնչում վերաբերում է գերեզմանում ննջող մարդկային մարմնին և Տիրոջ մոտ գնացած հոգուն:

Ուշադրությո՛ւն դարձրեք այն հանգամանքին, որ նրանք *վաղաժամ* են մահացել: Նրանց օրերի թիվը *չէր* լրացել: Վստահաբար, վաղաժամ մահն Աստծո կամքը չէր. եթե ճանաչեին Տիրոջ մարմինը, չէին լինի հիվանդ և ցավագար և վաղաժամ չէին մահանա:

Աստվածաշունչն ասում է՝ երբեմն կա *պատճառ, որ* մարդիկ հիվանդ և ցավագար են ու նույնիսկ վաղաժամ են մահանում. Տիրոջ մարմինը չճանաչելով՝ իրենք իրենց վրա դատաստան են բերում:

Նկատեցի՞ք, որ չի խոսվում Տիրոջ արյունը ճանաչելու մասին: Գրված է. «...չեն որոշում Տիրոջ *մարմինը*»: «Որոշել» նշանակում է *տեսնել և հասկանալ*:

Հաղորդության հացը կտրելը Հիսուսի կոտրված մարմնի խորհրդապատկերն է: Եթե չեք տեսնում ու հասկանում, որ Հիսուսի մարմինը կոտրվել է ձեր մարմնի պահպանության և բժշկության համար, ապա նույնիսկ եթե սիրով վարվեք, կարող եք հիվանդանալ ու ցավեր ունենալ, քանի որ չեք յուրացրել այն բժշկությունը, որը ձեզ տրվել է Գողգոթայի Խաչով:

Քրիստոսը Զատկի Գառն է: Նրա մարմինը կոտրվել է մեր ֆիզիկական մարմնի պահպանության և բժշկության համար՝ *«Նրա խոցերով մենք բժշկվեցինք»* (Ա Պետր. 2.24): Եթե դուք չգիտեք, որ Նրա խոցերով բժշկվել եք, ապա կարող եք ֆիզիկապես հիվանդանալ և ցավեր ունենալ, գուցե նույնիսկ վաղաժամ մահանաք և չլրացնեք ձեր օրերի թիվն այստեղ՝ երկրի վրա:

Կա նաև «Տիրոջ մարմինը չորոշելու» մյուս կողմը: Կարող եք հիվանդանալ և վաղաժամ մահանալ, եթե չճանաչեք և չհասկանաք, որ Տիրոջ հոգևոր մարմինը՝ Քրիստոսի Մարմինը, մեկ է (Կող. 3.15):

Այլ կերպ ասած՝ այսօր երկրի վրա է Քրիստոսի հոգևոր Մարմինը, որն ընդգրկում է աշխարհի վերստին ծնված բոլոր հավատացյալներին (Կող. 1.18): Երբ Հիսուսը երկրի վրա էր, նա միայն ֆիզիկապես էր այստեղ: Իսկ այսօր Քրիստոսի Մարմինը բաղկացած է ամբողջ աշխարհի հավատացյալներից, և մենք պետք է ճանաչենք Քրիստոսի Մարմինն ու սիրով վարվենք նրանց հետ:

Քրիստոսի Մարմինը՝ մեր եղբայրներին և քույրերին, չճանաչելով և նրանց հանդեպ սիրով չվարվելով՝ կարող ենք մեր մեջ տեղ տալ հիվանդությանը, ցավերին և անգամ վաղաժամ մահվանը: Բազում հավատացյալների հիվանդ և ցավագար լինելու պատճառն այն է, որ չեն ճանաչել Քրիստոսի Մարմինն ինչպես հարկն է:

Եթե դուք սիրով չեք վարվում Քրիստոսի Մարմնի անդամների հետ, ապա կլինեք հիվանդ ու ցավագար և չեք երկարացնի ձեր օրերն այստեղ՝ երկրի վրա, ընդհակառակը՝ կկարճացնեք դրանք և կարող եք վաղաժամ մահանալ: *Ես* չէ, որ ասում եմ դա, այլ Աստվածաշունչը:

Որոշ քրիստոնյաներ վաղաժամ մահացել են, քանի որ Քրիստոսի Մարմնի անդամների հետ սիրով չեն վարվել: Դա Աստծո լավագույնը չէր նրանց համար, բայց սիրո պակասը կարճացրել է նրանց օրերը:

Սիրո մեջ չքայլելը կարող է կարճացնել ձեր կյանքը, քանի որ դա սատանային հենակետ է տալիս ձեր կյանքում: Սիրուց դուրս ցանկացած քայլ քայլ է դեպի մեղք, իսկ մեղքը դուռ է բացում սատանայի համար դեպի ձեր կյանք: Ուստի այս երկրի վրա ձեր օրերը լրացնելու համար հարկավոր է սիրով վարվել:

Աստծո սերը երբեք չի ձախողվում: Մեր մեջ գործող Աստծո սերն է, որ թույլ է տալիս սիրով վարվել Քրիստոսի Մարմնի ամեն անդամի հետ. այն կարող է լուծել ամեն վեճ ու անհամաձայնություն: Այն կարող է լուծել ցանկացած խնդիր, քանի որ Աստված սեր է: Տարիների ընթացքում տեսել եմ, թե ինչպես է Աստծո սերը գործել անհնարին իրավիճակներում:

Գուցե քրիստոնյաները համաձայնության չգան փոքր հարցերի շուրջ, բայց մի բան, որին բոլորս համաձայն ենք, այն է, որ Աստծո Խոսքը ճշմարիտ է: Բոլորս կհամաձայնենք նաև, որ Հիսուս Քրիստոսն է Տերը, և առանց Նրա թափած արյան չկա մեղքերի թողություն:

Անկախ այն բանից, որ մարդիկ հնարավոր է չհամաձայնեն ձեզ հետ վարդապետական բոլոր հարցերում, դուք կարող եք սիրով վարվել նրանց հետ, նույնիսկ եթե նրանք ձեզ հետ սիրով չեն վարվում: Սիրով վարվելը չափազանց կարևոր է:

Ինքներդ ձեզ չդատելու պատճառով Աստծո դատաստանին եք արժանանում

Թույլ տվեք բացատրել ձեզ, թե որքան կարևոր է սիրով վարվել նրանց հետ, որոնք Քրիստոսի Մարմնում են:

1947-1958 թվականներին Ամերիկայում բժշկության արթնություն էր: Բժշկության ծառայության մեջ մոտ 120 հոգի էինք և ներկայացնում էինք ավետարանիչների մի կազմակերպություն, որը կոչվում էր «Բժշկության ձայնը»: Մենք անցկացնում էինք համաժողովներ, իսկ Գորդոն Լինդսին իր «Բժշկության ձայնը» ամսագրում հրատարակում էր բժշկության բազում վկայություններ:

Եղբայր Օրալ Ռոբերթսը ծառայության առաջնագիծ եկավ մոտ 1948 թվականին և ձեռք բերեց մի վրան, որում 20000 մարդ էր տեղավորվում: «Բժշկության ձայնը» կազմակերպությունում միայն մեկ մարդ ուներ ավելի մեծ վրան, քան Ռոբերթսինն էր: Նա հավելյալ մաս էր ավելացրել վրանին, որպեսզի այնտեղ 22000 մարդ տեղավորվեր, և երբեմն այդ հատվածը ևս լցվում էր:

Այդ մարդն էլ այդ օրերի «Բժշկության ձայնի» բժշկության առաջատար ավետարանիչներից էր: Այդ ժամանակ ոչ ոք բժշկության այնքան մեծ ծառայություն չուներ, որքան նա:

Այդ ավետարանչի ծառայությունների ժամանակ ականատես եմ եղել երբևէ տեսածս ամենամեծ հրաշքներին:

Բայց մի օր Տերն ինձ հետևյալն ասաց. «Գնա՛ և ասա՛ նրան, որ երկար չի ապրի, եթե չսկսի ինքն իրեն դատել»: Այդ ժամանակ նա ընդամենը երեսունհինգ տարեկան էր:

Տերն ասաց ինձ. «Առաջին բանը, որում նա պետք է ինքն իրեն դատի, իր ծառայակցի հետ սիրով չվարվելն է: Երկրորդը՝ նա պետք է դատի իրեն փողի հարցում»:

Տերը նշեց նաև երրորդ բանը, որում այդ ավետարանիչը պետք է ինքն իրեն դատեր, և դա սննդակարգն էր: Չեմ ուզում վիրավորական որևէ բան ասել, բայց նա եզան պես գեր էր և սնվում էր ձիու պես:

Հարկ չկա չափից դուրս կենտրոնանալ առողջ սննդակարգի

վրա: Տերը դա նկատի չուներ: Մյուս կողմից՝ հիշեցի, թե ինչ էր ասել Ջոն Ուեսլին. «Չեմ ապրում, որ ուտեմ. ուտում եմ, որ ապրեմ»:

Արդյոք սուրբգրայի՞ն էր այն, որ այդ ծառայողը ինքն իրեն պետք է դատեր. իհարկե՛ այո: Տերը փորձում էր զգուշացնել, քանի որ եթե այդ մարդն ինքն իրեն դատեր, ապա Տերը ստիպված չէր լինի դա անել: Այդպես է գրված Աստվածաշնչում:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 11.31,32

31 Որովհետև ԵԹԵ ՄԵՐ ԱՆՁԵՐԸ ԴԱՏԵԻՆՔ, ՉԷԻՆՔ ԴԱՏԱՊԱՐՏՎԻ:

32 Բայց ԴԱՏՎԵԼՈՎ ՏԻՐՈՋԻՑ՝ ԽՐԱՏՎՈՒՄ ԵՆՔ, որ աշխարհի հետ չդատապարտվենք:

Հիշում եմ, մեկ անգամ ես ու կինս գնում էինք հավաքույթ անցկացնելու և ճանապարհին կանգ առանք՝ այդ մարդու վրանային հավաքույթին ներկա լինելու համար: Այն քաղաքում, որտեղ նա հավաքույթ էր անցկացնում, կար խուլուհամրերի պետական հաստատություն:

Այդ հաստատությունից հինգ խուլուհամրի էին բերել՝ մասնակցելու բժշկության ավետարանչական հավաքույթին: Այդ ծառայողը ձեռք դրեց նրանց վրա, ու բոլոր հինգը մեկ ակնթարթում բժշկվեցին: Նրանք բժշկվեցին հազարավոր մարդկանց աչքերի առջև:

Այդ պահին այդ ավետարանիչը դադարեցրեց ծառայությունը և սկսեց նվիրատվություն հավաքել: Նա այսպիսի հայտարարություն արեց. «Մի՛ եկեք առաջ, եթե նվազագույնը 50 դոլար չունեք նվիրաբերելու համար»:

Մարդիկ, մեկը մյուսի վրայով վազելով, գնում էին առաջ՝ տալու իրենց նվիրատվությունը: Սա տեղի էր ունենում հիսունական թվականների սկզբին: Այն ժամանակ գումարը շատ ավելի մեծ արժեք ուներ, քան ներկա գնաճի օրերում: Սակայն չես կարող Աստծո տվածն օգտագործել՝ գումար հավաքելու համար:

Եվ եթե մարդիկ իրենք իրենց չդատեն, ապա վաղ թե ուշ նման բաներ կանեն:

Հիշենք, թե ինչ է ասում Աստվածաշունչը. *«Մի՛ խաբվեք. Աստված չի ծաղրվի, որովհետև ինչ որ մարդ սերմի, այն էլ կհնձի»* (Գաղ. 6.7): Սա վերաբերում է մարդու կյանքի բոլոր բնագավառներին:

Մեկ այլ գերբնական բժշկություն եմ տեսել այդ մարդու ծառայության ժամանակ, որը հաստատել են բժիշկները: Նրա հավաքույթ-

ներից մեկին մի կնոջ էին բերել պատգարակի վրա: Այդ կնոջ մարմինը փայտացած էր:

Նա խիստ հազվագյուտ հիվանդությամբ էր տառապում, և բժշկությունը չէր կարողանում ոչնչով օգնել նրան: Նրա մարմնին դիպչելիս, թվում էր, փայտ ես շոշափում:

Երբ այդ ծառայողը ձեռք դրեց նրա վրա, նա վայրկենապես բժշկվեց: Այս ծառայողի բժշկության ծառայությունը հրաշալի էր. կույրեր էին իսկույն բժշկվում: Բայց Տերն ասաց ինձ. «Գնա՛ և ասա՛ նրան, որ երկար չի ապրի, եթե ինքն իրեն չդատի»:

Ուստի գնացի նրա հետ խոսելու, այդ պահին նա ուրիշի հետ էր զրուցում: Մինչ կվերջացներ զրույցը, բնական մարդկային միտքս ղեկը վերցրեց ձեռքը, և ես մտածեցի. *«Նա եղբայրների հետ սիրով չի վարվում. եթե ասեմ նրան, ինչ Տերն է ասել, ամենայն հավանականությամբ կապտակի ինձ»*: Մինչ ես մտքերի մեջ էի, այդ ավետարանիչը հեռացավ, և ես նրա հետ խոսելու այլ հնարավորություն չունեցա:

Երեք տարի անց ես ու կինս Լոս Անջելեսում մասնակցում էինք «Բժշկության ձայնի» համաժողովին «Անգելուս Թեմփլ» եկեղեցում: Այն ժամանակ ամեն տարի Գոհաբանության օրերին անցկացնում էինք «Բժշկության ձայնի» համաժողովներ: Ծառայողի կինը ներկաներին աղոթքի հրավիրեց իր ամուսնու համար, քանի որ բժիշկներն ասել էին, որ նա մահվան շեմին է: Նա ընդամենը երեսունութ տարեկան էր:

Եղբայր Լինդսին այդ մասին հայտարարեց ամբիոնից: Նա ասաց, որ բժշկության ծառայությունը կտուժի, եթե Ամերիկայի առաջատար բժշկության ծառայողը մահանա այսքան վաղ տարիքում: Այնպես որ «Բժշկության ձայնի» բոլոր ծառայողներին հրավիրեց բեմ՝ ձեռք ձեռքի բռնած այդ մարդու համար աղոթելու: Ես տեղում սկսեցի աղոթել:

Երբ նստարանների շարքերի միջով քայլում էի դեպի բեմ, Տերն ասաց ինձ. «Մի՛ բարձրացիր այնտեղ»: Ես քարացած կանգ առա. «Ինչո՞ւ ոչ, Տե՛ր. նա ընդամենը երեսունութ տարեկան է, այնքան մեծ չէ, որ մահանա»: Երեք տարի ու մի քանի ամիս էր անցել, և ես մոռացել էի՝ ինչ էր Տերն ինձ ասել նրա մասին:

Տերն ասաց. «Նա իրեն չէր դատում և իր ծառայակիցների հետ սիրով չէր վարվում, ուստի Ես նրան դատեցի և հանձնեցի սատանային՝ մարմնի կորստի համար, որ Տեր Հիսուսի օրը նրա հոգին փրկվի: Հանգի՛ստ թող նրան, քանի որ մահանալու է»: Ես շրջվեցի և շարքերի միջով հետ քայլեցի:

Երբ հետ էի գնում դեպի դահլիճ, ինձ մոտեցավ կինս և հարցրեց. «Տերն ի՞նչ ասաց քեզ»:

«Ինչպե՞ս իմացար, թե Նա ինձ ինչ-որ բան է ասել»,- ասացի ես:

«Դու քարացած կանգ առար և գունատված հետ քայլեցիր»,- պատասխանեց նա:

Ես պատմեցի նրան, թե ինչ էր Տերն ասել: Այդ պահին Տերը նշեց միայն այն փաստը, որ այդ ավետարանիչը չի դատել իրեն ուրիշների հանդեպ սիրով չվարվելու համար: Վաղաժամ՝ երեսունութ տարեկանում մահանալը Աստծո լավագույնը չէր նրա համար, բայց շատ ավելի լավ էր, քան դժոխք գնալը:

Ինչպես տեսնում եք, հաճախ պատճառ կա մարդկանց հիվանդությունների և վաղաժամ մահերի համար: Եվ մինչ նրանց բժշկության համար աղոթելը երբեմն հարկավոր է հասկանալ, թե որն է հիվանդության այդ խորքային պատճառը. գուցե կարիք լինի, որ մարդիկ որոշ շտկումներ անեն:

Մի քաղաքում այդ ծառայողն ամեն տարի վրան էր կանգնեցնում և հավաքույթներ անցկացնում տեղի եկեղեցու համար: Մյուս եկեղեցիները համագործակցում էին նրա հետ. նրա հավաքույթներին հազարավոր մարդիկ էին մասնակցում, փրկվում ու բժշկվում: Վրանը ամբողջությամբ լցվում էր մարդկանցով, այնքան, որ չէին տեղավորվում:

Որոշ ժամանակ անց նա հայտարարեց, որ այդ քաղաքում արթնության կենտրոն պիտի կառուցի և կառուցեց այն տեղի եկեղեցուց ոչ հեռու, ինչը նրան օգնում էր հավաքույթներ անցկացնելու:

Մի օր էլ նա գնաց տեղի եկեղեցու հովվի մոտ և ասաց. «Ես հիմնելու եմ իմ եկեղեցին քո եկեղեցու, այս եղբոր և այն եղբոր եկեղեցիների անդամներով»: Այդպես էլ արեց:

Սխալ բան չկար նրանում, որ նա ցանկանում էր այդ քաղաքում եկեղեցի հիմնել: Սխալն այն էր, որ նա երկու հարյուր անդամ վերցնում էր մի հովվի եկեղեցուց, երկու կամ երեք հարյուր անդամ՝ մյուս եկեղեցուց և ևս մի քանի հարյուրին քաղաքի ամենամեծ Ամբողջական Ավետարանի եկեղեցուց: Եվ գիտե՞ք ինչ պատահեց. նա մահացավ, մինչ կկարողանար վայելել իր նոր եկեղեցու «աճը»:

Ինչպես տեսնում եք, այդ ավետարանիչը սխալ վարվեց իր ծառայակից հովիվների հետ: Նա կառուցեց իր եկեղեցին մեկ ուրիշի եկեղեցու անդամներով: Սակայն սերը չար բան չի անում ընկերոջը:

Այդպես վարվող մարդը խաղում է մահվան հետ: Այդ մարդը վաղ

տարիքում մահացավ, քանի որ սիրով չէր վարվում եղբայրների հետ: Հենց այս պատճառով են որոշ հավատացյալներ վաղաժամ մահանում. նրանք կարճացնում ենք իրենց կյանքի օրերը, քանի որ սիրո մեջ չեն քայլում: Մենք պետք է սովորենք ճանաչել Տիրոջ Մարմինը՝ Քրիստոսում մեր քույրերին և եղբայրներին, և վերաբերվենք նրանց որպես Քրիստոսի Մարմնի մասի:

Այդ մարդը չապաշխարեց, ուստի Աստված ստիպված էր դատել նրան: Դա Աստծո լավագույնը չէր նրա համար, բայց եթե մարդն ինքն իրեն չդատի, Աստծո դատին կարժանանա: Նրա հետ նման բան չպետք է տեղի ունենար: Բայց նա էր պատասխանատու տեղի ունեցածի համար:

Աստծո դատին արժանանալու միտքը լուրջ է, այնպես չէ՞: Հենց այդ պատճառով էլ պետք է սթափ մոտենանք սիրո մեջ քայլելու թեմային:

Հիշե՛ք, որ Աստվածաշունչն ասում է՝ սերն ավելի մեծ է, քան հավատքը կամ հույսը. *«Ապա ուրեմն մնում է հավատք, հույս, սեր. այս երեքը, և սրանցից մեծը սերն է»* (Ա Կորնթ. 13.13): Մենք՝ Քրիստոսի Մարմնում լինողներս, չենք հմտացել Աստծո սիրո թեմայի մեջ ինչպես հարկն է:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.9

9 Սերն առանց կեղծավորության. չարն ատե՛ք, բարիին հետևե՛ք:

Երբեմն խոսքը կարդում ենք ու կանգ չենք առնում՝ խորհելու դրա շուրջ: Կեղծավորություն անել նշանակում է *ձևացնել*: Շատ անգամ մարդիկ ձևացնում են, թե սիրում են, բայց փաստացիորեն այդպես չէ: Հիմա կբացատրեմ, թե ինչ նկատի ունեմ: Նրանք ասում են. «Ես իսկապես սիրում եմ քեզ», բայց բավական է սխալվեք, և երես կթեքեն ձեզնից: Նրանց սերը պարզապես ձևականություն է:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.10

10 Եղբայրասիրության մեջ իրար վրա գթա՛ծ եղեք. պատիվ տալու մեջ ԻՐԱՐԻՑ ԱՌԱ՛Ջ ԱՆՑԵՔ:

Սերը՝ Աստծո սերը, եսակենտրոն չէ: Այն միշտ նախապատվությունը և առաջնահերթությունը տալիս է դիմացինին և երբեք առաջինն իր մասին չի մտածում: Երբ Աստված ասաց, որ սիրենք իրար, նկատի չուներ, որ սիրեինք միայն խոսքերով կամ ձևացնեինք: Նա

ցանկանում է, որ մենք սիրենք միմյանց մեր գործողություններով, ինչպես նաև մեր խոսքերով: Մեր գործողություններից պետք է երևա, որ սիրում ենք իրար:

Հարկավոր է սիրով վարվել ուրիշների հետ, նույնիսկ երբ նրանք սխալ են վարվում մեզ հետ: Ուրիշների հետ սիրով վարվելու շահը մեծ է: Եվ եթե ինքներս մեզ դատենք, չենք դատվի: Եթե ինքներս մեզ դատենք, կխուսափենք բժշկական ծախսերից: Բայց դրա համար սիրո մեջ քայլելը մեր սրտում պետք է նպատակ դարձնենք: Դա ինքնաբերաբար տեղի չի ունենա:

Երբ ճանաչում եք Տիրոջ մարմինը՝ ոչ միայն Հիսուսի ֆիզիկական մարմինը, որը կոտրվեց ձեր ֆիզիկական մարմնի բժշկության համար, այլև Քրիստոսի հոգևոր Մարմինը, կարող եք լինել ուժեղ և առողջ, ոչ թե հիվանդ ու ցավագար, ինչպես նաև կարող եք լրացնել ձեր կյանքի օրերը:

Եվ, ճիշտն ասած, Աստված մեզ համար ավելին ունի, քան մեր բժշկությունն է: Իհարկե, եթե դուք բժշկության կարիք ունեք, ապա Նա Քավությամբ հոգացել է ձեր բժշկության համար: Սակայն Աստված ավելին է արել. Նա հոգացել է, որ մենք առողջ լինենք: Առողջություն ստանալու միջոցը սիրով վարվելն է:

Արե՛ք անհրաժեշտ շտկումները

Պատահել է, որ ես մի քանի անգամ ձեռք եմ դրել բժշկության կարիք ունեցող մարդկանց վրա, որոնք եկել են իմ հավաքույթներին, բայց նրանք չեն բժշկվել: Նրանց համար աղոթել են նաև բժշկության այլ ավետարանիչներ, սակայն ապարդյուն:

Մինչդեռ շատ հաճախ, երբ այդ մարդիկ շտկումներ են արել իրենց սիրո ընթացքի մեջ, նույնիսկ կարիք չեն ունեցել, որ ինչ-որ մեկը ձեռք դնի իրենց վրա. ինքնաբերաբար բժշկվել են: Ինչպես տեսնում եք, սիրով վարվելը աստվածային բժշկության աղբյուր է, որի մասին ևս պետք է քարոզել:

Շատերս ենք ցանկանում լրացնել մեր կյանքի օրերն այս երկրի վրա: Եվ Աստվածաշունչը խոստանում է, որ դա հնարավոր է: Բայց դրա համար պետք է քայլենք Խոսքի լույսի, այդ թվում նաև ինքներս մեզ դատելու մասին Ա Կորնթացիների 11.31-րդ խոսքի ներքո:

Եթե ինչ-որ մեկը ցանկանա գնալ փոստային բաժանմունք, և ես բացատրեմ նրան ճանապարհը, իսկ նա տեղ չհասնի, ինքն է դրա համար պատասխանատու: Նույնը վերաբերում է բժշկությանը և

Աստծո օրհնություններին՝ ներառյալ նաև երկար ապրելուն: Աստվածաշունչը ցույց է տալիս մեզ մեր նպատակակետին հասնելու ճշգրիտ ճանապարհը, իսկ մեզնից պահանջվում է քայլել Խոսքի լույսի ներքո, որպեսզի ստանանք այդ օրհնությունները:

Մոտ տասներկու տարի հովիվ եմ եղել: Հովվությանս տասներկու տարիներին իմ եկեղեցու անդամներից երկուսը կամ երեքն են վայրկենապես բժշկվել: Մարդկանց մեծ մասի դեպքում նախ և առաջ պետք էր գտնել հիվանդության խորքային պատճառը, որպեսզի բժշկություն ստանային:

Նկատի չունեմ այն, որ հիվանդ մարդկանց մեղադրել եմ անօրինությունների կամ մեղքերի մեջ և սկսել փորել նրանց անցյալը: Փոխարենը աղոթել եմ, որ Սուրբ Հոգին ցույց տա ինձ, թե արդյոք նրանց բժշկությանը խանգարող ինչ-որ բան կա, ինչպես նաև աղոթել եմ, որ նրանց ցույց տա, թե որտեղ պետք է շտկումներ անեն:

Բոլոր այն դեպքերում, որոնց ականատեսն եմ եղել ես, երբ մարդիկ հեռացրել են պատճառը և իրենց սրտերում ու վերաբերմունքի մեջ անհրաժեշտ փոփոխություններն արել, անմիջապես բժշկվել են: Այդ փոփոխությունները չանելու դեպքում ոմանք կարող էին նույնիսկ մահանալ, քանի որ նրանց առողջական վիճակը այդ աստիճան լուրջ էր:

Մարմնի կորչելը

Ինքներս մեզ չդատելու հետևանքները կարող ենք տեսնել Ա Կորնթացիների 5-րդ գլխի հետևյալ պարբերությունում:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.1-5

1 Առհասարակ լսվում է ձեր մեջ պոռնկություն և այնպիսի պոռնկություն, որ հեթանոսների մեջ էլ չկա, այնպես որ մեկն իր հոր կինն ունենա:

2 Եվ դուք հպարտացած եք և ավելի սուգ չե՞ք մտնում, որ ձեր միջից վեր առնվի նա, որ այն բանը գործեց:

3 Որովհետև ես թեև մարմնով բացակա եմ, բայց հոգով ներկա, արդեն վճռել եմ ներկա լինողի պես՝ նրան, որ այնպիսի բան գործեց,

4 մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով ձեր և իմ հոգու մեկտեղ ժողովվելու ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորության հետ,

5 ԱՅՆՊԻՍԻԻՆ ՄԱՏՆԵԼ ՍԱՏԱՆԱՅԻՆ՝ ՄԱՐՄԻՆԸ ԿՈՐՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ, որ հոգին ապրի մեր Տեր Հիսուսի օրում:

Ըստ սուրբգրային այս հատվածի՝ որդին, ըստ երևույթին, հորից խլել էր խորթ մորը և ապրում էր նրա հետ: Պողոսը զարմացած էր, որ Կորնթոսի եկեղեցին դրան ի պատասխան ոչինչ չէր արել:

Ուստի Պողոսը կորնթացիներին ասում է, որ երբ մեկտեղ հավաքվեն, այդպիսի մարդուն պետք է մատնեն սատանային՝ մարմինը կորչելու համար, որպեսզի Քրիստոսի գալուստի օրը նա փրկվի:

Եկեղեցին՝ Քրիստոսի Մարմինը, կարող էր դատել այդ մեղքը, քանի որ այն ակնհայտ էր: Այլ կերպ ասած՝ հեշտ է հասկանալը, որ սխալ է, երբ ինչ-որ մեկն ապրում է իր խորթ մոր հետ, այնպես չէ՞: Կամ հեշտ է հասկանալը, որ մեղք է, երբ կին ու տղամարդ միասին ապրում են ամուսնական ուխտից դուրս: Եվ եկեղեցին պետք է հանդիմանի այն քրիստոնյաներին, որոնք նման բաներ են անում:

Ա Կորնթացիների 5-րդ գլխից մեջբերված հատվածում տեսնում ենք, որ եկեղեցու հեղինակությունն ու զորությունը շատ ավելի մեծ են, քան մենք երբևէ գործադրել ենք: Ակնհայտ է, որ Կորնթոսի եկեղեցին չէր հասկանում ու չէր գիտակցում, որ այդ իրավիճակում ինչ-որ բան անելու իշխանություն ուներ:

Այս խոսքում նշված է նաև, թե ով է մարմինը վնասում: Հինգերորդ խոսքն ասում է. «Այնպիսիին մատնել սատանային՝ մարմինը կորչելու համար»: Սատանան է մարմինը վնասողը և ոչ թե Աստված:

Նկատե՞լ եք, որ երբեմն այն մարդիկ, որոնք իսկապես ճանաչել են Աստծուն, սակայն հեռացել Նրանից, վերադառնում են, երբ մարմինն է վնաս կրում:

Ակնհայտորեն, այդ տղան ապաշխարում և բժշկվում է: Կորնթացիներին ուղղված իր երկրորդ նամակում Պողոսը նրանց ասում է, որ հետ ընդունեն նրան եղբայրության մեջ, քանի որ «Աստծո *ուզած* տրտմությունը ապաշխարություն էր գործել» (Բ Կորնթ. 2.6-11, 7.10):

Ի՞նչ է Աստվածաշունչն ասում ինքներս մեզ դատելու մասին: Այն ասում է, որ եթե մենք ինքներս մեզ դատենք, չենք դատվի Տիրոջ կողմից, բայց եթե հրաժարվենք ինքներս մեզ դատելուց, ապա Տերը ստիպված կլինի խրատել մեզ, որպեսզի աշխարհի հետ չդատվենք:

Դա, իհարկե, Աստծո լավագույնը չէ, բայց շատ ավելի լավ է, քան դժոխք գնալը: Այս տղայի մասին, որն ապրում էր իր խորթ մոր հետ, Աստվածաշունչն ասում է, որ եկեղեցին պետք է մատներ նրան սա-

տանային՝ նրա մարմնի կորստյան համար, որպեսզի նա ապաշխարեր և վերադառնար Աստծուն:

Այնուհետև Ա Կորնթացիների 11.31-րդ և 32-րդ խոսքերում գրված է, որ եթե ինքներս մեզ չդատենք, Տերը կդատի մեզ: Եվ Տերը կդատի մեզ ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր մեղքերի համար:

Միայն Տերը կարող է տեսնել մեր հոգևոր մեղքերը: Մի անգամ Հիսուսն ինձ տեսիլքով երևաց և ասաց. «Ես նախ դատելու եմ Իմ ժողովրդին հոգևոր մեղքերի, ապա միայն ֆիզիկական մեղքերի համար»:

Ի՞նչ նկատի ուներ Նա՝ «հոգևոր մեղքեր» ասելով: Հոգևոր մեղքեր կարող են լինել, օրինակ, մեր թաքնված դրդապատճառները և վերաբերմունքը: Ես և դուք չգիտենք մարդկանց գործողությունների հետևում թաքնված դրդապատճառների մասին, իսկ Հիսուսը գիտի:

Մեզ համար տեսանելի չեն դրդապատճառները: Մարդիկ կարող են ճիշտ վարվել սխալ դրդապատճառով և օրհնության փոխարեն նախատինք ստանալ, քանի որ իրենց դրդապատճառը սխալ էր, հիմնված չէր սիրո վրա:

Ես և դուք չենք կարող տեսնել վերաբերմունքը, մինչդեռ Աստված կարող է: Մեր դրդապատճառները և առաջնահերթությունները պետք է ճիշտ լինեն, այլապես Աստված չի կարողանա օրհնել մեզ այնպես, ինչպես ցանկանում է: Այդ պատճառով էլ շատ կարևոր է զարգացնել աստվածային սերը, որպեսզի մեր դրդապատճառները մաքուր լինեն:

Օրինակ՝ «Բժշկության ձայնը» կազմակերպության այն ավետարանչի դեպքում, որի մասին վերևում խոսեցինք, Տերը սպասում էր, որ նա դատեր ինքն իրեն և հրաժարվեր մեղքից: Բայց նա այդպես չարեց և սիրով չվարվեց իր ծառայակից եղբայրների հետ. ի վերջո Աստված ստիպված եղավ դատել նրան:

Կան թանկագին քրիստոնյաներ, որոնք, չիմանալով Աստվածաշունչը, ասում են. «Այդ մարդն ուներ բժշկության մեծ ծառայություն, բայց մահացավ երեսունութ տարեկանում: Դա նշանակում է, որ բժշկությունը բոլորի համար չէ»:

Ո՛չ, դա բոլորովին չի նշանակում, որ բժշկությունը բոլորի համար չէ: Իմանալով նախապատմությունը՝ պարզապես հասկանում ենք, որ այդ մարդը չէր դատել ինքն իրեն, ուստի Աստված էր ստիպված եղել անել դա: Աստված խրատեց նրան, որ նա չդատվեր աշխարհի հետ:

Արդյոք երկարացնո՞ւմ, թե՞ կարճացնում եք ձեր օրերը

Ինչպես տեսնում եք, մենք կարող ենք կարճացնել մեր օրերը կամ երկարացնել դրանք՝ սիրով վարվելով և անելով այն, ինչ Աստված է ասում: Մենք պետք է դատենք ինքներս մեզ, որպեսզի Տերը ստիպված չլինի անել դա: Եվ առաջին հերթին պետք է դատենք մեր սիրո ընթացքն ու թե արդյոք ճանաչում ենք Քրիստոսի Մարմինը: Այդ դեպքում չենք դատվի աշխարհի հետ:

Երբ ես ու կինս ապրում էինք Տեխասում, գնացինք աղոթելու մի մարդու համար, որի թոքերում հեղուկ էր հավաքվել, և դժվարանում էր շնչել: Բժիշկները նրա մոտ ախտորոշել էին թոքերի քաղցկեղ: Ասել էին, որ հնարավոր կլիներ թոքերից ջուրը մի քանի անգամ հեռացնել, որից հետո ոչինչ չէին կարողանա անել:

Ես կանգնած էի նրա անկողնու կողքին, որպեսզի աղոթեի նրա համար, իսկ մյուս կողմում կանգնած էր նրա կնոջ եղբայրը: Ձեռքս դրեցի հիվանդի ճակատին և սկսեցի աղոթել:

Երբ աղոթում էի, զգացի, թե ինչպես մի ջերմ ձեռք վերցրեց իմ ձեռքը և հեռացրեց նրա ճակատից: Աչքերս բացեցի և նայեցի այդ մարդուն. կարծեցի՝ գուցե այնքան ուժեղ եմ սեղմել, որ ինքն է ձեռքս հեռացրել իր ճակատից:

Նորից ձեռքս դրեցի նրա վրա, փակեցի աչքերս և սկսեցի աղոթել: Նույնը կրկնվեց. զգացի՝ ինչպես մի ջերմ ձեռք հեռացրեց ձեռքս նրա ճակատից: Այս անգամ արդեն աչքերս բաց ձեռքս դրեցի նրա ճակատին, ոչինչ չտեսա, բայց զգացի նույնը. մի ջերմ ձեռք իմ ձեռքը հեռացրեց նրա գլխից:

Վերջապես ասացի Տիրոջը. «Տե՛ր, ինչո՞ւ ես ձեռքս հեռացնում նրանից»:

Տերն ասաց. «Որովհետև նա մահանալու է»:

«Բայց, Տե՛ր, նա ընդամենը քառասուներեք տարեկան է: Դու մեզ երկար կյանք ես խոստացել: Նա ծեր չէ, որ մահանա: Ինչո՞ւ պետք է այդպես լինի»:

Տերն ասաց. «Ես երեսուն տարի սպասել եմ, որ նա դատի ինքն իրեն, հրաժարվի մեղքից և անարատ կյանքով ապրի: Նա փրկվել է տասներեք տարեկանում:

Մեկ անգամ բժշկել եմ նրա կոտրված մեջքը այն բանից հետո, երբ լքել էր կնոջն ու ապրում էր շնության մեջ: Երեսուն տարի սպասեցի, սակայն նա այդպես էլ չդատեց ինքն իրեն. այդ պատճառով

ես դատեցի նրան և մատնեցի սատանային՝ մարմնի կորստյան համար, որպեսզի հոգին փրկվի Տեր Հիսուս Քրիստոսի օրը: Այնպես որ հանգի՛ստ թողեք նրան, թո՛ւյլ տվեք, որ տուն գա. հիմա նա պատրաստ է»:

Դա բացահայտում էր *ինձ* համար, քանի որ այդ բաները նրա մասին *ես* չգիտեի: Բայց ես պատահած ամեն բան այդքան հեշտությամբ չեմ ընդունում: Աստվածաշունչն ասում է. *«Ամեն բան փորձե՛ք, բարին ամուր բռնե՛ք»* (Ա Թես. 5.21):

Խոսեցի նրա քրոջ հետ, ասացի այն, ինչ Տերն ասել էր ինձ: Ու նա պատասխանեց. «Այո՛, ճիշտ այդպես էլ պատահել է: Նա հեռացել էր իր կնոջից և մեկ այլ կնոջ հետ էր ապրում: Եվ մի օր՝ շինարարական հրապարակում աշխատելիս, փայտամածից ընկել և կոտրել էր մեջքը»:

Քույրը պատմեց ինձ, որ այն կինը, որի հետ նա ապրում էր, հոգ չէր տարել նրա մասին, այդ պատճառով նա վերադարձել էր կնոջ մոտ, սկսել էր աղոթել և վերականգնել էր շփումն Աստծո հետ: Հետո կնոջն ասել էր, որ ինքը բժշկված է, և ցանկացել էր, որ բժիշկը հանի գիպսը:

Բժիշկը հրաժարվել էր դա անելուց՝ ասելով, որ եթե գիպսը հաներ, նա ամբողջությամբ կկապտեր, կսևանար և մահացած կընկներ հատակին:

Այնուամենայնիվ, այդ մարդն ի վերջո համոզել էր քրոջը, որ վերջինս վերցնի միս կտրող դանակը և օգնի իրեն՝ կտրելու գիպսը: Դրանից հետո վեր էր կացել անկողնուց և, ինչպես բժիշկն էր ասել, սևացել, կապտել ու մահացածի նման ընկել էր հատակին: Իսկ հետո հանկարծ լիովին բժշկված ոտքի էր կանգնել: Այդուհանդերձ, նա չէր դատել ինքն իրեն:

Տերն ինձ ասել էր. «Ես բժշկել եմ նրա մեջքը ու երեսուն տարի սպասել, որ դատի իրեն և հրաժարվի մեղքից»:

Կանգնած էի այդ սենյակում, որտեղ աղոթում էի այդ մարդու համար, բայց դադարել էի աղոթելուց, քանի որ Տերն էր այդպես ասել: Նա խնդրեց տանել իրեն հիվանդանոց, որտեղ թոքերից կհեռացնեին ջուրը: Ջուրը հեռացնելուց հետո նա ավելի լավ էր կարողանում շնչել, ուստի վերադարձել էր տուն: Նա անկողնուն գամված չէր:

Այդ կեսօրին ես և կինս գնացինք Տեխասի արևելք՝ հավաքույթ անցկացնելու: Կիրակի սկսեցինք հավաքույթը: Երեկոյան այդ մարդու քրոջից զանգ ստացա:

Նա ասաց. «Քիչ առաջ եղբայրս գնաց տուն՝ Տիրոջ մոտ»:

Հետո պատմեց, թե ինչ էր տեղի ունեցել: Բժիշկը կիրակի այցելել էր նրանց և ընթրել նրանց հետ: Այդ մարդն անբուժելի հիվանդ էր, բայց այդ ժամանակ նա մահվան շեմին չէր. դեռևս ի վիճակի էր սեղան նստելու և նրանց հետ կիսելու կիրակնօրյա ընթրիքը:

Ընթրիքի ընթացքում հարցրել էր բժշկին. «Բժի՛շկ, դեռ ինչքա՞ն ժամանակ ունեմ»:

Բժիշկը պատասխանել էր. «Օ՜, առաջիկա վեց ամիսներին մահանալու մասին մի՛ մտածիր. այդքան ժամանակ կկարողանանք ջուրը հեռացնել թոքերիցդ: Բացի այդ՝ բժիշկներն անդադար աշխատում են քաղցկեղից բուժում գտնելու ուղղությամբ, այնպես որ մինչ այդ գուցե գտած լինենք բուժումը»:

Այդ մարդը պատասխանել էր. «Գուցե զարմանաք, բայց այսօր գիշերը՝ 10:20-ին, գնալու եմ տուն»:

Ընթրիքից հետո քույրը գնացել էր եկեղեցի և հովվին հաղորդել եղբոր խոսքերը:

Եղբայրը չէր կարող եկեղեցի գնալ, քանի որ հազում էր և կխանգարեր ծառայությանը: Այդ պատճառով տանն էր մնացել: Ծառայությունից հետո հովիվը գնացել էր նրանց տուն՝ նրան տեսակցելու: Ամառ էր. այդ մարդը նստած էր շքամուտքի մոտ:

Հովիվը պատմել է քրոջը, որ մեքենան կայանել է մայթեզրին, և քանի որ մայթեզրը շատ մոտ էր տանը, մեքենայի մեջ նստած խոսել նրա հետ:

«Հարցրի նրան, թե ինչպես է: Պատասխանեց, որ լավ է: Եվ ես մտածեցի՝ արդեն *10:00-ին մոտ է, տեսքը լավ է. 10:20-ին չի մահանա: Հենց հիմա, շքամուտքի մոտ նստած, ինձ հետ է խոսում:* Ուստի եկա տուն:

Հասել էի մուտքի դռանը,- շարունակել է հովիվը,- երբ հեռախոսը զնգաց: Այդ մարդու քույրն էր: Ասաց, որ եղբայրը 10:20-ին մահացել է, ինչպես որ ասել էր»:

Սա Աստծո լավագույնը չէր: Աստծո կատարյալ կամքը չէր, որ նա մահանար քառասուներեք տարեկանում: Աստծո կամքը չէր, որ նա չլրացներ իր կյանքի օրերն այստեղ հիվանդության կամ ախտի պատճառով, բայց այդ մարդը չէր դատել ինքն իրեն և չէր քայլել սիրո մեջ:

Աստվածաշնչում գրված է. «*Նրա համար* էլ ձեր մեջ շատ հիվանդներ և ցավագարներ կան, և շատերն էլ ննջած են»: Ինչպես տեսնում եք, մարդկանց վաղաժամ մահերի համար կան *պատճառներ*:

Աստծո լավագույնը չէ այն, որ Իր ժողովուրդը չլրացնի օրերն այստեղ՝ երկրի վրա: Հենց այդ պատճառով մենք պետք է դատենք ինքներս մեզ և ամեն բան անենք, որ սիրո մեջ քայլենք: Եթե ինքներդ ձեզ դատեք, Տիրոջ կողմից չեք դատվի:

Ի՞նչ է նշանակում ինքդ քեզ դատել: Նշանակում է, որ երբ տեսնում եք ձեր թերացումը, այդ մեղքի համար ինքներդ ձեզ պետք է դատեք և պարզապես ասեք. «Տե՛ր, սխալ եմ վարվել. խնդրում եմ, ների՛ր ինձ»:

Հանդիպում ունեի մի եղբոր հետ, որն ինձնից տարիքով մի քիչ մեծ էր: Ես ընդամենը քսանութ տարեկան էի, իսկ նա՝ երեսուն: Ամուսնացած էր, երկու երեխա ուներ, լավ եկեղեցու հովիվ էր, եկեղեցում էլ ամեն բան լավ էր:

Սակայն տեսնում էի, որ մի բան այն չէր, ու եթե նա այդպես շարունակեր իր ընթացքը, խնդիրներ կունենար: Երբ նրա կինն ու երեխաները ընթրիքի սեղան էին նստում նրա հետ, վախից դողում էին:

Այդ եղբայրը կարող էր բարկանալ և նեղացնել կնոջը: Նյարդային ապրումներից կինը ստամոքսի խնդիրներ ուներ: Փոքրիկները նույնպես այնքան էին վախենում նրանից, որ դողում էին ընթրիքի սեղանի շուրջը:

Նա կատաղության պոռթկումներ էր ունենում, շրջում էր տնով մեկ և ամեն բան այս ու այն կողմ շպրտում: Եթե ինչ-որ բան նրան դուր չգար, կարող էր ափսեները սեղանից հատակին նետել: Եվ այդ մարդը հովիվ էր:

Երբ հյուրընկալված էի նրա հովվական կացարանում, որտեղ նա ապրում էր իր ընտանիքի հետ, փորձեցի դրա մասին խոսել նրա հետ: Ասացի. «Եթե շարունակես այսպես վարվել, կվնասես կնոջդ առողջությունը, կփչացնես երեխաներիդ կյանքը, ի վերջո կկորցնես նրանց և կկրճատես քո կյանքի օրերը»:

Ասացի. «Երեխաներդ այնպիսի տպավորություն ունեն, որ Աստված քեզ նման է: Եվ նրանք կմեծանան ու կվարվեն քեզ նման»:

Նա չէր լսում ինձ, չէր դատում ինքն իրեն և սիրով չէր վարվում ընտանիքի հետ:

Անցավ որոշ ժամանակ, այդ հովվի ավագ որդին մեծացավ և ամուսնացավ: Նա փրկված էր և լցված Սուրբ Հոգով, բայց սկսել էր հոր նման վարվել: Երբ բարկանում էր, կատաղության պոռթկումներ էր ունենում: Նրա կինը չհարմարվեց դրան, հեռացավ նրանից ու վերադարձավ ծնողների մոտ:

Այդ տղան էլ, դրանից բարկացած, որոշեց գնալ կնոջ հետևից՝ նրա ծնողների տուն: Գնաց աներոջ տուն, հարվածեց դռանն ու ասաց. «Նա իմ կինն է, և ես նրա հետևից եմ եկել»: Աները դուռը չբացեց, քանի որ գիտեր, թե ինչպիսին է նա դառնում կատաղության պոռթկումների ժամանակ, բայց փակ դռան հետևից խոսեց նրա հետ ու ասաց. «Նա քեզ հետ չի գալու: Նա հյուծված է, նյարդերը քայքայված են: Այո՛, նա քո կինն է, բայց քանի դեռ չես սովորել քեզ տղամարդուն վայել պահել, նա կմնա այստեղ»:

«Ո՛չ, նա իմ կինն է, և ես եկել եմ նրա հետևից: Եթե հարկ լինի, այս դուռն էլ կջարդեմ»:

Նա դուռը ջարդեց, և նրա աները որսորդական հրացանի երկու փող դատարկեց նրա վրա. տղան տեղում մահացավ:

Ես զգուշացրել էի հովվին՝ այդ երիտասարդի հորը, որ իր երեխաների վերջը դա կլինի: Բացի այդ՝ ժամանակի ընթացքում այդ հովվի կնոջ առողջությունը քայքայվել էր, իսկ նա թողել էր ծառայությունը մոտ հիսունհինգ տարեկանում, քանի որ վատառողջ էր:

Ոմանք ասում էին. «Ամբողջական Ավետարանի եկեղեցու քարոզիչը հիվանդ է. դա ապացուցում է, որ բժշկությունը բոլորի համար չէ»: Սակայն դա ճիշտ չէ: Երանի՜ նա դատեր իրեն և սիրով վարվեր: Դա նրա հովված վերջին եկեղեցին էր:

Այդ մարդը պարզապես չդատեց ինքն իրեն և չհրաժարվեց մեղքից: Նա սիրով չէր վարվում իր կնոջ և երեխաների հետ: Աստված առնչություն չուներ նրա առողջության վատանալու կամ նրա երեխաների այդ վիճակի հետ: Այդ մարդն ինքն էր իրեն հասցրել դրան, քանի որ ինքն իրեն չէր դատել և իր ընտանիքի հետ ճիշտ չէր վարվել:

Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց ես դատելու եմ ինքս ինձ: Եվ երբ տեսնեմ, որ թերացել եմ, չեմ սպասի նույնիսկ, մինչև եկեղեցի հասնեմ: Հենց այդտեղ և հենց այդ պահին կդատեմ ինքս ինձ և կշտկեմ այն, ինչը պետք է շտկել, որպեսզի կարողանամ վայելել Աստծո բժշկությունն ու առողջությունը, ինչպես նաև Նրա լավագույն օրհնությունները: Ես ցանկանում եմ երկարացնել և ոչ թե կարճացնել իմ կյանքի օրերը:

Երբ հավատքը *չի* գործում

Եթե սիրով չեք վարվում, ձեր հավատքը չի գործի: Ահա այդքան պարզ է ամենը: Եթե ձեր հավատքը ցանկալի արդյունք չի տալիս, ապա քննե՛ք ինքներդ ձեզ, թե որքանով եք սիրով վարվում:

ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 5.6

6 … հավատքը… սիրով գործում է:

Մի անձնավորության էի ճանաչում, որը կարծում էր, թե բոլորը, բացի իրենից, սխալ են: Այդ մարդը պատրաստ էր քննադատելու ցանկացած մարդու, որի մասին կխոսվեր: Եվ այդ ամենից հետո դեռ հանդգնում էր ասել. «Ես փորձել եմ հավատքով ապրել, բայց դա չի գործում»:

Ո՛չ, նրա հավատքը չէր գործի, քանի որ սիրով չէր վարվում: Բավական չէ՝ սիրով չէր վարվում, դեռ անարգում էր Աստծուն և Աստվածաշունչը՝ ասելով, թե հավատքը չի գործում:

Եթե հավատքը չի գործում, ապա Մարկոս 11.24-րդ խոսքում Հիսուսը ստել է՝ ասելով. *«…Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կառնեք, և կլինի ձեզ»*: Բայց Հիսուսը չի ստել:

Եթե ինչ-որ տեղ ձախողում կա, ապա դա Աստծո կողմից չէ և ոչ էլ Հիսուսի: Աստված երբեք չի ձախողվում: Նրա Խոսքը ևս չի ձախողվում: Այնպես որ մենք պարզապես պետք է ընդունենք, որ եթե ձախողում կա, ապա այն մեր կողմից է: Եվ ի՞նչ պետք է անենք նման պարագայում. պետք է քննենք ինքներս մեզ, հայտնաբերենք, թե որտեղ ենք թերացել, և վերադառնանք Խոսքի համաձայն գործելուն:

Ես երկու քարոզչի եմ ճանաչել, որոնք մի քանի տարի հաջողակ են եղել ծառայության մեջ, բայց երկուսն էլ վաղ տարիքում են մահացել: Եվ ես ձեզ կասեմ ճշգրիտ պատճառը, թե ինչու: Նրանցից մեկը մի անգամ ասել էր ինձ. «Գիտեմ, որ ճիշտ ես, բայց ավելի լավ է մեռնեմ, քան ընդունեմ, որ սխալ եմ»:

Մյուսը նույնպես գրեթե նույն բանն էր ասել: Ամբողջական Ավետարանի հոգեգալստական այդ ավետարանչին վաղուց էի ճանաչում: Մի քանի տարի նրան չէի տեսել, և մի նահանգում հավաքույթ անցկացնելիս պատահաբար հանդիպեցի նրա կնոջ եղբորը:

Հարցրի նրան. «Ի՞նչ է պատահել եղբայր Կ.-ին»:

«Օ՜, նա մահացել է»,- հնչեց պատասխանը:

«Մահացե՞լ է,- ասացի ես,- բայց նա ընդամենը հիսուն տարեկան էր»:

«Այո՛, բայց մահացավ»:

«Իսկ ի՞նչն էր պատճառը»,- հարցրի ես:

Ազգականը պատասխանեց. «Քաղցկեղ ուներ: Դու գիտես, թե ինչպիսին էր նա. երբեք չէր ընդունի, որ որևէ հարցում կարող էր

սխալվել: Ես հաստատ գիտեմ, թե ինչու չստացավ իր բժշկությունը»:

Երբեմն մարդիկ ականջ չեն դնում ձեզ, քանի որ ազգական եք: Ես փորձել էի խոսել այդ մարդու հետ, բայց նա այսպես պատասխանեց. «Ո՛չ, ո՛չ: Այն պահից, երբ ի վերուստ ծնվել և քրիստոնյա եմ դարձել, երբևէ չեմ թերացել: Երբեք: Ես կատարյալ եմ»:

Ինչո՞ւ պետք է նման մարդը մահանա: Ոչ ոք, բացի Հիսուսից, կատարյալ չէ: Այս մարդն ինքն իրեն չէր դատում և չէր հրաժարվում մեղքից ու անօրինությունից: Սա չի նշանակում, որ նա ինչ-որ կոպիտ սխալ էր թույլ տվել կամ սարսափելի մի բան արել: Բայց նա պնդում էր, թե կյանքում երբևէ չի թերացել:

Նրա կնոջ եղբայրն ասաց ինձ. «Գիտեմ, որ նա իր որոշ ազգականներից ներողություն խնդրելու կարիք ուներ, բայց չէր ընդունում, որ ինչ-որ սխալ բան է արել, ուստի այդպես էլ չշտկեց նրանց հետ հարաբերությունները: Բոլորը սխալ էին՝ բացի իրենից»:

Նման կերպ վարվելով՝ հավատքը չի գործի. Աստված չի կարողանա օրհնել նրան, քանի որ նա Աստծո օրհնության վայրում չէ:

Փառք Աստծուն այն բանի համար, որ երբ տեսնում եմ սխալս, ապաշխարում եմ: Իսկ դո՞ւք: Ես չեմ պատրաստվում պնդաճակատ լինելու և ասելու, թե ճիշտ եմ, այն դեպքում, երբ սխալվել եմ:

Որքա՜ն կարևոր է Աստծո սիրով վարվելը: Ցանկանո՞ւմ եք ձեր կյանքում ունենալ Աստծո լավագույնը: Չեք կարողանա Աստծո լավագույնն ունենալ, քանի դեռ ձեր սրտում Աստծո սիրով վարվելու նպատակ չեք սահմանել: Չգիտեմ՝ ինչպես դուք, բայց իմ նպատակակետը Աստծո լավագույնն է: Ինձ չի բավարարում այն, ինչ լավագույնը չէ:

Իսկ ինչպե՞ս կարող եք ստանալ Աստծո լավագույնը: Ինքներդ ձեզ դատե՛ք մեղքի համար: Սա ուրիշներին մեղքի համար դատելու իրավունք չի տալիս: Աստվածաշունչն ասում է, որ միայն *ինքներս մեզ* պետք է դատենք (Հռոմ. 14.13, Ա Կորնթ. 11.31,32): Դատե՛ք ինքներդ ձեր սիրո ընթացքը և այն, թե ինչպես եք վերաբերվում Քրիստոսի Մարմնին:

Այնուհետև հարկավոր է հրաժարվել մեղքից և գործի դնել սերը կյանքի բոլոր բնագավառներում: Սերն ընկերոջը չար չի անի. այնպես որ ամեն անգամ ինչ-որ բան անելուց կամ ասելուց առաջ կանգ առեք և խորհե՛ք սրա շուրջ: Ինքներդ ձեզ հարց տվեք՝ *ինչպե՞ս է դա ազդելու դիմացինի վրա*, և *ի՞նչ կաներ սերը*:

Եթե այն, ինչը պատրաստվում եք ասելու կամ անելու, կվնասի դիմացինին, ապա մի՛ արեք կամ մի՛ ասեք դա, այլապես սիրով չեք

վարվի: Իսկ սիրուց դուրս ամեն քայլ մեղք է: Սիրով վարվելով՝ մենք կատարում ենք Օրենքը:

Խոսքը աստվածային սիրո մասին է, որը համբերատար է և քաղցր: Աստծո սերը խանդով չի վառվում: Այն պարծենկոտ կամ սնափառ չէ: Այն մեծամտաբար չի վարվում:

Մեր ներսում ապրող Աստծո սերը չի պնդում իր իրավունքներն ու իրենը չի որոնում: Այն դյուրագրգիռ, նեղացկոտ և հիշաչար չէ: Այն հաշվի չի առնում իր դեմ գործված չարիքը, ուշադրություն չի դարձնում իր հանդեպ թույլ տրված սխալին:

Եթե սովորեք վարվել Աստծո սիրով, այն կուղղի ցանկացած իրավիճակ: Կարևոր չէ, թե ինչ իրավիճակի մասին է խոսքը, Աստծո սերը կփոխի այն:

Իհարկե, աստվածային սերը ձեզ համար չի գործի, եթե *դուք* այն գործի չդնեք: Ի՞նչ նկատի ունեմ «գործի դնել» ասելով: Մինչ կկարողանաք քաղել աստվածային սիրո վարձքը, պետք է վարժվեք աստվածային սիրո մեջ և զարգացնեք այն, որն արդեն ձեր սրտում է:

Օրինակ՝ պատկերացրե՛ք, որ ինչ-որ մեկը այցելել է բժշկի, և բժիշկը դեղորայք է դուրս գրել նրա համար: Այս անձնավորությունը վերցնում է բժշկի նշանակած դեղորայքը, գնում տուն, դնում այն անկողնու կողքին և չի ընդունում: Բժիշկը նրան ասել է, թե ինչ չափաբաժնով պետք է ընդունի դեղորայքը, բայց եթե նա այն չընդունի, դա նրան չի օգնի:

Հաջորդ առավոտյան, երբ նրա վիճակը վատանում է, ասում է. «Չեմ հասկանում, թե ինչ է կատարվում. դեղորայքը չի գործում»: Բայց դեղորայքը չի գործելու սեղանին դրված վիճակում:

Նույնը վերաբերում է հոգևոր բաներին: Աստվածաշունչը չի գործի, քանի դեռ այն դրված է ձեր անկողնու կողքի սեղանին: Դուք պետք է վերցնեք այն և դրանում գրված հոգևոր ճշմարտությունները գործի դնեք: Այդ դեպքում Աստծո օրհնությունները կդրսևորվեն ձեր կյանքում:

Աստծո սերն էլ այդպիսին է: Ձեր ներսում եղող Աստծո սերը չի գործի, պարզապես որովհետև այն ձեր *ներսում է*: Դուք պետք է ինքներդ ձեզ սնեք Խոսքով և վարժվեք սիրո մեջ՝ այն գործի դնելով, և այդ դեպքում այն կաճի և կավելանա:

Բայց եթե սիրով չվարվեք, ի վերջո կդատվեք Տիրոջ կողմից: Եվ դա կարող է արժենալ ձեր կյանքը:

Սիրո մեջ քայլելը շատ ավելի լավ է. դա թույլ է տալիս, որ Աստծո

սերը գործի ձեզ համար: Հիվանդությունը հարստահարում է սատանայի կողմից: Երբ դուք սիրո մեջ եք քայլում, և սատանան ինչ-որ հիվանդությամբ ձեզ այցելում է, կարող եք պարզապես ասել նրան. «Սատանա՛, ես սիրո մեջ եմ քայլում. ձեռքերդ քաշի՛ր ինձնից»:

Կարող եք նույնն ասել ձեր փոքր երեխաների համար, քանի դեռ նրանք ձեր խնամքի տակ են: Երբ մեծանում են, իրենք պետք է դա անեն իրենց համար:

Եթե սիրով չէիք վարվում, ապա որքան հնարավոր է արագ հե՛տ վազեք և վերադարձե՛ք սիրո ընթացքին: Եթե ապաշխարելու և ինչ-որ մեկից ներողություն խնդրելու կարիք ունեք, ապա արե՛ք դա:

Աստծո սերը միշտ գերակայում է. այն միշտ հաղթում է: Սերը երբեք չի ձախողվում, չի մարում և չի սպառվում: Սերը միշտ ներում է: Այնպես որ ներե՛ք, որպեսզի կարողանաք հաղթանակած ապրել:

Աստվածաշունչը մեզ սովորեցնում է ինչպես ստանալ այն, ինչն արդեն մեզ համար ապահովված է Քրիստոսում: Սակայն մենք ենք որոշողը՝ հետևենք Նրա ցուցումներին, որ հասնենք մեր նպատակակետին՝ Աստծո ամենավեհին և ամենալավին մեր կյանքերում, թե ոչ: Աստծո սիրո մեջ քայլելն է դա անելու ճանապարհը:

Գլուխ 8

Սիրե՛ք ձեր թշնամիներին

Ավետարաններում Հիսուսը խոսել է աղոթքի մասին և ծանոթացրել մեզ արդյունավետ աղոթքի կյանքի սկզբունքներին: Սակայն հետաքրքիրն այն է, որ Հիսուսի առաջին պնդումն աղոթքի մասին վերաբերում է մեր թշնամիների համար աղոթելուն:

Շուտով կտեսնենք, որ թշնամիների համար աղոթելը մեծապես կապված է աստվածային սիրո մեջ քայլելու հետ: Մեծ հաշվով դրանից է կախված նաև այն, թե արդյոք մեր աղոթքները կլսվեն և կպատասխանվեն:

ՄԱՏԹԵՈՍ 5.43-48

43 Լսել եք, որ ասվեց՝ քո ընկերոջը սիրի՛ր և քո թշնամուն ատի՛ր:

44 Բայց Ես ասում եմ ձեզ՝ սիրե՛ք ձեր թշնամիներին, օրհնե՛ք ձեզ անիծողներին, բարի՛ արեք ձեզ ատողներին և աղո՛թք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար:

45 Որ որդիներ լինեք ձեր Հոր, որ երկնքում է, որովհետև Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է բերում արդարների և անիրավների վրա:

46 Որովհետև եթե ձեզ սիրողներին սիրեք, ի՞նչ վարձք ունեք. չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում:

47 Եվ եթե միայն ձեր եղբայրներին բարև տաք, ի՞նչ ավելի բան եք անում. չէ՞ որ մաքսավորներն էլ են այնպես անում:

48 Արդ դուք կատարյալ եղեք, ինչպես ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է:

Երբեմն մարդիկ ուզում են իմանալ, թե ինչի համար է պետք աղոթել: Մի պահ խորհեք սրա շուրջ: Սա առաջին գրավոր պնդումն է աղոթքի մասին, որը հնչել է Հիսուսի շուրթերից: Եվ առաջինը Նա ասաց, որ աղոթենք մեր թշնամիների համար:

Սա սուրբգրային հետաքրքրական հատված է, բայց Հիսուսի խոսքերի իրական իմաստն ավելի լավ ըմբռնելու համար պետք է նկատի առնել այն, որ Նա խոսում էր հրեաների հետ: Եվ հարկավոր է ծանոթ լինել հրեաների պատմությանը՝ հասկանալու համար, թե իրականում որքան հզոր են սուրբգրային այս խոսքերը:

Եթե կարդաք Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը, կտեսնեք, որ հրեաները քաջատեղյակ էին Օրենքից: Բայց նկատե՞լ եք արդյոք, որ Հին Կտակարանի Օրենքն իսրայելացիներին չէր սովորեցնում սիրո, շնորհքի կամ թշնամիներին ներելու մասին:

Օրենքի մեջ չեք գտնի թշնամիներին սիրելու մասին կանոններ, փոխարենը կգտնեք խոսքեր հատուցման և դատ վարելու մասին: Օրենքի սկզբունքը հետևյալն էր. «Աչքի տեղ՝ աչքի, ատամի տեղ՝ ատամ» (Ելից 21.24): Նույնիսկ Դավթի սաղմոսները կարդալիս տեսնում ենք, որ նա աղոթում էր իր թշնամիների դեմ: Նա փորձում էր այնպես անել, որ Տերն ատեր նրանց այնպես, ինչպես ինքն էր ատում:

Ահա թե ինչու է Հիսուսը աստվածային սիրո մասին սկսում սովորեցնել հետևյալ խոսքերով. «Լսել եք, որ ասվեց՝ քո ընկերոջը սիրի՛ր և քո թշնամուն ատի՛ր» (խոսք 43): Հրեաները միայն դա էին լսել:

Հրեաների ունեցած միակ Աստվածաշունչը Հին Կտակարանն էր, բայց նույնիսկ դա իրենց տներում չունեին: Հին Կտակարանը գրված էր մագաղաթների վրա, և Օրենքն ընթերցվում էր շաբաթ օրերին ժողովարաններում: Այնպես որ հրեաները լսել էին միայն այն, որ պետք է սիրեին իրենց մերձավորներին և ատեին իրենց թշնամիներին:

Եվ ահա Հիսուսը բոլորովին այլ բան է ասում: Հրեաները երբևէ չէին լսել սիրո թագավորական օրենքի՝ աստվածային սիրո մասին: Ոչ ոք չէր լսել Աստծո սիրո մասին, քանի դեռ Հիսուսը չէր սկսել այդ թեմայով սովորեցնել մարդկանց: Հրեաներն առաջին անգամ աստվածային սիրո մասին լսեցին այն ժամանակ, երբ Հիսուսն ասաց. *«Բայց Ես ասում եմ ձեզ, սիրե՛ք ձեր թշնամիներին...»:*

Չեք կարողանա սիրել ձեր թշնամիներին, եթե վերստին ծնված չեք և ձեր սիրտը փոխված չէ: Քո թշնամիներին սիրելու համար աստվածային սեր է անհրաժեշտ: Երբ հոգին վերստին ծնվում է, այն

վերստեղծվում է Հիսուս Քրիստոսի մեջ, ինչից հետո կարողանում եք սիրել ձեր թշնամիներին:

Ահա թե ինչու հրեաները չէին կարող հասկանալ Հիսուսին. նրանք չունեին նոր բնություն: Բացի այդ՝ նրանց սովորեցրել էին դատող Աստծո մասին: Նրանք չէին լսել սիրող, ներող և գթասիրտ Աստծո մասին: Այդ ամենը նորություն էր հրեաների համար:

Հիմա եկե՛ք վերադառնանք և վերլուծենք այն, ինչ Հիսուսն ասում է Մատթեոս 5-րդ գլխի այս պարբերությունում: Նախ և առաջ պետք է հասկանանք, որ Հիսուսը խոսում էր աստվածային սիրո մեջ հասունանալու մասին: Տեսե՛ք 48-րդ խոսքը. *«Արդ դուք կատարյա՛լ եղեք, ինչպես ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է»*:

Այս խոսքը չպետք է կտրել համատեքստից և դրան հաղորդել իմաստ, որն այն չի կրում: «Կատարյալ» բառն այստեղ պարզապես նշանակում է *հասուն*:

Հիսուսը գիտեր, որ մեզնից ոչ մեկը չի կարող Աստծո նման կատարյալ լինել: Նա նկատի ուներ, որ մենք պետք է աճենք և կատարելագործվենք կամ *հասունանանք* աստվածային սիրո մեջ:

Ուշադրությո՛ւն դարձրեք, որ Հիսուսն այստեղ առաջարկ չի անում: Նա ուղղորդում է մեզ աստվածային սիրո մեջ հասունանալու:

Աստծո սիրո մեջ հասուն լինելու համար ո՞ւմ պետք է սիրենք՝ միայն նրանց, ովքեր մե՞զ են սիրում: Ո՛չ, Հիսուսն ասաց, որ Աստծո սիրո մեջ հասուն լինելու համար պետք է սիրենք նույնիսկ մեր թշնամիներին. մեր թշնամիների՛ն: Հրեաները նախկինում երբևէ դրա մասին չէին լսել:

Հետո Հիսուսը հստակ սահմանեց, թե ովքեր են մեր թշնամիները: Նա ասաց. *«...օրհնե՛ք ձեզ անիծողներին, բարի՛ արեք ձեզ ատողներին և աղո՛թք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար»* (խոսք 44):

Հետևաբար մեր թշնամիներն այն մարդիկ են, որոնք անիծում, ատում, չարչարում և հալածում են մեզ հանուն Ավետարանի:

Ըստ Հիսուսի՝ ինչպե՞ս պետք է վարվենք մեր թշնամիների հետ: Արդյոք պետք է վրե՞ժ լուծենք և հաշիվնե՞ր պարզենք: Ո՛չ, պետք է *սիրենք, օրհնենք, բարին անենք* և *աղոթենք* նրանց համար:

Այստեղ միտքն այն է, որ եթե այս բաներն անենք այն մարդկանց համար, որոնք ատում են մեզ, կհասունանանք աստվածային սիրո մեջ: Այդպես անելով՝ կվարվենք մեր երկնային Հոր նման:

Աստծո սերը ցո՛ւյց տվեք ձեր թշնամիներին

Հիշո՞ւմ եք, որ Ա Հովհաննես 4.8-րդ խոսքում գրված է, որ Աստված սեր է: Աստվածաշունչն ասում է նաև, որ Աստված հասուն և կատարյալ է սիրո մեջ: Աստված սիրում է Իր թշնամիներին, ուստի եթե պատրաստվում ենք Նրան նման լինելու, մենք ևս պետք է սիրենք մեր թշնամիներին:

Արդյոք Աստված սիրո՞ւմ է Իր թշնամիներին: Այո՛, սիրում է: Նոր Կտակարանում կարդում ենք այն մասին, որ Աստված սիրեց մեզ, երբ դեռ մեղավոր էինք կամ թշնամի էինք Գողգոթայի Խաչին:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.8-10

8 Բայց Աստված հայտնեց Իր սերը դեպի մեզ, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ:

9 Ապա որքա՞ն ավելի հիմա, որ արդարացանք Նրա արյունով, կփրկվենք Նրանով բարկությունից:

10 Որովհետև թե որ դեռ թշնամի էինք, Աստծո հետ հաշտվեցինք Նրա Որդու մահովը, որքա՞ն ավելի, որ հաշտված ենք, կապրենք Նրա կյանքով:

Իսկ հիմա Աստված մեզ ասում է, որ անենք նույնը, ինչ Ինքն արեց: Պետք է սիրենք մեր թշնամիներին այնպես, ինչպես Ինքը սիրեց Իր թշնամիներին:

Ինչպե՞ս կարող ենք սիրել մեր թշնամիներին: Սիրելու միջոցներից մեկը, որին մեզ ծանոթացնում է Աստված, թշնամիներին օրհնելն է, երբ նրանք մեզ անիծում են: Իսկ Աստված այդպե՞ս վարվեց: Այո՛:

Երբ մենք դեռ մեղավոր էինք, Աստված Իր օրհնությունները հեղեց մեզ վրա՝ ընծայելով մեզ Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր Փրկչի: Աստված Հիսուսով ներեց մեզ նույնիսկ մինչև մեր փրկվելը: Իհարկե, մենք պետք է *ընդունե՞ինք* Աստծո փրկությունը, բայց մինչ այդ, երբ մենք դեռ մեղավոր էինք, Նա մեզ արդեն նվիրել էր հավիտենական կյանքը:

Եվ բացի դրանից՝ Աստվածաշնչում գրված է, որ Աստված Քրիստոսում օրհնել է մեզ բոլոր հոգևոր օրհնություններով (Եփես. 1.3): Այդ օրհնությունները պատկանում են բոլորին, ովքեր ընդունում են Հիսուսին՝ անկախ այն բանից՝ կընդունեն նրանք այդ օրհնությունները, թե ոչ:

Այլ կերպ ասած՝ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր սերը ցույց տվեց Հիսուս Քրիստոսի միջոցով և տվեց մեզ բոլոր հոգևոր օրհնությունները դեռ այն ժամանակ, երբ մեղավոր էինք և չէինք ընդունել Աստծո սերը մարդկության հանդեպ:

Նույնիսկ հիմա Աստծո բոլոր երկնային օրհնությունները պատկանում են անգամ ամենասարսափելի մեղավորին, ով Գողգոթայի Խաչի թշնամին է, եթե միայն նա ապաշխարի և ընդունի Հիսուս Քրիստոսին՝ որպես իր Փրկչի:

Սակայն Աստծո օրհնությունները որևէ օգուտ չեն տա մարդուն, եթե վերջինս Հիսուս Քրիստոսին չընդունի որպես Իր Փրկչի և չստանա Աստծո անհատույց օրհնությունները:

Այնուհետև Հիսուսը մեկ այլ բան ասաց աստվածային սիրո մասին. *«Որովհետև եթե ձեզ սիրողներին սիրեք, ի՞նչ վարձք ունեք. չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում»* (Մատթ. 5.46):

Հիսուսը հարցրեց, թե ինչ վարձք կունենանք Երկնքում, եթե սիրենք միայն նրանց, ովքեր սիրում են մեզ, քանի որ նույնիսկ մաքսավորներն են սիրում իրենց սիրողներին: Եթե լավ ենք վերաբերվում միայն մեր եղբայրներին և ընկերներին, վարվում ենք չփրկված մարդկանց նման:

Ընկերներին սիրելը հեշտ է, այնպես չէ՞: Նրանք սիրալիր են և լավ են վերաբերվում մեզ, մինչդեռ թշնամիները սիրալիր չեն և վատ են վերաբերվում մեզ:

Հետաքրքրական է, որ Հիսուսն ասաց, թե մենք՝ որպես քրիստոնյաներ, հենց նման մարդկանց պետք է սիրենք: Ուշադրությունդարձրեք նաև մեկ այլ բանի, որ Նա ասել է այս խոսքում. «Եթե ձեզ սիրողներին սիրեք, ի՞նչ վարձք ունեք»:

Ինչպես տեսնում եք, Երկնքում վարձք կա թշնամիներին սիրելու համար: Իսկ մեզնից քանի՞սն են ուզում Աստծուց վարձք ստանալ մեզ ատողներին սիրելու համար: Չգիտեմ՝ ինչպես դուք, սակայն ես ուզում եմ:

Եվ շատ հաճախ, եթե չհնազանդվենք այս խոսքին, մեր աղոթքները չեն պատասխանվի, քանի որ այդ դեպքում Խոսքը կատարող չենք լինի: Ի վերջո, եթե մենք Նրանում ենք, իսկ Նրա Խոսքը մեզանում է, ապա մենք կլինենք նաև Խոսքը կատարողներ:

Ինչպե՞ս *կարող եք* սիրել թշնամիներին: Չեք կարողանա անել դա, եթե վերստին ծնված չեք, և Աստծո սերը ձեր մեջ չէ: Բնական մարդն անկարող է անել դա մարմնավոր ջանքերով. պարզապես անհնար է: Բայց Աստծո սերը մեր սրտերում դա հնարավոր է դարձնում:

Բարի՛ն արեք ձեր թշնամիներին

Այնուհետև Հիսուսն ասում է մեզ, որ բարին անենք նրանց, որոնք ատում են մեզ: Արդյո՞ք Աստված բարին անում է Իրեն ատողներին: Այո՛, անում է: Մատթեոս 5.45-րդ խոսքում ասվում է. *«...Նա [Աստված] Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է բերում արդարների և անիրավների վրա»*:

Հիշո՞ւմ եք, Հիսուսն ասել է մեզ, որ մենք պետք է մեր Երկնային Հոր նման վարվենք. *«Որ որդիներ լինեք ձեր Հոր, որ Երկնքում է...»* (խոսք 45): Սա լուրջ պնդում է:

Եթե դիտարկեք պնդման հակառակ կողմը, ապա կարող եք ասել. «Եթե բարին չանեք ձեր թշնամիներին, ապա չեք վարվի որպես ձեր Երկնային Հոր որդիներ»: Այդ դեպքում դուք չեք քայլի այն լույսի մեջ, որում Նա է (Ա Հովհ. 1.7):

Այսպիսով՝ Հիսուսն ասում է մեզ. «Վարվե՛ք ձեր Երկնային Հոր նման. Նա սիրում է Իր թշնամիներին և բարին է անում նրանց: Դուք ևս նույնն արեք»: Աստծո Խոսքը սովորեցնում է մեզ, որ չարին հաղթում ենք բարիով (Հռոմ. 12.21):

Եթե գիտեք ինչ-որ մեկին, ով ատում է ձեզ, ապա փորձե՛ք ինչ-որ բարի բան անել նրա համար: Նվե՛ր գնեք կամ յուրահատուկ ձևով սե՛ր ցուցաբերեք նրա նկատմամբ: Աղոթե՛ք նրա համար: Զարմանալի է, թե ինչպես են մարդիկ արձագանքում սիրուն:

Ահա թե ինչպես կգործենք, եթե հասուն լինենք Աստծո սիրո մեջ: Կանենք այն, ինչ մեր Երկնային Հայրն է անում, կսիրենք մարդկանց՝ անկախ այն բանից՝ նրանց արժանի ենք համարում այդ սիրուն, թե ոչ:

Հիշում եմ, մի կին ծառայող պատմեց ինձ իր հետ կատարված մի միջադեպի մասին: Նա սկսել էր հավաքույթներ անցկացնել մի քաղաքում, որտեղ մեկ այլ ծառայող չէր ընդունում կին ծառայողներին: Այդ մարդն ուներ ռադիոհաղորդաշար և հաղորդումներից մեկի ժամանակ այն կնոջ հասցեին սխալ բաներ էր ասել: Նա հրապարակային հալածել էր այդ կնոջը:

Իսկ այդ կինն ասել էր Տիրոջը. «Տե՛ր, ես թույլ չեմ տա, որ տեղի ունեցածն ինձ անհանգստացնի: Ի՞նչ կարող եմ անել այդ մարդուն օգնելու համար»: Հետո իմացել էր, որ վերջինս դժվարություններ ուներ ծառայության մեջ, քանի որ փորձում էր վճարել եկեղեցաշենքի վարձը, ուստի նվիրատվություն էր հավաքել և ուղարկել նրան: Կարճ ժամանակ անց նա հրավիրել էր այդ կնոջը՝ իր եկեղեցում քարոզելու:

Բարի՛ն արեք նրանց, ովքեր ատում են ձեզ: Դա է Աստծո ճանապարհը: Չարին բարի՛ով հատուցեք: Փնտրե՛ք, թե ինչ կարող եք անել նրանց համար, ովքեր ձեզ վատ են վերաբերվել: Հարցրե՛ք Տիրոջը, թե ինչպես կարող եք օրհնություն լինել նրանց համար, ովքեր սխալ են վարվել ձեզ հետ: Չարի փոխարեն բարիով հատուցելը գործում է, քանի որ դա այն է, ինչ Հիսուսն է մեզ սովորեցրել անել:

Հիշում եմ մի ծառայողի, որ տարիներ առաջ չէր ընդունում իմ քարոզները և քննադատում էր ինձ: Որոշ ժամանակ անց նա խնդիրներ ունեցավ իր ծառայության մեջ: Իմանալով դրա մասին՝ զանգահարեցի և ասացի, որ կողքին եմ, հավատում եմ իրեն և աղոթում եմ իր համար:

Մարդկանց վրա չպետք է քարեր նետել, նրանց համար բարին անելու միջոցներ պետք է գտնել: Եթե կարող ենք, պետք է գտնենք մարդկանց օգնելու ուղիներ: Այդ ծառայողն ասաց ինձ, թե որքան շատ էր նրան օգնել իմ քաջալերանքը:

Իսկ հետո մեկ ուրիշին ասել է. «Երբ ինչ-որ բան է պատահում, և նեղության մեջ ես, բացահայտում ես, թե ովքեր են ընկերներդ»: Մի երրորդ մարդու էլ ասել է. «Հասկացա, որ սխալվում էի եղբայր Հեգինի հարցում»:

Աղոթե՛ք ձեր թշնամիների համար

Սուրբգրային այս հատվածում, երբ Հիսուսը խոսում է աստվածային սիրո մեջ կատարելագործվելու կամ հասունանալու մասին, Նա նկատի ունի մեր հասունությունը սիրո *և* աղոթքի մեջ: Եթե աղոթքի կյանքում հասուն լինենք, ապա մեր թշնամիներին քննադատելու և նրանց մասին վատը խոսելու փոխարեն կաղոթենք նրանց համար:

Մենք պետք է աղոթենք նրանց համար, որոնք չարչարում և հալածում են մեզ: Արդյոք Հիսուսին հալածո՞ւմ էին Նրա երկրային ծառայության մեջ: Իհարկե. Հիսուսի թշնամիները խաչեցին Նրան:

Գուցե ասեք. «Բայց դու չես հասկանում, թե մարդիկ ինչ են արել իմ հանդեպ»:

Հիսուսն է մեր օրինակը. տեսե՛ք, թե մարդիկ ինչ արեցին Նրա հանդեպ: Նա է ասել, որ աղոթենք մեր թշնամիների համար: Իսկ Նա աղոթո՞ւմ էր Իր թշնամիների համար: Եթե այո, ապա մենք պետք է հետևենք Նրա օրինակին:

Ուշադրությո՛ւն դարձրեք, թե ինչ արեց Հիսուսը Խաչի վրա՝ արյունաքամ և ցավերի մեջ՝ մահվան շեմին: Արդյոք Նա հայհոյե՞ց կամ

մեղադրե՞ց Իր թշնամիներին: Ո՛չ, Նա աղոթեց նրանց համար: Իրականում Նա աղոթեց հենց Իրեն խաչողների համար. «...Հա՛յր, թո՛ղ նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23.34):

Ոմանք ասում են. «Այո՛, բայց դա Հիսուսն էր: *Նա* կարողացավ անել դա, քանի որ Աստծո Որդին էր»:

Բայց նույն այն սերը, որը Հիսուսի սրտում էր, Սուրբ Հոգով սփռված է մեր սրտերում: Հիսուսը չէր խնդրի, որ անեինք մի բան, ինչն անելը մեզ համար անհնար կլիներ:

Երբ երիտասարդ մկրտական քարոզիչ էի, նույնիսկ մինչ կմկրտվեի Սուրբ Հոգով, կարդացի Տիրոջ այս խոսքերը. «Աղոթե՛ք նրանց համար, ովքեր չարչարում ու հալածում են ձեզ»: Ուստի դեռ այն ժամանակ սկսեցի կիրառել այդ սկզբունքը. երբ ինչ-որ մեկն ինձ վատ էր վերաբերվում, պարզապես աղոթում էի այդ մարդու համար:

Աղոթում էի այսպես. «Աստվա՛ծ, օրհնի՛ր այսինչ եղբորը. գուցե ես չեմ հասկանում, թե ինչու նա նման բան ասաց, բայց այդ հարցը Քո և Նրա միջև է: Ես գիտեմ, որ Դու ցանկանում ես օրհնել նրան, և աղոթում եմ, որ օրհնես Նրա ծառայությունը, աստվածային առաջնորդություն և ուղղորդում տաս նրան Իր կյանքի բոլոր բնագավառներում: Տե՛ր, օգտագործի՛ր նրան և օրհնությո՛ւն դարձրու ուրիշների համար»:

Իմ ցանկությունն է, որ մարդկանց հետ լավ բաներ պատահեն և ոչ թե վատ: Ես չեմ ուզում, որ որևէ մեկը տանուլ տա, իսկ դո՞ւք: Այնպես որ, նույնիսկ երբ մարդիկ քննադատում են ինձ, ես չեմ աղոթում, որ նրանց հետ վատ բան պատահի. աղոթում եմ, որ օրհնված լինեն:

Մենք նման օրինակներ ունենք Նոր Կտակարանում, երբ մարդիկ ներել են իրենց թշնամիներին, աղոթել են նրանց համար և թույլ են տվել, որ Աստծո սերը ղեկավարի իրենց:

Աստծո սերը՝ գործողության մեջ

Ստեփանոսը օրինակ էր մի մարդու, որը սիրով վարվեց իր թշնամիների հետ: Նա թույլ տվեց, որ իրեն ղեկավարի Աստծո սերը:

Ստեփանոսը Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի առաջին մարտիրոսն էր, որի մասին խոսվում է Աստվածաշնչում: Առաջին եկեղեցին հալածողները քարկոծեցին նրան մինչև մահ, իսկ Ստեփանոսը մահանալիս աղոթում էր նրանց համար, որոնք սպանում էին իրեն:

ԳՈՐԾՔ 7.58,59

58 Եվ քարկոծում էին Ստեփանոսին, որ կանչում էր և ասում՝ Տեր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին:

59 Եվ ծունկ դրեց և բարձր ձայնով աղաղակեց՝ ՏԵՐ, ԱՅԴ ՄԵՂՔ ՄԻ ՀԱՄԱՐԻՐ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ, և այս ասելով՝ ննջեց, և Սողոսը կամակից էր նրա սպանվելուն:

Քեզ քարկոծողների համար աղոթելը վստահաբար Աստծո սերն է գործողության մեջ: Երբ Ստեփանոսի թշնամիները քարկոծում էին նրան, նա աղոթում էր նրանց համար և խնդրում, որ Աստված դա նրանց համար մեղք չհամարի:

Եթե թույլ տաք, որ մարդկային բնությունը ղեկավարի ձեզ, ապա կցանկանաք ի պատասխան կռվել ձեզ հալածողների հետ:

Կցանկանաք վրեժ լուծել և պատասխան հարված հասցնել նրանց: Սակայն ես վաղուց սովորել եմ, որ աշխարհում ամենալավ բանը պարզապես նրանց համար աղոթելն է:

Երբ մարդիկ ուրիշների նկատմամբ աստվածային սեր և անձնազոհ վերաբերմունք են ցուցաբերում, աղոթում են նրանց համար, ապա դառնում են իսկական աղոթքի մարդիկ:

Սրանք այն մարդիկ են, որոնց ձայները Բարձրում լսելի են: Նրանք ստանում են իրենց աղոթքների պատասխանները: Ինչո՞ւ, որովհետև Խոսքը *կատարողներ* են: Իսկ Աստվածաշունչն ասում է, որ Խոսքը կատարողներն են օրհնվում իրենց գործերում (Հակ. 1.25):

Սակայն եթե հավատացյալները չեն պատրաստվում Խոսքը կատարող լինելու, ապա ինքնախաբեությամբ են զբաղվում, քանի որ արդյունավետ աղոթքի կյանքը հիմնված է Խոսքի վրա:

Ոմանք երբեմն զարմանում են, թե ինչու իրենց աղոթքները չեն պատասխանվում, բայց կանգ չեն առնում խորհելու իրենց աղոթքների խոչընդոտների շուրջ: Ձեր թշնամիների համար չաղոթելով Խոսքը չկատարելը կարող է լինել աղոթքի խոչընդոտներից մեկը:

Եթե չեք ներում ձեր թշնամիներին և չեք աղոթում նրանց համար, դա կարող է խոչընդոտ դառնալ ձեր անձնական աղոթքի կյանքում: Ինչո՞ւ է Աստված ցանկանում, որ մենք *աղոթենք* մեր թշնամիների համար:

Նախ և առաջ դուք հասկանում եք, որ ներել եք ձեր թշնամիներին, երբ կարողանում եք աղոթել նրանց համար և խնդրել, որ Աստված օրհնի նրանց: Ձեր հանդեպ սխալ գործած մարդկանց համար

աղոթելով՝ դուք արձակում եք ցավը, ոխն ու չներումը, որ ունեք ձեր սրտում նրանց դեմ:

Հավատացած եմ, որ այս պատճառով է Հիսուսը մինչ աղոթքի մյուս տեսակներին անցնելը նախ խոսում մեր թշնամիների համար աղոթելու մասին: Թշնամիներիդ համար աղոթելու համար սիրտդ պետք է ուղիղ լինի Աստծո առջև:

Այլ կերպ ասած՝ առանց ներելու չեք կարող աղոթել թշնամիների համար: Իսկ երբ կարողանում եք Աստծո օրհնությունը խնդրել նրանց համար, ձեր սիրտն այլևս չի դատապարտում ձեզ, ուստի Աստծո առջև գալու համարձակություն եք ունենում (Ա Հովհ. 3.20,21):

Երանի՜ հավատացյալները գիտակցեին, որ պետք է կարգավորեն իրենց ներսի հարցերը, որպեսզի իրենց աղոթքները պատասխանվեն:

Բացի այդ՝ ձեր թշնամիների համար աղոթելը *ձեզ* համար օրհնություն է: Այն ձեզ համար օգտակար է նույնքան, որքան նրանց համար կամ նույնիսկ ավելի: Ինքներդ ձեզ շատ ավելի լավ կզգաք, երբ աղոթեք նրանց համար, ովքեր ձեր հանդեպ սխալ են գործել:

Այնպես որ, եթե մտածում եք, որ ինչ-որ մեկին դուր չեք գալիս, ապա աղոթե՛ք նրա համար: Այդ մարդու համար օրհնություն լինելու ինչ-որ միջո՛ց գտեք: Խնդրե՛ք, որ Աստված ցույց տա ձեզ, թե ինչ կարող եք անել այդ անձնավորությանն օգնելու համար:

Պետրոսը ևս խոսում է այն մասին, թե ինչպես պետք է արձագանքենք, երբ մարդիկ մեզ հետ չեն վարվում այնպես, ինչպես մենք կարծում ենք, թե պետք է վարվեն:

Ա ՊԵՏՐՈՍ 3.9

9 Չարի փոխարեն չար չհատուցեք կամ բամբասանքի փոխարեն բամբասանք, այլ ընդհակառակը, օրհնե՛ք՝ գիտենալով, որ իսկ սրա մեջ կանչվեցիք, որ օրհնությունը ժառանգեք:

Օրհնություն կա թշնամիների համար աղոթելու մեջ՝ նրանց չարով հատուցելու փոխարեն: Աստվածաշնչում գրված է, որ մենք կանչված չենք չարին չարով և վիրավորանքին վիրավորանքով պատասխանելու:

Դա նշանակում է, որ երբ ինչ-որ մեկը մի չար խոսք է ասում ձեզ կամ ձեր մասին, դուք չպետք է վրեժ լուծեք՝ ի պատասխան չար բան ասելով: Փոխարենը պետք է օրհնեք և բարին անեք նրանց:

Եկեք այս խոսքն ուսումնասիրենք Աստվածաշնչի *«Ընդլայնված»* թարգմանությամբ:

> **Ա ՊԵՏՐՈՍ 3.9 (AMP)**
>
> **9 Երբեք չարին չարով և վիրավորանքին վիրավորանքով՝ նախատինքով, լեզվակռվով, կշտամբանքով, մի՛ պատասխանեք, ընդհակառակը օրհնեք, ԱՂՈԹԵՔ ՆՐԱՆՑ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ, ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՍՐՏԱՑԱՎՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՍԻՐՈ՛Վ ՎԵՐԱԲԵՐՎԵՔ ՆՐԱՆՑ: Իմացեք, որ սրանում եք կանչված, ՈՐ ԺԱՌԱՆԳԵՔ Աստծո ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ՝ որպես ժառանգներ ստանաք օրհնություն՝ բարեկեցություն, երջանկություն և պաշտպանություն:**

Այս խոսքում ասվում է, որ մենք պետք է աղոթենք մեր թշնամիների բարեկեցության, երջանկության և պաշտպանության համար և սրտացավություն ու սեր ցուցաբերենք նրանց հանդեպ, ովքեր ատում են մեզ:

Մեզնից քանի՞սը կարող են ազնվությամբ ասել, որ կարեկցում ու սիրում են նրանց, ովքեր սխալ են վարվել իրենց հանդեպ: Արդյոք մեր սերն արտահայտվո՞ւմ է նրանց բարեկեցության, երջանկության և պաշտպանության համար աղոթելով: Դա Աստծո սերն է՝ գործողության մեջ:

Կցանկանամ, որ տվյալ խոսքում մի բան նկատեք. այն խոստանում է, որ մենք Աստծուց օրհնություն կժառանգենք, եթե չարին չարով և վիրավորանքին վիրավորանքով պատասխանելու փոխարեն աղոթենք նրանց համար, ովքեր մեր հանդեպ սխալ են վարվել:

Հիշե՛ք, որ Հիսուսը Մատթեոս 5.46-րդ խոսքում ասել է, որ մեր թշնամիներին սիրելու համար վարձք ունենք Երկնքում: Իսկ Ա Պետրոսի վերոնշյալ խոսքում ասվում է, որ Աստծուց օրհնություն կժառանգենք, եթե աղոթենք մեր թշնամիների համար: Աստված ցանկանում է, որ սիրենք մեր թշնամիներին և աղոթենք նրանց համար, քանի որ գիտի, որ այդ դեպքում *մենք մեր* կյանքում կստանանք Աստծո օրհնությունները:

Նախորդ գլխում ուսումնասիրեցինք Ա Պետրոսի 3.11-րդ և 12-րդ խոսքերը երկրի վրա երկար ապրելու և լավ կյանք ունենալու մասին: Իսկ հիմա եկեք այս խոսքն ուսումնասիրենք աղոթքի վերաբերյալ: Պետրոսն այստեղ խոսում է նաև աղոթքի մասին, քանի որ ասում է, որ Տիրոջ ականջը բաց է՝ լսելու արդարի աղոթքը:

Ա ՊԵՏՐՈՍ 3.11,12

11 Չարից հետ քաշվի [խուսափի] և բարի անի, խաղաղություն որոնի և նրան հետևի:

12 Որովհետև Տիրոջ աչքերն արդարների վրա են, և Նրա ականջները՝ դեպի նրանց աղոթքը. Տիրոջ երեսը չարագործների վրա է:

Այս խոսքում հիմնականում նույնն է ասվում, ինչ Հիսուսն էր ասում: Մենք պետք է խուսափենք չարից, բարին գործենք և ոչ միայն խաղաղություն որոնենք, այլև խաղաղության հետևենք բոլորի հետ, այդ թվում նաև մեր թշնամիների:

Մարդիկ կարող են քննադատել ձեզ և վատը խոսել ձեր մասին, բայց դա ձեզ նրանց քննադատելու և նրանց մասին վատը խոսելու իրավունք չի տալիս: Ո՛չ. եթե ցանկանում եք, որ Տիրոջ ականջները բաց լինեն ձեր աղոթքների համար, և Նրա օրհնություններն ունենաք ձեր կյանքում, ապա պետք է խուսափեք չարից, բարին գործեք, խաղաղության հետևեք ձեր թշնամիների հետ՝ անկախ այն բանից՝ նրանք ձեզ հետ լավ են վարվում, թե ոչ:

Եվ, իրականում, շատ ավելի լավ կզգաք ձեզ՝ Աստծո լույսի մեջ քայլելով և ձեզ չարչարողների ու հալածողների համար աղոթելով:

Եթե չի կարելի չարին չարով պատասխանել և վիրավորել մեր թշնամիներին, ապա, ըստ Խոսքի, ի՞նչ կարող ենք անել Երկնքից վարձք ստանալու և Աստծո օրհնությունը ժառանգելու համար:

Հիսուսը չորս գործողություն է նշել, որոնք պետք է անենք, եթե ցանկանում ենք հասունանալ աղոթքի և աստվածային սիրո մեջ: Այս չորս գործողություններն ամեն անգամ բերում են Աստծո օրհնություններն ու վարձքը մեր կյանքում: Դրանք սովորեցնում են, թե ինչպես է պետք վերաբերվել մեր թշնամիներին: Մենք պետք է *սիրենք* նրանց, *օրհնենք* նրանց, *բարին անենք* նրանց և *աղոթենք* նրանց համար:

Հիշե՛ք, որ սրանք *Հիսուսի* խոսքերն են: Նա մեզ ճշգրիտ ներկայացնում է, թե ինչպես պետք է վերաբերվենք մեր թշնամիներին, որպեսզի հասունանանք և կատարելագործվենք աստվածային սիրո մեջ: Եթե անենք այս ամենը, ապա Աստծո սերը կկատարելագործվի մեր կյանքերում: Մենք կարտացոլենք այն սերը, որն Աստված է, քանի որ Աստված սեր *է*:

Չարի փոխարեն բարի՛ն հատուցեք և օրհնություն կժառանգեք

Մի եկեղեցի, որի հովիվն էի, շատ խնդիրներ ուներ, սակայն Աստված ինձ այս կամ այն կերպ իմաստություն էր տալիս այդ եկեղեցին հովվելու համար, և Ինքն էր լուծում խնդիրները: Երբ թողեցի այդ եկեղեցին, այն այնքան էր աճել, որ մարդիկ չէին տեղավորվում եկեղեցաշենքում: Բայց այն մարդը, որ ստանձնեց հովվությունն ինձնից հետո, բախվեց խնդիրների:

Այդ ժամանակ ես դաշտային ծառայության մեջ էի: Մի անգամ, երբ այդ եկեղեցու տարածքով էի անցնում, որոշեցի կանգ առնել ու այցելել այդ հովվին: Լսել էի, որ նա եկեղեցում խնդիրներ ուներ, և աղոթում էի նրա համար: Իրականում շատ անգամներ Աստված ինձ արթնացրել էր վաղ առավոտյան, որ աղոթեի նրա համար: Սրտացավություն ունեի նրա հանդեպ: Ի վերջո ես ինքս հովվել էի այդ եկեղեցին և ծանոթ էի որոշ խնդիրների:

Ուստի այդ օրը, երբ այդ քաղաքում էի, մեքենաս վարեցի դեպի հովվական կացարան, և այդ հովիվը մոտեցավ մեքենայիս՝ ինձ հետ զրուցելու: Ասացի, որ քաղաքում գործեր ունեի և պարզապես կանգ էի առել՝ իմանալու, թե ինչպես է:

«Ինչպե՞ս են գործերը»,- հարցրի:

«Ինչ-որ բան ճիշտ չի ընթանում. մարդիկ տասանորդ չեն տալիս»,- ասաց նա:

Հետո նայեց ինձ և պահանջող տոնով ասաց. «Դու այստեղ եկել և մարդկանցից տասանո՞րդ ես հավաքել»:

Մինչ ես կհասցնեի որևէ բան ասել, նա այնպես կատաղեց, որ առաջ եկավ և օձիքիցս բռնեց: Ինձ նույնիսկ թվաց, թե հիմա դուրս կքաշի ինձ մեքենայից:

Ես էլ ձեզ նման ունեմ մարդկային բնություն, որի հարցերը պետք է լուծել: Այդ պահին իմ մեջ նրա գլխին հարվածելու ցանկություն առաջացավ, բայց չէի կարող թույլ տալ, որ մարդկային բնությունս ղեկը վերցներ իր ձեռքը: Արդեն պատկերացնում էի թերթերի գլխագրերը՝ «Ամբողջական Ավետարանի ծառայողը հարվածում է Ամբողջական Ավետարանի հովվի գլխին»: Բայց մյուս կողմից էլ նա մեղադրում էր ինձ մարդկանց տասանորդները գողանալու մեջ:

Աստվածաշունչն ասում է չարի փոխարեն չարը չհատուցել և վիրավորանքին վիրավորանքով չպատասխանել: Աշխարհում, երբ մարդիկ ձեզ վիրավորում են, դուք վրեժ եք լուծում և, ի պատասխան,

վիրավորում նրանց: Սակայն Աստվածաշունչն ասում է. «Ընդհակառակը, *օրհնե՛ք*, որ կարողանաք օրհնություն ժառանգել»:

Ես նրան ասացի. «Նույնիսկ մեկ դրամ չեմ վերցրել քո եկեղեցու անդամներից: Թանկագի՛ն եղբայր, ես աղոթել եմ քեզ համար և ո՛չ մեկ անգամ: Երեկ չէ առաջին օրն առավոտյան՝ ժամը չորսին, սառը հատակին ծնկի իջած աղոթում էի քեզ համար»:

Ես գիտեի, որ այդ եկեղեցում խնդիրներ կային, քանի որ ինքս այնտեղ ծառայել էի որպես հովիվ: Աստված ինձ ասել էր ինչպես վարվել այդ հարանվանության մարդկանց հետ, բայց որոշ խնդիրներ նորից գլուխ էին բարձրացրել, իսկ այդ հովիվը չգիտեր ինչպես վարվել դրանց հետ:

Երբ նրան ասացի, որ աղոթել եմ իր համար, այնպես վեր թռավ, կարծես մտրակով հարված էր ստացել: Հետո սկսեց լաց լինել. «Աստվա՛ծ իմ, եղբա՛յր Հեգին, ների՛ր ինձ: Գիտեմ, որ ճիշտ բան չասացի. պարզապես ցանկանում էի մեղքն ինչ-որ մեկի վրա գցել»:

Այնուհետև խոստովանեց. «Ձախողվել եմ այս եկեղեցում: Իրավիճակը ձեռքումս չեմ պահել, բաժանել եմ եկեղեցին և մարդկանց կեսին դուրս հանել: Դու հաջողել էիր, իսկ ես՝ ոչ և փորձում էի ամբողջ մեղքը քեզ վրա գցել: Կներե՞ս ինձ»:

«Իհարկե՛, ներում եմ քեզ»,- ասացի ես: Հետո մենք գրկախառնվեցինք և որոշ ժամանակ անցկացրինք միասին, ապա բաժանվեցինք որպես ընկերներ և ոչ թե որպես թշնամիներ: Արդյոք սա ավելի լավ տարբերակ չէ՞, քան կռվելը:

Սակայն եթե ես թույլ տայի, որ մարդկային բնությունս ղեկավարեր ինձ, և չարի փոխարեն չարը հատուցեի ու վիրավորանքի փոխարեն վիրավորեի, այդպես չէր ավարտվի: Մինչդեռ տեղ չտվեցի մարդկային բնությանս, և այդ մարդը մինչ օրս իմ ընկերն է:

Վարժվե՛ք սեր ցուցաբերելու մեջ

Խաչի վրա Հիսուսը ցուցաբերեց այն նույն սերը, որի մասին քարոզում էր: Նա ոչ միայն ներեց նրանց, ովքեր Իրեն խաչել էին, այլև հետաքրքիր մի բան ասաց. «...Հա՛յր, թո՛ղ դրանց, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՉԳԻՏԵՆ, ԹԵ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ...» (Ղուկ. 23.24):

Ինչո՞ւ Հիսուսն ասաց դա: Քանի որ հաճախ մարդիկ չեն գիտակցում, թե ինչ են անում, երբ ուրիշների հանդեպ սիրով չեն վարվում: Շատ անգամներ չեն գիտակցում, թե որքան քայքայիչ են քննադատությունն ու հալածանքը: Նրանք չեն ցանկանում մեղք գործել և

տանուլ տալ, սակայն պարզապես չեն հասկանում, թե որքան վնասաբեր է քննադատությունը դիմացինի համար:

Ես չեմ պատրաստվում բորբոքվելու, բարկանալու և բաց թողնելու իմ կյանքի օրհնություններն այն պատճառով, որ մարդիկ քննադատում են ինձ: Փոխարենը պատրաստվում եմ շարունակելու սեր ցուցաբերել և անել այն, ինչն Աստվածաշունչն է ասում այս խոսքերում, որպեսզի բաց չթողնեմ Աստծո օրհնություններն իմ կյանքում:

Իրականում տարիների իմ ծառայության ընթացքում խնդիրներ չեմ ունեցել ծառայակիցներիս հետ: Պարզապես սիրում եմ նրանց, չեմ խոսում նրանց մասին և չեմ դատում նրանց: Բամբասանքներ չեմ տարածում. նրանց մասին վատը չեմ խոսում: Չեմ ցանկանում այլոց մասին տարածել այնպիսի բաներ, որոնք կքանդեն նրանց ծառայությունները:

Ո՛չ, պարզապես հրաժարվում եմ նման բան անելուց: Հրաժարվում եմ մարդկանց մասին հեքիաթներ պատմելուց: Ես ականջներումս աղբաման չունեմ և չեմ պատրաստվում որևէ մեկին թույլ տալու մեկ ուրիշի մասին աղբ ու բամբասանք լցնել ականջներիս մեջ: Սա կազդի իմ հոգևոր առաջընթացի և իմ առողջության վրա. այնպես որ նման բան չեմ անի:

Գուցե հարցնեք. «Իսկ ի՞նչ, եթե այն, ինչ ասում են, ճիշտ է»: Միևնույնն է, չեմ անի դա, եթե նույնիսկ ինչ-որ մեկը թերացել է: Իսկ մեզնից ո՞վ է, որ կյանքի այս կամ այն կետում չի թերանում: Ճանաչո՞ւմ եք այդպիսի մեկին: Ո՛չ, չեք ճանաչում: Ես նույնպես չեմ ճանաչում, քանի որ Հիսուսը միակ կատարյալ Անձնավորությունն է, Ով երբևէ քայլել է երկրի վրա:

Քանի որ բոլորս էլ այս կամ այն կերպ թերացել ենք, ապա պարզապես պետք է սիրենք իրար: Եթե ճիշտ վերաբերմունք պահպանենք՝ անկախ այն բանից դա դուր է գալիս մեր մարդկային բնությանը, թե ոչ, և շարունակենք մարդկանց սիրել, ապա առատ վարձք կստանանք:

Տիրոջ բարության մեջ քայլելու լավագույն ճանապարհը սիրով վարվելն է: Կիրառեք աստվածային սերը և վարժվեք դրանում, քանի որ այն արդեն ձեր սրտում է: Այո՛, ձեր մարդկային բնությունը կցանկանա ղեկն իր ձեռքը վերցնել, բայց դուք կարող եք դա թույլ չտալ: Երբ գործի դնեք աստվածային սերը, այն կաճի ու կզարգանա, և դուք օրհնություն կլինեք շատերի համար:

Սակայն եթե հակառակություն և անբարյացակամություն պահեք ձեր ներսում ուրիշների հանդեպ և հրաժարվեք մարդկանց հա-

մար աղոթելուց, այն պատճառով, որ նրանք ձեր հանդեպ սխալ են վարվել, դա կանդրադառնա ձեզ վրա ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգևորապես:

Դուք չեք կարող ձեզ թույլ տալ կենտրոնանալ նրա վրա, ինչ մարդիկ ձեր մասին ասել կամ ձեր հանդեպ արել են, ինչպես են ձեզ հալածել կամ չարչարել: Եթե այդ ամենը պահեք ձեր մտքում, ապա այդ բացասական մտքերը կծանրանան ձեր հոգու և շնչի մեջ և ի վերջո կազդեն ձեր կյանքի բոլոր բնագավառների վրա:

Օրինակ՝ երբևէ լսել եք, որ մարդիկ ասեն. «Այսինչն ինձ չի սիրում»:

Եթե հարցնեք՝ «Իսկ դու դրա հետ կապված ի՞նչ ես անում», պատասխանը կլինի՝ «Այլևս երբեք չեմ խոսելու նրա հետ»:

Իսկ հետո մարդիկ զարմանում են, թե ինչու են իրենց աղոթքները խափանվում, իսկ հավատքը չի գործում:

Մի եկեղեցում հովիվ էի, երբ մի կիրակնօրյա երեկոյան հավաքույթից հետո մի կին եկավ առաջ՝ ինձ հետ խոսելու: Սրահը լի էր մարդկանցով, սպասասրահ չունեինք. եկեղեցին մեկ սրահից էր բաղկացած, որտեղ երեք հարյուր մարդ էր տեղավորվում:

Ինչևէ, այդ կինը լաց լինելով եկավ ինձ մոտ և ասաց. «Խնդրում եմ, աղոթե՛ք ինձ համար»:

«Ինչո՞ւ, քույրի՛կ: Ի՞նչ է պատահել»:

«Այսինչ և այնինչ քույրերը, եկեղեցու ետնամասում նստած, ինձնից են խոսում»:

«Քույրի՛կ,- ասացի ես,- կարծում եմ, նրանք ավելի լավ թեմաներ ունեն զրուցելու: Բացի այդ՝ ինչպե՞ս իմացաք, թե ձեր մասին են զրուցում»:

«Ուղղակի գիտեմ»,- ինչեց պատասխանը:

«Նրանք կարող են զրուցել աշխարհում տեղի ունեցող հազար ու մի բանի մասին: Դրա համար աղոթելն անիմաստ է: Իսկ Դուք պարզապես պետք է գործի դնեք Խոսքը: Բացի այդ՝ նույնիսկ եթե ձեր մասին են խոսում, գործի՛ անցեք և սիրե՛ք նրանց ամեն պարագայում»,- ասացի ես:

Նա շարունակում էր պնդել. «Համոզված եմ, որ ինձնից են խոսում»:

«Դա պարզելու հեշտ եղանակ կա,- ասացի ես,- եկե՛ք գնանք և տեսնենք, թե ինչից են զրուցում»: Մենք պարզապես քայլեցինք դեպի սրահի ետնամաս, որտեղ այդ տիկնայք նստած զրուցում էին:

Եվ ես հարցրի նրանց. «Ինչի՞ մասին եք զրուցում, տիկնա՛յք»: Պարզվեց, որ զրուցում էին մուրաբա եփելու և պահածո պատրաստելու մասին: Նրանք այդ կնոջ մասին չէին խոսում:

Տեսնո՞ւմ եք, թե ինչպես է խոչընդոտվում մարդկանց ընթացքը, երբ Տիրոջ Խոսքը նրանցում չի բնակվում: Նրանք չեն կարողանում քայլել Խոսքի լույսի ներքո, իսկ դա խոչընդոտում է նրանց աղոթքի կյանքը:

Այդ կինն այնքան էր կենտրոնացել այն մտքի վրա, թե այդ կանայք իր մասին էին խոսում, որ դա ծանրացել էր նրա շնչի մեջ և այնպես էր նրան համակել, որ նա աղոթքի կարիք ուներ: Նա օրհնություն էր բաց թողել, քանի որ գործի չէր դրել աստվածային սերը:

Նույնիսկ եթե այդ կանայք իսկապես նրա մասին էին խոսում, ի՞նչ կարող էր նա անել: Ամեն պարագայում պետք է սիրեր, ներեր և աղոթեր նրանց համար:

Բացի այդ՝ եթե հասուն եք աստվածային սիրո մեջ, ապա թույլ չեք տա, որ նման բաներն ազդեն ձեզ վրա: Պարզապես կշարունակեք սիրել մարդկանց՝ անկախ այն բանից, թե նրանք ինչպես են ձեզ վերաբերվում:

Ես սովորել եմ թույլ չտալ, որ մարդկանց քննադատությունները նվազագույն ազդեցությունն ունենան ինձ վրա: Տարիներ շարունակ ասել եմ, որ նույնիսկ եթե ինձ մեղադրեն տատիկիս սպանելու մեջ, անգամ ժամանակ չեմ ծախսի դա հերքելու վրա: Փոխարենը կշարունակեմ գոչել հաղթանակի մասին և փառք տալ Աստծուն:

Թող որ մարդիկ ասեն իմ մասին, ինչ ցանկանում են: Ես կաղոթեմ նրանց համար, բայց թույլ չեմ տա, որ նրանց խոսքերն ազդեցություն ունենան ինձ վրա: Ինչ վերաբերում է ինձ, ես շարունակելու եմ երկրպագել Աստծուն և մնալ առողջ:

Աստծո սերը՝ բժշկության ամենամեծ գործոնը

Ո՞ւմ համար պետք է աղոթենք մենք՝ միայն այն եղբայրների՞, որոնք մեզ հետ ճիշտ են վարվել: Աղոթենք միայն նրանց համար, ովքեր մեր հանդեպ բարի՞ են եղել: Առանց մեր աղոթքի էլ նրանք պետք է որ օրհնված լինեն, եթե նման օրհնություն են եղել մեզ համար:

Ո՛չ, միայն նրանց համար չէ, որ պետք է աղոթեք: Դուք պետք է աղոթեք նրանց համար, ովքեր չարչարում և հալածում են ձեզ: Եթե աղոթեք ձեր թշնամիների համար, դա ձեզ համար հոգևոր առումով

օգտակար կլինի նաև կյանքի մյուս բնագավառներում:

Ինչպե՞ս դա ձեզ հոգևոր օրհնություն կբերի կյանքի նաև մյուս բնագավառներում: Ըստ Հակոբոս 1.25-ի՝ Խոսքը կատարողներն են, որ «իրենց անելով» օրհնված կլինեն: Հաջողվում են այն աղոթքները, որոնք հիմնված են Աստծո Խոսքի վրա: Աստծո Խոսքի համաձայն աղոթելիս մենք արդյունք ենք ունենում:

Եկե՛ք պարզապես անենք այն, ինչ Աստվածաշունչն է ասում: Եկե՛ք լինենք Խոսքը կատարողներ և ոչ միայն լսողներ: Այդպես կհաջողենք մեր կյանքի բոլոր բնագավառներում:

Փորձիս և Խոսքի վրա հիմնվելով՝ գիտեմ, որ եթե ցանկանում եք առողջ լինել, ապա պետք է Աստծուն մոտ քայլեք: Այսինքն՝ պետք է քայլեք աստվածային սիրո մեջ, քանի որ Աստված սեր *է*: Կյանքում միշտ կլինեն թշնամիներին սիրելու մասին այս խոսքերը կատարելու առիթներ:

Դուք պետք է հասկանաք, որ չեք կարող խախտել թշնամիների համար աղոթելու Խոսքը և արդյունքներ ստանալ՝ խնդրելով մարդկանց, որ աղոթեն ձեզ համար: Մեկ ուրիշի հավատքը չի գործի ձեզ համար, քանի դեռ դուք ձեր սրտում ինչ-որ բան եք պահում ինչ-որ մեկի դեմ:

Նշանակություն չունի, թե որքան վատ են ձեզ հետ վարվել կամ ինչ են ձեր մասին ասել, այս խոսքն ասում է, որ պետք է աղոթեք նրանց համար: Պետք է Աստծուն հանձնեք վիրավորանքն ու զայրույթը և աղոթեք նրանց համար, ովքեր ցավեցրել են ձեզ, որպեսզի Աստծո լավագույնը հնձեք ձեր կյանքում:

Վստահ եմ, որ եթե Քրիստոսի Մարմինը սկսի քայլել աստվածային սիրո մեջ, մեր մեջ այլևս չեն լինի հիվանդություններ:

Նույնիսկ աշխարհիկ մարդկանցից շատերը հասկանում են, թե ինչ վնաս կարող են հասցնել ատելությունն ու զայրույթը մարդու առողջությանը: Օրինակ՝ մի քանի տարի առաջ կարդացի մի բժշկի հոդված, նա մեծ բժշկական ընկերակցության նախագահ էր: Իր հոդվածում նա ապշեցուցիչ պնդում է անում: Նա ասում է՝ «Սերն ամենամեծ բուժիչ գործոնն է»:

Այնուհետև ևս մեկ հետաքրքիր բան է ասում. «Հնում բժիշկներն ավելին էին անում, քան պարզապես մարդկանց բուժելը: Նրանք այցելում էին մարդկանց տները, որ տեսնեին, թե ինչ միջավայրում են մարդիկ ապրում»: Շատ անգամներ այդ կերպ բժիշկները հասկանում էին մարդկանց հիվանդությունների պատճառները:

Երբ մարդիկ ապրում են այնպիսի միջավայրում, որտեղ չկան

սեր և սրտացավություն, պարզ է, թե ինչու են հիվանդանում: Եվ այս բժիշկը դեռ միայն խոսում էր *մարդկային* սիրո մասին:

Եթե բնական մարդկային սեր ցուցաբերելը կարող է բուժիչ գործոն լինել, ապա պատկերացրե՛ք, թե որքան մեծ բուժիչ գործոն է *Աստծո* սիրով վարվելը:

Հիվանդությունից հեռու մնալու համար հարկավոր է սիրել թշնամիներին: Տարիների ընթացքում այդ սկզբունքը կիրառելու բազում հնարավորություններ եմ ունեցել:

Օրինակ՝ մի ավետարանիչ, որը մի անգամ ինձ մոտ հավաքույթներ էր անցկացնում, մի սխալ ու անքաղաքավարի բան արեց իմ նկատմամբ: Սատանան հետևյալ միտքը բերեց՝ *եթե քո փոխարեն լինեի, այլևս նրան նվիրատվություն չէի հատկացնի:*

Դա մարդկային բնությունն է, որը ցանկանում է հաշիվները պարզել մարդկանց հետ: Բայց Աստվածաշնչում Աստված ասում է. «Իմն է վրեժխնդրությունը. Ես հատուցումը կտամ» (Եբր. 10.30): Ես հասկացել եմ, որ ավելի լավ է թույլ տալ՝ Տերը պատերազմի մեր փոխարեն: Նա ավելի լավ կանի դա, քան մենք կարող ենք: Եթե ինքներս փորձենք վրեժ լուծել, խառնաշփոթ կստեղծենք:

Եթե թույլ տաք, որ ձեր բնական մարդկային տրամաբանությունն ու բնությունը ղեկավարեն ձեզ, անախորժության մեջ կհայտնվեք, քանի որ կցանկանաք վրեժ լուծել: Եվ եթե զգույշ չլինեք, ձեր մարդկային բնությունը և միտքը կանցնեն սատանայի կողմը, և դուք տեղ կտաք *նրա* բերած մտքերին:

Ինչևէ, ես հասկացա, որ այդ ավետարանչի հետ հաշիվներս պարզելու միտքը սատանայից էր. այն չէր բխում իմ վերստեղծված հոգուց, որտեղ Սուրբ Հոգին էր բնակվում:

Այնպես որ ասացի. «Հենց այդ պատճառով էլ, պարո՛ն սատանա, ես ամեն երեկո այդ ավետարանչին նվիրատվություն եմ տալու: Եվ եթե մի բառ էլ ասես, ամեն երեկո երկու նվիրատվություն կտամ նրան»:

Ինչո՞ւ ասացի դա. քանի որ սիրո օրենքը՝ աստվածային սերը, ասում է. «Բարիո՛վ հաղթիր չարին» (Հռոմ. 12.21): Իսկ Մատթեոս 5.44-ում ասվում է. «*...Սիրե՛ք ձեր թշնամիներին... բարի՛ արեք ձեզ ատողներին...*»:

Եվ գիտե՞ք, սատանան ոչ մի ավել բառ չասաց այդ ավետարանչի մասին. նա չի ցանկանում, որ որևէ քարոզիչ մեկ երեկոյի ընթացքում *երկու* նվիրատվություն ստանա:

Ուստի ամեն երեկո այդ ավետարանչի համար նվիրատվություն էի հավաքում: Հետո հարցրի նրան. «Միջինը որքա՞ն են կազմում Ձեր նվիրատվությունները»: Նա ասաց չափը, իսկ ես նրան եռակին տվեցի այն չափի, որը նա ստանում էր ավելի մեծ եկեղեցիներում, դրա մեկ երրորդն էլ իմ գրպանից տվեցի:

Այդպես վարվեցի, քանի որ ցանկանում էի վարժվել աստվածային սիրո մեջ և զարգացնել այն իմ ներսում: Իսկ այդ ավետարանիչը հեռացավ՝ լավ զգալով: Ես նախընտրում եմ այդպես վարվել, իսկ դո՞ւք:

Բարի՛ն արեք նրանց, ովքեր չարչարում ու հալածում են ձեզ: Աստվածաշունչը սովորեցնում է բարին անել բոլորի նկատմամբ, ոչ միայն հավատացյալների: Մարդկանց հանդեպ բարին անելով՝ դուք կատարում եք սիրո թագավորական օրենքը (Հակ. 2.8):

Եղե՛ք Խոսքը կատարողներ

Խոսքը կատարող լինելու համար պետք է սիրեք ձեր թշնամիներին: Դա նշանակում է, որ պետք է սիրով վարվեք ձեր թշնամիների նկատմամբ՝ անկախ այն բանից՝ ցանկանում եք դա, թե ոչ:

> **ՀԱԿՈԲՈՍ 1.22-25**
>
> **22 Բայց ԽՈՍՔՆ ԱՆՈ՛Ղ ԵՂԵՔ և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով:**
>
> **23 Որովհետև ԵԹԵ ՄԵԿԸ ՄԻԱՅՆ ԽՈՍՔԸ ԼՍՈՂ Է և ՈՉ ԱՆՈՂ, նա նման է այն մարդուն որ ակնապիշ նայում է իր իսկական երեսին հայելու մեջ:**
>
> **24 Որովհետև նայելով տեսավ իրեն և անցավ և շուտով մոռացավ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ:**
>
> **25 Բայց նա, որ ազատության կատարյալ օրենքի մեջ աչքը գցած նայեց և նրանում մնաց, նա մոռացուկ լսող չեղավ, այլ գործ կատարող. ՆԱ ԻՐ ԱՆԵԼՈՎ ԵՐԱՆԵԼԻ Է:**

Ինչպես տեսնում եք, կարող եք նայել ազատության կատարյալ օրենքին՝ Աստծո Խոսքին, բայց մի կողմ գնալ և մոռանալ, թե ինչպիսին եք դուք: Իսկ ինչպիսի՞ մարդ եք դուք:

Եթե վերստին ծնված եք, ապա նոր արարած եք, ով քայլում է Աստծո սիրո մեջ: Սա նշանակում է լինել քաղցր ու գթած, վիրավորանքի փոխարեն չվիրավորել և չարի փոխարեն չարը չհատուցել,

փոխարենը վարվել ըստ հոգու պտղի:

Այնուամենայնիվ, եթե նայեք Խոսքին, տեսնեք աստվածային սիրո հատկանիշները, իսկ հետո մոռանաք, թե ինչպիսին պետք է լինեք, ապա միայն Խոսքը *լսող* եք և ոչ կատարող:

Խոսքը լսողը, բայց չկատարողը քայլում է մարդկային բնության թելադրանքով և սիրով վարվելու փոխարեն վրեժ է լուծում: Խոսքը կատարողը, սակայն, վարվում է ըստ հոգու պտղի: Խոսքը կատարող լինելու համար պետք է շարունակ մտքում պահեք, որ դուք սիրող եք և ներող, ոչ թե ատող:

Հիսուսն ասաց, որ աղոթենք մեր թշնամիների համար, քանի որ գիտեր, որ դա մեր ձայները լսելի կդարձներ Բարձրում: Երբ սիրում ենք մեր թշնամիներին՝ աղոթելով նրանց համար, վարվում ենք այնպես, ինչպես կվարվեր մեր Երկնային Հայրը: Այդպես վարվելով՝ կժառանգենք Աստծո օրհնությունն ու վարձք կստանանք Երկնքում: Մեր թշնամիներին սիրելը կօգնի մեզ հասունանալու աստվածային սիրո մեջ, իսկ աստվածային սերը երբեք չի ձախողվում:

Սա է Աստծո լավագույն օրհնությունները մեր կյանքերում ունենալու բանալին ու գաղտնիքը՝ թշնամիներին սիրելը: Իմ փորձից գիտեմ, որ եթե ցանկանում եք լինել առողջ, ստանալ բժշկություն, ինչպես նաև Աստծո բոլոր հոգևոր օրհնությունները, ապա պետք է սիրեք ձեր թշնամիներին, բարին անեք նրանց, օրհնեք նրանց և աղոթեք նրանց համար:

Մի՛ մոռացեք, թե ինչպիսին եք դուք. դուք վերստին ծնված նոր արարած եք Քրիստոսում: Եթե ինչ-որ մեկն ասի, որ դուք իրեն դուր չեք գալիս, մի՛ մոռացեք, որ դուք սիրող եք և ոչ թե ատող, քանի որ Աստծո սերը սփռված է ձեր սրտում: Մի՛ գործեք մարդկային բնության թելադրանքով և վրեժ մի՛ լուծեք:

Փոխարենն ասե՛ք. «Փա՛ռք Տիրոջը, ես քեզ սիրում եմ: Եթե ինչ-որ բանով կարող եմ օգտակար լինել քեզ, օրհնել քեզ, ապա պարզապես ասա՛ ինձ դրա մասին, և ես կանեմ դա»: Մարդիկ արձագանքում են սիրո խոնարհ վերաբերմունքին:

Քրիստոնյաների համար ֆիզիկական, մտավոր և հոգևոր բոլոր հիվանդությունների բուժումը Խոսքը կատարելու մեջ է: Այնպես որ, եկե՛ք քարոզենք, որ ատելության բուժումը ներումն է ու սերը: Եկե՛ք քարոզենք, որ չներման, վիրավորանքների և վեճերի լուծումը Աստծո սիրո արտահայտումն է:

Ուրիշների համար արեք...

Հիսուսը ևս մեկ բան է ասել թշնամիներին սիրելու մասին: Այլ բառերով է արտահայտվել, սակայն իրականում խոսել է նույն թեմայի մասին:

ՄԱՏԹԵՈՍ 7.12
12 ԱՄԵՆ ԻՆՉ, ՈՐ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՔ, ԹԵ ՁԵՋ ԱՆԵՆ ՄԱՐԴԻԿ, այնպես էլ դուք արեք նրանց, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՅՍ Է ՕՐԵՆՔԸ և մարգարեները:

Այլ կերպ ասած՝ Հիսուսն ասում է, որ կարիք չկա մտահոգվելու Օրենքն իր բոլոր պատվիրաններով կատարելու մասին, եթե միայն անեք այն, ինչը գրված է այս Խոսքում: Դուք կկատարեք սիրո օրենքը, եթե վերաբերվեք ուրիշներին այնպես, ինչպես կցանկանայիք, որ ձեզ վերաբերվեին:

Ցանկանո՞ւմ եք, որ բոլորը սիրեն ձեզ: Իհարկե, ցանկանում եք: Այդ դեպքում դուք պետք է բոլորին սիրեք, այդ թվում նաև ձեր թշնամիներին: Եթե ցանկանում եք, որ ձեր թշնամիները սիրեն ձեզ, ապա առաջինը դուք նրանց սիրեք՝ անկախ այն բանից, թե ինչպես են նրանք ձեզ վերաբերվում:

Ինչ որ ցանկանում եք՝ մարդիկ անեն ձեզ համար, դուք արեք նրանց համար: Չէ՞ք ցանկանա արդյոք, որ մարդիկ անիծելու փոխարեն օրհնեին ձեզ: Այդ դեպքում դուք օրհնեք նրանց, նույնիսկ եթե նրանք ձեզ անիծում են:

Կցանկանայի՞ք, որ մարդիկ ձեզ չարի փոխարեն բարին անեին: Այդ դեպքում դուք նրանց բարին արեք, նույնիսկ եթե նրանք ձեզ չարն են անում:

Չէ՞ք ցանկանա արդյոք, որ մարդիկ աղոթեին ձեզ համար, նույնիսկ եթե դուք թերացել եք և նրանց մասին այնպիսի մի բան ասել, որ չպետք է ասեիք: Այդ դեպքում դուք աղոթեք մարդկանց համար, նույնիսկ եթե նրանք ձեզ թշնամի են կամ ինչ-որ վատ բան են ասել ձեր մասին:

Ահա թե ինչպես է աստվածային սերը՝ սիրո թագավորական օրենքը, գործում: Իրականում սիրո թագավորական օրենքը և ոսկե կանոնը նույնն են. «Ուրիշների հետ վարվի՛ր այնպես, ինչպես կցանկանաս, որ քեզ հետ վարվեն»: Սա նույնն է, ինչ. «Սիրի՛ր մերձավորիդ քո անձի պես»: Շատ ենք լսում ոսկե կանոնի մասին, սակայն դրան համահունչ շատ քիչ գործողություններ ենք տեսնում:

Իրականում մարդկային բնությունը թելադրում է. «Վնասի՛ր ուրիշներին, նախքան նրանք կհասցնեն վնասել քեզ»: Տպավորություն է, որ շատ քրիստոնյաներ գործում են դրա համաձայն. փորձում են մեկը մյուսից առաջ անցնել իրար վնասելու մեջ: Այդպես վարվող քրիստոնյաները չեն վարվում որպես իրենց Երկնային Հոր զավակներ:

Շատ տարիներ առաջ իմ հավաքույթներից մեկի ժամանակ ինձ օգնում էր մի մարդ, որը մեծ մասամբ հենց այդպես էլ վարվում էր: Նա երկար չմնաց իմ ծառայության մեջ, քանի որ ես տեսա նրա դրդապատճառները: Այնպիսի տպավորություն էր, որ նա գիշերները չէր քնում և մտածում էր ինչպես գումար հավաքել մարդկանցից:

Հավաքույթներն անցկացնում էինք Ամբողջական Ավետարանի մի մեծ եկեղեցու սրահում: Հավաքույթների մեր բյուջեում ներառված էին նաև ամենօրյա ռադիոծրագրի, թերթի հայտարարությունների և մեր ծախսերը:

Այդ մարդը հայտարարություններն էր հաղորդում, իսկ ես մինչև իմ քարոզելը բարձրախոսների սենյակում աղոթում էի: Մենք համաձայնության էինք եկել, որ մեր ծախսերը հոգալուց հետո մնացած գումարը կկիսեինք, և դա կլիներ մեզ հասանելիք ֆինանսական աջակցությունը:

Հավաքույթները չորս շաբաթ տևեցին: Երկրորդ շաբաթվանից հետո նա մոտեցավ ինձ և ասաց. «Մենք արդեն ունենք այնքան գումար, որ կծածկվեն մեր բոլոր ծախսերը: Եկ դրա մասին մարդկանց չասենք, քանի որ նրանք լավ նվիրատվություններ են տալիս: Եկ շարունակենք այնպես, կարծես դեռևս գումար ենք հավաքում ռադիոհաղորդաշարի և հավաքույթի ծախսերը հոգալու համար»:

«Ո՛չ,- պատասխանեցի ես,- դա կնշանակի, որ ստում ենք: Մենք չենք անի նման բան»:

«Բայց այդպես լավ հնարավորություն բաց կթողնենք: Այդ կերպ կկարողանայինք լվացում անել»,- ասաց նա:

«Ո՛չ, մենք նման բան չենք անի, քանի որ մարդկանց արդեն ասել ենք, թե ինչ ենք պատրաստվում անելու և անելու ենք այն, ինչ ասել ենք»:

«Ես եմ այնտեղ նվիրատվություն հավաքողը, այնպես որ ինքս կանեմ դա»,- հնչեց նրա պատասխանը:

«Ո՛չ, չես անի, - ասացի ես,- որովհետև այն սենյակում, որտեղ ես աղոթում եմ, բարձրախոս կա: Եթե նման բան անես, ես դուրս կգամ բեմ և կասեմ մարդկանց, որ ստում ես»:

«Դու ես կորցնում. ահա՛ թե ինչ կասեմ քեզ: Տեսնում եմ, որ չգիտես, թե ինչպես են նման գործերն արվում»: Դա վերջին անգամ էր, որ նա ինձ համար նվիրատվություն հավաքեց:

Տարիներն անցան. այդ տղայի մասին ոչ ոք այլևս ոչինչ չլսեց, իսկ ես դեռ շարունակում եմ քարոզել Խոսքը: Ճշմարտությունն ասելով և ուրիշների հետ վարվելով այնպես, ինչպես կցանկանայի, որ ինձ հետ վարվեին՝ ես հաջողեցի:

Կան մարդիկ, որոնք պատրաստ են վնասելու ուրիշներին, մինչդեռ դրա փոխարեն պետք է ջանային գերազանցել ուրիշներին սեր ցույց տալու մեջ:

Մենք պետք է ջանանք մարդկանց համար օրհնություն լինելու միջոցներ գտնել: Ինքներս մեզ պետք է հարց տանք՝ *ինչպե՞ս կարող եմ օրհնել մարդկանց, ինչպե՞ս կարող եմ բարին անել նրանց համար*:

Երբևէ կանգ առել և խորհե՞լ եք սրա շուրջ: Եթե վերլուծենք Մատթեոս 7.12-րդ խոսքը, կհասկանանք, թե Հիսուսն իրականում ինչ նկատի ուներ:

ՄԱՏԹԵՈՍ 7.12

12 ...ամեն ինչ, որ ցանկանում եք, թե ձեզ անեն մարդիկ, այնպես էլ դո՛ւք արեք նրանց...

Իրականում Հիսուսն ասում էր. «Եթե ցանկանում ես, որ դեպի քեզ բարիք գա, ապա *ի՛նքդ* բարին գործիր *ուրիշների* նկատմամբ»:

Սա լիովին սուրբգրային է, քանի որ Աստվածաշունչն ասում է. *«Մի՛ խաբվեք. Աստված չի ծաղրվի, որովհետև ինչ որ մարդ սերմի, այն էլ կհնձի»* (Գաղ. 6.7): Ինչպես տեսնում եք, ամեն բան հանգում է նույն սկզբունքին՝ վարվե՛ք Աստծո սիրով և ստացե՛ք Աստծո լավագույնը ձեր կյանքում:

Մեզնից յուրաքանչյուրն էլ ուզում է այս կյանքում ստանալ այն ամենը, ինչ Աստված ունի մեզ համար: Բայց պետք է հասկանաք, որ երբեք Աստծո լավագույնին չեք հասնի, եթե Աստծո սիրով չվարվեք:

Թույլ տվեք, որ Աստված Իր սիրով փոխի ձեր կյանքը, որպեսզի ուր էլ գնաք, կարողանաք օրհնություն լինել ուրիշների համար: Եթե ցանկանում եք, որ *Աստված* ձեզ բարին անի, ապա ինքնե՛րդ բարին արեք *ուրիշների* նկատմամբ: Աստծո սիրով վարվելն է ճանապարհը դեպի հաղթական կյանք:

Ինչո՞ւ սովորել
«Ռեմա» Աստվածաշնչյան դպրոցում

Դուք կստանաք.

- Վերապատրաստում Սուրբ Հոգով լցված, առաջատար աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսուցում՝ հիմնված Աստծո Խոսքի հանդեպ ամուր հավատքի վրա
- Աճ հոգևոր ընթացքի մեջ՝ համակցված արդյունավետ ծառայության գործնական դասընթացների հետ
- Մասնագիտացում ձեր ընտրած ոլորտում՝ երիտասարդական կամ մանկական ծառայություն, ավետարանչություն, հովվական ծառայություն, միսիա, Աստվածաշնչի ուսումնասիրություն կամ օժանդակ ծառայություններ
- Կամընտրական խտացված ծրագիր երրորդ կամ չորրորդ տարիների համար. երկրպագության դպրոց, հովվական ծառայության դպրոց, համաշխարհային միսիայի դպրոց, աստվածաշնչյան ուսումնասիրությունների դպրոց և ընդհանուր ընդլայնված ուսումնասիրություններ
- Համաշխարհային ծառայության հնարավորություններ՝ դպրոցում ուսումնառելու տարիներին
- Եկեղեցիների և ծառայությունների ցանց ամբողջ աշխարհում, որոնց «Ռեման» է տրամադրում ամբողջական դրույքով աշխատակիցներ և օժանդակ ծառայողներ

Մանրամասներին և հայտադիմումին ծանոթանալու համար զանգահարե՛ք այսօր կամ անցե՛ք առցանց հղումով.

1-888-28-FAITH (1-888-283-2484)

www.rbtc.org

«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

RHEMA Europe

Ինչո՞ւ արժե մտածել

«Ռեմա»
Աստվածաշնչյան ուսուցման կենտրոն ընդունվելու մասին

Ահա մի քանի հիմնավոր պատճառ.

- Ուսուցում աշխարհի առաջատար Հոգով լցված Աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսմունք, որի հիմքն Աստծո Խոսքի հանդեպ հաստատուն հավատքն է
- Աճ ձեր հոգևոր ընթացքի մեջ և արդյունավետ ծառայության գործնական ուսուցում
- Ընտրովի երրորդ և չորրորդ տարվա ինտենսիվ ծրագրեր. Երկրպագության դպրոց, Հովվական ծառայության դպրոց, Համաշխարհային միսիոներության դպրոց, Աստվածաշնչի ուսումնասիրության դպրոց և Ընդհանուր երկարացված ուսուցում

Ավելին իմանալու համար այցելե՛ք մեր կայքը.

www.rhema.eu
www.rbtc.org

«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

Ամենից ավելի

Աստծո սիրո՛ւն հետևեք

Աստված Իր Խոսքում ասում է մեզ, որ մենք պետք է ամենից ավելի Իր սիրուն հետևենք: Աստվածաշնչի «Ընդլայնված» թարգմանությունում գրված է. «Ձերմեռանդորեն հետամո՛ւտ եղեք և ձգտե՛ք [այս] սիրուն և դարձրե՛ք այն ձեր նպա՞տակը, ձեր ամենամեծ ձգտումը» (Ա Կորնթ. 14.1): Սակայն մեզնից քանի՞սը կարող են ազնվորեն ասել, որ Աստծո սերը մեր ամենամեծ նպատակն ու ձգտումն է կյանքում:

Այս հզոր գրքում՝ «Սեր. ճանապարհ դեպի հաղթանակ», վերապատվելի Հեգինը բացատրում է, թե ինչու է Աստծո սերը մեր կյանքում այդքան կարևոր: Նա ասում է. «Կյանքում շատ խնդիրների պատասխանն ամփոփված է հետևյալ պնդման մեջ՝ Աստծո սերը երբեք չի ձախողվում: Ուստի եթե սովորեք վարվել Աստծո սիրով, ապա դուք ևս չեք ձախողվի: Ես խոսում եմ աստվածային սիրո՝ մեր մեջ բնակվող Աստծո սիրո, ոչ թե մարդկային սիրո մասին»:

Վերապատվելի Հեգինը սովորեցնում է ինչպես թույլ տալ, որ Աստծո սերը ղեկավարի մեր կյանքը, և թույլ չտալ, որ մեր մարդկային բնությունն ու չփրկագնված մտածելակերպը իշխեն մեզ: Այնպես որ ձեռնամո՛ւխ եղեք Աստծո ամենամեծ ձգտմանը ձեր կյանքում և սովորե՛ք ինչպես, պարզապես Աստծո սիրով վարվելով, փոխել այն իրավիճակները, որոնք անելանելի են թվում:

Քենեթ Է. Հեգինը գրեթե յոթանասուն տարի ծառայության մեջ է եղել այն բանից հետո, երբ տասնյոթ տարեկանում Աստված հրաշքով բժշկել է նրան սրտի արատից և արյան անբուժելի հիվանդությունից: 2003 թվականին վերապատվելի Հեգինը գնացել է Տիրոջ մոտ, բայց նրա հիմնած ծառայությունը շարունակում է օրհնություն լինել բազում մարդկանց համար ամբողջ երկրագնդի վրա:

Քենեթ Հեգինի ծառայությունը ներառում է «Հավատքի խոսքը» անվճար ամսագիրը, «Ռեմա» աստվածաշնչյան դպրոցը, «Ռեմա» շրջանավարտների ընկերակցությունը, «Ռեմա» միջազգային ծառայողական ընկերակցությունը, «Ռեմա» առցանց աստվածաշնչյան դպրոցը և «Ռեմա» բանտերի ծառայությունը: Վերապատվելի Հեգինի որդին և վերջինիս կինը՝ Քենեթ Վ. և Լիններ Հեգինները, վարում են «Ռեմա փառաբանություն» ամենշաբաթյա հեռուստահաղորդումը, «Այսօրվա Ռեման» ամենշաբաթյա ռադիոհաղորդաշարը և «Կենդանի հավատքի արշավներն» ամբողջ աշխարհում: